



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքեր ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենն և տպածել և կու բը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա կուրքը տուրքելու համար նոր

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



R U P S

৩৪৩

১৯৭৫ সালের মুক্তি প্রাপ্ত প্রথম বর্ষ

বাংলাদেশ জাতীয় পত্রিকা

সংস্কৃত ও সাহিত্য

৩৪৩

ԲԱՐԵՏ



ԹԱՐԴՄԱՆԵԱՑ Ի ԳԱՂՎԱՄԵՆԵ
Մ. ԲՈՒԴԱՐԴԱՆՑ

A 105775



ՅԵՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆ

1887

ଓ এ দেশ

বাংলা প্রকাশনা বিল্ডিং
১৯৮৫

গুরুত্বপূর্ণ সাহিত্য ও
সাময়িক পত্রিকা

১৯৮৫

১৯৮৫

A U P S



ՄԱՍՆ Ա.



U.

Այստեղ՝ արծաթ, ուստի և եկած լինի :
Այս է, առում են, մեր ժամանակի սիրած
խօսքը : Արծաթը նման է այն սիրուն անառա-
կուհիներուն՝ որոնց ոչ ոք չէ մտածում հար-
ցանել, թէ որտեղաց են դուրս ելել, — ամենքը
դիտեն, թէ այդ արուսեակները ծնած են մի
փոքր փրփուրից :

Օնօրէ Մարսելեթը՝ որոյ անցքը կամիմ ձեզ
պատմել, արդէն մօտ էր նշանաւոր մարդ լի-
նելու, ըստ որում նորա հարստութիւնը շատ
չէր պակասում մի միջինից, երբոք մեռաւ :
կան այնպիսի մարդիկ՝ որոնց մասին անիրաւու-
թիւն կը լինի ասել թէ ոչինչ են, մինչդեռ
ինչ եիցէ լինելու մօտ են . թէ եւ Բախտը ոռ-

բանց տանը չէ , բայց եւ այնպէս անյօյս չեն
մի օր զայն ունենալուց . նորա ճանապարհի
վերայ նստած դիտում են , նորա գալը տես-
նում և կարծում են , թէ անշուշտ կը տիրեն
նորան . Աիրունիկը գալիս է , նկատում է սո-
րանց , և հեռանալով անցնում է այլուր . Ո՛հ ,
յուսահատ փառասէրք :

Մարսելեթը սկզբում նոյնպէս գործեց ,
ինչպէս և միւսները . նա դարանամուտ եղաւ
Բախտին , բայց սորա խորամանկութեան հասու
լինելով , միանգամ ընդ միշտ վճռեց որոգայթ-
ներ լարել նորա ճանապարհի վերայ և ահա
սորանց մէջ Բախտը բռնուեցաւ .

Գասպար Յնօրէ Մարսելեթը այս մակա-
նուններից մին ստացել էր իւր կնքահօր շնոր-
հիւ , հայրը կցել էր Յնօրէ ⁽¹⁾ անունը , թէ եւ
կարող էր բազմաթիւ անուանց մէջ մի ուրիշը
ընտրել . մի գուցէ այդ պարկեշտ մարդը կա-
մեցել էր մեքենայել ապագայի դէմ .

Մարսելեթը ծնել էր Թուրեն նահանգում ,
ուր երեխայք կայտառ . և կորովամիտ են . եր-
կիրը՝ պարարտ , սնուցիչ և հետեւաբար գըրգ-
ուիչ որովայնամոլութեան և բազմատեսակ հեշ-
տական ցանկութեանց . Բնիկը՝ յանդուդն ծաղ-
րածուք՝ որոնք թէ եւ Աստուծոյ հաւատում
են , բայց չափաւոր երկիւղածութեամբ :

Գասպարի հայրը՝ որ այս երկրում խաղաղ
ապրում էր իւր շնչին ժառանգական ստացուա-

(1) Պատուելի :

ծոլ, յանկարծ աղնիւ դիտաւորութիւն ունեցաւ ամուսնանալու մի սիրուն աղջկայ հետ, որ առաւել հարուստ չէր քան նորա տարփածուն. ուստի երբոր սոքա իւրեանց կայքը միացուցին, մի մեծ բան չեղաւ. Այդպէս պատշաճեցուցած ամուսնութիւնը ՚ի հարկէ զուրկ մնալու չէր երջանկութենէ, զի ահա առաւել փոքր ժամանակի մէջ, քան որ հարկաւոր էր այդ բանը պատմելու համար, Մարսելեթը երեք արու զաւակներ ունեցաւ, այն է՝ Լուդովիկոս, Գարոլոս և Յնօրէ. երեքը նահապետաց սովորական թիւն է. ոչ ապաքէն նոց նահապետը նոյնպէս երեք որդի ունէր: Բայց երբոր երեխայք մեծացան և երբ արդէն կարելի չէր նորանց հօր հին շորերից երեք կապայ ձեւել, պէտք էր հոգալ նմանապէս տարրական դպրոցի ուսման վարձը, նոյն և բարձրագոյն վարժարանինը վերջապէս. — զոյգ ամուսինք չը զզացան բնաւ իւրեանց ամուսնութեան պատճառաւ, որովհետեւ բարեպաշտ քրիստոնեայներ էին, միայն նկատեցին, թէեւ փոքր ինչ ուշ. թէ սիրոյ պտուղներու մէջ ամենայն ինչ քաղցր չէր, ուստի սկսեցին աշխատիլ, իբրեւ երկու ստրուկք հարուածեալք, անդադար և յուսակտուր: Շատ անդամ տանջուելով որ և է պարտատիրոջ մասին, որ արդէն խրոխտում էր, կամ շաբաթի վերջը հասած, առանց փոխառութեան նոր հնար գըտնելու և սարսափելով յաջորդ շաբաթու վերահասնելուց, Մարսելեթ հայրը գնում էր

դաշտ իւր գեղջուկներուն յորդորելու . — նա
սկսում էր նախանձուտ աշօք նայել իւր փառա-
ւոր և անհոգ եղներին՝ որոնք արօրը քաշելով ,
նորա համար մի կտոր չոր հաց էին պատրաս-
տելու : Այդ ձնշիչ բեռը առաւել եւս ծան-
րացաւ նորա վերայ , մինչ յանկարծ նորա գե-
ղեցիկ կինը մեռաւ վշտահար , և այնուհետեւ
Մարսելեթը մնաց մենակ : Նորա քաջասրտու-
թիւնը և զոհաբերութիւնը վերջապէս վարձա-
տրուեցան ինչպէս պէտք էր սպասել , դի ահա
նորա երեխայքը չափահաս մարդիկ դարձան
և հրաժարուեցան տանից . Մարսելեթը ծերա-
ցաւ մենակութեան մէջ եւ կեանքը կնքեց
թաղծանօք : Երեք որդւոց անդրանիկը , Լուգո-
վիկոս , բարեմիտ եւ քաջասիրտ , որոյ օգնու-
թեան հայրը կարէր ապաւինիլ իւր դաժան
աշխատութեանց մէջ , դեռ եւս տասնեւթեց ա-
մեայ գրուել էր զինւոր . երկրորդ որդին , թանձ-
րամիտ Գարոլոսը գնաց գրագիր եղաւ մի առա-
տաձեռն գործակալութեան մէջ , որ եօթանա-
սուն և հինգ ֆր . ամսականի շնորհիւ շղթայեց
չուանով նորա պարանոցը . իսկ որ ինչ վերա-
բերում է կրտսեր որդուն՝ Յնօրէին , սա , մա-
տաղահաս և առաւել կայտառ , ընդ փոյթ գու-
շակեց , թէ առաւել արդիւնաւոր գործեր կա-
յին , քան որ ընտրել էին իւր եղբայրները . նա
եկաւ Փարիզ , ուր ամենեւին ըը շտապեց որ և է-
գործի ձեռնարկել :

Այս միջոցին Գասպար Յնօրէ Մարսելեթի
պատկերը այսպէս էր՝ շէկ մազեր , փայլուն

աչք , զուարթ երես . այդ առաւելութիւնք
բաւական էին նորան մի ընկերութեան մէջ ձը-
գելու , բայց որպիսի ընկերութեան . Մատաղա-
հաս պարոնը իւր դարտակ քսակով կարող չ'էր
մտնել ոչ մեծամեծաց և ոչ ընչաւէտ մարդ-
կանց խումբերի մէջ , բայց և այնպէս նա զգու-
շցաւ աննշան և խեղճ ընկերութիւն ընտրե-
լուց , կամ լաւ ևս ասել՝ անորոշաբար հետեւե-
լով իւր երջանիկ բնաւորութեան , համարձակ
մտաւ առաւել զուարձասիրաց խումբի մէջ .
Շատ սիրեցին նորան սկզբում և այս պարագայն
միշտ կ'օգնէ ապրելու համար . Ի՞նչպէս շուտ
սովորեց նա երգել , զուարձանալ , խաղալ
գերդաստանի որդւոց հետ , ամբողջ գիշերներ
աքնել թղթախաղու կամ գինու բաժակի վերայ
և առաւօտեան երկար ժամերը քնով անցնել .
տեղեկացաւ նա ամենայն գաղտնեաց այն ա-
խորժական վիճակին՝ որ վայելում են սովորա-
բար Փարիզու դիմակաւոր ընկերութեանց հա-
զարաւոր կորուսեալ զաւակունք , որոնք ընդ-
առաւօտն զարթուցեալ ՚ի քնոյ , շրջիտեն , թէ
ուր պիտի երեկոյեան հացկերոյիթ ունենան ,
բայց տարակոյս չ'ունին իւրեանց ճաշելու մա-
սին , ըստ որում գիտեն , թէ ուր է լինելու
իւրեանց որ և է ընկերը և արդեամբ իսկ 0նօ-
րէն ամեն որ գոնէ միանգամ կերակրում էր .
Հինգերը որդ տարին էր արդէն , որ այդ փափուկ
և քաջութեամբ ձեռք բերած կեանքը տեւում
էր , մինչ յանկարծ մատաղ թուրենացին , սառ-
տիկ զարմանք պատճառելով իւր խաղասէր և

տարփասէր ընկերաց, տաղտուկ զգաց եւ մի
քայլընդոստ միայն գործելով, թողուց այն աս-
պարէզը՝ որոյ մէջ մտել էր նոյն կերպիւ. Փոք-
րիկ Քուփիդօնի ամենայն շարժողութիւնք սր-
բընթաց էին. իւր վճռական դիտաւորութիւնը
որոշելու համար բաւական էր միայն մի գիշերը,
երբ զննելով իւր բաժակի խորքը, նկատեց
այնտեղ ապագայի այնպիսի վտիտ պատկերը՝
որոյ մասին մինչ այժմ հազիւ թէ մտածու-
թիւն ունեցած էր. Արդէն իսկ նա սկսեց խոր-
հել, թէ հանապազրեայ զուարձութիւնը, ան-
պայման զրօսասիրութիւնը մի բանաւոր էակի
համար բնաւ չըկարէ կերանք կոչուել. զրօսա-
սիրութիւնը տանում է դէպի զրօսանք և ոչ
երբէք դէպի յաջողութիւն, մանաւանդ որ՝ նա
բերում է իւր հետ և պատիժ. Զրօսասիրու-
թիւնը մայր է անհոգութեան, որմէ յառա-
ջանում է աղքատութիւն. Այսպէս խորհրդա-
ծելուց յետոյ, Օնօրէ Մարսելեթը անյապաղ
մի կառք բերել տուաւ և ելաւ գնաց.

Որ եւ է լուր կամ խօսք լսելի չ'եղաւ
նորա մասին ամբողջ տասն տարի. և ահա մի օր
նա կրկին յայտնուեցաւ. Ուստի կը վերադառ-
նար. Ամերիկայից. Անզգաստ նոր Աշխարհ, որ
չէր դիտացել, թէ պահպանելով երիտասարդ
Մարսելեթին, ապահովելու էր իւր փառքը
այդ շքեղ քաղաքացու ընկերութեամբ. Գառ-
պար Օնօրէն անտարակոյս փոքր ՚ի շատէ Տո-
լլներ բերել էր իւր հետ, բայց այն օր,
յորում նա ոտքը դրաւ Ֆրանսայի ափունքը,

Նորա Եօմներորդ հնգեակի առաջին օրն էր .
ուրեմն՝ թէ նորա թեթեւամիտ պատանեկու-
թիւնը և թէ թուրենեան վայելչագեղութիւնը
անցել էին . փոփոխուած չէր միայն սիրտը :
Բորբոքուած Անդրովկիանեան բախտախնդրու-
թեան կիսակատար յաջողութենէն , առաւել
հաստատուն քան երբ և իցէ հարստանալու
զիտաւորութեան մէջ , առաւել արգասաւոր
հանձարեղ և բազմատեսակ հնարներու համար ,
տանջուած , մաշուած փորձերէ , տուշրուած
խուռն ցանկութիւններէ , Մարսելեթը դարձ-
եալ կանգնած էր կին աշխարհի քարայատակի
վերայ զինեալ ժանեօք իւր ընկերի գէմ : Ո՛վ
թէ քանի դիւրին կը լինէր նորա համար դար-
մանել իւր հարուածքը , եթէ լինէր տակաւին
Քուփիդօն , բայց նա էր երբեմն և չէր այժմ :
Այս յանդուգն ընկերը տարագրուած գէպի
առանձնակեցութիւն , սկսեց նորանոր պատե-
րազմական ծրագրեր յօրինել : Այս անգամ
կարծես թէ նա խլել էր իւր յարաբերութիւնքը
ցնորից հետ , դադարել էր հաւատալ որ և է
ազդեցութեան , մեծամեծ ձեռնարկութեանց ,
նոյն իսկ յանդգնութիւնը համարում էր բըռ-
նաբարիչ յաջողութեան . նա ստուգապէս հա-
մոզուած էր այժմ , թէ հարստանալու կարեոր
հնարը համբերութիւնն է : Պարօն Մարսելեթը
գործեց նշանաւոր արուեստագիտաց պէս ,
որոնք , կատարելութեան հասակը մտած , ըն-
դունում են և սորա պայմանները , — այսինքն՝
նա սկսեց աշխատել :

Ով սքանչելիք , մի տարու վերջում նա
արդէն հարուստ էր . իսկոյն թողուց մենակե-
ցութիւնը , դուրս եկաւ այդ նահապետական
գժօխքից և յայտնուեցաւ , եթէ ոչ յատկա-
պէս իւր անցեալ անառակութեանց թատրոնի
մէջ , սակայն մի այնպիսուն մէջ , որ նորա նմա-
նութիւնն ունէր : Խորամանկ պարոնը տեղեակ
էր իւր ժամանակի ուղղութեան . նա քաջ
գիտէր , թէ այլ և այլ նոր իրաւանց կարգում ,
յաջողութիւնը յառաջ քան զամենայն նոյնպէս
իրաւունք էր անկախութեան և որովհետեւ
նորա դատողութիւնը անգամ միաբան էր նորա
ցանկութեան հետ , ուստի ըստ առաջնոյն նա
կրկին եղաւ զուարձասէր : Ժարիզու մի որոշ
մասը շուտով ճանաչեց նորան , երջանիկ Մար-
սելեթին : Այդ զբոսասէր ընկերութեան մէջ ;
ուր նա մոնում էր իբրև իւր տունը , ամենը պ
պարտաւորութիւն համարեցին պատուով ըն-
դունել նորան , ըստ որում հասկացան իսկոյն ,
թէ պէտք էր այնուհետեւ գործ ունենալ մի
նորանշան մարդու հետ , որ արդէն խղճուկ
մէկը չէր : Ոչ ոք , նորան տեսնելով , չը մոածեց
այն պարզ խնդիրը , թէ ուստի կուգար նա :

Մի ամսոյ մէջ Մարսելեթը անուանի եղաւ ,
ըստ առաջնոյն անխիզմ խաղացող , բայց և պատ-
րաստ հացակից լինելու , յաջողակ առաջնորդ
թէ համեստ և թէ աղմկալի ընկերութեանց :
Ահա այսպէս նա մօտենում էր իւր կատարեալ
փառաւորութեան , նոյն և յիսունամեայ հա-
սակին՝ որ յիրաւի առաւել եւս փոփոխել էր

նորան , առանց մեծապէս վնասելու : Բախտա-
ւոր թուրենացու վայելքագեղութեան յաջոր-
դել էր գերութիւն , այնքան տարիք փոթորկաց
մէջ անցունելու հետեւանքը , շուայտութեանց
մէջ յարատեւելու սովորութիւնը ծաւալել
էին նորա երբեմն վարդագոյն թուշերի վերայ
եաղութիւ գոյն , բայց և այնպէս կատարեալ
առողջութիւնը և կարողութիւնը յայտնի երե-
ւում էին նորա ամբողջ անձնաւորութեան մէջ .
մանաւանդ այն պարկեշտ մափառ , որ փայլում
էր լայն երեսի վերայ , կը խրախուսէր նօրան
ումևիցէ ասել . թէ խորագէտ է առաւել
քան զնա : Որ ինչ վերաբերում է նորա ընչեց
աճելութեան , անտեղի էր որ եւ է տարա-
կոյս , ըստ որում հագուստը արդէն յայտա-
րար էր . ով չէր տեսնում բաճկոնակէն խա-
շաձեւ կախած ոսկեայ երեքպատիկ շղթայն ,
խաղալիկների փունջը , մատանիքը՝ որոնք բեռ-
նաւորել էին նորա մատունքը , թէև կարէին
վեասել դոցա արագաշարժութեան , ոսկէծոյլ
խնծորը պասկ նորա գաւազանին . իցիւ թէ
ախորժելի լինէր նորան և իւր գլխարկը զար-
դարել ոսկեայ զանդակով . Ահա այսպէս պըճ
նուած կատակերգական խաղուց թագաւորի
պէս , այդ ուժեղ յիսնամենին այնքան վայե-
լուչ էր երեւում , մինչ զի պառաւ կախները
յաճախակի տիսուր փողոցները անձուդարձ
անելու ժամանակ կանք էին առնում նորան
նայելու և ծանրատաղտուկ հառաջանօք ասում
էին « Աչ ապաքէն սա մեր բարեկամն էր » :

Բայց Մարսելեթը անխնայաբար վատնում էր
իւր ուժը, նորան կարելի էր տեսնել ամենու-
րեք և ամեն ժամ, մի քանի շարամիտ մարդիկ
միայն, նորան չը տեսած ժամանակ հետաքրքիր
էին իմանալու թէ ուր կարէր լինել. Նմանա-
պէս նորա անմեկնելի պարապութիւնը անհան-
գտութիւն էր պատճառում այն մարդկանց՝
որոնք ճանալում էին նորան Ամերիկա ճանա-
պարհորդելի առաջ եւ ըստ այսմ օտարութի
շառւկք լսելի էին լինում այդ վայելուչ մարդու
մասին. Ատելի և ցնորական կարծիք, տղայա-
կան զբարտութիւնք՝ որոնք կը ջախջախուէին
նորա ոտից տակ. Պարսն Մարսելեթը այժմ
այնքան նշանաւոր էր մարդկանց մէջ որ՝ ոչ ոք
համարձակելու չէր անձնուիլ հարցանել նորան,
թէ որով իրաւամք ներկայում էր նա այդ
շքեղ երեւոյթը եւ ով էր նորան միջոցներ
հայթհայթում այդ մասին. Իսկ եթէ պատա-
հում էր երբեմն, ընթրեաց ժամերու մէջ,
Մարսելեթը յայտնում էր իւր զուարձասէր
ընկերաց, թէ այն որը նա աշխարհէլէ, ամենքը
ականջները սրած, նայում և արմուկով խթում
էին միմեանց, և գուրս ելած մտածում էին,
արդեօք ինչ էր գործում այդ մարդը. Յիրաւի
այդ մի գաղտնիք էր և օրեր ու ամիսներ ան-
ցանելով, առաւելում էին միայն նորա լուծման
դժուարութիւնը. Բայց և այսպէս՝ որովհետեւ
հեռաւոր երկրից բերած իշխանական ճոխու-
թեանց այլ եւս չեն հաւատում, ուրեմն ստոյգ
պիտի համարէին, թէ Մարսելեթը աշխատում

Եր ևթէ արծաթը՝ որ նա ծախտում էր փառա-
ւորապէս, երկինքէ իջած մանանայ չէր, այլ
պէտք է ումէ և իցէ ստանում լինէր. «Հ ոք
վերջապէս չէր երկբայում, թէ մի բան գոր-
ծում էր նա Ամերիկայից բերած Տալիները
բազմապատկելու համար, բայց թէ ինչ, ամեն-
քը տարակուսութեան մէջ էին, ըստ որում
ոչ ոք գիտէր».


Այս գործողութեան ժամանակ, Բաթինեօլ
թաղի մի փոքրիկ փողոցի յետին կողմը մի տուն
կար, առանձնակիր կանգնած, որոյ արտաքին
տեսքը որոշում էր նորան միայն տգեղութեամբ.
սորա պատուհանների թխագոյն փեղիերը կա-
նոնաւորապէս բացվում էին առաւօտեան ինն
և տասն ժամերի միջոցները, մի վաթսունամեայ
խոժոռապէմ սպասաւոր, լոիկ իբրեւ գերեց-
ման, բերում էր մի մեծ վանդակ և սորա մէջ
փառաւոր թութակ և պատուհանի առջեւ
կախելուց յետոյ, իսկոյն մոնում էր ներս.
Թռչունը, կտուցը սրելով, թեւերը թափ
տալով, ոսկեգոյն և ծիրանի փետուրները արե-
ւու դէմ շողշողացնելով, մի քանի խրակերպ
և սոսկալի մեղեգիներ երգելով, ոգեւորում
էր այդ խաղերու մէջ, նման առակի ագռա-
ւուն. կ'սկսէր նա այնուհետեւ կատաղութեամբ
զարնել վանդակի ձողերը և ամբողջ փողոցը
լցնել խացուցիչ աղաղակառ. Զարմանալի՛ բան,
զի ահա և դրացիք շուտով հասկացան, թէ
այդ թռչունը ամենեւին չէր դուրս բերած որ՝
առաւօտեան օդոյ վայելութիւնը զգար, և ոչ

այնու գիտաւորութեամբ , որպէս զի նոցա
լսելիքը հարուածէր , այլ թէ խեղճ գերին
որևէ գեր ունէր խաղալու այն հանելուկի
(մէջ , որոյ լուծական բառը 'ի զուր կ'աշխատէին
գտնել : Թուչունի պաշտօնն էր իւր աղաղակաւ
նշան տալ այցելուներին և առաջնորդել այդ
մթին լարիրինթոսի մէջ դէպի խորհրդաւոր
բնակարանը , որպէս զի կարիք չ'ունենային
դորա ճանապարհը հարցնելու : Ի՞նչ պէտք էր
մտածել այնուհետեւ տանուտիրոջ մասին , Բ'նչ
կեանք կը վարէր նա , Բ'նչ անանուն արուեստի
տէր էր եւ ոչ ապաքէն մի նորանշան մարդ
պէտք էր համարել նորան , որ փոխանակ
գրպականշանի թութակ է կախում իւր տան
առջեւ : Յիրաւի նոր գիւտ է այդ , բայց և
հանճարեղ և սքանչելի : Ուրեմն այդ զգու-
շութեամբ պահպանուած այրի մէջ Բ'նչ էր
գործվում , և Բ'նչ պէտք էր մտածել այն այ-
ցելուաց մասին , որոնք ամեն առաւօտ կու-
գային դորա դուռը բաղսելու :

Այցելուք ըստ մեծի մասին շքեղագգեստ
երիտասարդունք էին . սոքա գալիս էին մի առ
մի , յամը ընթացիւք , գլուխները խոնարհած ,
տարակուսութիւնը , երբեմն և երկիւզը սըր-
տերուն տիրած : Սպասաւորը պատրաստ էր ,
նա սպասում էր դորանց . դուռը կարծես ինքն
ըստ ինքեան բացւածւմ էր և այցելուք մտնում
էին . յետ այնորիկ կրկին երեւում էին սոքա
դուրս ելնելով , մին գունաթափ , միւսը բոր-
բոքուած , փախչում էին մինչեւ փողոցի ծայրը ,

իսկ անինան թութակը, իբրեւ չարագուշակ էակ, մղում էր սոցա հետքէն իւր աղետարեր աղաղակը. Տասն և մի ժամը զարկեց, վերջին այցելուն հրաժարուեցաւ. ալեւոր ծառայն թռչունը վանդակով տարաւ ներս, պատուհանի փեղկերը ծածկուեցան մինչի երկրորդ օր, բը նակարանը ընկղմեցաւ լրութեան մէջ, բայց կէս օրէն փոքր ինչ յետոյ դուռը անգամ մի ևս բացւում էր կիսով չափ, տանուտիրոջ դուրս ելնելու համար. և ահա մի գէր մարդ, հասակը՝ կարճ, շարժուածքը՝ կայտառ, ուղղում էր բայցերը գէսփի քաղաք, ուստի սովորաբար վերադառնում էր գիշերայն և շատ ուշ, ըստ որում նորա գարձը ոչ ոք տեսած չէր. Մարսելեթը, սա ինքն էր ահա, ձեռները շփելով քաշւում էր տանից :

Պարոն Մարսելեթի բնակարանը, ուր նա ընդունում էր առաւօտեան այցելութիւնքը. մի հասարակ տուն չ'էր, այլ պերճ դահլիճ. կարասիք, ծխահանք, որմունք եւ առաստաղ, բոլորը շքեղացուցած դանագան զարդուք. Զարաշուք փոքրիկ տունը հիւսած էր ոսկեայ թելերից և յիրաւի այսպիսի մեծագին խցիկը կը պատշաճէր այն մարդուն՝ որ վստահ էր արդէն, թէ միլիօնի տէր է լինելու և թէ միայն մի յաջող ձեռնարկը կը բաւէր դորա լրութեան. Երկաթեայ արկղը անկիւնը կեցած էր, տանուակը ինքը փառաւոր թիկնաթոռի վերայ նըստած էր ծալապատիկ, գլուխը մեղկութեամբ խոնարհած ձեռնի ափի վերցած Ան Սարսկէթը



նոր անկողնեւն ելած , զուարթ , կազմ և պատ-
րաստ , ահա նա՝ որ գիտէ արդէն վայելուց
ընկերութեանց սովորութիւնքը՝ որոնց համե-
մատ առանին զգեստը տաձկաձեւ է և ծաղ-
կանկար . այսուհետեւ նա ժամանակ ունի մը-
տածելու , ուստի խորին խորհրդածութեան
մէջ է , նա մտածում է բարեգործել այժմ ,
մինչ հարուստ մարդ է արդէն , այս պատճա-
ռաւ ահա դուք տեսնում էք որ՝ ձեռքը առաւ
նա մի թերթակալ և նորա մէջէն հանեց
Բնչ էք կարծում , գուցէ մի ցուցակ կարօտելոց
և բարեկամաց , որոնց նա օգնում է . ոչ , այլ
պարտասոմներու մի ծրար՝ որ շըշըում էր
ձեռաց մէջ , քննում էր և ստորագրութեանց
ուշի ուշով վերահասու լինում , իբրեւ թէ
այդ վերիվայր քաշած գիծերը որ և է ծածկեալ
խորհուրդ ունենային : Բայց անդէն իսկ ժափու-
նկարուեցաւ նորա շըթանց վերայ , իսկոյն միջա-
հատեց իւր զբաղմունքը , թանկագին թղթերը
գրպանը կոփեց եւ սովորական անհոգ գիրքն
առաւ . Պատճառ . մի ոք եկել էր , զի ահա
դուռը բաղիսեցին : Այդ այցելուն ինչնւ թու-
թովելով ներս մտաւ , ինչ էր խնդրում այդ
կասկածելի տան մէջ , ինչ կամէր այդ երիտա-
սարդը , սովորաբար ծաղրածու և ամբարտա-
ւան , իսկ այժմ կորիգլուխ և աղերսադէմ . որ
ինչ կամէր , ասաց կամաց . Մարսելիթը բարձ-
րաձայն ծիծաղեց : Բարեկամ , ասաց նա , թէ կն
ընկած բազկաթոռի վերայ . ունիմ ես նմանու-
թիւն վաշխառուիւ — Ո՛հ , թոթովեց այցելուն ,

քայլ մի յետ քաշուելով, ամենեւին ոչ, պարսն
Մարսելեթ, բնաւ և ոչ երբէք . — Դուցէ մը-
տածէք, թէ եկել էք մի պառաւ Հրէայի խըր-
ժիթը, որ անզգայացած է վաշխային յանցա-
նաց մէջ, որ անչափահաս տղայոց և պարտքէ
ձնշուած զուարձասիրաց նախախնամութիւնն
է, իմ անունը իսահանկ է արդեօք կամ Առ-
զոմո՞ն : — Զեր անունը Մարսելեթ է եւ . . .
— Պառաւ Հրէայի արուեստը հնոտեաց առու-
տուրն է, պատրաստ արծաթի փոխարէն, որ
նա չ'ունի բնաւ, նա ձեզ առաջարկում է
թատրոնական աղխամաղխ . տեսնում էք դուք
իմ տան մէջ յարդով լրուցած կոկորդիլոս կամ
թռչնոց վանդակներ . — Ես տեսնում եմ միայն
պատուականագոյն կահ — կարասիք եւ . . .
— Նմանն եմ ես Հարփագոնի կամ Քօփսէքի :
— Ամենեւին ոչ : — Դուք տեսնում էք որ՝ Առ-
լիերը և Բալզաքը իմ սիրելի ծանօթներս են :
— Պարոն Մարսելեթ, այդ զարմանալի չէ ինձ :
— Եթէ այդպէս է, ուրեմն պէտք է մտածէք,
թէ ես հասարակ փոխատու չեմ : — Տարակոյս
չ'ունիմ այդ մասին : — Եթէ ես այդպիսեաց
կարգէ չեմ, բնչ բան ունիք ուրեմն իմ մօտ :
— Ես մտածեցի և կարծեցի նաեւ ինձ ասացին
թէ . . . — Զեզ ասացին, այս . . . որ և է յի-
մարը . բնչ ասացին ձեզ, ապա՞ : — Պարոն,
խնդրեմ ներել, ես արդէն այլ եւս չ'եմ
պնդել . — Ի՞նչ ասացին ձեզ, ո՞հ, ոս իմ համ-
բերութիւնը սպառելու է : — Այ դու, ուր
կ'երթաք : — Կը հրաժարիմ : — Մնացէք, մնացէք :

— Կացէք սիրելի , կրկնեց Մարսելեթը հռ
դածու ձեւով , պէտք է մոտածել , թէ որ և է
անյայտ երկրէ եկած էք , եթէ երեւայում էք .
թէ ներկայ ժամանակիս մէջ վաշխառուք կան
դեռ եւս . — Ուրեմն եւ տօկոսը վերացել է .
— Քան զայն գերագոյնը կայ . Բայց դուք լաւ
գիտէք , թէ ինչ էր այդ վաշխառու կոչուած
էակը . — Կարծեմ գիտել . — Աս մի անկեղծ
խղճուկ էր եւ սորա անհաւատարմութիւնը
յիրաւի անօրինակ կրլինէր , եթէ պարտապա-
նաց անհաստատութիւնը հարկ ՚ի վերայ չըդնէր :
— Պարոն Մարսելեթ , ես այդ կարգի փոխա-
ռուներէ չեմ . . . — Եւ ոչ ոք կամի լինել միւսոց
նման . Դարձեալ ասեմ , մի խեղճ աղուէս , կի-
սով չափ ոչխար , զուգաւորութիւն կասկածա-
նաց և վստահութեան . սա էր ամենքէ առա-
ւել կողոպտուածը , որքան եւ զգուշութիւն
ունեցած լինէր . — Բայց և այսպէս փոխառու-
թիւնը կատարւում էր մեծաւ դժուարու-
թեամբ , պարտուց ապահովութեան համար
տալիս էին լաւ արժէ թղթեր . . . — Այս ,
բայց ՚ի հասանել հատուցման ժամանակին նո-
րան առաջարկում էին դատաւորի միջամտու-
թիւնը , կամ ամենեւին հրաժարւում էին հա-
տուցանելուց , իսկ ժողովուրդը խնդում էր
և ուր ուրեք մի Նրէայ խարուել էր , խեղկա-
տակութիւնը բնական հետեւանք էր : — Պարոն
Մարսելեթ , ինձ թուի թէ դուք նկարագրում
էք թատերախաղու վաշխառուին . — Իրակա-
նութիւնը գրեթէ տարբեր չ'է ասածէս :

Անդադար ծաղր , մատնութիւն , ամբաստանութիւն , յաղթութեան ենթարկումն , ըստ որում օրէնսդրութեան պաշտպանութենէ զըրկուած է . սպառնալիք , յաճախ բանտարկութիւն , անդադար կորուստ ստացուածոց , ահա արծաթ փոխ տուլողը որպիսի պարագայից մէջ է վերջացնում իւր կեանքը : Ո՞՛ , լաւ արժէ թղթեր՝ զորս ՚ի ձեռքին ունէր . բայց ահա այդ հերը անօթի մեռնում է բողոքագրելով լեցուն անկողնոյ մէջ :

Մարսելեթը երկրորդ անգամ քըթիչ բարձրացուց և յանկարծակի դարձաւ դէպ իւր շփռթուած խօսակիցը . « Ուրեմն , ասաց նա , դուք փոխառութեան կարօտութիւն ունիք : — Այս , կարեմ յուսալ ձեզնէ : — կարէք անշրւշտ , բայց ես մի հասարակ վաշխառու չ'եմ , զգոյշ եղիք : — Զգոյշ լինիմ , ինչ կամիք ասել : — Ես տառապեալ չըէայ չ'եմ , որոյ մասին այժմ իսկ խօսեցայ և ոչ այնպիսի անձն՝ զոր կարեն ամբաստանել և վատահամբաւել : — Պարոն , ես ամենեւին այդպիսի դիտաւորութիւն չ'ունիմ , ըստ որում պատուաւոր մարդ եմ համարում ինձ : — Մտածեցէք կրկին , թէ ես հասարակ փօխատու չ'եմ , այլ ընկերակցական խորագէտ մարդ եմ և զբազում եմ կարի շահաւէտ գործերով , անդէպ և ունայն յուսով մի խարուիք : — Պարոն Մարսելեթ , ես երաշխաւորութիւններ ունիմ ձեզ առաջարկելու : — Երաշխաւորութիւննիք . այդպիսի բաներու կարօտութիւն չ'ունիմ , իմ յատուկ երաշխաւորութիւնը ինձ կը բաւէ :

Այսպէս ուրեմն ժամէ արդէն ձեռնարկել .
որոշցիք արգեօք . — Անտարակոյս : — Ես ձեզ
ազդ արարի , այսուհետեւ ձեռներս լուանում
եմ , դուք կամիք : — Այս . — Ո՞քան է ձեզ հար-
կաւոր : — Հինգ հազար ֆրանք : — Եղիցի ըստ
բանի քում հինգ հազար ֆրանք ո :

Մարսելեթը վեր կացաւ , գնաց բացաւ եր-
կաթէ արկղը . հանեց նորա մէջէն մի քանի
բանքային դրամատոմներ եւ մի մուրհակա-
թուղթ եւ այդ ամենը դրաւ սեղանի վերայ :
“ Վեց հազար ֆր . երեք ամսից յետոյ . ութն
հազար՝ վեց ամսից . տասն հազար մի տարուց
յետոյ , առաց նա , այս է իմ փողի օրինաւոր
շահը , ստորագրեցէք : Ի՞նչ էք անում , կամէիք
ձեր անունը ստորագրել .

Երիտասարդի ձեռնը թուլացաւ և թէպէտ
քրտինքը ճակատից վազում էր , այնու ամենայ-
նիւ շրթանց վերայ ժպիտ նկարեցաւ . “ Բայց թնչ ,
գունց նա , մի գուցէ ձեր անուամբ պէտք էր
ստորագրէին : Մարսելեթը , առանց պատաս-
խանելու , թերթում էր մի մեծ գիրք՝ որոյ մէջ
այբուբենի կարգով նշանակուած էին անուանք
Փարիզու վաճառականաց : “ Ստորագրեցէք ա-
հա այս անունը ո : Ասաց նա :

— Այս անունը . — Այս , այս անունը : — Զեմ
կարող հասկանալ ձեր առաջարկութիւնը :
— Եւ մի աշխատ լինիք դորա համար : — Պարոն
Մարսելեթ , թուի թէ դուք դեռ եւս չէք
դադարում զուարթաբարոյ լինել : — Իրաւունք
աւնիք կարծել , ըստ որում ՚ի սրտէ կը ցանկամ

ձեռնտու լինել ձեզ. ձեր յաջողութեան պատ-
ճառ լինելու դադափարը ուրախութիւն է ինձ
համար. կամիք ստորագրել: — Դիցնք — Բայց
ոչ ձեր անունը. — Ի սէր Աստուծոյ, Պարոն,
վերջացուցէք այդ ծաղրականութիւնը. — Ան-
կեղծ եմ առաւելքան երբ և իցէ: — Դուք ինձ
առաջարկում էք . . . բայց չէք մոածում որ՝
այդ կը լինի . . . — Նենգութիւն, քաջ գիտեմ:
— Դուք գիտէք, — Գիտեմ: — Թշուառական.

— Կացէք կացէք, ասաց Մարտելեթը, փա-
զաքշական ձայնիւ, փոքր ՚ի շատէ խորհրդա-
ծութիւնը անտեղի չէ. Եթէ այդ գումարը
հատուցանելու էք ժամանակի լրման նախընթաց
օրը, ինչու կը զարհուրիք. Եթէ կը հաճիք ըս-
տորագրել, զորօրինակ՝ Անտօն փոխանակ Յա-
կոբին որ ձեր անունն է, ով սկիտի իմանայ այդ.
— Իսկ ես ինքնին կարեմ չիմանալ. — Ի՞նչ մեծ
բան է. — Բայց ես ասացի, թէ այդ կը լինի . . .
Ստութիւն կը լինի, եթէ չը հատուցանէք:
— Պարոն, երեւի թէ դուք յոյս ունիք հրա-
պուրել. — Ամենեւին, դարձուցէք իմ հինգ
հազար ֆրանքը, ես յօժար եմ. — Այ դուք.
հաւաստեաւ գիտէք որ չը կարեմ: — Ուրեմն
Ստորագրեցէք: — Ո՛չ երբէք: — Մի երեխայ էք
դուք, ուր է վտանգը, միթէ չը կարէք դատել.
թէ այդ թուղթը դուրս ելնելու չէ իմ ձեռ-
նէն և նոյն իսկ իմ օգուտը պահանջում է որ՝
պահեմ այս արկղի մէջ մինչ՚ի ժամադրեալ օրը:
— Իսկ եթէ այդ օրը ես պատրաստ չը լինեմ:
— Կը լինիք, իմ պարտապանները միշտ պատրաստ

Են լինում այն պատռական հնարքի շնորհիւ,
որոյ գործադրութիւնը նորա կանխաւ զգում են։
— Սա մի ատելի հնար է։ — Բայց հաստիչ է իմ
կարողութեան . կամիք ստորագրել։ — Ոչ եր-
բէք։ — Կը յօժարիք վերջապէս . մտածութիւնը
կըստիպէ ձեզ փոխել ձեր կարծիքը։ — Անգամ մի
եւս կամիմ իմանալ, եթէ ժամանակը լրացած՝
ես չը լինիմ . . . — Եթէ հաւաստի չէք իմ հինգ
հազար ֆրանքը հատուցանելու մասին, ինչու
էք եկել փոխառութիւն խնդրելու եւ ինչու
կը տարակուսիք, եթէ ապահով էք այդ մասին.
Թէ ապաքէն պարզօրէն ցուցի ձեզ, թէ պատ-
ճառ չ'ունիք երկնչելու . Այսինքն՝ պէտք է
անձնատուր լինիմ ձեզ։ — Տէ՛ր Աստուած, այս,
այս։ — Եւ այս պարտաթուղթը իսկապէս կը
մնայ այս տեղ։ — Գուցէ այդ երաշխաւորու-
թեան պատճառաւ, մի բան երազում էք։
— Չ'ունիմ ինչ երազելու . . . Պարզենք վերջապէս,
փողի հարկաւորութիւնը սպառում է ձեր
կեանքը և եթէ դուք փող չը գտնէք, կը կո-
րուսանէք . . . ով գիտէ, նախ և յառաջ դուցէ
ձեր վարկը, յետոյ ձեր պատիւր ընկերութեան
մէջ, կամ ձեր բարեկամներին՝ որոնք իւրեանց
քսակով ձեռնտու են եղել ձեզ և կամ վեր-
ջապէս ձեր տարփածուին՝ զոր կը սիրէք։ — Յի-
րաւի այդպիսի վտանգի մէջ եմ։ — Դէ՞հ, ստո-
րագրեցէք, ստորագրեցէք ո .

Ինչպէս և կատարւում լինէին այդ գոր-
ծերը, ոմանք ստորագրում էին . Սատանայ
Վարսելեթը, առաւօտները, լափումէր երեք

այդպիսի հոգիք, իւրաքանչիւրից երեք հազար ֆրանք շահուռելով: Նորա հարիւր յիսուն հազար ֆրանքը, դեռ եւս տասն տարի չ'անցած, արդէն քառապատկել էր նորա հնարագիտութեան շնորհիւ: Եւ յիրաւի հնարագիտութիւնը հոյակապ էր, խորհուրդը նորակերպ, անլուր և անհաւատալի, ամենայն մանրամասնութիւնը իմաստութեամբ տնօրինած և ըստ պատշաճի կարգադրած: Կայէ Հերմէս, չաստուածդդկասկածաւոր վաճառաշահութեանց, զի ահա դու յաղթուած ես:

Փոխատուութեան վտանգաւոր արուեստի մէջ, գլխաւոր պայմանը ոչ ապաքէն փողը յետ դարձնելու ապահովութիւնն է, ուրեմն Մարսելելթը իրաւունք ունէր ասելու, թէ ինչ որ նորանէ պարտք էին առնում, միշտ հատուցանում էին և զիարդ կարէին չը հատուցանել, մինչդեռ վտանգը ակներեւ էր: Պարտապանք պատրաստ էին, ըստ որում անպատրաստութիւնը ընչից և ստացուածոց, նոյն և կենաց խնդիր էր և ուր էր պատրաստ չը լինելու հնարը: Եթէ ժամանակի լրման նախընթաց օրը այդ դժբախտներէ մին դատարկ ձեռներով դայիս էր հատուցման յապաղումն խնդրելու: Մարսելելթը ուսերը բարձրացնում էր, պատանին ազաչում պաղատում էր, ունայն: Մարսելելթը անողոք էր: « Ո՞վ էք դուք, հարցընում էր նա, ոսկեայ շղթայի հետ խաղաղով եւ կատարեալ անհոգութեամբ: Ինչ խնդիր ունիք, դուք ինձ անծանօթ էք: ձեր անունը

Յակոբ է . փոյթ չէ , թող լինի , բայց ես Յակոբի հետ գործ չ'ունիմ . Ես ունիմ պարտաւոսմ Անտոնի ստորագրութեամբ և վաղիւնորա վերաց կը լինիմ խնդրագործ , բնչ ունիք ասելու ո . Խղճուկ պատանին , յիրաւի , ոչինչ այլ եւս չը կարաց խօսել , ձայնը կոկորդի մէջ խեղդուեցաւ , ծնկները թռւլացան , ամօթով և զարհուրանօք կատամահ լինելով , ընկաւ նա իւր դահձի ոտքը . բայց ահա ոտքի ելաւ յանկարծ . “ Ես ձեր ձեռքումն եմ , գոյեց նա , արարէք ինչ որ կամիք , իմ ապաւէնը դատաւորն է . Եթէ դուք կամիք պատճառ լինիլ իմ կորստեան , կը մատնեմ և ես ձեզ նոյն կորստեան : Մարսելեթը կը ժպտէր . ”

Ամբաստանութիւն , Մարսելեթը այդ մասին երկիւղ չ'ունէր , ոչք պիտի լինէին վկայքը . այդպիսի սպառնալիքը նորա գոհերի կողմանէ խիստ ծաղրական էին երեւում նորան . բնչ կարէին գործել նորա գէմ , ոչ ապաքէն նա էլ ապացոյցներ պատրաստած էր իւր կողմէն : Ո՞վ էր հաւատալու այդ թշուառ մարդկանց՝ որոնք սոււտ ստորագրութեան յանցանաց մէջ արդարանալու համար , սնուտի պատճառներ յառաջ կը բերէին , իբր թէ բռնի ստիպել էին նորանց ստորագրել : Ակամայ նենդաւոր . — բնչ ասել է . Ո՞չ ապաքէն ամենայն յանցաւորք աշխարհի պատրաստ կը լինէին , իւրեանց օգտի համար , արտասուախառն աղերսանօք հաստատել , թէ գառնի պէս անմեղ կը լինէին , եթէ փորձիչ սատանան չը դար և նոցա մէջ չը փշեր

շար մոդեր . ծաղքելի են այդպիսի ապացու-
ցութիւնք . Ոչ , ոչ , նման օրինակ պարագայից
մէջ այլք չը կարէին լինել այնքան յանդուգն
եւ ոչ այնպիսի ճիշդ պայմանագիր , որպիսի
էր Մարսելեթը . բանի խորքը քննելու համար
նա իմաստնագոյն էր քան զբազումն . Մի բան
կար միայն , որ նորան աղդում էր սաստիկ
երկիւղ , այն է՝ եթէ չար դիսլուածով փոխա-
ռուք յամառէին և անհնար լինէր , թէ հաւա-
նական պատճառօք և թէ փաղաքշանօք համո-
զել նորանց դէպի սովորական թեթեւ պայման-
ները . Որոնք խուսափել էին սատանայ Մարսե-
լեթի որոգայթներէն , կարծում էին 'ի սկզբան ,
թէ սիրուն խաղ էին խաղալու նորա հետ ,
բայց կանխահաս էր այդ պարծանքը , ըստ որում
հարկաւոր էին վկայութիւն եւ ապացոյց .
Մարսելեթը իւր ձեռնով մի բառ անդամ
չէր գրում և գիտէր , թէ խօսքը , ըստ առածին
անցաւոր է . Թեթեւամիտ չարախօսաց դէմ
զինքը պաշտպանելով իրրու ընդդէմ զբար-
տութեան , քաջ ճանաչելով իւր հզօր իրա-
ւունքը , նա զերծ էր յամենայն վտանգէ .
Ուստի նորա ճարտարարուեստ հնարը յաջո-
ղելով , օր քան զօր յաւելում էր արդիւնքը .
Բայց՝ երեւի թէ , վաղ կամուշ մատն Աստու-
ծոյ պէտք է յայտնուէր , զի ահա պարտա-
պաններէն մին , չը կարելով պարտքը ժամա-
նակին հատուցանել , ինքնասպան եղաւ .

Այս ազնիւ գերդաստանի զաւակ էր և այն
միջակ հարստութիւնը՝ զոր ունէր երբեմն ,

Յօս էր սպառելու իւր համբաւեալ տարփա-
ծուի շնորհիւ : Այն ահաւոր վայրկենին ,
մինչ կամեր իւր դիտաւորութիւնը կատարել ,
անդամ մի չը մտաքերեց դիմել գէպի իւր
հայրը եւ թողութիւն խնդրել նորանէ այն
չարեաց մասին , զորս գործել էր և ոչ վերջին
անպատուութեան մասին՝ որով արատաւորելու
էր նորա անունը . նա մտածեց միայն իւր տար-
փածուի մասին : Նա կամեցաւ արդարացնել
այս անարդ գործը միայն այն գեղեցիկ աչաց
առջեւ , որը միակ պատճառ էին նոյն չարեաց ,
ուստի և իւր հրաժարական ողջոյնը միայն նորան
ուղղեց : Լախոր կարդաց նամակը և ընկաւ ու-
շալթափ . պատեհ դիպուած էր այդ , ուր նա
կարէր ներկայ գտնուած ոսոխաց ցուցանել իւր
վայելլագեղ անկումն 'ի գետին : Բայց և այնպէս
քաջասիրտ աղջիկ լինելով , այն ինչ ուշը ժո-
ղովել էր , երդմամբ խոստացաւ նոր սիրող
շընդունել , մինչ չէր կատարել առաջնոյն
վրէժիսնդրութիւնը և այսպէս նամակն 'ի ձեռքին
ուղեւորեցաւ գէպի դատարան :

Մարսելեթը , երջանիկ Մարսելեթը շատ
հեռի էր մտածելուց , թէ շանթ և կայծակ
կախ էին իւր գլխուն վերայ : Երիտասարդի
մահուան գոյժը նորան յայտնել էին և նա չէր
հաւատացել . գեղեցկապէս վայելելով իւր
կեանքը , ինչո՞ւ էր կամաւ երեւակայելու որ և է
փոփոխութիւն : Բայց այդ տիսուր դիպուածը
առ ժամ մի ազատ չը թողուց նորան մասնաւոր
հոգածութենէ , ըստ որում երկնչելու էր , թէ

մի գուցէ այդ ապուշը յառաջ քան անձնաս-
պանութիւնը որ և է անխօրհուրդ և յիմար բան
դործած լինէր : Սակայն կրկին մտածեց , թէ
թշուառականը սպանութեամբ կնքելով իւր
կեանքը միայն խայտառակութենէ և հօր անէծ-
քէն խուսափելու համար , լռութեամբ պէտք
է կատարած լինէր իւր դործը : Մարսելեթը
տարիածուի մասին չը մտածեց , չէր ճանա-
չում նա նոյնպէս և մարդկային սիրող . այդ
յանկարծահաս իրողութենէն նա հետեւցուց ,
թէ մեռնողի պատճառաբանութիւնքը , որ ինչ
և լինէին , առաւել ծանր կշռելու չէին , քան
մի կենդանի մարդու խօսքը . այս տեղ եւս նա
սիսալեցաւ : Ինչու պէտք է ստախօսելու կամք
ենթադրել այն մարդու մէջ , որ արդէն հրա-
ցանը ուզդել է դէպի իւր ծնօտը . այսպիսի
մարդու խոստովանութիւնը բոլոր աշխարհի
արդարութեան ատեանները անսուտ կը հա-
մարեն . ահա այս էր որ՝ հանձնարեղ Մարսե-
լեթը չը կշռեց և չը տեսաւ որ հաւանակա-
նութիւնը իւր կողմը չէ :

Այս էր պատճառը որ՝ հետեւեալ աւուր
կէս օրէն փոքր ինչ յառաջ , ըստ որում Բա-
թինեօլի խորհրդաւոր տան այցելուք սակաւ
էին եղած , Մարսելեթը հանգիստ դուրս ելաւ ,
գնաց իտալական Բուլլարի երեւելի պանդոկը
նախաճաշիկ անելու : Այն ինչ երեկոյեան մի ժա-
մը զարկեց և ահա ոստիկանութեան պաշտօն-
եայն ներկայացաւ : Խուռն բազմութիւն կանգ-
նած էր պանդոկի դրան առջև , ամենքը միմեանց

Խթելով, մղելով, հարիւր տեսակ հարցեր էին
անում. «Ո՞հ, ասացին մի քանի բարեսիրու-
անձինք, կորաւ այդ մարդը, Պաշտօնեան հազիւ-
հազ Ճեղքելով բազմւթիւնը եկաւ կանգնե-
ցաւ սեամքի վերայ, Մայրագոյն երջանկու-
թեան հասած, մեծն Մարսելեթ, նոյն իսկ
նախաճաշիկի վերայ, իբրև ՚ի քաջադէպ ժամու,
յանկարծահաս մահուամք կնքեց իւր կեանքը,
Հանգիստ ոսկերացն :

Ա. յնքան պատուով վաստկած ստացուած-
քը, այն է առաւել քան ութն հարիւր հազար
ֆրանք, կտակաւ թողուց նա իւր եղբօր, զին-
որ Լուգովիկոսի դստեր Մազթաղինէ Մար-
սելեթին :



Բ.

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ Մարսելեթ զինւորը իւր բոլոր
կենաց մէջ յայտնի էր իբրեւ պարկեշտ եւ
ազնուաբարոյ անձն, որ և յիրաւի խափան չէր
եղել նորա չափաւոր յառաջադիմութեան :
Տասնեակ պատերազմաց մէջ գտնուելուց յե-
տոյ, հազարապետութեան աստիճանի հա-
սած, կերպարանքը վերքերէ ապականուած,
սակաւուք թոշակաւորուած, բայց և այսու
իսկ գոհ, մեռել էր վերջապէս, քաջաբար
տանելով վիրաց ցաւը եւ ուղղակի նայելով:

դէպի փառաց արեւը՝ որ նորա համար չէր
եղած երբէք առաւելքան մի ազօտ լավտեր։
Նորա կինը, հասարակաց սովորութեան համա-
ձայն, մի փոքր բան պահպանել էր ամուսնոյ
թռչակէն, իսկ դուստրը ստացել էր դաստիա-
րակութիւն Աէն-Դէնիսեան արքունի դպրոցի
մէջ, ըստ որում իրաւունք ունէր առ այդ։
Հազարապետի յիշատակը արժանի էր օրհնու-
թեան և նորա քաջարի հոգին կարէր վայելել
հանգիստ ՚ի կայանս դիւցազանց։

Տիկին Մարսելեթը տասնեակ ամօք յառաջ
եկել էր Աէն-Դէնիս, դստեր դաստիարա-
կութիւնը հոգալու տեղական դպրոցի մէջ։
Աէն-Դէնիս տիսուր քաղաք է, մէջէն անցնող
ջրերը գարշահոտ, շրջապատ ստուար ծառուղիք
չըկարեն գեղեցկացնել աշխարհի որ և է գծուծ
անկիւնը, օդը՝ թանձր, երկիրը՝ յոռի, կանա-
չութիւնը՝ անշուք և արեգակը, կարծես թէ,
ճառագայթումէ խնայողութեամք ռամկարնակ
փողոցների և տիսուր ծառուղիների մէջ։ Բայց
և այնպէս, տիկին Մարսելեթը, անդամ մի
արդէն եկած գտնուելով, մնացել էր այս տեղ։
Նորան փոյթ չէր այս կամ այն բնակութիւնը,
հերիք էր որ՝ կը տեսնէին նորան մաքուր զգե-
ցած ըստ սովորութեան, անխռնջ և ժրաջան,
եւ կը գուշակէին, թէ զօրականի այրի էր,
ընտելացած ամեն ամիս զորապահակը փոխելու,
բոլորովին անտարբեր էր գէպի տեղեաց զանա-
զանութիւնը, դաշտային էր, թէ լեռնային,
ցամաք թէ կզզի։ Եւ ոչ մի այնպիսի կին էր նա՝

որ զբաղեր բազմատեսակ մանր բաներով, զորս
սիրում են միւս կանայք։ Ուր և գար, մի ակ-
նարկով շափում ճանաչում էր տեղական պա-
րագայքը, խկոյն բաց էր անում պայուսակը և
ահա հազիւ մի ժամ անցած, նա պատրաստ էր
զորահանդէս գնալու. շրջում էր հսկայական
քայլերով, իբրեւ թէ պատերազմական թմբուկ
առաջնորդում լինէր նորան, նորա զգեստը
առաւել բան հինաւուրցն պարզութիւն կ'ու-
նենար, եթէ այնքան շատ չը սիրէր փետուր-
ներ. ամառը կը շրջէր առանց հովանոցի եւ
առնական ձեռնոցներով։ Միով բանիւ այդ
կինը իբրեւ մի ձուլեալ նիւթ էր, մարմինը՝
կարծը, սիրտը պնդակազմ, խօսքը՝ ազգու, ոռ-
վորութիւնքը՝ անաչառ. նա չէր թոյլ տալ եր-
բէք այպանել կարգապահութիւնը, երբէք չէր
ունեցել աղախին, ըստ որում նորա հրամանա-
տարութիւնը միշտ եղել էր կամ մի զինւորի
և կամ իւր անձին վերայ։ Ըստ այսմ՝ յընթացս
վեց ամաց, մինչ նորա դուստրը Աէն — Դէնիսի
դպրոցն էր, ինքն ստոյիկեան հաստատամու-
թեամբ կեցել էր միայնակ և ձանձրոյթը, իմա-
նալով, թէ ում հետ էր գործ ունենալու, եւ
ոչ անգամ մի համարձակել էր բազիսել նորա
դուռը։ Անյոզդողդ հաւատարմութեամբ պար-
տականութեան գաղափարին և անողոք սիրոյն
դէսի կարգ ու կանոնը, որոնք առաջնորդում էին
նորան մանր գործողութեանց մէջ անգամ, հա-
զարապետի այրին ամենայն ինչ տնօրինում էր
Մագթաղինէի համար, մինչ նա կը դառնար

տուն, անպատում ուրախութեամբ պատրաս-
տում էր սպասք և կարասիք . անընական հա-
կասութիւն համարելու է որ՝ այդ առնագնաց
կինը, որոյ յատկութիւնքը յաւէտ արական
սեռի կը վերաբերէին, ասեղնագործութեան
ճաշակաւ կապուած էր իւր սեռի հետ . նա
անդադար ձեւում կարում էր, նստած պա-
տուհանի մօտ եղէգնեայ աթոռի եւ կաշեայ
բարձի վերայ, որ նորա հասակը այնքան բարձր
էր երեւցնում, մինչ զի անցորդք զարմացած
կանգնում էին նայելու . իսկ թափառասէր տը-
զաք վախնում էին նորանից : Բայց ահա այն
միջոցին՝ որուն հասել ենք մեր պատմութեան
մէջ, պատուհանի առջեւ շատուց արդէն եր-
կու աթոռք կային և անցորդք հազարապետի
այրիեն զատ նկատում էին եւ մի սիրուն
օրիորդ . մաղերը՝ խարտեաշ, ակունքը՝ երկնա-
գոյն և շրմունքը՝ վարդանման, Այօր համբե-
րութիւնը ստացել էր վարձատրութիւն, զի
ահա ՚ի չորից ամաց հետէ դուստրը իւր մօտ էր:
Մագթաղինէն այժմ քսան և երկու տարեկան
էր :

Այդ սիրունիկ օրիորդի ծնունդը անտա-
րակոյս պէտք էր վերաբերել դիպուածոյ կամ
ընութեան քմահաճութեան : Եինչդեռ նա
հինգ կամ վեց տարեկան էր, գնդապետի կինը,
նկատելով սորա սիրուն երեսը եւ ոսկեգոյն
մազերը, գիտութեամբ հարցած է եղել ծնո-
ղաց, թէ ինչպէս է պատահել որ՝ նոցանից
ծնել է մի այդպիսի գեղեցիկ էակ . Այդ իսկ

միջոցին Սակթաղինէն , զքօսանաց ժամանակ
ընդ մէջ հօր և մօր ընթանալով , նմանում էր
այն փոքրիկ և աներկիւղ ծաղկանց՝ որոնք բու-
սանում և փթթաւմ են ընդ մէջ երկուց քարա-
ժայռից : Դեռ եւս երեխայ , նա մանրիկ էր և
նուրբ , զուարթ իրբեւ վարդ , անհանդարտ
և կայտառ իրբեւ ծիծեռնակ և այս ամենայն
մինչ այժմ իսկ փափոխութեան ենթարկուած
չ'էին . փոքրիկ աղջիկը արդէն շափահաս օրիորդ
էր , բայց նորա շրմունքը նկարում էին նոյն
երեխայական ժպիտը , ինչպէս երբեմն . իսկ թէ
որքան իմաստութիւն էր արտայացտում այդ-
թեթեւաբարոյ արարածը , անշուշտ կարելի էր
նկատել նորա առաւել ծիծաղկոտութեան և
զուարձութեան մէջ այն միջոցում , երբ մայրը
առոտնին պարագայիւք նեղուած կը տրտմէր .
բրբանօք և ուրախական երգերով փարատում
էր նա այդ տրտմութիւնը , հոգատարութեամբ
յուղուելով , անդադար տարուրերում էր նորա
շուրջը , այնպէս որ՝ վերջապէս հազարապետի
այրին ապշեալ այդ վայելուչ աղմուկէն , սեղ-
մում էր նորա ձեռները իւր ձեռների մէջ և
մղեգնութեամբ սքանչանում էր նորա վերայ .
Նա չը կարէր ընտելանալ դստեր մարդասիրու-
թեան և վայելլագեղութեան հետ և ժամանակը
մինչ այժմ անզօր էր այդ պարագայի մէջ :
Առաւել քան երբեմն գնդապետի կինը , զար-
մանում էր նա , թէ իւր մարմին և արիւնից
վեարդ կարէր տաեղծուել այդպիսի շնորհա-
զեղ էակ . անշուշտ կը ցանկար նա ճնշել

իւր զաւակին դպուանք և փափկութեամբ ,
բայց ամենեւին չ'էր կարող փափկութեամբ
արտայայտել մայրական գործվը : Նորա սիրառ
հաղ ու մաշ էր լինում կոշտ կեղեւի տակ
եւ յականողեաց ծորում էին խոշորակա-
թիլ արտասուք արեւակէզ այտից վերայ +
Եղոնկ , երբէք այլ իմն երջանկութեան չ'էր
ցանկալ նա , միայն թէ լինէր առաւել հա-
րուստ : Մտածելով ապագայն եւ դստեր քը-
սաներկամեայ հասակը , պէտք էր լուծել այն
սոսկալի խնդիրը , թէ բնչպէս էր ամուսնա-
նալու այն աղջիկը՝ որ չ'ունէր ինչ : Այդպիսի
շարագոյժ խորհրդածութիւնը ամեն դիշեր
պաշարում էին խղճուկ մօրը , իսկ առաւօտուն
նա արդէն կանգնած էր նորոգ դարթուցեալ
Մագթաղինէի անկողնոյ մօտ , կամելով լըր-
տեսել նորա երազոց մէջ սրտի խորհուրդը .
որովհետեւ սարսափում էր , թէ մի գուցէ
մատաղ դուստրը միակերպ և շափաւոր կեն-
ցաղավարութեան մէջ , տաղտուկ զգար և նորա
զուարթութիւնը լինէր միայն վեհաղնական
կեղծիք , բայց Մագթաղինէն զարթնում էր
միշտ ուրախադէմ : Բախտաւոր է , իւրօվին
ասում էր մայրը , բայց եկամուտքը միայն
հաղար հինգ հարիւր լիրայ . որ և է յոյս ոչ
ուստեք :

Մի առանու մինչդեռ մայր եւ աղջիկ ,
տան պէտքերը կարգագրելուց յետոյ , մին
ասեղնագործութիւնը , միւսը հիւսուածը ձե-
ռին , նստած էին սովորական աթոռոց վե-

բայ պատուհանի մօտ , յանկարծ թղթարերը
բաղիսեց ապակին . Նամակ . բայց նոքա ըն-
տանիք չ'ունէին և խղճութիւնը սաստիկ նը-
ւազեցուցել էր նոցա ծանօթից և բարեկամաց
թիւը . որու միտքն էր եկել ուրեմն այդ նա-
մակագրութիւնը . թղթոյ ծալուածը յայտնում
էր որ և է կարեւորութիւն . տիկին Մարսելե-
թի անսասան սիրութ թնդաց , հոտոտելիքը ըզ-
դացին պաշտօնական կամ դիւանական բու-
րումն . Գուցէ այդ լինէր հանգուցեալ հազա-
րապետի ծառայութեան ըստ արժանւոյն գը-
նահատութիւն , կամ նորա թոշակի կրկնա-
պատկութեան ազդարարութիւն : Ահա այս-
պիսի ցնորական մտածութեանց մէջ քակտեց
կարմիր կնիքը . « Մեղաց քեզ , Տէր , այս Բնչէ ,
աղազակեց նա , ով կամեցաւ մեզ ծաղրել , որ
և է լկաբն . ոչ , ոչ ... նօտարի ստորագրութիւն
կայ ներքեւը . Ո՛հ , կարծես թէ հայեացքս քո-
ղարկուել է . Ի՞նչ եղաւ ինձ , Մագթաղինէ ,
գուցէ ուղիղ չը կարդացի .

— Մայրիկ , թոյլ տուր ինձ կարդալ :

— Մաղրածութիւն չէ , կրկնեց մայրը , մեզ
նշաւակելու մեքենայութիւն չէ , մի գուցէ
խարուեցայ , կամ անմիտ և ցնորուած եմ :

Եւ այսպէս տիկին Մարսելեթը աղջկան
ետեւը կեցած՝ թիկանց վրայէն կրջանար նա-
մակը կրկին կարդալու :

— Մայրիկ , ասաց Մագթաղինէն , թոյլ տուք
ինձ վերջացնել :

— Տէր Աստուած , որքան ժամանակ պէտք է

քեզ մի նամակ կարդալու , կամիս ինձ մահ
պատճառել , չար աղջիկ :

— Ի՞նչ կայ Մագթաղլինէ , ստոյդ է , հա-
րծւստ ենք :

— Թուիթէ ստոյդ է :

— Բարեբար Տէր . մի բաժակ ջուր տնուր ինձ ,
զաւակս , շնչառութիւնս սպառում է :

— Կ'աղաչմ'մ , մայրիկ , հանգիստ եղիք , ահա
ջրոյ բաժակը . ի՞նչ եղաւ , միթէ մի փոքր ար-
ծաթի համար , որ յԵրկնից կ'իջանէ մեզ , դուք
կամիք հիւանդանալ :

— Մագթաղլինէ որքան է , հառաջանօք հար-
ցուց մայրը :

— Ութն հարիւր հազար ֆրանք :

— Ութն հարիւր հազար ֆրանք , կրկնեց տի-
կին Մարսելթը գոցելով աչքերը » :

— Մայրիկ , ասաց Մագթաղլինէն , դուք ինձ
երբէք որ և է լուր հազորդել չէք իմ հօրեղբօր
կենդանութեան մասին :

— Ո՛չ , եթէ իմացան լինէի այդ :

— Ընդ հակառակն՝ դուք ինձ պատմել եիք ,
թէ նա գնացել էր Ամերիկա և այն տեղ վախ-
ճանել էր և թէ իմ հայրը՝ որ յարգանաց ար-
ժանի չէր համարում նորան , յաճախ ասել է ,
թէ լաւ է որ մեռել է

— Քո հայրը մի կատօն էր , միջահատեց հազա-
րապետի այրին . ոչ , ոչ , Օնօրէն Ամերիկա վախ-
ճանած չէր , նա ապրում է եղել մեզ համար
հարստութիւն դիզելու . այդ սիրելի մարդը .
. . . Մագթաղլինէն , նրբագոյն իմն մաղիս ար-

ասյայտելով, կտրեց նորա խօսքը . “Մայրիկ, ասաց, դուք նորան աւելի սիրում էք մեռնելուց յետոյ .

— Ի՞նչ ես խօսում աղջիկ, ոչ ապաքէն իրաւունք է մեզ ուրախ լինել, մինչ արդէն հարուստ եմք :

— Բայց հարկ չէ ուրախանալ որ և իցէ մէկուն մահուան պատճառաւ .

— Իրաւ է, ումժն հարիւր հազար ֆրանք . այդպէս կարդացիր . որքան շահ կը բերէ, քաղցրիկդ եմ Մագթաղինէ :

— Գառասուն հազար ֆրանք .

— Գառասուն հազար, ի՞նչ պէտք է գործենք այժմ, ժամանակ չը կորսնցնեմք, սիրելի, ջէր Աստուած, ինչո՞ւ սկսենք . Մի խորհուրդ տուր ինձ, Մագթաղինէ :

— Ըստիս, մայրիկ, նախ և յառաջ պէտք է դիմել նօտարին .

— Գնանք ուրեմն պատրաստուենք . Ցիկին Մարսելթը վեր կացաւ և տակաւին թալկացեալ ընթացիւք ուղղեցաւ դէպի իւր սենեակը, կանգ առնելով այն տեղ, կրկին նայեցաւ դէպի դուստրը և դարձեալ ողջագուրեց նորան .

— “Մագթաղինէ, ասաց նա, թուի թէ դուրաւական գոհ չ'ես . միթէ զգալի չէր քեզքո խղճութիւնը ։ Մագթաղինէն ընդ դրկեց նորան . “Մայրիկ, պատամանեց դուստրը, եթէ ավ և իցէ մեզ երկուքիս տեսնէր այժմ, կը հաւատար արդեօք որ՝ ես քեզնէ առաւել արիասիրտ եմ .”

— Յիրաւի , պատաժիանեց հազարապետի
այրին , կեցուածքը ուղղելով եւ ծածկաբար
արտասուքը սրբելով , բայց գէթ ողբում
չեմ : Մագթաղինէն միւս անդամ զսպեց
իւր ժպիտը :

— Մայրինկ , ասաց նա , կը հաճիք որ՝ յառաջ
քան մեր գնալը . մի քանի խօսք գրեմ
նեռնարին :

— Ո՞՛ , պատաժիանեց տիկին Մարսելեթը ,
նախանձարեկութեան թեթեւ շարժումն գոր-
ծելով , այո , գրիր , ես մոռացել էի որ՝ մի
Պարոն Բեռնար կայ և քո ուշք ու միտքը նորա
հետ է :

— Խեղձ տղայ , ասաց Մագթաղինէն , կարի
խեկ հարկ է որ՝ նա եւս հաղորդ լինի մեր
ուրախութեան :

— Դրիբ ուրեմն , ասաց մայրը :

Մագթաղինէն չ'սպասեց հրամանը երկրոր-
դելուն : բայց նորա մի խօսքը եղաւ մի տօմսակ
և ամբողջ նամակ լինելուն փոքր էր պակասում :
Այդ քաղցր թղթակցութիւնը Բեռնար Լեկու-
րի հետ էր , որ Աւեն-Դէնիսի արքունի հարկա-
պահանջի մօտ անվարձ գրադիր էր և որ անյօյս
չէր վաղ կամ ուշ պաշտօն ստանալուց հարիւր
ֆրանք ամսականուվ , իբրեւ վարձատրութիւն
նորա անցեալ փութաջան աշխատութեան :
Այն ինչ վերջացուց գրուածքը , եկաւ օրիորդը
միայաւ մօրը , որ արդէն պատրաստ սպասում
էր նորան : Մի ժամից յետոյ՝ նոքա Փարիզ
էին : Նօտարը բնակում էր Շատ-դ'Անժէն

մատղացի վերայ , ուր տիկնայք հետի գնացին .
տիկին Մարտելեթի համար նոր բան չ'էր լի-
նել առաւել հետի եւս ընթանալ , իսկ Մադ-
թաղինէի մանրիկ ոտքը բաւական թեթեւ էին .
բայց և այնպէս մայրը սորա թեւը առել էր
իւր թեւի վերայ և սիգածեմքայլերով ընթա-
նում էր , հազար յիմարութիւնք արտաքերե-
լով , զորս զարմանալի էր լսել մի այդպիսի
ծանրաբարոյ տիկնոջէ , որ գլուխը բարձր եւ
ամբարտաւանօրէն կը ճեմէր , իբրեւ թելլօն :

Ա Մայրիկ , ասաց յանկարծ Մադթաղինէն .
հարկ է արդեօք միւս ժառանգաց ուրախու-
թիւնը կշռել ձեր ուրախութեան չափով : Դուք
ակամայ միտս էք բերում այն ծեր գեներալին՝
որ գալիս էր մեր դպրոցը իւր թոռնին տեսնե-
լու և ամենքիս համար բերում էր շաքարեղէն .
նա ամենեւին հարուստ չէր և միայն արքու-
նուստ ստանում էր թոշակ : Ո՛վ թէ բնշպէս
շոյում էին նորան , գգւում և ցանկանում էին
հարիւրամեայ կեանք : Գանի երջանիկ են ծեր
գեներալները : Գիտէք մայրիկ , եթէ իմ հօր-
եղբայր Օնօրէն միայն թոշակ ունեցած լինէր
գուցէ մեզ առաւել հաճելի լինէր ողբալ նորա
մահը : Ո՛հ , այժմ , մինչ մեք հարուստ եմք ,
ես կը ցանկայի մեր բոլոր ստացուածքը այնպէս
տնօրինել , որպէս զի մեր մահուան հետ նա
սպառէր , եւ ոչ ոք չը հրճուէր մեր . կենաց
վախճանի վերայ :

— Դուստր իմ , ասաց հազարապետի այրին զգո-
նութեամբ , դու յաւիտեան մնալու ես երեխայու:

Այս միջոցին նորա եկան Նօտարի տան մօտ .
տիկին Մարսելեթի երևակայութիւնը նկարում
էր ծանուցագրերի ժպիտը առ ինքն . Մտան փա-
ռաւոր դաւիթը , անտի ելին օժոցներով ծած-
կուած սանդուղները , բացին ոսկեղօծ դուռը
և ահա մի սենեակի մէջ էին , ուր հինգ կամ
վեց մարդաձեւ մեքենայք դարբնում էին չըդի-
տեմ ինչ կախարդական դիրք , իւրաքանչւրոց
ձեռին մի մի մեծ դրիչ փոխանակ մուրճի եւ
ամենքի առջեւ դրոշմած թղթեր փոխանակ
սալի : Մաշուած , հնացած թղթոց բուրումը
իրբև փոշի օդոյ մէջ տարածուած էր , փայտեայ
պահարանաց դարակներու մէջ կարդաւ դա-
սաւորած էին կանաչ թղթապատեանք . այս
տեղ մարդ մահուան երկիւղով կը բռնուէր :
Երբ որ տիկին Մարսելեթը և նորա դուստրը
մտին այդ սենեակը , մի քանի դրագիր պարո-
նայք յոտին առաւոտեան հացկերոյթը կ'ընդու-
նէին , չորաբեկ նախաճաշիկ , զոր , Սպարտացոց
աշխարհէ ջնջուելուց յետոյ , միայն Փարիզիք
կարեն մարսել առանց չարախորժութեան .
Վեցեակ զոյդ աչաց , բաւական լկափ հայեացք ,
դարձան դէպի տիկնայքը , թեթեւ ակնարկք
և ժպիտ : Այս պարոնները նկատեցին հազա-
րապետուհւոյ ծաղրելի անձնաւորութիւնը և
նորա դստեր բաւականաչափ գեղեցկութիւնը :
Բայց ահա տիկին Մարսելեթը յայտնեց իւր
անունը . վեցեակ միջնողունք ծալուեցան նորա
առջեւ , Գառպար Օնօրէ Մարսելեթի կտակը
յայտնի էր ամբողք գրասենեակին : Նօտարի

Այս միջոցին նորա եկան Նօտարի տան մօտ .
տիկին Մարսելեթի երևակայութիւնը նկարում
էր ծանուցագրերի ժպիտը առ ինքն . Մտան փա-
ռաւոր դաւիթը , անտի ելին օժոցներով ծած-
կուած սանդուղները , բացին ոսկեղօծ դուռը
և ահա մի սենեակի մէջ էին , ուր հինգ կամ
վեց մարդաձեւ մեքենայք դարբնում էին չըդի-
տեմ ինչ կախարդական դիրք , իւրաքանչիւրոց
ձեռին մի մի մեծ գրիչ փոխանակ մուրճի եւ
ամենքի առջեւ գրոշմած թղթեր փոխանակ
սալի : Մաշուած , հնացած թղթոց բուրումը
իրրև փոշի օդոյ մէջ տարածուած էր , փայտեայ
պահարանաց դարակներու մէջ կարդաւ դա-
սաւորած էին կանաչ թղթապատեանք . այս
տեղ մարդ մահուան երկիւղով կը բռնուէր :
Երբ որ տիկին Մարսելեթը և նորա դուստրը
մոխին այդ սենեակը , մի քանի գրագիր պարո-
նայք յոտին առաւօտեան հացկերոյթը կ'ընդու-
նէին , չորաբեկ նախաճաշիկ , զոր , Ապարտացոց
աշխարհէ ջնջուելուց յետոյ , միայն Փարիզիք
կարեն մարսել առանց չարախորժութեան :
Վեցեակ զոյդ աչաց , բաւական լկափ հայեացք ,
դարձան դէպի տիկնայքը , թեթեւ ակնարկք
և ժպիտ : Այս պարոնները նկատեցին հազա-
րապետուհետոյ ծաղրելի անձնաւորութիւնը և
նորա դստեր բաւականաչափ գեղեցկութիւնը :
Բայց ահա տիկին Մարսելեթը յայտնեց իւր
անունը . վեցեակ միջնողունք ծալուեցան նորա
առջեւ , դասպար Յնօրէ Մարսելեթի կտակը
յայտնի էր ամբողջ գրասենեակին : Նօտարի

ազնական գրադիրը դեղքեղուն ձայնիւ հրաւիւ
րեց զերկոսին եւս իւր ետեւէն զնալ և ինքն
յետս յետս դառնալով նոցա առջեւէն , մըտ-
ցուց նորանց տան ու տիրոջ գրասենեակը :

Պատերը կանաչ , վարագոյրները կանաչ ,
մթոցքը կանաչ , մեծ և հաստաշէն գրասեղանը
մի մասամբ նմանում էր դիւանական ատենի
և միւսով հաշուեսեղանի , ընդհանուր երե-
ւոյթը պերճ և տխուր , այս էր ահա Նօտարի
փառաւոր դահլիճը : Թէեւ եղանակը ամսո-
նային էր , քնքուշ Մագթաղինէն արդէն գան
զատում էր ցրտից : Դահլիճը թափուր չէր .
զի ահա մի մարդ տեղից վեր կացաւ դժուա-
րութեամբ և դարձեալ անկաւ ամժոռոյ վերայ,
ցաւագին և ծաղրաշարժ հնչիւնք արտապե-
րելով , որ ՚ի սկզբան օրիորդին ծիծաղեցուց :
Այդ մարդու հանդերձները մաշուած և կարկա-
տած էին և կօշիկները կաշեայ լարերով կապած ,
իւր գլխարկը ձեռաց մէջ պտուտելով , նա
նայում էր անհանգիստ աչօք դէպի նորեկ կա-
նայքը , որ հաճելի չէր Մագթաղինէին :

Օրիորդը սակաւիկ ինչ շրջեցաւ սենեկի
մէջ , իրը թէ կամէր գտնել որ և է նկար պա-
տերի վերայ , բայց գտաւ միայն նահանդական
արգելմանց ցուցակը՝ որ ամենեւին շահագրգիռ
չէր նորա համար և դառնալով դէպի իւր տեղը ,
կրկին հանդիպեցաւ անհանգիստ հայեցուածոյն՝
որ չէր դադարում նորան զննելուց : Այս
տարօրինակ անձը հանգիստ չէր մնում ամժոռոյ
վերայ , դէմքը ծռում էր , բերանը բանում էր

կիսաշափ, իրբեւ թէ կամեր խօսիլ, նորա կախ թուշերը, տափակ սանտրած մազերը, անմիտ և կեղծ բարեպաշտական կերպարանքը, որոնք կը պատշաճեին դիւղական եկեղեցւոյ լուսարարի, առաւել անհաճոյ էին տիկին Մարտելեթին. Յան կարծ վեր կացաւ սա, շրթունքը կ'սմթեց, զննեց այդ սպրդած մարդուն այնպիսի դիմօք՝ որ կարէր ահաբեկել առաւել իրոխտներին անդամ եւ մինչ պատրաստում էր անողոք խստութեամբ հարցանել, թէ որնվ իրաւամբ և ինչո՞ւ էր նայում գէպի իւր դուստրը, գրասենեկի դուռը բացին, Նօտարը մոռաւ ներս :

Հանդերձը սեւ, փողապատը սպիտակ, կղակը գերծած, սոկեզօծ ակնոցը քթի վերայ, կաշեայ զենջակը թեւի տակ, ահա այս էր Նօտարի երեսյթը նոյնչափ պաշտօնական որչափ և նորա գրասենեակը, դեռ եւս երիտասարդ էր նա, նուրբ, և յօգնած դիմօք, բռնազրօսիկ աչօք՝ որոնց հայեցուածը սքանչելի կերպիւ նա կարէր ամոքել, կարէր ՚ի հարկին եւ իւր գեղնած շրթանց վերայ վայելսագեղ ժպիտ երեւցնել. Առաջին ողջոյնը տուաւ ժառանցուհւոյն եւ մեծարանօք խօսեցաւ նորա բախտի յաջողութեան վերայ. Մագթաղինէն կարմրեց, որովհետեւ կարծում էր, թէ այդ չափազանց քաղաքավարութիւնը անխառն չէր տակաւ ինչ հենգնութենէ. Մինչդեռ Նօտարը վերջացնում էր իւր քաղաքավարական ցոյցքը, նոյն անհանգիստ մարդը, որ գեռ մնում էր իւր տեղը, կրկին արձակեց հեծութեան հըն-

շումն՝ զոր ՚ի սկզբան արդեն լսել էին հանայք :
Նօտարը դարձաւ դէպի նա՝

— « Գարովու , ասաց նա մեղմ ձայնիւ .
դուք խոստացաք պարկեշտ լինելո . Գարովու ,
այդ անունը խռովայոյզ յիշատակ զարթուց
Մագթաղինէի մոտաց մէջ , իսկ նորա մայրը ,
բոլորովին անտարբեր դէպի այդ պարագայն .
Նուաճել էր Նօտարին եւ հեղձում էր հարց
ու փորձերով .

— « Ո՞ւր կը բնակեր հանգուցեալը Ամե-
րիկայից վերադառնալուց յետոյ , Փարիզ
արդեօք . Փարիզ տիեզերք է , անծայր է . եր-
կու բարեկամք , երկու եղբարք կարեն քսան
տարի բնակել երկու կից փողոցներու մէջ ,
առանց երբէք միմեանց հանդիպելու : Ի՞նչ
կը գործէր արդեօք այդ մարդասէր և ազնիւ-
թնօրէ Մարսելեթը՝ որ այդքան փոքր ժամա-
նակի մէջ ճարել էր մի մեծ հարստութիւն :
Անտարակոյս որ և է արուեստ է ունեցել ,
կամ մի բազմաշահ հնարագիտութեան և մե-
քենայութեան հեղինակ է եղել : Բայց քանի
հրաշալի է որ՝ այդքան հարուստ մարդը կան-
խաւ մոտածել է իւր ընտանեաց մասին . Ի՞նչ է
եղել արդեօք այդ միտքը յղանալու պատճառը :
Խցիւթէ իւրայնոց յաջողութեան բաղձանքն է
եղել . որ և է առանձին պայմաններ կան այդ
բարերարութեան . մէջ ո . Մինչդեռ տիկինը
շարունակում էր այդ հարցերը , Նօտարի սովո-
րական անկարեկից կերպարանքը յայտնում էր
առաւել սառնութիւն և հանդիսաւորութիւն .

նորա միակ պատասխանին այն եղաւ որ՝ առաջարկեց կտակը կարդալ։ Մագիթաղինէն այս միջոցին զգաց որ՝ նորա հանգերձը քաշում էին եւ արդարեւ սա նոյն խօժուադէմ անձն էր, որ այժմ մեղմիկ սահել էր դէպի Մագիթաղինէն։

— «Դուք ինձ չեք ճանաչում, ասում էր նա, ես Գարոլոսն եմ»։ Մագիթաղինէն դըժկամակութեամբ դարձուց իւր դէմքը։ «Իմ անունը Գարոլոս Մարսելեթ է, կրկնեց նտվորը ինչ բարձր ձայնիւ, ես եւս հանգուցելու եղբայրն եմ»։

— Գարոլոս Մարսելեթ, գոչեց օրիորդը։ «Մայրիկ, յիրաւի իմ հայրը երկու եղբարք ունէր ու Այն, այս տեղ կանգնած էր Գարոլոս Մարսելեթը, հողագործի երրորդ որդին՝ առ որ ընտանիք այնքան անուշադիր էին, որքան նա ապուշէր։ Հաղարապետի այրին այլագունեցաւ և սրտմտութեամբ յանկարծ վեր կացաւ։ Նօտարը ուսերը բարձրացուց։ «Գարոլոս, ասաց նա խստութեամբ, դուք չը հաւատացիք ինձ, թէ ձեր եղբայր Յնօրէն ամենեւին չէր մտածել ձեր մասին։ այս պատճառաւ միայն թոյլ տուի ձեղ գալ այս տեղ և հանգուցելու ընտանեաց հետ միասին կտակի ընթերցումը լսել։ Ես ձեղ կ'արգիլէի մտնել իմ գրասենեակը, եթէ չը ճանաչի ձեղ մինչդեռ գրագիր էիք իմ մօտ։ այդ մի սիրելութիւն էր դէպ առ ձեղ։ ուրեմն տեղի մի տաք ինձ զղջալու ու Յետ այսորիկ նա շարունակեց ընթերցումը։ Այն ինչ այդ

թեթև հարուածի աղդեցութիւնը անցել էր .
տիկին Մարսելեթը ինքը սկսեց քննել գմբախտ
գարովսախն . նկատելով նորա խղճութիւնը եւ
թշուառութիւնը , նա մտածում էր , թէ Օնօրէ
Մարսելեթը դիւրաւ կարէր ինչեւիցէ գործել
իւր երէց եղբօր մուրացկանութիւնը արդիլե-
լու համար , բայց մի և նոյն ժամայն յակամայս
սարսափում էր , թէ մի գուցէ նշանաւոր բան
գործած լինէր . երկիւղը դստեր մասին էր և
Մազթաղինէն լուռ նստած՝ անզգայաբար
թուում էր հօրեղբօր հազուստի կարկատան ,
ները . գմբամակութիւնը՝ զոր 'ի սկզբան աղդել
էր նորան այդ տգեղ անձը , փոխուել էր գէպի
հոգս և կարեկցութիւն . նա նոյնպէս սպասում
էր կտակի մէջ որ ևէ կարգադրութիւն յօդուայ
այդ հէք մարդուն , բայց չը կար ինչ . Գարո-
լուր ունայնացեալ 'ի յուսոյն , կրկին անկաւ
իւր ամֆոռոյ վերայ . իբրեւ 'ի կոր կործանեալ .
Հազիւ վայրկեան մի անցած՝ վեր կացաւ նա
յանկարծ և արշաւակի դիմեց գէպի կանայքը .
և իսկ ես , աղաղակեց նա , իմ համար չը կայ
ինչ ։

Այժմ նորա գէմբը չէր այնպէս ցաւագին
և կեղծեալ , որոպէս մի ժամ յառաջ , երբ կա-
րեկցութիւն շարժեցին տիկին Մարսելեթի և
նորա դստեր մէջ . Ադահութեան գեւը մտել
էր այդ ծոյլ մարմնոյ մէջ իւ ելեքտրականու-
թեամբ բորբոքել էր նորան , փրփուրը թափ-
վում էր նորա բերանէն , այս էր ակնկալեալ
բախտի արդիւնքը : Եթէ ժառանգութենէ

զրկուած Գարովոր գանկատած լիներ միայն
իւր թշուառութենէն , Մագթաղինէն և նու-
րա մայրը ողորմելով մի փոքր բան կը տային
և ինքեանք կ'երթային հարստութեան երջան-
կութիւնը վայելելու , երբէք նոքա չէին իմա-
նալ իւրեանց յաջողութեան աղքիւրը : Բայց
Գարովորի ահադին բարկութիւնը խռովեցուց
տիկին Մարսելեթին . նա բռնեց Գարովորի
բազուկը և խօսութեամբ յետս մղեց նորան
իւր դստերէն . միթէ այսպիսի պարագայի մէջ
նորա կուռ բազուկը անգործ էր մնալու :
Յետ այսորիկ նա յայտնեց , թէ վարուելու է
համաձայն հանգուցելու կամաց : Գարովոր
վայրիեան մի մեաց լուռ , զի ըս կարէր խօսել :
Նօտարը նմանապէս լոփկ նկատում էր այդ
տեսարանը՝ որոյ պատրաստութեան մէջ գուցէ
եւ ինքն անմեղ չ'էր : Գարովոր վերջապէս
վերստին կարողութիւն ստացաւ խօսելու՝
և դուք իրաւունք ունիք , բացագանչեց նա ,
այս կերպիւ ահա ձեր ստացուածքը կը լինին
Երկիցս յափշտակեալ , դուք իրաւունք ունիք ո :

Յափշտակեալ , կրկնեց հաղարապետի այրին ,
յափշտակեալ , վերակրկնեց Մագթաղինէն .
նայեցան նոքա փոխագարձաբար և երկոյունց
հոգիք նկարուեցան այդ նայեացքի մէջ : Մայրը
թէին ընկառ դստեր ուսին եւ երկուքն եւս
երկար միջոց մնացին ակնկոր , չը համարձակելով
զաշս ՚ի վեր ամբառնալ : Չնօրէ Մարսելեթը
թողում էր նորանց կողոպտած հարստութիւն :
Այդ բնչ ըստ էր , բնչ զարթումն և բնչ ան-

կումն . ինչպէս միժամ յառաջ տեսած սիրուն
երազը տիտուր և անարգ ծուխ էր դառնում :
Տիկին Մարսելեթը զգում էր արեան խուսա-
փանքը իւր սրտից , կեանքը , կարծես , թէ կա-
թիլ առ կաթիլ ծորում էր նորա միջէն . միայն
մի միտք շըշընում էր նորա նուաղած գլխու-
մէջ , միայն մի ձայն լսելի էր նորան և սա մի
ազաղակ էր . թէ Մագթաղինէն դարձեալ աղ-
քատ է . Դուստրը նմանօրինակ մոտածմանց մէջ
էր , թէ մայրը թշուառութեան մէջ կը ծերա-
նայ . Գարովոսի զայրութը շիֆած կ'երեւէր , նա
դարձել էր իւր անկիւնը թաղծացեալ և դառ-
նապէս ողբալով . սորա հեծեծանաց կսկծալի
ձայնը այժմ խանգարում էր ընդհանուր լուս-
թիւնը բնակարանի մէջ . Նօտարը կարէր ընդ-
հատել , բայց նա չը գիտէր , թէ ինչ հետեանք
էր ունենալու այդ անցքը , մանաւանդ և օրի-
որդի արամադրութիւնը չը կարէր գուշակել .
այսպիսի պարագայից մէջ զգուշութիւնը առա-
քինութիւն էր նորա պաշտօնին վերաբերու-
թեամբ , իսկ բարեգործութեան մասին սովո-
րական երկմտութեան մէջ էր , ուստի նա մը-
նում էր սպասելով .

“Պիարոն , գոչեց վերջապէս տիկին Մար-
սելեթը , ես չը կարեմ դատապարտել այն
մարդուն՝ որ իմ ամուսնոյ եղբայրն էր եւ
որ կամեցել է իւր հարստութիւնը թողուլ
իմ դստեր , մինչդեռ չը գիտեմ . թէ ինչ է . ե-
ղել նորա յանցանքը և ահա դուք էք , որ այդ
տեղեկութիւնը պիտի տաք ինձ . Խօսեցէք . . .”

Մագթաղինէն ընդհատեց մօր խօսքը, «Պարո՞ն,
ասաց նա կամաց, ակնարկելով դէպի Գարողը
որ, հրամայեցէք այդ մարդուն դուրս ելնելո։
Նօտարը այս անդամ ևս չը հասկացաւ օրիորդի։
Դիտաւորութիւնը . նա կարծեց, թէ կամէին
բառնալ այն դժուարութիւնները՝ զորս կարէը
պատճառել մի վկայ՝ որ այնքան շահախնդիր էր
հետեւորդ կարդադրութեանց մասին, ուստի
իւր նենդ ժպիտը շրթանց վերայ՝ «Գարողս,
ասաց, ելէք աստի ։»

Այս անխորհուրդ հրամանը սաստիկ գըր-
դուեց Գարողսին . նա վեր կացաւ, բռունքը
սեղմեց եւ յառաջ եկաւ . «Ի՞նչ է եղել նորա
յանցանքը, աղաղակեց նա, կամ ի՞նչ է գոր-
ծել, որ դուք կամիք կեղծել, իբրեւ թէ չըդի-
տէք, Ես եմ ահա, ես՝ որ կը պատմեմ ձեզ ո.,
և այնուհետեւ մի առ մի պատմեց Յնօրէ Մար-
սելեթի նախկին կենցաղավարութիւնը, նորա
յանցութիւնը, թեթև մոլորութիւնքը, թշուա-
ռութիւնքը և հարստութիւնը, փառաւորու-
թիւնը եւ վախճանը . բաց չը թողուց նա եւ
ոչ մի մանրամասնութիւն այդ հրահանդիչ
պատմութենէն եւ մինչեւ վերջը հասուց մեծ
մարդու դիւցաղնական վէպը. նորա ձայնը հատ
կլում էր կատաղութենէն եւ խորդում կո-
կորդի մէջ, շնչառութիւնը սպառելով մինչ
վայրկեան մի դադարում էր, Նօտարը փոր-
ձում էր բոլորովին լոեցնել, բայց թուի թէ
առաւել դիւրին էր ալեաց արշաւանքը դադա-
րեցնել. Տիկին Մարսելեթը, բնազդեցութենէ

շարժուած , երկու ձեռօք ծածկել էր իւր դէմքը . Մագթաղինէն երեւում էր անկարեկիր , միայն սաստիկ եւ փայլուն կարմրութիւն մի ծաւալում էր նորա այտից վերայ . առանց մի խօսք ասելու նա ճմում և պատառում էր իւր թաշկինակը : “ Ճառանգեցէք , ժառանգեցէք այժմ , ազաղակում էր Գարողասը . որ ինչ վերաբերում է ինձ ձեռքերս լուացի . և ահա սիրոս թեթեւացուցի . ոչ ապաքէն այդ ընտանեաց մէջ մի պատուաւոր մարդ պէտք է գտնուէր ” Բոլոր գրադիրք շտապաւ եկին դէպի այդ աղմուկը եւ Պաշտօնապետի ակնարկը հասկանալով , դուրս հանեցին Գարողոսին : “ Ճառանգեցէք , ժառանգեցէք . ճշում էր նա կից սենեկի մէջ , միայն ես եմ պատուաւոր , և զիս ահա կը կապտեն ո : Ա երջապէս նորան արտաքսեցին :

Մագթաղինէն դարձաւ դէպի նօտարը . և Պարոն , ասաց նա , եթէ մեք հրաժարուենք հօր եղբօրս Օնօրէ Մարտելեթի թողած ժառանգութենէն

— Աղջիկս , միջահատեց հազարապետի այրին , միթէ պէտք է հրաժարուիլ :

— Մի տարակուսիք այդ մասին , մայրիկ , պատախանեց Մագթաղինէն . բայց ասացէք ինձ , Պարոն , ում կ'անցնի

— Ինչու , սիրելի , հատուցանելով այդ չարախատի զոհերուն , զոր ինչ նոցանէ կորզած էր , մռածեցէք , թէ մեք կարէինք դեռ եւս . . .

— Իսկ եթէ ամբողջ կայքը կողոպուտէ ո : Տի-

կին Մարսելեթը գլուխը կորացուց : “Պարսն , հարցուց Մագթաղինէն պարզ եւ անյողդողդ զիտաւորութեամբ , ով կը ժառանգէ այդ հարստութիւնը :

— Օրիորդ , ասաց Նօտարը

— Գուցէ միւս հօրեղբայրս՝ որ այժմիկ իսկ ելաւ աստի ո : Նօտարը ուշի ուշով նկատեց նորան եւ հաստատական նշան տուաւ : Եթէ այդպէսէ , մեք կը պահենք այդ հարստութիւնը :

— Կը պահենք , գոչեց մայրը :

— Այս , մայրիկ , աղքատաց համար ո :

Յանկարծուստ նկատելով Նօտարի սովորական և կծու ժափար , որով կամէր ցուցանել , թէ գուշակում էր օրիորդի զիտաւորութիւնը , մինչդեռ յայտնապէս սխալում էր , օրիորդը յաւելլուց՝ “Այդ բւթն հարիւր հազար ֆր . կը մնայ ձեզ մօտ , որպէս զի չ'երկրայիք այն գործածութեան մասին , զոր պատուաւոր կանայք մտադիր են կատարել ” :

— Ապա բոնեց նա մօր բազուկը եւ ասաց՝ “Մայրիկ , ամենայն ինչ վերջացաւ ո : Նօտարը առ ժամ մի մնաց շիոթուած . այդքան անկեղծութիւնը և այդ բնական վեհանձնութիւնը անշուշտ պէտք էր զինաթափ առնէին նորան : Երբէք այդպիսի բան տեսած չ'էր նա և առաջին անգամ իւր կենաց մէջ փորձը ստիպում էր նորան հաւատալ ոչ միայն հասարակաց ովզմտութեան , այլ , որ առաւելագոյն է , ամբիծ առաքինութեան , անսահման բարսութեան , հոգւոյ եւ սրտի աղնիւ եռանդին ,

որոց միայն անունները գիտէր եւ զորս մինչ
այժմ նա համարում էր ոչ առաւելքան զար-
դարուն ցնորը , որոց վերայ հիմուած էին
մարդկային ընկերութիւնք , առանց նոցա հա-
ւատալու և մանաւանդ՝ առանց գործնականա-
պէս արդիւնաւորելու . Նա վշտացաւ այն շար
խորհրդոց մասին , որոնք հետամուտ էին եղել
նորան այդ արարուածոյ սկզբէն եւ այն նեն-
գաւոր թոյլտուութեան մասին , որով Գարողոսը
իրաւունք էր ստացել ընտանեաց հետ միասին
այդ սենեակը մտնել . ուստի շտապաւ յառաջ
գնաց դէսպի կանայքը , մինչդեռ սոքա պատ-
րաստում էին գուրս ելնել .

“Օրինրդ , գոչեց նա , ձեր դիտաւորու-
թիւնը առաւել գեղեցիկ է . քան որ հարկա-
ւոր էր արդար եւ իրաւացի լինելու համար :
Դուք անծանօթ էք աշխարհի իրողութեանց ,
մինչդեռ պարարում էք ձեզ այն յուսով , թէ
այդ աշխարհը գոհութեամբ կ'ընդունի ձեր
զոհաբերութիւնը . նա խոյս կուտայ դորան
հաւատալուց կամ ծազրելով եւ եթ կը խօսի
դորա վերայ . Ենթագրեցէք , թէ ես թոյլ
տուած չը լինէի Գարողոսին գալ այս տեղ , դուք
կ'ըստանայիք ձեր կայքը առանց որ և է կաս-
կածանաց նորա ծագման մասին և կը դառնայիք
տուն հարուսա , երջանիկ եւ պատուեալ .
Այս , պատուեալ : Զարաչար կերպիւ վաստա-
կած արծաթը ոչ զոք կը զարհուրեցնէ և մա-
նաւանդ՝ քանի քանի հնարք կան բնական կեր-
պարանք տալու հարստութեան աղբիւրին .

առանց ստիպուած լինելու ամբողջ այդ հարըստութիւնը՝ ի ձեռս նոցա արկանել, որոնք արգարեւ արժանի չէին լինելու։ Եթէ կը յամառիք ձեր գիտաւորութեան մէջ, ես չը գիտեմ այնուհետեւ, կարեմ արգեօք գործակից լինել ձեղ այդ բանի մէջ ձեր գանձու աւանդապահը լինելով. կը գժուարանամ մի այդպիսի շքեղ գործոյ մէջ գործակալութիւն յանձն առնուլ, ըստ որում այնչանի շքեղ է, դուք չը գիտէք ձեր խղճմտանաց անշափութիւնը, բայց չը գիտէք նոյնպէս, թէ օրէնսդէտը չը կարէր հաւանել այդ, ըստ որում չը կարէր հարցի ենթարկել ընկերական հարստութեանց մեծագոյն մասը։ Ո՞չ, օրիորդ, յարգում եմ ձեղ, հիանում եմ ձեր վերայ, բայց պարտաւորուած եմ պարսաւել

— Պարոն, ընդ հատեց Մագթաղինէն, յոյժ յապազեցաւ ձեր յարգանքը գէսլի մեզ և ձեր հիացման մեք արժանի չ'եմք։ բայց ես նկատում եմ որ՝ գուք փոքր ինչ զղջացած էք այն կարծեաց վերայ, որով ձեզ պարարում էիք մի ժամ յառաջ և զգում էք որ և է հատուցման պարտաւորութիւն։ ուրեմն՝ մի զլանաք մեղ այն միակ հատուցումք՝ զոր ձեզնէ խնդրում ենք. պահեցէք այդ արծաթը, աղաչում եմ ձեզ, այդ է իմ ցանկութիւնը, ոչ ոք, այլ դուք պէտք է պահէք ո։

Տիկին Մարսելեթը նշանացի հաստատեց Մագթաղինէի վերջին խօսքը, նա բոլորովին հաւան էր դստեր կարգադրութեանց և ուրիշ

կերպիւ չը կարէր ցոյց տալ . այնուհետեւ մը-
տաւ դստեր կռնատակը և երկուքը ՚ի միասին
դուրս գնացին . Աւազ , այժմ առաւօտեան
գնացքը չ'էր : Սէն — Դէնիսի վարձակառքին
հասած , մոխին նորա մէջ , առանց մի խօսք մի-
մեանց ասելու . Հազարապետի այրին կորուսել
էր իւր կենաց ամենագեղեցիկ և վերջին պատե-
րազմը . մի և նոյն օրը դէպ եղաւ նորան տես-
նել Օստերլիցի արեւը եւ Վաթէրլօփ աղէպքը
եւ նորան մնում էր այժմ տանել իւր հետքէն
բազմադիմի վիրաւորուած յոյսեր և մնջիկ քա-
ջութեամբ գալ հասանել Սէն — Դէնիսի գծուծ
բնակարանը . Երկոքին կանայք մի միայն ուղե-
կից ունէին կառքի մէջ , բայց և այնպէս տիկին
Մարսելեթը դէմքը գարծմամբ քողերը քաշեցին երեսնե-
րու վրայ . և Տէր Աստաւած , աղազակեց Մադ-
թաղինէն , այն ինչ մտել էր տուն , մրպիսի
թախանձանոք խնդրել էի Բեռնարին այս երե-
կոյ մեզ մօտ գալ :


— Բեռնարին , ասաց մայրը , զանց չ'առներ ,
վազէվազ կուգոյ . բայց՝ ով գիտէ , իցէ թէ
առաւ օտուն :

— Մայրիկ , մայրիկ , ինչ կամիք ասել , Բեռ-
նարը այդքան վատասիրտ չ'է . ո՛չ , դուք ինձ
շատ չարիք գործեցիք .

— Դու չ'ես ճանաչում , ոչ Բեռնարին և ոչ
նորա մօրը , ասաց տիկին Մարսելեթը : Այս

վերջինը այնպիսի դմնդակ գոյներով կը նկարէ
քո վեհանձնական գործը որդւոյ առջեւ , որ
սա , թէեւ չ'ամարձակի յայտնապէս պարսա-
ւել քո արարքը , ովս կը սկահէ որտին մէջ .
Այս կինը տստ և անդ շրջելով պատմելու է ,
թէ մեք յաւեր դարձուցինք նորա որդւոյ բախ-
տը : Թէեւ բոլոր աշխարհ ծաղրէր նորանց ,
բայց՝ ինչպէս ասաց Նօտարը , կը ծաղրէ եւ
զմեղ . Ո՛հ , Մագթաղինէ , կործանեցիր ամ-
բողջ կենացդ երջանկութիւնը : Մի վայելուչ
բախտ էր այդ , յաւելցուց մայրը ակամայ ցած
ու ցած ձայնիւ , գուցէ անիրաւութիւն գոր-
ծեցիր հրաժարուելով :

— Ես չ'եմ հրաժարուիլ . ասաց Մագթաղի-
նէն , այլ չը կարելով ընդունել , թողել եմ
յօդուտ աղքատաց : Անդամ մի եւս ասացէք
ինձ , մայրիկ , թէ յանցաւոր եմ , ես կը յօժա-
րիմ ընդունիլու : Հազարապետի այրին այլուր
դարձուց հայեացքը եւ հառաջանօք մրմիջեց՝
« Տեսնենք ինչ կ'առէ բեռնարը » :



Գ.

ԱՅՆ ԻՆՉ ԵՎԾՆԵՐՈՐԴ ԺԱՄԸ ԱՐԱՋԵԼ ԷՐ ,
ՄԻԼԻՆ ԼԵԿՈՒՐԸ և ՆՈՐԱ ՈՐԴԻ ԲԵՇՆԱՐԸ ԵԼԻՆ .
ՄԻԼԻՆԸ ԹԵՇԵւ յիսնամեայ , պարծում էր քա-
ռասնամեայ լինիլ , բաց ՚ի իւր գեղեցկութեան
հոգսից , նա զբաղուած էր և այլ և այլ հոգա-
ծութեամբք . Այս կինը կարճահասակ էր եւ
մաեղ , անբնական կերպիւ կայտառ . և այնչափ
թեթեւաշարժ , մինչ զի կարելի էր ենթադրել .
թէ նորա գէրութիւնը բաղկանում էր մկուն-
քէն , վտիտ էին միայն ձեռները , որ բնական է
այնպիսի անձանց՝ որոնք հանապազ մտաւոր
յուզմանց մէջ են . ձայնը համոզիչ , քաղցր և
իմաստութեամբ չափաւորած , այնպէս որ՝
իւրաքանչիւր խօսքը կազմում էր սպատշաճու-
թիւն . երեսի գոյնը սաստիկ թուխ , աչքը փայ-
լուն և հրաբորբոք , նոցա ազդեցութիւնը , ար-
տաքուստ փոքր ՚ի շատէ չափաւորած , ամբող-
ջութեամբ զեղում էր ներս և սպառում մա-
շում էր նորա հոգին . Բոլոր այդ եռանդը՝ զոր
գժուար էր թագուցանել , նա նուիրել էր իւր
որդուն բեռնարին՝ որ արժանի իսկ էր այդմ .
ըստ որում նորա յատկութիւնքը նոյնչափ գե-
ղեցիկ էին և գովելի , որչափ և մօր յատկու-
թիւնքը . Աոցա երկոցունց համար բաւական
չէր փոխադարձ կաթոգին սէրը , այլ պէտք էր
յիմարանային այդ սիրոյ մէջ . եթէ մի ծանօթ

ՆԵՐԿԱՅ ՄԻՆԵՐ , ԱՄԵՆԱՅՆ ՄԱՏԱԳԻՒՐՈւԹԵՎԱՄԲ Ըս-
ԿՐՈՌՈՒՄ ԷԲՆ միմեանց գովաբանել . իսկ Եթէ
ծանօթից Թիւր աւելի էր , այնուհետեւ ա-
ռանց ակնածելու քաղաքավարական կանոն-
ներէ , որդին կոչում էր մօրը գերընտիր
կին , եւ սա իւր որդուն՝ հանձարեղ երիտա-
սարդ . Տիկին Լէկուրի բոլոր հոգուր , յոյուր ,
վառասիրութիւնը , երազական տեսիլները կա-
յացած էին որդւոյ յաջողութեան մէջ : Վաղ
ժամանակաց հետէ սորա շինութեան առաջին
քարը նա արդէն գրել էր . բայց յառաջ չ'եր-
թալու վտանգը ակներեւ էր . և մինչդեռ նոյն
առաւօտ մտատանջութեան մէջ էր այդ մասին ,
Մագթաղինէի նամակը եկաւ հասաւ , իբրեւ
թէ նորան մտածութեանց լաբիւրինթոսէն ա-
զատելու համար . Այս դիպուածում մայրը մի
հոյակապ եւ աշխարհավայել խօսք ասաց որ-
դուն՝ « Բեռնար , Աստուած վարձատրում է
այդ փոքրիկ աղջկան քեզ սիրելուն պատճա-
ռաւ » :

Եւ յիրաւի տիկին Լէկուրը նկատում էր
որդւոյ սէրը դէպի փոքրիկ Մագթաղինէն
սաստիկ մեծամտութեամբ . ըստ որում նորա
սկզբունքը այդ մասին այն էր , թէ որ և է վար-
չութեան մէջ ծառայող գրագիրը պէտք է
ամուսնանց կամ իւր մեծաւորի դստեր հետ
եւ կամ՝ Եթէ արտաքոյ պաշտօնատան ո-
րոնելու լինի , միլիօնատէր մարդու գըս-
տեր հետ . որովհետեւ միայն բարիք կա-
րեն յառաջ գալ քան զինքն հարուստ օրիորդ

սիրելուց : Բայց թուի թէ առաւօտուց հետեւ նորա մտաց ուղղութիւնը վերաբերութեամբ Մագթաղինենին փոխուել էր , զի ահա բարձրածայն դոչեց , այն ինչ մտել էր ներս՝ « Մագթաղինէ » , անուշնկ Մագթաղինէ , որսպիսի աղնիւ զգացումն է յառաջ քան տանէ դուրս ել նելը լուր հազորդել թեռնարին . ձեր նախկին մուածութեան առարկայն նա է եղել . դուք սիրում էք նորան , դուք չէք վրդովուել յաջողութենէ :

Այնուհետև նա ողջագուրեց օրիորդին և նորա մօրը , մերթ առ մին , մերթ առ միւսն անցնելով գոհացողական աչօք յերկինս նայելով և նոյն ժամայն հարցու փորձ առաջարկելով երկուց կանանց : « Մագթաղինէ » , պատմէ ինձ , ինչ կերպիւ ստացաք դուք այդ յաջողութիւնը :

— Իսկ դուք , տիկին , ասաց նա հազարապետի այրւոյն , ինչնւ ծածկել էիք մեզնէ ձեր բարեհոգի տագրին . Ա՛վ արժանայարդ անձն , ով ամենապատուական մարդ : Ի՞նչ հիւանդութիւն է ունեցել այդ խղճուկը : Օրէնք է արդեօք որ՝ բարեմիտք կ'ելնեն յաստեացս , իսկ շարամիտք կը մնան . Պէտք է ձեր հօրեղբայրը շատ աշխատ եղած լինի , Մագթաղինէ , զձեղ ձեր առանձնութեան մէջ դտնելու համար : Գուշակել է արդեօք մօրենու տակ ծածկուածծաղիկը . անոյշ վարդիկ , քանի փթթեալ ես այժմ : Աստուած իմ , Աստուած իմ , որ այնշափ բարութեամբդ վարձատրում ես նորանց՝ որոնք Քեզ սիրում են :

— Խոկ արդ՝ ասացէք, սիրելի տիկին, գնացիք
արդէն Նօտարի մօտ :

— Եւ դուք, իմ սիրունիկ Մագթաղինէ, մինչ
կը վերադառնայիք, որ և է պատուական ակունք
կամ զարդ գնեցիք ձեզ համար։ Փա՛ռք Աստու-
ծոյ, այսուհետեւ դուք կարէք ձեզ զարդարել։

— Ո՛րդի . գրկեցիր քո հարսնացուին, քո
կնոջը . Ձեզ մնումէ այժմ վայելել երջանկու-
թիւն, սիրելի զաւակունք։ Աստուած հատու-
ցանումէ ձեր վայելագեղութեան և շնորհա-
ղարդութեան փոխարէնը, Մագթաղինէ։ Նա
վարձատրումէ նոյնպէս և Բեռնարի արժանա-
ւորութիւնքը, նորա գերագոյն հանճարը զիարդ
կարէր դատապարտուիլ չքաւորութեամբ ու .

Տիկին Մարսելեթը, յուսահատութենէ ան-
դգյայացած, ընդունումէր այդ յարձակմունքը,
առանց մտածելու անգամ որ և է պատասխան
տալ . բայց վերջին խօսքերը՝ որոնք ոքանչելա-
պէս նկարում էին այդ ատելի կնոջ իրը հա-
մեստութեան և անշահասիրութեան գաղտնի
զգացմունքը, յանկարծ զարթուցին հազարա-
պետի այրւոյն, գլուխը բարձրացուց որպէս
թէ որ և է նախատական երդ լսէր ՚ի ձայն
փողոյ . Մագթաղինէն նմանապէս սարսափե-
ցաւ, բայց խեղճ աղջիկը, սիրտ առաւ մօտե-
նալ մօրը ականջին . « Մի՞ խօսիք, մայրիկ, ասաց
նա կտմաց, յառաջագոյն ևս պէտք է խօսիմ
որդուն հետ .

— Բեռնար, Եղիկելի ձայնիւ ասաց նա, խօսք
ունիմառ ձեզ, եկէք իմ հետ :

Բնեռնարը անհանդիսաւ ակնարկ արձակեց գէպի մայրը՝ որ, զարմացած և առաւել անհանդիսաւ քան որդին, շրթունքը շարժում էր արդէն հարցնելու Մագթաղինէից առաջարկած առանձնախօսութեան պատճառը, ըստ որում սորա բնութեան հակառակ էր անտեղեակ մնալ որ և է իրողութեան, բայց չը համարձակեցաւ և պատանին գնաց օրիորդի ետեւէն :

Բնեռնարը խարտեաշ և սպիտակ էր, ըստ կազմուածոյն նոյնպէս նուրը, որպէս և Մագթաղինէն. բազմիցս, մինչ սորա ամառնային երեկոյները թեւթեւի զբօնում էին ծառուղիներու մէջ, կարծում էին թէ հարազատք էին : Այդ մասնաւոր նմանութիւնը ՚ի սկզբան օրի որդի սրտի մէջ շարժել էր համակրութեան եւ հետաքրքրութեան զգացումն՝ որ հուսկ յետոյ փոխեցաւ ՚ի սէր : Ստուգելով իւր և հրապուրիչ երիտասարդի գծագրութեանց նմանութիւնը, Մագթաղինէն հաւատացել էր, թէ նորա հոգին եւս նման էր իւր հոգւոյն, բայց խարուած էր դեռ եւս կիսով չափ միայն : Այն ինչ երեխայական հասակը անցել էր, Բնեռնարը նոյնպէս կայտառ էր և քնքուշ, որպէս Մագթաղինէն, բնաւորութիւնը՝ եռանդուն, բարբառը ախորժալուր, սրտի խորհուրդը՝ միշտ պատրաստ շրթանց վերայ . քսանամեւայ պատանին մի ծաղիկ էր կարճատեւ, որուն մայրը ջանք էր գործում թառամեցնել: Փառաւ սէր տիկինը սքանչելի յաջողակութեամբ հասել էր իւր նպատակին, նա արդէն ճանաշել էր

այդ շարժումն և տկար հոգւոյ խորքը և քաջուս
ձեռք սերմանում էր նորա մէջ իւր պատուիր
բանքը և խորամանկութիւնը . արդիւնքը այն
եղաւ որ՝ վերջապէս նորա մէջ զարթեցաւ
նկրնահաւանութեան ճշգրիտ , հզօր և տեւա-
կան ախտը . Բեռնարը զարմանօք բազման էր
ընտանեկան բագնի վերայ , առանց ամենեւին
նկատելու , թէ քրմուհու գործիքն էր և թէ
նորա տեսութեան և շահասիրութեան սարուկն
էր . ամենայն ինչ այնուհետեւ նա կշռում և
դատում էր ըստ կամաց մօր եւ հետեւաբար
կորուսանում էր իւր նմանութիւնը Մագթա-
զինէի հետ . Այլ եւս սորա շրմանց վերայ
դրոշմուած անբնական ժպտին և օրիորդի նուրբ
եւ անկեղծ ժպտին միջեւ ոչ ինչ նմանութիւն
կար . Խղճուկ երիտասարդը ծպտեալ իբրեւ
մի վերին անձն , մայրական կատակերգութիւնը
համարում էր ստոյդ իրողութիւն . հաւաս-
տեաւ արհամարհելով աշխարհի մեացորդ բա-
ները և մօրը թողլավ իւր յաջողութեան հոգսը ,
անտարակոյս էր , թէ սա ամենայն ինչ կը տնօ-
րինէ գեղեցիկ պատշաճութեամբ նորա հան-
ձարոյն՝ որում քաջածանօթ էր :

Մագթազինէն առաջին նկատողն եղաւ այն
փոփոխութեան՝ որ կատարուել էր Բեռնարի
մէջ և ամենեւին չը տրամեցաւ . նա սիրում էր
Բեռնարին , բայց զմայլեալ չէր նորա վերայ ,
բայտ որում շատ լաւ ճանաչում էր նորան .
համոզուած լինելով նորա թոյլ բնաւորութեան
մասին , առանձին ատելութիւն չ'էր զգում

դէպի նա . անյայտ չէր օրիորդին մօր կորստա-
բեր ազդեցութիւնը որդւոյ վերայ , որոյ աղա-
գաւ չ'էր մտածում անդամ յանդիմանել նորա
այդ հպատակութիւնը , նա ներողամիտ էր .
որովհետեւ հաւատումէր գեռեւս նորա սի-
րոյն , մանաւանդ թէ և ինքն անկեղծ , պար-
կեշտ և խաղաղ սիրով զրաւուած , անդամ մի
չէր մտածել . թէ իւր տարփածուի ամբողջ
սիրով չ'արժէր իւր սրտի հարիւրերը որդ մա-
սը . Բայց այս երեկոցին , խռովութենէ եւ
տրտմութենէ վհատեալ , այն ինչ նկատեց որ՝
Բեռնարը սաստիկ կասկածանօք կ'երթար նորա
ետեւէն , չը կարաց զինքը պահպանել սրտմը
տութենէ այդ քսան և մի ամեայ երիտասարդի
դէմ , որ զիտնալով հանդերձ , թէ իւր սիրեց-
եալը որ և է կարեւոր խորհուրդ ունէր իրեն
հաղորդելու , տարակուսանաց մէջ տատանում
էր . թէ ինչպէս պէտք է ընդունէր օրիորդի
խօսուածքը , առանց կանխաւ մօր հետ խոր-
հրդակցութեան . Այդ անակնկալ տարակու-
սութիւնը նոր յայտնութիւն էր Մագթաղինէի
համար . նա ամօթ և երկիւղ զգաց , որովհետեւ
հասկացաւ , թէ այն մտերմութիւնը՝ որ կամէր
ցուցանել Բեռնարին , կարի վերադոյն էր քան
նորա հոգին և թէ իւր գատաւորը լինելու էր
մի կամակոր երեխայ .

« Բեռնար , ասաց օրիորդը համարձակ ,
Բեռնար , խրախոյս կարդա դէպի քո քաջու-
թիւնը . այսօր առաւօտուն ես զրեցի քեզ .
թէ մեք հարուստ եմք . ես այդպէս էի կար-

ծումեւ արդեամբք իսկ այդպէս էր, բայց միայն
մի ժամ, յետ որոց այդ երազը յօդս ցնգեցաւ,
զի ահա, բարեկամ, ըստ առաջնոյն մեք չբա-
ւոր եմք :

— Չքաւո՞ր, դոչեց թեռնարը, դուք ահա
կրկին մնացիք . . . Աիրելի Մագթաղինէ . . .
Չէ ինչ փոյթ, եթէ ծաղր և ծանակ չէ ձեր
խօսքը : Ի՞նչ կայ ուրեմն, ասաց նա կրկին
սաստիկ խռովութեամք՝ զոր ՚ի զուր կ'աշխա-
տէր ծածկել : Ինչո՞ւ կը նայիք ինձ այդողիսի
կերպարանօք, երեւի որ և է անխորհուրդ դործ
էք կատարել :

Մագթաղինէն սարսափեցաւ : Անխորհուրդ
դործ : Այդ ի՞նչ խօսք էր և բնչպէս պարզ
նկատումէր սա թեռնարի հոգին և այն դա-
տավճիռը՝ որ մայր և որդի կնքելու էին նորա
վարուց մասին : Նա անդէն իսկ զգաց որ՝ ու-
ղիղ դործայ ժխտումը շառագունեցուց իւր
երեսը, որտի խորքէն դուրս ելաւ ձայն որտմը-
տութեան, բայց ծանր վէրքը սպառեց այդ
ձայնը շրթանց վերայ : Կամելով իւր ուժը կազ-
դուրել ու ժամանակը փոքր ինչ երկարել,
մատնանիշ ցուցուց նա թեռնարին մթին ծա-
ռափողոցը՝ որ տան մօտով տարածւումէր,
կայաւ նորա բազուկը և մրմնից՝ և Եկէք, այն
աեզ կը պատմեմ ձեզ բոլոր անցքը :

— Գնանիք, ասաց թեռնարը կեզծեալ զսւար-
թութեամբ . ի՞նչ ասացի ձեզ, սիրուհիդ իմ.
Ես ահա պատրաստ եմ լսել ձեր խոստովա-
նանքը » :

Մագթաղինեն երբեք չը պատասխանեց և
արագ ընմթացիւք երկոքին միասին յառաջ գնա-
ցին դէպի ծառափողոցը . Աշնանային երեկոյ
էր զով և վայելուզ , թէպէտ և փոքր ինչ մա-
ռախորապատ : Լուսնոց պայծառութիւնը ամպե-
րու մէջէն մազուելով , սփռուում էր ծառուղ-
ւոյն մօտակայ դաշտերու վերայ . մառախուղը
ամեն ուստեք բարձրանալով , իրբեւ խիտ առ-
խիտ տուր և առ գիշերային շնչոյ , բարձրաբերձ
ծառոց տակ անցնելով և տերեւոց միջէն ՚ի վեր
անդր ելնելով , երկրորդ կամար էր կազմում
տիսուր ծառափողոցի վերայ . Քաղաքի շշնչենքը
չ'էին հասնում այդ առանձնատեղին , լսելի էին
միայն սեւաթոյր գեաց կարկաջանքն ՚ի մօտոյ :
Ծաղկահաս զոյգը բազմեցաւ մի քարեայ նրա-
ստարանի վերայ . Մագթաղինէն ժողովեց իւր
բոլոր ուժը . « Բեռնար , ասաց նա , սիրելի
բեռնար . . . կանգ առաւ նա յանկարծ և սար-
սափեցաւ երկրորդ անդամ : Մի այլ սիրահար
զոյգ , թեւի թեւի , կամաց խօսակցելով , անց-
նում էր նոցա առջեւէն : Աւաղ , յարտասուս
հարեալ՝ մտածեց Մագթաղինէն , սոքա վստահ
են , թէ վաղիւ եւս փօխադարձ սէր կը վայելեն .
« Բեռնար , ասաց Մագթաղինէն , եթէ
դուք ունենայիք դէպ առ իս փոքր ինչ վստա-
հութիւն՝ զոր ունիք դէպի ձեր մայրը . եթէ
դուք սիրէիք զիս այնպէս , որպէս մի վեհանձ
նական սիրտ պէտք է սիրէր նորան , որոյ հետ
կենակից լինելու կամք ունէր , եթէ . . . Ո՛հ ,
ինչ փոյթ է ենթադրել որ ինչ չը կայ բնաւ ,

բառ որում անտարակոյս ես արժանի չեմ որ
այդպէս լինէք : Դուք կը սիրէք զիս, խղճուկ
բարեկամ, և ուրիշ ոչինչ : Այս է պատճառը որ՝
ես ստիպուած եմ հաշիւ տալ ձեզ այն գործի
մասին, զոր պարտաւորութիւն համարեցի կա-
տարել այսօր իմ պատիւը և ձերն իսկ պահպա-
նելու համար, թէեւ այդ դժնդակ պատմու-
թիւնը պատառելու լինէք իմ ջրթունքը . ու-
րիշ պարագայի մէջ ես բաւական կը համա-
րէի ասել այն, ես գործեցի այդ և . . . դար-
ձեալ կը կրկնեմ, որ դուք չ'եք սիրէք զիս
այնչափ որ հաւատաք խօսքերուս, թէ իրա-
ւունք ունէի, մինչդեռ հաւասափ եմ, թէ
ձեր մայրը հարցու փորձ է անելու ձեզ և ի՞նչ
պէս պէտք է վարուիք նորան պատասխանելու
համար ո . . . :

— Աֆրելի բարեկամ, ընդհատեց Բեռնարը
նեղորտութեամբ, չեմ հասկանում, արդեօք
յանցանք կամիք համարել իմ մեծարանքը
դէպի ծնողս . ուստի է այդ յօսի տրամադրու-
թիւնը և այլ է ձեզ այդ միտքը հազորդել .
թէ ես ձեզ չեմ սիրում այնպէս, որպէս ար-
ժանի էք: Աբդարեւ երբէք տեսած չ'եմ ձեզ
այսչափ . . . :

— Անիրաւ, կամիք ասել, գոչեց օրիորդը .
Ո՞չ, Բեռնար, ես առաւել կը ճանաչեմ զձեզ,
քան դուք զիս կը ճանաչէք ո :

Ահա այսպիսի պարագայից մէջ, Մագթա-
զինէն տարակուսում էր իւր խոստովանու-
թեան առջեւ, նման այն ծիծեռնակին՝ որ ցըր-

տից թմրած կանգնած է ծովեղերքը և տրտում՝
զգացօջուլթեամբ չափում է տարածութիւնը՝
որոյ վերայով պէտք է անցանէ։ Պատիր յօյս
այլեւս պարարում չէր օրիորդը այն զգացմանց
մասին՝ զորս խոստովանութիւնը տղթելու էր
տարփածուի սրտին։ Կորան այնպէս էր թը-
ռում, իրը այդ անարժան սրտի վերայ, մոտ-
րեալ փորձը արդէն կատարել է և այնուհետեւ
մոտածում էր, թէ ինչն մի քանի ժամ շը յե-
աաձգէ իւր խօսքը, ինչու այժմիկ իսկ հաւաս-
տէ նորան սիրելու անկարելութիւնը, ինչու
չըխնայէ իւրեան գոնէ մի օր արհամարհանք
և դառնազէտ կսկիծ զգալուց։ Բայց և այնպէս
նաև հասկանում էր, թէ լոռութիւնը ամենամեծ
անարգութիւն էր. որովհետեւ՝ եթէ սպասե-
լու լինէր Բեռնարից որ և է ազնիւ և վեհանձ-
նական եռանդ՝ ՚ի պատասխանի իւր խոստովա-
նութեան, անտարակոյս նա կը շտապէր խօսիլ։
Օրիորդի տագնապը, թախճութիւնը եւ ամօ-
թը այնպիսի օրտատոչոր պատերազմ էին յա-
րուցել նորա հոգւոյ մէջ, մինչ զի կարողու-
թենէ լքուած, երեսը ծածկեց երկու ձեռօք
և սկսեց լալ։

Բեռնարը նայեցաւ դէպի նա, այդ արտա-
սուքը կարծես թէ յանկարծ սկսեցին հալել
նորա սրտի սառոցցը. շտապաւ գրկեց նա օրի-
որդին, “Մագթաղինէ, Մագթաղինէ, աղա-
ղակեց, ՚ի սէր Աստուծոյ, ասացէք ինձ, ինչ
եղաւ ձեզ, ես բնաւ տեսած չ'եմ ձեր այդպէս
արտասուելը ո։

Արգթաղինէն արտասուտալից աշօք նայեցաւ դէպի Բեռնարը եւ անդէն իսկ կրկին խոնարհեցուց հայեացքը, ըստ որում տարփական շարժումը զարմացուց նորան, բայց չը քաջալերեց : Այնու ամենայնիւ օրիորդը ջանք չը գործեց արձակել զինքը այդ գրկախառնութենէն, զոր ընդհակառակին ընդունում էր քաղցրութեամբ իրբեւ վերջին վկայութիւն այն սիրոյն՝ զոր սախալուած էր մերժել, Գանդաղանօք, որպէս թէ յակամայս գլուխը հանգոյց նորա ուսին վերայ և պատասխան չը տուաւ :

Ա Մագթաղինէ՛, գոչեց Բեռնարը, պատասխան տուէք, կ'աղաւեմ, մի թողուք զիս այդ անյայտութեան մէջ, որ հաղարապատիկ չարագոյն է քան որ ինչ ասելու էք ինձ : Վերջացուցէք այդ լուսթիւնը և անկեղծութեամբ խօսեցէք, որպէս զի չար մտածութեանց առիթ չը տաք : Ես կամիմ իմանալ Ճշմարտութիւնը այդ ժառանգական հարստութեան մասին, ամբողջ Ճշմարտութիւնը . գուցէ այդ ստացուածքը ձեզ սեփականելու համար այնալիսի պայմաններ կան, զորս գուք գժուարանում էք ինձ բացատրել . . . Վերջանապէս չը գիտեմ, բայց թուի թէ նոր յաջողութիւնը մեզ երկուքիս միմեանցից բաժանուելու սպառնալիք է . Զեր հօրեղբայրը կարելի է ձեզ կտակել է միայն իւր ինչքը, կամ իւր ընտրութեամբ որոշել է մի այլ ոք՝ որ պէտք է բաժին ստանայ այդ ժառանգութենէն . . . Գուշակեցի՞ արդեօք . ձեզ առաջարկում են մի .

ամուսին և . . . դուք վարանում էք ո :

— Բնաւ չ'էի վարանիլ, այլ կը մերժէի : Բայց ինչու այլ եւս կը խօսիք յաջողութեան և ժառանգութեան վերայ : Ես նոյնչափ խեղճ եմ այժմ, որչափ էի առաւօտուն, ոչ ապաքէն ասացի ձեզ արդէն ո :

Բեռնարը չը կարաց հանդուրժել և սուբը սաստկապէս գետնին զարնելով, գոշեց՝ “ Դիցուք, դուք խեղճ էք, այս է ուրեմն ձեր արտասուելու պատճառը ո :

— Բեռնար, ասաց Մագթաղինէն : Կը յիշեք արդեօք մեր առաջին հանդիպումը միմեանց երկու ամօք յառաջ, այս իսկ ծառերու ներքեւ դուցէ եւ այս տեղ իսկ, կիւրակէ օր էր այն, երբ քո մայրը մօտեցաւ իմ մօրս, թուի թէ նոքաշատուց ծանօթ էին : Ես և դու լրիկ կը նայէինք միմեանց, կարծես թէ մեք յառաջ եւս տեսնուած էինք, միմեանց ամենեւին օտար չ'էինք, այլ արդէն սիրով կապուած էինք : Երկու տարի, գիտեք արդեօք հաւասաեաւ, թէ երկու տարի է ՚ի վեր մեք կը սիրեմք միմեանց : Ո՛չ, Բեռնար, այժմ կարեմ ասել ձեզ, թէ ջերմ սիրով կապուած էի ձեզ հետ : սիրում էի ձեզ առանց որ և է ջանք գործելու, սիրում էի ինչպէս ինքզինքը կը սիրեն . . . Դուք տեսնում էք որ՝ ես անցելոյ վերայ կը խօսիմ, ուրեմն բնչպէս չ'էք հասկանում որ՝ կ'ողբամ մեր կորուսեալ երջանկութիւնը :

— Լուռ եղիր, ասաց Բեռնարը այլայլեալ ծայնիւ և տմարդօրէն ձնշելով օրիորդին իւր

գրկաց մէջ , հասկացայ այժմ զիս աղլ եւս
չը սիրելու սպառնալիքը :

Ա Երջապէս սրտմտեցաւ եւ զայրացաւ
թեռնարը . նա չըկարէր ըստ արժանւոյն գնա-
հատել այն սէրը , որով չընաղ օրիորդը գրաւ-
ուած էր գէպի նա , բայց զգում էր արդէն
այդ սիրոյ մօտալուտ կորստեան վլուանգը . նորա
տիսուր սրտէն ցայտեցին մի քանի խօսք՝ զորս
կարելի էր ընդունել իբրեւ ազնիւ եւ սիրա-
տենչ զգացմանց վկայութիւն և ահա Մագթա-
զինէն սարսափեցաւ ՚ի յուսոյն , նորա աշաց
առջեւ երկնից մի անկիւնը բացւում էր ճա-
ռագայտաւէտ լուսով :

Ա Եզկելի բարեկամ , ասաց նա դողալով , գու-
ցէ անիրաւաբար գատեցի զձեղ , ներեցէք ինձ :
Երբոր Գրիստոս ասաց Պետրոսին՝ « Մինչեւ
հաւու խօսեալ իցէ , երիցս ուրասցիս զիս ո .
Նա Ճշմարիտ խօսեցաւ . Ճշմարիտ է նաեւ , թէ
Քրիստոս Աստուած էր , նախատես ապագայից .
Իսկ ես գուցէ լաւ չըքննեցի ձեր սրտի խորըք .
Ասացէք ինձ , թեռնար , թէ ուրանալու չ'կը
զիս , ասացէք , թէ որ ինչ այսօր գործել եմ .
պարտաւոր էի գործել . թէ կուրօրէն հաւա-
նում էր և գժդոհ չ'կը իմ վերադարձ չքա-
ւորութենէն , մինչդեռ հարուստ եղած էի .
Եթէ այդ անիծած յաջողսւթիւնը . . . թեռնար ,
ասացէք , թէ բարեմիտ է իմ վարմունքը :

— Այդ կրցանկալք , ասաց թեռնարը , գոհ
եղիք սւրեմն . Այս , Մագթազինէ , բարւոք
էք գործել .

— Շնորհակալ իմ, գոչեց օրիորդը, այժմ
կարեմ խօսիլ, Բեռնարը Աստուած իմ,
Աստուած իմ, ի՞նչպէս ասեմ Բեռնարը,
կրկնեց նա յանկարծ, հակելով դէպի նորա
ականջը, իմ հօր եղբայրը եղել է մի

— Ի՞նչ, կրկնեց Բեռնարը, մի վաշխառու .
Այնուհետեւ երկայն լուսթիւն յաջորդեց .

«Բարեկամ, ասաց Մագթաղինէն տատամսոտ
կերպիւ, ես երկար չը մտածեցի, թէ ինչ էր
մնում ինձ գործել, որովհետեւ ըստ իմ կար-
ծեաց ինդիրը գժուարալոյն չ'էր . պէտք էր
վճռել միայն, թէ կարելի է արդեօք ընդունիլ
անօրէնութեամբ վաստկած ինչը, յուսա-
լով նոցա ազնիւ գործածութեամբ յապագայս
ձեռները մարքել, ըստ իս անկարելի էր այդ .
Կան այնպիսի սկզբնական բիծեր՝ զորս անհը-
նարին է ջնջել եւ որոնք լուանալով առաւել
կընդարձակուին և ով արդեօք կարէ պարծիլ,
թէ ապահով է իւր խղճմտանաց հաստատու-
թեան մասին . Հարստութիւնը այնպիսի երե-
ւակայական յայտնութիւններ կը ներկայացնէ,
որոնք զօրաւորագոյն մարդուն անգամ կը հրա-
պուրեն և կը խոտորեցնեն այն ճանապարհէն՝ ո-
րով երդուել էր ընթանալ, Բազմատեսակ ան-
ծանօթ ցանկութիւնք ծնանում են մեր սրտից
մէջ, այն ինչ նոցա կատարման կարելութիւնը
ակներեւ է և յայնժամ՝ մնաք բարեաւ մաքուր
դիտաւորութիւնք, բարեմիտ գաղափարք . Ո՛հ,
ես հասկացայ այդ վտանգը՝ որոյ պատճառաւ
կը հրաժարուէի հարստութենէն, եթէ այդ-

սպիսի որոշման հետեւանքը չը լինէր ժառանցութեան անցումը զէպի մի անարժան անձն։ Այսպէս ուրեմն ես ընդունեցի . . .

— Բարւնք, միջահատեց բեռնարը զգալի կերպիւ, ընդունեցիք, ինչ էիք ասում ուրեմն։

— Այս, պատասխանեց Մադթաղինէն մեղմ ձայնիւ, աղքատը այսուհետեւ քառասուն հազար ֆրանկ տարեկան եկամուտ կ'ունենան, ինձնէ ասդահովուած։ Այս է ահա իմ անդարձ որոշումը։ Իմ մասին կարեմ ասել, թէ չ'ունիմ և ոչ մի դանկ, արտում է հոգիս, բայց խաղաղ։ Այժմ խնդիրը պարզուած է ձեզ համար։

— Ցիրաւի պարզ է, ասաց Բեռնարը, նաեւ հրաշալին. դուք հրաժարեցաք աւազակութեամբ դիզած հարստութենէն, դուք ՚ի բաց մերժեցիք անարդութեան աղբի մէջ գտնուած ոսկին և դեռ եւս երկիրւղի մէջ էիք, թէ մի գուցէ նախատեմ ձեզ դորա համար։ դուք երկմիտ էիք, ոչ միայն իմ սրտի մասին, այլ եւ իմ խզմտանաց, ողմանութեան և գորովոյ մասին։ Արդարեւ այն անձը՝ զոր դուք կը սիրէք, մեծապէս փոքրովի կ'երեւի ձեզ։ Եւ այժմ իսկ դուցէ յերկրայս լինիք իմ անկեղծութեան մասին, Եթէ մի անգամ եւս ասեմ ձեզ՝ Մադթաղինէն, բարի են ձեր գործքը։

— Մարդասէր Տէր, աղազակեց Մադթաղինէն, արդեօք այդ հաւանութիւնը կատակաւ պազուած չ'է։ Ո՛չ, Բեռնար, Բեռնար, ճըշմարիտ է ձեր խօսքը։

— Գուցե՛ և ոչ, պատասխանեց Բեռնարը նոյն զայրացկոտութեամբ։ Դիւրին է ձեզ հասկանալ, թէ այսօր ես առաւել դժգոհ եմ ձեզնէ, քան երէկ, մինչ ոչ ինչ ունեիք ինձ առաջարկելու։ Կարելի է ես ձեզ սիրել էի այն յուսով, թէ մի օր հարուստ էիք լինելու, կամ որ և է զբոյց լսել էի այդ ցնորական հօր եղբօր մասին, զոր դուք եւ ձեր մայրը մեռած էիք համարում քսան տարի յառաջ։ Անդստին իսկ դուք չը նկատեցիք այն խորհուրդը՝ զոր հաստատել էի ձեր գորովայ վերայ։

— Բարեկամ, գոչեց Մագթաղինէն, խնայեցէք զիս, կ'աղաչեմ, ոչ ապաքէն դուք տեսնում էք որ՝ հարստութեան աղդեցութիւնն էր այդ, այն ինչ նա անցաւ իմ ձեռքը, չար խորհրդոց որոմն բուսուց իմ մէջ ո։

Բեռնարը մնաց լուռ։ Նորա բարկութիւնը շուտով զիջած էր։ յանկարծական սրտմտութիւնը՝ զոր յարուցել էին նորա մէջ Մագթաղինէի անարդարութիւնը եւ երկրայութիւնը, արդէն դադարել էր։ այժմ նա խորհում էր։ Հարստութիւնը անցել էր նորա աչաց առջեւեւս։ Աստուծոյ միայն յայտնի է, թէ այդ տեսիլը աներեւութանալով, ինչ պէտք է թողուր նորա հոգւոյ մէջ։

« Իմ է յանցանքը, ասաց Մագթաղինէն պատկառանօք, ձեր ոխակալութիւնը օրինաւոր է, ուրեմն՝ չը խօսիմք այլ եւս այդ բաներու վերայ եւ դառնամք տուն, ձեզ հարկաւոր է մի ամբողջ գիշեր մնածել, որպէս զի հաս-

կանոք . թէ ես վշտացած էի և վեհանձնաբար
պէտք է ներէք ինձ . . . բայց դուք չը կամիք
ձեր թեւը ինձ տալ . Ո՞հ , Բեռնար , սաստիկ է
այդքան ատելութիւնը իմ դէմո :

Բեռնարը մեկնեց իւր բաղուկը և երկուքին
միասին անցին հարիւր քայլաչափ առանց մի
խօսք ասելու :

Չէ թէ Մագթաղինէն չ'էր զգում հաղար
ու մէկ տարփալից բաներ՝ որոնք պատրաստ էին
արդէն նորա շրթանց վերայ , բայց անտարբեր
կը ձեւանար . նորա լուութիւնը խորաքննու-
թիւն էր , նորա տրտութիւնը կեղծիք էր , նա
չը կամէր փարատել իւր տարփածուի իրաւացի
ոխը՝ որ երջանկութիւն էր իրեն համար . Եթէ
Բեռնարը անհոգի մարդ լինէր , իրաւամբ մը-
տածում էր օրիորդը , ես նորան վիշտ և գառ-
նութիւն չ'էի ցոյց տալ . Բեռնարի թաղծալի-
կերպարանքը՝ զոր մի ժամ յառաջ և այժմ իսկ
օրիորդը նկատում էր , առաւելքազըր էր նորա
համար . քան զուարձութեան ժպիտը Անարժան
զրպարտութենէ յառաջ եկած աղնուական ոխը
այնքան բարեգուշակ էր նորա կարծեօք , մինչ զի
ցանկանում էր , որ նա տեսէ առաւելքան մի օր
բայց և այնպէս զղջումը , գորովը , անհանգը-
տութիւնը չ'էին դադարում պատերազմել նո-
րա մէջ ընդդէմ այն լուութեան՝ որ վճռել էր
պահպանել մինչեւ տուն դառնալը . ալիք ծը-
փեցին նորա սրտի մէջ այնպիսի սաստկու-
թեամբ , որ չը կարաց այլ եւս համբերել .
« Բեռնար , մըմնջեց նա , ես թանթաղեան

ծարաւով պասթեցայ . Դուք ինձ չէիք հաւա-
տալ , եթէ ասէի , թէ այդ հարստութիւնը
և ոչ վայրկեան մի հրապուրեց զիս յատկապէս
իմ համար , յիրաւի և ոչ իմ մօր համար , որ
այսուհետեւ դատապարտուած է տիսուր ծե-
րութեան , այլ թէ իմ բոլոր ուշք ու միտքը
գուք էիք և մինչ այժմ իսկ առում եմ ձեզ .
գիտեմ որ՝ գուք չէք հաւատալ , որովհետեւ
չարացած էք իմ վերայ . Ո՞հ , Բեռնար , աչաց
առջեւ ունենալ մի կտակ՝ որոյ շնորհիւ կարէի
վայելել ութն հարիւր հազար ֆրանք և մու-
ծել . թէ գուք ըստ առաջնոյն մնալու էք խեղճ ,
տիրել այդ հարստութեան և նոյն ժամայն թո-
ղուլ յօգուտ աղքատաց , վշտացելոց , աստ-
ուածալարգել եղբարց , անծանօթից և վերջա-
պէս բոլոր աշխարհի , բացառելով միայն զիմ
սիրելին , որպիսի պատիժ է այդ . Մինչ մու-
ծում եմ , թէ ամբողջ կենացս մէջ կարէի ան-
գէտ լինիլ , թէ իմ հօրեղբայրը . . . և յայն-
ժամ քանի երջանիկ կը լինէինք մեք ո .

Այս միջոցին նոքա հասան բնակարանի
գուռը . Մագթաղինէն յանկարծ կանկ առաւ .
“ Բեռնար գոչեց նա , կը ցանկայի որ՝ գուք
միանգամ եւս ասէիք ինձ , թէ բարւոք եմ
վարուել և թէ իրաւունք ունէի ո .

Բեռնարը կարծես թէ ՚իքնոյ զարթեցաւ .
“ Այո , այո , պատասխանեց նա անշշունչ ձայ-
նիւ , պանծալի է ձեր արարքը ո . Մագթաղինէն
եռանդուն զգացողութեամբ ողջագուրեց Բեռ-
նարին և լիապարար բերկրութեամբ համբու-

րեց նորա ճակատը : « Ահա ես երջանիկ եմ
և կը սիրեմ զքեզ , միայն զգուշութիւն ունե-
ցիր մինչդեռ մայրդ կը խօսէ քեզ հետ ո :

Երկոցունց մայրերը մնացել էին տանը
առաւել քան մի ժամ դէմ առ դէմ , սպառա-
զինեալք զանազան անօթիւք և ահազնապէս
գործածելով իւրեանց զէնքը միմեանց դէմ .
Տիկին Լէկուրը ամենայն ինչ սպառել էր ,
հարցու փորձ , ակնարկութիւն , հեղնութիւն ,
բարկութիւն , մասամբ իւրիք սպառնալիք եւ
ծածկեալ խորհրդոյ խօսք ամենեւին չէին օգ-
նել . նա յերկրայս էր և ինչ ոչ գիտէր : Պէտք
էր տեսնել , թէ հաղարապետի այրին որպիսի
յաջողութեամբ , փոխանակ պատասխանելու ,
առարկում էր կամ անձրեւաց յորդութիւնը
և կամ եղանակի բարեխառնութիւնը : Տիկին
Մարտելեթը վարուեցաւ անստգիւտ համաձայ-
նութեամբ գստեր կամաց եւ ոչինչ յայտնեց
մինչև գստեր վերադարձը : Քանի քանի անգամ
այդ եղիելին շրմունքը շարժում էր արդէն .
որովէս զի աղաղակէ դէպի ատելի կինը՝ « Ի բաց
դնա , մեք չ'եմք այլ եւս հարուստ ո , բայց՝
յիշելով իւր խոստումը , ստիպուած էր լու-
թեամբ կնքել իւր հեծութիւնը . նա սեղմում
էր իւր կուրծքը , որպէս զի խափանէ սրտի
զեղումը : Ծնդ վայր կը յամառէր Տիկին Լէկուրը
փոս փորել այդ կենդանի ամրոցի շուրջը , հա-
կառակորդաց հաւասարութիւնը կորուսուած
էր , վիրօք ծածկուած պաշարողի խոշորակա-
թիւ քրամնքը թափուամէին , մինչդեռ պաշա-

բեալը ողբանդամ կեցած էր և ահա այս միջոցին գեռահաս զոյգը մտաւ ներս : Տիկին Լէկուրը արդէն կանգուն էր, նա նշանացի արաւ որդւոյն, կիսաշափ մեծարանօք հրաժարական ողջոյն տուաւ տիկին Մարսելեթին և մի այնպիսի դառն տիկնարկ արձակեց դէպի Մագթաղինէն, մինչ զի խեղճ աղջիկը սարսափեցաւ և աչերը գոցեց, իսկ մինչ նորէն նայեցաւ, մայր եւ սրդի արդէն ելած էին, « 0'ն, մտածեց Մագթաղինէն, պէտք է սպասել մինչեւ վաղը հաւաստելու համար, թէ արդեօք վճռելու են սպա ջախջախել իմ սիրտը » :



Դ .

ԱՆԳՈՒՑԵԱԼ Գասպար 0նօրէ Մարսելեթի Նօտարը կոչւում էր Պ. Ժավոյն : Այդ անունը յայտնի էր ստորին Նորմանտիա և ոչ սակաւ օրէնսդէտ մարդիկ սերունդէ սերունդ այս կոչումը ունենալով, փառօք պատւով պահպանել էին զայն : 0նեղիմ ժավոյնը, ոյդ աւանդական տոհմի վերջին շառաւիզը, պարտէ զի ամենագեղեցիկ բոյսը, մի ծանրաբարոյ մարդ էր, որոյ անյեղլի սովորութիւնը պահանջում էր ամենայն դիպուածոց մէջ այն սկզբանց պատշաճութեամբ վարուիլ, զորս ինքը մշակել էր

համեստաբար և վայելքապէս ապրելու համար և որ մինչ այժմ չէր ունեցել որ և է պատճառ իւր կանոններէ խոտորելու : Եւ ահա մի պարագայ՝ որ նորան շփոթեց, իւր պաշտպանութեան այժմիկ ենթադրեալ օրիորդ Մարսելեթի վեհանձնական գործը բոլորովին վրդովում էր նորան : Երկու գիշեր անընդհատ նա անցուցել էր խոր մտածութեանց մէջ միայն առաքինութեան, գիւցազնութեան, առասպելական ողջմուռթեան եւ ցնորական արդարասիրութեան մասին . մարդկային ազգը նորա անրջոց մէջ սքանչելի էր : Եթէ չորս գիշեր եւս այդպիսի անրջոց մէջ անցանէին . Պ . Օնէզիմը, բոլորովին փոփոխուած, գուցէ հրաժարուեր իւր գրասենեակէն և մտնէր մի հիւղ և գրչի փոխարէն բրիչ առնէր ձեռը : Դժբախտաբար գեռ եւս երրորդ օրն էր և ահա առաւօտուն Մագթաղինէն եկաւ նորա մօտ :

Երազական շնորհը գէպի ընդհանուր մարդկութիւնը իսկոյն դադարեց ազգել նորա յամառ հոգւոյ վերայ եւ նոյն իսկ վայրկենին առաջին գաղափարը՝ որ ծնաւ նորա մտաց մէջ, այն էր, թէ օրիորդը ցաւում էր մերժած հարստութեան մասին, թէ անտարակոյս նախընթաց օրը նա փոքր ինչ մտածել էր և այժմ յոց հեռափ նախկին ազնիւ միամտութենէն, եկել էր իմանալու թէ կարէր արգեօք որ և է պատշաճաւոր կերպիւ կրկին ստանալ այն ժառանգութիւնը՝ որմէ հրաժարուել էր : Օրիորդը մինակ էր եկել. վասն էր մայրը նորա հետ չէր,

գուցէ հազարապետի այրին : իրագէտ կին լիւնելով, զգացել էր, թէ դատեր քնքուշ ընթացքը անվայել էր իւր զինուորական բրտութեան, յաւել եւս, թէ Մագթաղինէն դժգոյն էր և դողդոջուն . ինչ պէտք է լինէր դորապատճառը, եթէ ոչ շփոթը, տարակուսութիւնը և անտեղի ամօթը : Ովթէ զիարդ փոխուեցաւ Նոտարի հովուականութիւնը, Մարդկութիւնը սկսեց երեւել նորան իւր բնական կերպարանօք, այն ինչ ինքը սթափել էր անուրջներէ :

«Պարոն, ասաց Մագթաղինէն այնպիսի ձայնիւ, որոյ մէջ լսելի էր նորա հաստատամբութիւնը, ես եկել եմ ձեզ հետ տնօրինելու այն անիծեալ ժառանգութեան գործածութիւնը, որ ձեզ մօտ է ո :

Ժավոյնը խոնարհութեամբ սպասեց :

«Դուք նկատում էք, թէ ես միայնակ եմ եկել, շարունակեց Օրփորդ Մարսելեթը, արդէն մի տարի է որ ես կատարելահասակ եմ և իմ գործքերը կարօտ չեն մօրս ստորագրութեամբ վաւերանալու, բայց և այնպէս կանխաւ խորհրդակցութիւն ունեցայ նորա հետ :

— Ի զուր կ'աշխատիք պատրել զիս, օրփորդ : Զեր մայրը նոյն է մտածում, ինչ որ ես . նա սրանչացած է ձեր վերայ, բայց հաւանում չէ ձեր գործը, գուցէ այս պատճառաւ նա կամի օտար մնալ և ձեր կարգադրութեանց մէջ . . . *

— Բաւական է, սլատասխանեց Մագթաղի-

նէն, ասացի ձեզ, թէ եկել եմ գործը տնօրինելու :

— Ուրեմն՝ ասաց Նօտարը շեշտելով ամեն մի խը բառը, վիճակը հանուած է, ձեր խօսքը վճռական է, դուք հրաժարւում եք այդ հարստութենէն : Օրինրդ, թուի թէ երազ եմ տեսնում :

— Խսկ զի՞նչ, ասաց Մագթաղինէն ուղղակի նայելով նորան, կարծում էիք, թէ իմ զգացմանիրը փախելու էի ո : Նօտարը նշանացի վկայեց :

«Ես մտածեցի, շարունակեց օրիորդը, թէ յետաձգութիւնը կը վնասէ նոցա, որոնց նուիրել եմ այդ թշուառ հարստութիւնը : Շատապենք ուրեմն, Պարոն, որովհետեւ խեղճ ողորմելիք սպասում են :

— Ըստ իս, պատասխանեց Նօտարը ծիծաղելով, ընդ փայթ գործելու բան չէ այդ :

— Այս, դոչեց Մագթաղինէն դառնութեամբ, պէտք է շտապել . կը ցանկայի որ այդ բանը վերջացած լինէր, որպէս զի ոչինչ այլ եւս մնար կատարելու ո :

Այդ դառն աղաղակը՝ որ յայտնի ասլացոյց էր ծաղկահաս օրիորդի ծածկեալ անձկութեան, մի թեթև հարուած տուաւ Նօտարի սրտին : Փութանակի քննեց Մագթաղինէին : Նորա տրտում եւ արտասուաթոր աշկունիքը հաստատում էին, թէ ոչ այլ ինչ էր ողբացել, այլ միայն կորուսեալ հարստութիւնը, առանձին իմն դառն վիշտ եւ պատրանք կրծում

էին նորա սիրաը , Նօտարը հեռի չէր ճըշ-
մարտութիւնը գուշակելուց . Այդ արտա-
սուքը՝ զորս օրիորդը դժուարանում էր բնա-
ջինջ առնել , Նօտարի մտաց մէջ կարծիք յա-
րուցին , թէ ՚ի գերեւ ելած սիրոյ արդասիք
էին . կարելի խսկ էր , թէ օրիորդ Մարսելեթի
տարփածուն , եթէ այդպիսի մի ոք ունէր նա .
հաւանած չէր ացդ զահարերութեանը :

— Եւ եթէ սա մի խելացնոր չէր , անտարա-
կոյս հաւանելու չէր . Այսպէս կարելի եւս
էր , թէ յանկարծուստ յայտնութիւնը այն մո-
դիչ հարստութեան՝ որ մօտ էր սորա ձեռքը
անցնելու եւ որ անակնկալ կերպիւ . շնորհիւ
իւր սիրելոյն , յափշտակվում էր նորա վայր-
կենական զմայլումէն , արդէն մի զօրաւոր
պատճառ էր ՚ի սիրոյն լքանելու և մոլեգնու-
թենէն խուսափելու . . . Պ . Ժավոյնը բոլոր
յիշեալ պարագայները մտածեց . որովհետեւ ,
ինչպէս ասացինք , սքանչելապէս ճանաչում էր
մարդկային բնաւորութիւնը և դեռ եւս քըն-
նական աչօք նայելով Մագթաղինէին խորին
խորհրդածութեան մէջ էր .

Օրիորդ Մարսելեթը , մի միջոց անցած ,
մտախօսութենէն հանեց նորան . « Պարո՞ն ,
ասաց նա , գիտէք , ով պէտք է լինի առաջինը
իմ խեղձերու մէջ , ահա նորա անունը՝ Գարու-
լոս Մարսելեթ . Դուք նորան կուտաք , եթէ
համելի է ձեզ , տարեկան թոշակ երկու հազար
ֆրանք » :

Նօտարը վեր թռաւ : « Ի՞նչ ասացիք , Գա-

բողոքին, Գարովոսին՝ որ կործանեց ձեր կեանքը,
որ ձեզ թշնամանք գործեց այս տեղ իսկ եւ
ձեր մօրը նախատինք . Գարովոսին՝ որ գուցէ
ստել է իւր եղբօր անցքը ձեզ պատմելով,
որովհետեւ ով գիտէ, օրիորդ, թէ ստայօդու-
թիւն չ'եր նորա խօսքը :

— Պարոն, պատասխանեց Մագթաղինէն
տրամադին, առանց ուշադիր լինելու դէպի
վերջին ասածուածքը, ըստ իմ կարծեաց, յնօրէ
Մարտելեթը իւր եղբայրը բոլորովին զրկելով,
ծայրագոյն անիրաւութիւն է գործել

— Եւ դուք կտմիք հատուցումն առնել,
ընդհատեց Ժավոյնը անհոգութեամք . բարի
արարէք նոցա, որք չարիք գործեցին ձեզ: Ահո՛
քրիստոնէութիւն, գերագոյն քրիստոնէու-
թիւն . . . : Բայց այդ երկու հաղար ֆրանքը
երբ նորա ձեռքը անցնի, որպիսի գործածու-
թիւն էք սպասում նորանից :

— Մի թէ բաւական չ'էք համարում, ասաց
Մագթաղինէն :

— Շատ չ'է . Գարովոսը չարագոյն չը լինիլ
քան մի այլ ոք :

Մագթաղինէն սարսափեցաւ եւ երեսը
դարձուց: Ակեպտիկեան նօտարը շարունակեց՝
և երկու հաղար ֆրանք Գարովոսի բաժինը
դուքս հանած, ձեզ կը մնայ երեսուն և ութն
հաղար ֆրանք, զորս դուք կը բաշխէք ոչ առա-
ւել քան զնա արժանաւորաց ո

Օրիորդը յանկարծ վեր կացաւ: « Շնորհա-
կալ եմ ձեզնէ, գուշեց նա, դուք աշխատում

Նք լուսաւորել իմ միտքը , բարի է այդ , բայց
միթէ չ'էք տեսնում որ՝ վատաթիւն էք անում
ինձ , ժամառաջ սրտարեկելով զիս . Ո՞հ , դուք
երրեք շըկարէք իմանալ քանի մեծագնոյ կ'ար-
մէ ինձ իմ հօր անուան պատիւը պահպանել .
դուք չըգիտէք , թէ նրան ցանկալի է ինձ
խղճմտանաց խաղաղութիւնը . Բայց ահա եւ
ես ինքնին չըգիտեմ այլ եւս , թէ ինչ կը խօ-
սիմ

— Օրինակդ , պատասխանեց Նօտարը , ես պատ-
րաստ եմ անմռունջ հնազանդիլ ձեզ :

— Ո՛ , եթէ այդպէս է , ասաց օրիորդը իր-
բեւ թէ կարգը ինքեան եկած լինէր անուրջ-
ներէ ելնելու , յառաջ տանենք ուրեմն մեր
գործը : Ի՞նչպէս վճռենք , մւմ տանք այս ար-
ծաթը՝ որ այրում է ձեռներս . Թուի թէ հա-
րըստութենէ հրաժարուելը անգամ նեղիչ պա-
րագայներ կը ներկայէ :

— Թեր եւս աւելի նեղիչ քան զայն ձեռք բե-
րելու հետամտութիւնը . բայց Եր ապաքէն
հրաժարուելու վերայ կը խօսիք , մինչ , միտս է
որ՝ երէկ կամք ունէիք անձամք կատարել ձեր
բարերարական դիտաւորութիւնը և պահել

— Երէկ , գոչեց Մագթաղինէն , երէկ ես
չ'էի ճանաչում նորան՝ որ . . . Երէկ ես չ'ու-
նէի այն ահագին կարծիքը , որ այսօր պաշա-
րելէ զիս Պէտք է այդ հարստութենէն
չը մնայ ինձ և ոչ ինչ , ոչինչ , լսնմէք , պա-
րոն , ոչինչ

— Հրաշալիք , ասաց Նօտարը , ես կարեմ մի-

այն կրկնել . թէ պատրաստ եմ ընդունիլ ձեր
հրամանները . Ասացէք ուրեմն , Գարողոսը
կը լինի ձեր առաջին բաշխառուն : Կը հաճիք
և զայլս անուամբ յիշել :

— Ե՛ , ինչ գիտեմ , միմնջեց օրիորդը ձեռնե-
րը գալարելով , ընտանիք չ'ունիմ , բարեկամք
կարէի այժմ ունենալ , եթէ կամենայի , ու-
սումնակիցներս սփռուած են . . . բայց ոչ ա-
պաքէն փոքրիկները դեռ եւս կան այն գալոցի
մէջ . ուր և ես երբեմն գաստիարկուեցայ . ին-
չն ուրեմն . . . նոցանից շատերը կարօտու-
թիւն ունին . . .

— Կարելի է ասել , թէ ամենքը այն աեղ
դաստիարակւում են իրենց վիճակէն վեր .
պատասխանեց հեգնասէր Նօտարը : Չեր
գիտաւորութիւնը յոյժ գեղեցիկ է , օրիորդ ,
միայն թէ վշտալի է գործադրութեան դժուա-
րութիւնը :

— Գուցէ չ'եմ հասկանում , թէ ինչ կամիք
ասել . ինձ թուի թէ ամենեւին դժուարու-
թիւն չը կայ , ասաց օրիորդը բարձրաձայն :
Ոչ ապաքէն իրաւունք ունիմ իմ սեփականու-
թիւնը , թէ եւ ակամայ լինէր այն իմը , տնօրի-
նել ըստ կամաց . կան օրէնքը . . .

— Այս կան , ընդհատեց Նօտարը զգօնու-
թեամբ . ես պարտաւոր էի տեղեկութիւն տալ
ձեզ նոցա մասին : Օրէնսդրութիւնը այնպիսի
տմարդութիւն կը բովանդակէ , զոր գուք կը
դժկամակէիք կարգալ : Ես ձեզ հետ այնպէս
համարձակ կը խօսիմ որպէս եւ օրէնքը՝ որ

արգելառիթ չ' ստացուածոց կարգադրու-
թեան ըստ կամաց . . . միայն հաճեցէք ուշա-
դիր լինել հետեւեալ խօսքերուս . իւրաքան-
չիւր բաշխումն՝ զոր դուք կը կատարէք , կա-
րէք յետո կոչուիլ , եթէ դուք ամուսնանայիք
և եթէ ձեր զաւակունք մի օր

— Պարսն , գոչեց Մագթաղինէն ծիրանեգոյն
դարձած , ես ամենեւին այդ չ' հարցնում
ձեզնէ .

— Ես պարտաւոր եի բացատրել ձեզ այդ .
առաց Ժավոյնը նոյն զգօնութեամբ . . . և կը
յաւելում , թէ յիշեալ պարագայից մէջ յետո
կոչելու գործը կը վերաբերի բոլոր բաժանակ-
ցաց նոյն և ձեր ամուսնոյն : Անողորմ բան է
երկիւղ ունենալ այն մարդուց՝ զոր կը սիրեն .
Եւ այս իսկ է որ՝ այժմ իսկ կ'առաջարկէի ձեզ
հաստատուն կերպիւ պահպանել հարստու-
թիւնը այն ազնիւ գործածութեան համար ,
զոր դուք վճռել էք . Այսու եղանակաւ , օրի-
սրդ , դուք կարէք անվտանգ ամուսնանալ եւ
օրէնքը՝ զոր կ'ամբաստանէք . կարէր պաշտ-
ոպան լինիլ ձեզ . մինչդեռ դաշնագիրք եւս կան
այդպիսի ապահովութեան համար :

Մագթաղինէն ձեռներով ծածկել էր իւր
երեսը : « Ո՞հ , մտածեց նա , բեռնարի վատ-
թարութիւնը և իմ իսկ ամսմը դրոշմուած են
եղել դիմացս վերայ : Այդ մարդը ամենայն ինչ
դուշակել է » :

— Պարսն , գոչեց Մագթաղինէն . եթէ ես
ամուսնանայի , միթէ կարծում էք , թէ կը

համարձակելի այդպիսի նախատինք դորձել այն մարդուն՝ զոր կ'ընարելի ընկերանալ ինձ ամբողջ կենաց մէջ . Ոչ ապաքէն բաւական կը լինէր ինձ ճանաչել նորա սիրար եւ ունենալ նորա խոստումը՝ որ անտարակոյս առաւել կ'արժէ քան որ և է դաշնագիր :

Աօտարը ժպիտ ՚ի շրթունս՝ պատասխանեց և Քիչ անդամո :

— Խակ արդ՝ պատրաստեցէք այդ պատուական դաշնագիրը . անհամբերութեամբ մինչեւ վազը կ'ըսպասեմ դորա օրինակին ո .

Այնուհեաւ Մագթաղինէն գուրս գնաց շփոթուած : Պ . Ժավայն մնաց ապշած : Օրիորդը արդէն հեռացել էր դրասենեակից , մինչ Նօտարը կամեցաւ կրկին հանել նորան , յանկարերութենէ սահպատած , կանգնեցաւ պատուհանի առջեւ , որպէս զի տեսնէ նորան և խորաքննին հայեացքով կը դիմէր նորա հեաքը .

Մագթաղինէն դարձաւ Սէն - Դէնիս : Ծառու զին մտած կանգ առաւ , վեր քաշեց երեսի քողը և կնձնիների տիսուր կամարի տակ , ակնդէտ գէտ գէպի երկայնութիւնը , ՚ի խնդիր էր սյն մարդուն , զոր ոչ կարել տեսնել և արդեամբք խոկ շըտեսնալով , դառնապէս ժպաեցաւ : Բայց եւ այնպէս յառաջ երթալով , եթէ զ՞ եւ իցէ ՚ի հեռուատ նկատում էր ծառերի ներքոյ , յակամայս կասելով , մտածում էր՝ նա է . Անցւորք մօտենում էին և ահա մի անհոգ ամն՝ որ ՚ի մօտայ անցնելով , ողջունում էր , ըստ որում հազարապեափ այրին և նորա դուստրը նոյնչափ

ծանօթ էին . Աւն — Դէնիսում , որշափ երբեմն
Փենելոփէն — Խթակիայի մէջ :

Այսպէս ահա Մագթաղինէն շարունակեց
իւր ճանապարհը և վերջապէս փողոցի ծայրը
հասած՝ նկատեց երկու անձինք՝ որոնք ծանրա-
քայլ գալիս էին իւր դիմացը : Կարծես թէ ճա-
նաչեց նա սորանց հասակ ու դիրքը և թաղկա-
ցաւ . «Ո՞հ , մրմնջեց նա , մօրը ուղեկից է առել ,
իրը թէ կը վախնայ մինակ ինձ հանդիպիլո :

Տիկին Լէկուրը եւ նորա որդին միաբան
հաւանութեամբ որոշել էին ընդ առաջ ելանել
իւրեանց քաղցրիկ Մագթաղինէին՝ որ առա-
ւոտուն զեկուցել էր իւր խօսնայրին , թէ
գնալու է Փարիզ ու երեկոյին վերադառնալու
է . անտարակոյս Բեռնարը պատգամը ստացած՝
իսկոյն հաղորդել էր մօրը և երկուքը միասին
շտապել էին գալ : Խղճնեկ երեխայ . առանց
սորան տեսնելու կարէին արգեօք մի ամբողջ
օր անցուցանել : Խեղճ պարզամիտ հոգի , խեղճ
անկեղծաւոր և սիրակէզ սիրտ , խեղճ սիրունիկ
ժառանգուհի՝ որ միամնութեամբ կարծում
էր , թէ կարէր ինքնովիք մերժել ժառանգու-
թիւնը և թէ նորանց կողմից որ և է սիսի կամ
ատելութեան վկայութիւն երեւելու չ'էր :

Երրորդ օրը անցնելու վերայ էր , որ գեռ
եւս Օքիորդ Մարտելեթը սպասում էր , թէ
աիկին Լէկուրը կը խօսի իրեն հետ այն
ծանր խնդրոց մասին , որ ինքը վերջնական
կերպիւ լուծել էր . բայց աիկինը գեռ եւս
խօսել չ'էր : Գանիցս անգամ Մագթաղինէն

առել էր թեռնարբին, թէ ցանկանում է կրկին
խօսել նորա հետ առանձնակի, իսկ թեռնարը
չը հասկանալ ձեւացեր էր: Ինչպէս մայրը չ'էր
ուզում իմանալ, թէ ինչ էր խօսել որդին որի
որդի հետ, նոյնպէս և որդին, թուի թէ չ'էր
կամենում միտքը բերել այդ խօսակցութիւնը,
Երկուքն եւս լուռ էին, բայց և այնպէս երկ-
պատկել էին իւրեանց գորովը դէսլի մատաղա-
հաս օրիորդը և նորան ցուցանում էին բաղմա-
տեսակ, նոր, հանճարեղ և քնքուշ խնամք,
իբրեւ այնպիսի անձին, որուն պէտք էր հոգ-
ւով հիւանդ համարէին: Առաւոտ և երեկոյ
որանք գալիս էին միասին միշտ ուրախ դիմօք
եւ ահա այս երեկոյ եւս բոլորովին անխռով
մօտեցան նորա օրիորդին: Երեք ամբողջ օր
Մագթաղինէն չընկատեց որ և է խռովութիւն
թեռնարի դիմաց վերայ կամ որ և է ոխ և բար-
կութիւն ափկին Լէկուրի լափիչ բիբերի մէջ:
Նրանց սին եւ տմարդի ժպիտը թէեւ կալ-
տում էին նորա հայեցուածը, այնու ամենայնիւ
այդ ժպիտի մէջ նա նշմարում էր մի ծածկեալ
խորհուրդ, ինչպէս սառած ապակու մէջ
նշմարում են ամպերի անցքը ընդ օդս:

« Մագթաղինէ՛, ասաց ափկին Լէկուրը,
ով, ինչպէս հիւծուած և դեղնած էք դուք,
զաւակիկս: Ո՞վ կարէր երեւակայել այդ կամ
ով կարէ ասել, թէ բախտը և երջանկութիւնը
ձեր այցելուքն են այժմու:

Բախտ, երջանկութիւն: այս թշնամական
խօսքերը վրէ մինդրութեան բոցեր փայլեցու-

ցին օրիորդի թաւշերի վերայ, բայց կարողութիւն ունեցաւ զեռ եւս լուս մնալու :

Տուէք ինձ ձեր ձեռնը, շարունակեց բարեհոգի տիկին Լէկուրը քաղցրացուցած ձայնիւ, երդնում եմ ձեզ որ՝ սաստիկ բորբոքուած է :

— Յիրաւի, ասաց Բեռնարը . նմանապէս իւր ձեռների մէջ առնելով օրիորդի քնքուշ ձեռնը եւ հակելով դէափի հարսնացուի ականջը, իմ անուշիկ, հարցուց նա, ինչու էք այդպէս տրտում :

Մագթաղինէն շտապաւ խլեց իւր ձեռնը . կարծես թէ նորա ամբողջ մարմինը սառումէ էր ձեռնը սեղմելուց կամ իբր մի ահագին թոյն թանձրացնումէր արիւնը նորա երակների մէջ :

— Քաղցրիկ Մագթաղինէ, կրկնեց տիկին Լէկուրը, յուսամ որ՝ այս անգամ Փարիզում մի քանի բան գնած կը լինիք :

— Ամենեւին, ասաց Բեռնարը քմծինաղով, պատրաստ եմ գրաւ գնել որ նա այսօր զբազուած է եղել առաւել ծանրակշիռ բաներով, քան թէ զարդերով ու պաճուճանքներով, այդես գուշակում եմ նորա կերպարանքից, կ'ըստուգէք, Մագթաղինէ որ կը տանէի իմ գրաւը :

— Կը տանէք, ասաց Մագթաղինէն և այնպէս բեւեռեց իւր հայեացքը Բեռնարի վերայ, մինչ զի սա ստիպուեցաւ ակնկոր մնալ . իսկ դուք, տիկին, միթէ չը գիտէք որ՝ կարիք չ'ունիմ որ և բան գնելու :

— Այդ բնչէ, ողաղակեց տիկին Լէկուրը,

բարձր քրթիչով . հազեւ երեք օր է , որ դուք
հարստացել էք , սիրելի , և ահա ագահութիւնը
տիրել է ձեզ արդէն :

— Այս , տիկին , պատասխանեց օրիորդը ,
ագահ եմ այն ստացուածքի գործածութեան
մէջ , որ իմ սեփականութիւնը չ'է ո :

Տիկին Լէկուրը շրմունքը կծելով արիւնում
էր . որդին կամաց նորա թեւը քաշեց , երկուքը
եւս նկատեցին որ երկիրը հրդեհուած էր և
պէտք չ'էր աւելի յառաջ երթալ . Տիկին Լէ-
կուրը , միջահատելով իւր հետաքրքրութիւնը ,
սկսեց մտածել :

« Մագթաղինէ , կրկնեց նա խստութեամբ .
գիտէ՞ք արդեօք , որ պէտք է զգոյշ լինիք այն
շոգիներից՝ որոնք կը թմրեցնեն ձեզ .

— Միթէ , ասաց Մագթաղինէն , ի՞նչ շոգի-
ներ , ի՞նչ կամիք ասել . տիկին :

— Կամիմ ասել . թէ տերեւի մէջ որդ կայ
պահուած եւ վտանգ կը սպառնայ կոկոնի
փթթելուն , շարունակեց տիկին Լէկուրը իմաս-
տախօսութեամբ . Տէր Աստուած , միթէ ես
ինքնին փորձիւ չ'եմ ճանաչել այդ քսանամեայ
հասակի ազնիւ բաղձանքը . Արտատոչոր շփոթը
ճահիլ աղջկանցն է , մտքի յուղմունքը տղայ
մարդկանց , այդպէս է օրէնքը .

— Այս , տիկին , իմ սիրտը շփոթուած է ,
իրաւամբ նկատեցիք .

— Ուրեմն՝ ասաց տիկին Լէկուրը , ես չը սխա-
լեցի . երբ դուշակեցի , թէ դուք փոքր ինչ
կուանդ էք : Ես ձեր միաքը հարիւրապատիկ

առելի լաւ հասկացայ, քան թէ կարէի հաս-
կանալ իմ սեփական միտքը, ջեսնենք ինչ է
այդ, սիրունիկ. Որ և է շարանիւթ ցնորք պէտք
է անցած լինի ձեր տկար գլխէն, ըստ որում
ուրիշ պատճառ չը կայ, մինչդեռ ինձ յայտնի է,
որ դուք երջանիկ էք, ամենայն ինչ ժպտում
է ձեզ եւ կանչում է գէպի զուարծութիւն:
Նայեցէք ահա բեռնարին, նայեցէք և ինձ իսկ,
ոչ ապաքէն սիրում ենք ձեզ ո.

Այս խօսքից յետոյ բռնեց օրիորդի թեւը
և մի քանի քայլ յառաջ տարաւ: “ Կացէք,
ասաց նա կամաց, իբր չը կամելով որ բեռնարը
լսէ . կացէք, ես կ'ուղէի որ նա լինէր այդ
պարագայից մէջ, իմ որդին հարստութիւն ժա-
ռանգած լինէր որ և է անծանօթ հօր եղբօրից
բերէր այդ հարստութիւնը ձգէր ձեր ոտքերի
առջև: Ո՛վ, Բնչպէս նախանձում եմ ձեր բախ-
տին, որ կարէք առատութեամբ լցնել իմ որ-
դուն: Բեռնար, գոչեց նա բարձրաձայն, գառ-
նալով գէպի որդին, Մագթաղինէն չը գիտէ,
թէ քանի եռանդուն է քո սէրը գէպի նա:

— Օ՛, ասաց բեռնարը մատնանիշ սպառնալիք
ցուցանելով հարսնացուին, երեւութական է
այդ անգիտութիւնը:

— Թուի թէ իրաւունք ունիս, ասաց մայրը,
շար աղջիկը կերպարանումէ իւրան տիսուր,
որպէս զի մեզ փոքր ինչ շփոթէ: Դէհ, Մագ-
թաղինէ, ուրախ եղիք, տրտմութիւնը անդա-
յել է այն յաջողութեան մէջ, որ հանդիպել է
ձեզ այս օրերս: Ո՛չ ապաքէն ապերախտու-

Թիւն է այդ գեղի Արկնային շնորհը ո :

Օրիորդ Մարտելեթը ապշած լսում էր . մինչ
գեռ տիկին Լէկուրի շրմունքից խառնափնդոր
թափւում էին . ակնարկութիւնք եւ խրատք .
խաղաղ յանդիմանութիւնք եւ սպառնալիք .
զգումն եւ հեղնութիւն , մեղք եւ օշնդր եւ
անդադար այդ սոսկալի և Դուք հարուստ էք ո .
խօսքը բերւում էր . իրբեւ նկարի մէջ որ և է
ժանտատեսիլ ստուեր , զօր ՚ի զուր աշխատ կը
լինէին լուսաւորել և գեղեցկացնել . իսկ մինչ
հարկաւոր էր լինում որ թեռնարը հաղորդ լինի
խօսակցութեան , մայրը իսկոյն կանչում էր
նորան եւ սա կամ աւելցնում էր մի խօսք ,
կամ որ և է փաղաքշանք եւ տիկին Լէկուրը
նորէն նայելով Մագթաղինէին կեղծ քնքշու-
թեամբ . կրկնում էր՝ և Դուք երջանիկ էք ,
դուք հարուստ էք ո :

Ո՞չ յոգնում էին սրանք եւ ոչ դադարում
անդիտանկալու գերը խաղաղուց : Յանդուգն ,
պատշաճաւոր , և իւրեանց կարծեօք յայտնա-
պէս անսխալական էր իրանց դիտաւորութիւնը :
Եթէ Մագթաղինէն յուսակտուր եղած և իւր
լութենէն ամօթապարտուած , աղաղակ բառ-
նալու և ասելու լինէր , որ ինչ առաջուց շատ
լաւ գիտէին նորանք , թեռնարը գլուխը կը խո-
նարհեցնէր առանց պատասխանելու , իսկ նորա
ճարտար եւ պանծասէր մայրը պատրաստ էր
ասելու և Դուք սիրում չ'էք մեզ ո : Ո՞՛ , Մագ-
թաղինէին քաջ յայտնի էր որ՝ տիկին Լէկուրը
այսպիսի խօսքերով եւ եթ գրաւել էր իւր

որդւոյն , սորանց մէջ էր այն որոգայթը՝ որ նու
լարել էր թեռնարի թօյլ սիրտը դէպի իւր զի-
տաւորութիւնըը որսալու համար : Քանիցու
կրկնել էր նա բարկութեամբ , թէ Մագթա-
ղինէն ապերախտ երեխայ է , եթէ մերժէ այն
դիպուտծը՝ որ կարէր երջանիկ եւ զօրաւոր
առնելքեղ . մինչդեռ բոլորովին արժանի ես
երջանկութեան : Եթէ նա քեղ զրկումէ , քեղ
նից խլումէ այդ հարսաւութիւնը՝ որ քո սե-
փականութիւնն էր արդէն , ուրեմն նա քեղ
սիրում չ'է . . . :

Այդ կինը՝ որ այլ իմն զգայութիւն չ'ունէր
բաց ՚ի գմնի և նախանձու գորովը դէպի որդին՝
զար անձուկ ուշադրութեամբ աշխատում էր
իւր նման պատրաստել .— այդ կինը՝ որ որդւոյ ե-
րեխայտկան հասակից անդադար տքնել էր նորա
վերայ , սարսափելով ինչպէս մատակ առիւծը
իւր կորիւնի վերայ , թէ մի գուցէ չըլինի նա
նոյնչափ հզօր և անօղաք , որչափ ինքն է ,— այդ
կինը՝ որ երկարատեւ համբերութեամբ մշակել
էր իւր որդւոյն համաձայն իւր հաճոյից , պատ-
շաճեցուցել էր իւր երազներին , իւրացուցել
էր ըստ ամենայն պարագայից եւ վերջապէս
իբրեւ մի կուռք բազմեցուցել էր մէհենի վե-
րայ բոլորովին պատրաստ պաշտելու այդ կտ-
ւեղէն աստուծոյն՝ որուն ինքը հաւատաղով ,
տարակոյս չ'ունէր թէ նոյն կոյր սէրը Մագ-
թաղինէի հոգւոյ մէջ մտած՝ իսկոյն նուաճելու
էր նորա սիրտը : Տիկին Լէկուրը յանդգնու-
թիւն էր համարում օրիորդի երկօրեայ ընդ-

դիմութիւնը . նա երբէք չ'էր սիրել այդ շեկ
աղջկան և ոչ նորա վարդագոյն դէմքը՝ որ յիշե-
ցընում էր նորան որպէս իւր տգեղութիւնը .
Նոյնպէս և այն , թէ այդ ծաղիկ հասակը ինքն
ունեցած չ'էր . բայց այժմ նայելով օրիորդին ,
առելութիւնը առաւելքան երբ և իցէ սիրել
էր նորան . փոքրիկ կանացի ախտերը բանակա-
նութեամբ մինչ այժմ զսպած , կատաղութեամբ
զարթելէին , որովհետեւ մայրական փառասի-
րութիւնը վտանգի մէջ էր . նա օխ ունէր դէպի
Մագթաղինէն նորա պատուով խեղճ մնալու
որոշման համար , օրիորդի զռհաբերութիւնը
գրգռում էր նորան , մինչեւ անգամ նա՝ չ'էր
կարող հաւատալ դորա կատարման . Շատ է
այդ յիմար երեխային , որ սիրուն է եւ կարէ
իւր գեղեցիկ դէմքը ցուցանել , ինչն պէտք է
թոյլ տալ որ պարծանք կազմէ իւր վեհանձ-
նութեամբ .

Բայց որովհետեւ օրիորդ Մարսելեթը սկսել
էր յառաջ գնալ , ուստի մայր և որդի ստիպուած
էին նորա հետքից գնալ . Բեռնարը մօտեցաւ
օրիորդին և առաջարկեց նորան իւր թեւը .
Մագթաղինէն մերժեց և այնուհետեւ լռու-
թեամբ գնացին ու մոին ծառափողոցը . Տիկին
Լէկուրը գաղտագողի զննում էր Մագթաղի-
նէին ու նկատում էր որ նա յուսահատուած
էր . այլ ոչ երբէք համազուած կամ դիտաւո-
րութիւնը փոխած . կարծես թէ՝ այն բացատ-
րութիւնը որ աիկինը ճարտարել էր երեք ամ-
բողջ օր նորան զգուշացնելու կամ յոզդողդե-

ըու համար : Գորդիկ ապստամբը լսում էր յու զուած , բայց հաստատամբուտ , այսու աղագաւ խորամանկ կինը դատեց . թէ պէտք էր քակել նորա շանթալից և մըրկածուփ լռութիւնը :

Կա փորձեց խօսակցութիւն սկսել մի քանի մնոտի առարկաների վերայ , յուսալով թէ մատաղ օրիորդը ակամայ հաղորդ կը լինէր , բայց հեշտ չ'էր այդ ջանրը . որովհետեւ օրիորդը պատասխանել անգամ չ'ուզեց . Տիկին Լէկուրը Բեռնարի օգնութեանը դիմելով , նշանացի կանչեց նորան , Մագթաղինէն բռնեց նորան անցնելուս : Անհանգստութիւնը , սրտմտութիւնը , կատաղութիւնը , մամուլով ինչպէս ծփանք . տիրեցին տիկին Լէկուրի ազնիւ հոգուն , մինչ յանկարծ Մագթաղինէն դարձաւ դէպի Բեռնարը և իւր թեւը անցուց նորա թեւի տակ , որ մի ժամ առաջ արգէն մերժել էր :

Բայց և այնպէս Բեռնարը հազիւ մի քանի աննշան խօսքերով մրայն հաղորդ էր եզել այն խօսակցութեան՝ որ շարունակուում էր մինչ այժմ նրանց մէջ . Օրիորդը կարծես թէ կը կարդար բոլոր անձկութիւնը եւ հոգսը այն ժպիտի մէջ , որ Բեռնարը ջանք էր գործում արգելել իւր շրմունքի վերայ . որպէս զի զըստել իւր անձին դէմ . սորա ամբողջ երեւոյթը վկայութիւն էր , իբր թէ իւր գործողութիւնքը շարչարում էին նրան մինչեւ հոգու խորքը . այնպէս որ՝ Մագթաղինէն , նայելով նրան . գեաց իբր թէ իւր հոգու մէջ քամում էր մի կոթիլ ջրոյ զով և մոքուր : Յոյսը նման է գետ

նի արտօսլին՝ որ գտնւում է երբեմն անտառ-
ների խորքում չոր տերեւների տակ։ Այսպէս
մինչ մենք կարծում ենք, թէ աղքիւրը ցամա-
քել է, նա կայ դեռ եւս և ծածկուած սոզում
է մեր սրտի մի անցայտ անկիւնում։

Մագմաղինէն արագապէս մօտեցել էր
Բեռնարին, յափշտակուած այն մորքով, թէ
գուցէ ՚ի ներքուստ նա պարսաւում էր իւր
մօրը, առ այժմնա աւելի ինչ չէր սպահանջում
իւր սիրելիից։ Կարելի է Բեռնարը շը համար-
ձակելով մերժել իւրեան առաջարկած գէրը
այդ ատելի կատակերգութեան մէջ։ Համել
էր մասնակից լինել։ Ոչ ապաքէն օրիորդը ճա-
նաչում էր Բեռնարին՝ իբրեւ թոյլ, դիւրահա-
ւան, անձեռնհաս ընդդիմանալու որ և է աղ-
դեցութեան կամ առ ինքն գեգերանաց և մա-
նաւանդ որ և է փաղաքշանաց։ Ոչ ապաքէն
քաջ գիտէր նա, թէ ինչ լաւ բան որ կար
Բեռնարի մէջ, միայն իւրանից էր ստացել և
ոչ ապաքէն տեսնում էր այժմնորա մօտ կանդ-
նած մօրը՝ որ փառասիրական գօրովով ոգե-
ւորուած՝ իբրեւ չար հրեշտակ դիտում էր
նրան։ Ահա այսպէս՝ մինչ յանկարծահաս
աղդեցութենէ գրաւուած՝ անցուց նա իւր
թեւը տարփածուի թեւին, վստահ իբրեւ թէ
կրկին նրան իշխելու է, օրիորդը մի ակնարկ
արձակեց գէպի տիկին Լէկուրը, կամելով ասել՝
այժմ իմն է դա։

Բայց՝ հարկը ստիպում էր օրիորդին խօսել
Բեռնարի հետ, որովհետեւ ժամանակը սուղ

Էր, ծառափաղոցից արդէն դուքս էին եկել
եւ տանը մօտեցեր էին, և թեռնար, ասաց
օրիորդը կամաց . . . Այսքան միայն կարաց
ասել, որովհետեւ տիկին Լէկուրը արդէն նորա
կողքից կանգնած՝ զգուշութեամբ բռնել էր
օրիորդի միւս թեւը, «Մնաս բարով, սիրելի,
ասաց տիկին Լէկուրը, այն ինչ հասել էին
բնակարանի դուռը, խնդրեցէք ձեր մօրը նե-
րողութիւնը, որ չ'ենք կարող զինքը տեսնելու
համար ներս մտնել, Աէն – Սօրլէնի տիկնայքը
մեզ սպասում են ճաշելու ՛.

Բեռնարը սարսափեցաւ, զգալի կերպիւ
նայեցաւ մօրը և մնաց ակնկոր : Այդ անակ-
նունելի ստախօսութիւնը՝ որոյ մասին տարա-
կոյս չը կար, ամաչեցուց նրան եւ ստիպեց
հրաժարուիլ Մագթաղինէից, առանց համար-
ձակելու անդամ սեղմել նորա ձեռնը :

Մագթաղինէն մտաւ իւրեանց նեղ և ան-
շուք սենեակը, ուր երեք օր առաջ վստահ և
զուարթ՝ հաւատում էր աշխարհի ազնիւ և
բարի բաներին, հաւատում էր մանաւանդ
թեռնարի, հաւատում էր սիրոյ իսկութեան :
Ի՞նչպէս հանգիստ նստած էր նա մօր մօտ,
երբոր թախտը նենդաւոր պարգեւներով եկաւ
նրանց դուռը բաղխելու : Այժմ Մագթաղինէն
այնպիսի զգացումն ունէր, իբրեւ թէ գերեզ-
ման մտած լինէր, կամ իւրեանց ցուրտ սեն-
եակի շուրջը ծածանում լինէր սգաւորութեան
քողը, թէ եւ ամենեւին փոփոխութիւն եղած
չ'էր նորա մէջ, Հազարապետի այրին առաջուա

պէս նոյն աթոռին և կաշեայ բարձի վերայ ,
և նոյնպէս ասեղնագործութիւնը ձեռքը նըս-
տած էր . կարծես թէ իւր բարձր հասակաւ
աւելի անողոքելի եւ նիհարութեամբ աւելի
խիստ եղած էր . նա չ'էր այլ եւս նկարագիր
առարինական զուարթութեան , որ երեւում
էր առաջ նորա թելլօնեան գնագրութեան մէջ ,
այլ պատկերացնում էր անմռունչ ցաւ և վիշտ ,
ըստ որում յաղթուած էր : Օրիորդի քայլերը
լսելով , ամենեւին գէմքը չը գարձուց գէպի
նա . նորան յայտնի էր դստեր Փարփղ գնալու
դիտաւորութիւնը և նա հաւան էր դորան ,
բայց չ'էր ուզում ասել այդ իւր դստերը ,
որովհետեւ չ'էր ուզում որ այլ եւս խօսք լինի
նրանց մէջ Յնօրէ Մարսելեթի եւ նորա ժա-
ռանգութեան մասին : Մագթաղինէն նմանա-
պէս չը կամեցաւ մօտենալ մօրը և քայլամոլոր
շըլում էր սենեկի մէջ . բայց յանկարծ նորա
կարողութիւնը հատաւ . նա չը կարաց պահել
իւր լալագին հեծեծանքը .

Վ եր թռաւ տիկին Մարսելեթը իւր տե-
ղից . սրնմաց վաղեց գէպի դուստրը , բարձ-
րացուց նորան , առաւ իւր ծոցը , նստաւ եւ
իրեւ մի երեխայի նստեցուց նրան իւր ծնկաց
վերայ :

—Ա Աւազ , ասաց նա , դու նրանց տեսել ես ո .
—Այս , պատասխանեց դուստրը , նա ինձ
թողում է , մօր կամքը այդ է և այսօր նա ճա-
շում է Սէն-Սօրլէնի տիկինների մօտ :



Ե.

Միքանի դիշեր անբուն , արտասութիւնը մէջ
եւ ինքն իրան հետ ոգործելով անցուցանելուց
յետոյ . Մագթաղինէն զարթեցաւ մի առաւօտ
առաւել ուժեղ և կարովամիտ . ըստ որում նոյն
դիշերը հանգիստ անցուցած էր : Գսան և մի ա-
մեայ հասակը առանց տուժելու չ'է անցնաւմ .
ուստի եթէ դէպ լինէր սիրար խաւարի մէջ
դնել . հարկ էր և մի արեգակ տանել այն տեղ .
Օրիորդը գանգաղանօք և իրրեւ թէ անձնահա-
ճութեամբ շորերը հագաւ , տիսուր յօժարու-
թեամբ յարդարեց իւր հազարաւոր մանր եւ
շէկ մազերը , ինչպէս դալար յակինդի հիւս-
ուած , այնպէս որ՝ ճակատի և թուշերի վե-
րայ կ'իջանէին և այնուհետեւ մի թեթեւ մպիտ
նկարուեցաւ նորա շրթունքի վերայ իւր գե-
ղեցկութեան պատճառաւ , որոյ մասին , մի քա-
նի օր էր որ՝ սաստիկ երկրայում էր , տեսնե-
լով թէ որպիսի տմարդութեամբ մի փոքր ու-
կին իւրմէ առաւել էին պատւում :

Հայելու մօտ կախ էր թեռնարի պատկերը՝
որ յիշեցնում էր Մագթաղինէին այդ մարդու
գործած մահաբեր նախատինքը . յիշեցնում էր
այն ամազարիշտ և նենգաւոր տարփածուին՝ ո-
րուն երկու ամբողջ տարի սիրել էր միակ , պարզ
և մտերիմ սիրով . Նա կարէր միօրինակ քննել .
նորա դէմքի գծագրութիւնքը պատկերի մէջ

եւ իւրը հացելու մէջ . Այս ժամանակ առում .
էին . թէ այդ երկու գէմքը իրրեւ քրօջ և եղ .
բօր էին . իսկ այժմ երկու հոգիքը երկուց
թշնամեաց էին . Այս պատկերը բեռնարը .
Արբոյն Մագմազինէի Տօնի օրը . ընծայել էր
օրիորդին , օրուն , թէ ընդ խոզ և թէ քրնք .
շութեամբ . արդէն կոչում էր իւր կինը . ԲՌԱՋԻ .
սի քաղցրութեամբ գեռ եւս ժպտում էր ա-
պերախտող կտափի վերայ :

Բայց Մագմազինէն յանկարծ այլագունե-
ցաւ . Նա կարծես թէ առաջին անգամ նկա-
տեց որ՝ նկարիչը իսկութեամբ ուշադիր եղած
չ'էր գէպի այդ կերպարանքի և շրմունքի կազ-
մուածքը . բայց գուցէ բնազդեցութենէ ըս-
տիպուած և առաւել խոր քննելով , կարողա-
ցել էր գտնել այն ստուերը՝ որ ձգել էր նո-
րա ժպիտի վերայ եւ այն ախտակրութեան
գծերը՝ որ գրոշմել էր նորա շրմունքի կրկնը-
ւածքի մէջ եւ որ կարէր խայթել մարդու-
սիրազ . Եւ յիրաւի սրանց մէջ էր թագուց-
ուած սնուտի փառասիրութիւնը . կռուասէր
նախանձը . հարստութեան անյագ ծարաւը .
ցանկութենէ եւ թուլութենէ ծնած ստու-
թիւնը . յիրաւի այսպիսի էր ճշմարիտ թեռնա-
ըը՝ որուն Մագմազինէն լաւ չ'էր ճանաչել և
որուն չը կարէր նա սիրել , եթէ տեսած լինէր
նրան առաջ , ինչպէս տեսնում էր այժմ մեր-
կապարանոց . Այս , հրբան ցանկալի էր նրան
այս վայրկենիս լինել հանգէտ նկարչին՝ որ այդ
ատելի և յաւէրժ սիրելի կերպարանքը գծագ-

բել էր եւ յանդիմանելով նորա ամուլ խորա-
գիտութիւնը . ասել նորան . “ Ո՞հ , դուք որ
խզմանաց խորերը քննելու կարողութիւնը
ունիք , նորանը քննելուց յետոյ ինչու զիս չը
զգուշացուցիք . . . ” .

Մի շաբաթ էր որ թեռնարը այցելութիւն
տուած չ'էր Մարսելեթներին , իսկ նորա մայրը
եկել էր միայն մի անգամ . Մտածելով այդ այ-
ցելութեան վերայ . Մագթաղինէն յօժար էր
յիշողութիւնը կորուսանել . ըստ որում նորա
համար գժուար չ'էր հասկանալ . թէ ափին
Լէկուրը վերադարձել էր Փարիզից և թէ նա
գնացել էր ծավոյնի սեղանատանից Մարսելե-
թի ժառանգութեան մասին տեղեկութիւններ
ստանալու համար . իսկ այդ Պարսնը անտարա-
կոյս բոլոր պարագայները բացատրել էր նրան .
Խելագար բարկութիւնը մզել էր այդ կնոջը
դէպի ափին Մարսելեթի բնակարանը , առանց
բնաւին մտածելու անգամ . թէ Բնչ հարկաւոր
էր այն տեղ գործել . Հանճարեղ կինը ամենեւին
չը հոգաց . թէ Բնչ ձեւով պէտք էր վարուել
կամ որպիսի քաղաքավարութիւն գործածել .
այլ նորա բորբոքուած շրթունքի վերայ ճայ-
թեցաւ առաջին խօսքը՝ որ էր դաշնագիրը .
Մագթաղինէն մնաց լուռ և ակնկոր . նա այն-
քան միայն քաջաօրտութիւն ունեցաւ որ՝ կա-
րաց նշանացի պատասխանել . բայց այն Բնչ
ափին Լէկուրը հրաժարուել էր . մի նամակ
դրեց թեռնարին , աղաչելով նրան իւրեանց
մօտ կալ մենակ . նա դեռ եւս երազում էր ,

թէ այս մերջին հրաւերով յիշեցնելով նորա
իւր պատիւը և սէրը . կարէր ստիպել իւրեանց
մօտ գալ . Նայոյս ունէր , թէ մի վայրկենի մէջ .
մէկ հայեցուածքով , մէկ սրտառուչ խօսքով , և
մէկ ձեռքի սեղմումով պիտի ամաշեցնէր նրան
իւր բարիքի մասին , իւր անարդ դիտաւորու-
թեանց մասին և պիտի դարձնէր նորան դէպի
այն զգացողութիւնքը՝ որոնք պէտք էր զարթը-
նէին . յիշելով իւր անցեալը , իւր երդումը և
որ ինչ էր . . . բայց Բեռնարը չ'եկաւ :

“Տէ՛ր Աստուած իմ , ասաց Մագթաղինէն ,
ծունք . իջաց անկողնակալի մօտ , իւր առաւօտ-
եան աղօմքը անելու համար , որ մնուացել էր .
Տէ՛ր Աստուած իմ , եթէ հարստութիւնը մի
պարգևէ գեղնից , ինչո՞ւ այդքան ստէպ հա-
ճում ես Դու որ նա պիղծ ձեռներ անցնի .
Եթէ հարստութիւնը մի բարիք է , որուն Քո
երկու խեղճ սպասուհիք ամենեւին արժանի
չ'եին , ինչո՞ւ հրապուրեցիր նորանց այդ փոր-
ձութիւնով . Եթէ Դու ուզում էիր մեզ պատ-
ժել , եթէ հարստութիւնը մի չարիք է , որով
կամեցար իրաւամբ փորձել և հրապուրել մեզ .
ինչո՞ւ նորան ցուցիր մեզ ժանտատեսիլ և ա-
պականեալ . Մոռացար արդեօք , թէ մեզ ար-
ւել էիր խղճմուանք՝ որ արգիլելու էր մեզ ըն-
դունել զայն . Տէ՛ր Աստուած իմ , ինչո՞ւ կեան-
քը այդքան խստութեամբ իմացնում ես նո-
րանց՝ որոնք Քեզ սիրում են . նշմարիտ է ար-
դեօք , թէ կեանքը՝ որ մենք այդպէս սիրում
ենք , լի է թշուսութիւններով և ստութիւն-

բել էր եւ յանդիմանելով նորա ամուլ խորա-
գիտութիւնը , ասել նորան . “ Ո՞հ , դուք որ
խղճանաց խորերը քննելու կարողութիւնը
ունիք , նորանը քննելուց յետոյ ինչու զիս չը-
զգուշացուցիք . . . ” .

Մի շաբաթ էր որ Անռնարը այցելութիւն
տուած չ'էր Մարսելեթներին , իսկ նորա մայրը
եկել էր միայն մի անգամ . Մտածելով այդ այ-
ցելութեան վերայ . Մագթաղինէն յօժար էր
յիշողութիւնը կորուսաննել , ըստ որում նորա
համար գժուար չ'էր հասկանալ . թէ ափկին
Լէկուրը վերադարձել էր Փարիզից և թէ նա
գնացել էր Ժավոյնի սեղանատանից Մարսելե-
թի ժառանգութեան մասին տեղեկութիւններ
ստանալու համար . իսկ այդ Պարսնը անտարա-
կոյս բոլոր պարագայները բացատրել էր նրան .
Խելագար բարկութիւնը մզել էր այդ կնոջը
դէպի ափկին Մարսելեթի բնակարանը , առանց
բնաւին մոտածելու անգամ , թէ ինչ հարկաւոր
էր այն տեղ գործել . Հանճարեղ կինը ամենեւին
չը հոգաց . թէ ինչ ձեւով պէտք էր վարուել
կամ մրայիսի քաղաքավարութիւն գործածել .
այլ նորա բորբոքուած շրմունքի վերայ ճայ-
թեցաւ առաջին խօսքը՝ որ էր դաշնագիրը .
Մագթաղինէն մնաց լուռ և ակնկոր , նա այն-
քան միայն քաջարտութիւն ունեցաւ որ՝ կա-
րաց նշանացի պատասխաննել , բայց այն ինչ
ափկին Լէկուրը հրաժարուել էր , մի նամակ
դրեց Անռնարին , աղաչելով նրան իւրեանց
մօտ կալ մենակ . նա դեռ եւս երազում էր ,

թէ այս մերժին հրաւերով յիշեցնելով նորա
իւր պատիւը և սէրը , կարէր ստիպել իւրեանց
մօտ գալ . Նայոյ ունէր , թէ մի վայրկենի մէջ .
մէկ հայեցուածքով , մէկ սրտառուչ խօսքով , և
մէկ ձեռքի սեղմումավ պիտի ամաշեցնէր նրան
իւր բարքի մասին , իւր անարդ դիտաւորու-
թեանց մասին և պիտի գարձնէր նորան գէպի
այն զգացողութիւնքը՝ որոնք պէտք էր զարթք-
նէին . յիշելով իւր անցեալը . իւր երդումը և
որ ինչէր . . . բայց թեռնարը չ'եկաւ :

“ Տէ՛ր Աստուած իմ , ասաց Մագթաղինէն ,
ծունք իջաց անկողնակալի մօտ , իւր առաւոտ-
եան աղօմքը անելու համար , որ մնուացել էր .
Տէ՛ր Աստուած իմ , եթէ հարստութիւնը մի
պարգեւ է գեղնից . ինչո՞ւ այդքան ստէպ հա-
ճում ես դու որ նա պիղծ ձեռներ անցնի .
Եթէ հարստութիւնը մի բարիք է , որուն փո-
երկու խեղճ սպասուհիք ամենեւին արժանի
չ'էին . ինչո՞ւ հրապուրեցիր նորանց այդ փոր-
ձութիւնով . Եթէ դու ուզում էիր մեղ պատ-
ժել , եթէ հարստութիւնը մի չարիք է . որով
կամեցար իրաւամբ փորձել և հրապուրել մեղ ,
ինչո՞ւ նորան ցուցիր մեղ ժանտատեսիլ և ա-
պականեալ . Մոռացար արդեօք , թէ մեղ ար-
ւել էիր խղճմանք՝ որ արգիլելու էր մեղ ըն-
դունել զայն . Տէ՛ր Աստուած իմ , ինչո՞ւ կեան-
քը այդքան խստութեամբ իմացնում ես նո-
րանց՝ որոնք գեղ սիրում են . Ճշմարիտ է ար-
դեօք . թէ կեանքը՝ որ մենք այդպէս սիրում
ենք , լի է թշուառութիւններով և ստութիւն-

ներով և թէ սէրը նուազելէ մարդկանց մէջ ։
Ցշմարիտ է արդեօք, թէ այն բազմամիւ յօ-
ժարութիւնների մէջ, զորս Գեղնից ստացելէ
մարդկութիւնը, մին է միայն, որ միւսներին
շատ շուտ ենթարկում է մոռացութեան, որոյ
աղդեցութենէն ազնուագոյն իզձերը կործան-
ւում ջնջուում են և որ միանգամ մեր որտի
մէջ մոտած, իսկոյն բազմում է այն տեղ իբրեւ
անիրաւ եւ արիւնուուշտ իշխան երգմնազան-
ցութեանց վերայ, աւերակաց վերայ, Եղիցին
կամք Քո, Տէր, Արծաթի սէրը Թագաւորել
է աշխարհի վերայ և ես չըգիտէի այդ, բայց
և կարօտ չ'էի լինիլ իմանալու, եթէ Դու ինձ
թողած լինէիր խեղճ, Դու իմ միարը լուսաւո-
րեցիր այսուհետեւ, Դու ինձ ցուցիր ամենայն
ինչ՝ որուն պէտք չէ հաւատալ, բայց ինչ բա-
նի պէտք է հաւատալ այժմ, մինչ առաւելնը-
ւիրական զգացողութիւնք նշաւակւում են մի
ցանկութիւնից՝ որ յաւէտ տմարդի և չար է
եւ այն ինչ սա ծնանում է, միւսները ոշնչա-
նում են, Այսպէս ցանկութիւնը անդադար
սպաշարում է հոգիների դուռը եւ միայն մի
վայրկեանը բաւական է նրանց նուաճելու
համար, Տէր Աստուած, Բնչպէս ես խնայում
էի երբեմն, ինչպէս չար և ամպարիշտ էի հա-
մարում նրանց՝ որոնք իմ նորածին բանակա-
նութեան մէջ աշխատում էին արմատացնել
այն դառն ուսումը՝ որ Քո հարուածներից
միայն մին ցաւագին կերպիւ դրոշմեց իմ սրտի
պէրի մէջ, Բայց եւ այնպէս նրանք ուզում

էին միայն բանալ իմ աչքը գեղի իրական ճշմարտութիւնը . նրանք գործում էին այդ առանց բարկութեան և ատելութեան , որովհետեւ միտս է որ՝ մինչդեռ բացայացում էին ինձ այդ անարդ գաղտնիքը . ժայիտը հրաժարում չ'էր նորանց շրմունքից . Եւ մինչ ես իրեւ երեխայ , զայրանում էի նրանց վերայ , յանդիմանում էի այդ մարդասէր հեգնիշներին նորանց ապերախտութիւնը Գո առջեւ , անարդարութիւնը դեպ ՚ի մարդիկ և պատասխանում էի , թէ հակառակ նորանց դժնեայ խրառներին , դադարելու չ'էի հաւատալ բարութեան , անկեղծութեան , հաւատարմութեան , սիրոյ և ամենայն բանի՝ որ բարի և գեղեցիկ է աշխարհում եւ թէ մինչ ցմահ հաւատալու էի . — նրանք գլուխները շարժում եւ կրկին ժպտում էին . Տէ՛ր Աստուած , իմն էր արդեօք յանցանքը և իրաւունքը նրանց ո .

Այսպէս աղօմելուց յետոյ . Մագթաղինէն վեր կացաւ , դարձաւ յանկարծ դեպ ի Բեռնարի պատկերը եւ կորզեց զայն պատի վերայից . Այդ ատելի և կեղծ նկարը՝ որ մինչ այժմ այնչափ սիրելի էր նրան , նա վճեց վերջին անգամ զննել ուշադրութեամբ . բայց արդեօք բաւական էր այդ այլ եւս նորան չըտեսնելու համար . Նա պատրաստ էր պատառել , ջնջել նորայիշատակը անդամ , ձեռը բարձրացուց դեպի կտաւը և նորէն վար առաւ , օրովհետեւ օրտի բորբոքը զիջանելու վերայ էր ։ Յամբ քայլերով գնաց նա դեպի սենեկի խորքը .

պատկերը գրաւ մի պահարանի մէջ , փակեց
և բանալին պատուհանէն դուրս նետեց . Այ-
նուհետեւ Մագթաղինէն այնչափ թեթեւու-
թիւն զգաց , ոի ահա իւր անցեալ օրերու լի-
շատակի մէջէն հանել էր այդ կտաւը և ոչինչ
այլ եւս արգիլելու չ'էր նրան մի նոր եւ այն-
պիսի կեանք սկսել , որ բոլորովին տարբեր էր
նորա անցեալ կեանքից . Վերջապէս նա հա-
գաւ իւր պարկեշտ շորերը . ուսերը ծածկեց
սեւ շալով և գնաց մօրը տեմնելու . Հազարա-
պետի այրին մի ակնարկ արձակեց դէպի դուռատ-
րը և հառաջանօք գլուխը շարժեց : “Գիտեմ
նոր կ'երթաս , Մագթաղինէ , ասաց նա . եւ
ցանկանում եմ , որ բազմաթիւ դժբախտներու
չը հանդիպես , կամ գոնէ բազմաթիւ ապե-
րախտներու . Վշտի առաւելութենէն ամիկին
Մարսելեթը նոյնչափ սկեպտիկ էր այժմ , որշափ
և նօտար ծավայնը : Մագթաղինէն այս անգամ
եւս զգաց որ քաջասրտութիւնը նուազում էր
իրա մէջ , բայց յոյսը լցուց այդ պակասու-
թիւնը :

Երբ որ նա դուրս եկաւ աանից , մայր
եկեղեցւոյ զանդակը հնչեց կէս աւուր ժամը .
Օրիորդը հեռացաւ քաղաքի կեդրոնից և մտաւ
մի նեղ փողոց՝ որ պարտէ զների միջով տանում
էր դէպի արուարձանը . Օրը գեղեցիկ էր .
թէե ամսանավերջի ցրտախառն թազդութիւնը
զգացնում էր . աշնան գառնաւէտ հոտը երկրի
խորքից դոլորշիով բարձրանում էր . ճառերի
ցրուած և թառամած տերեւները , այդ վեր-

շին զարդը ամառնային եղանակի , ախուր կեր-
պիւ կախ էին պատերի վերայ և եղեամի ձգած
հետքը , սառն դիշերների նշմարանքը , տեղ
տեղ երեւում էին խոտի վերայ ճանապարհի
եղերքում . Միով բանիւ՝ ձմեռը արդէն մօս
էր եւ խեղձները անձկութեամբ նայում էին
իւրեանց դատարկ կրակարաններին , մոռածելով .
Թէ բնաւ տեսնելու չ'էին նրանց մէջ կրակի
զուարթացուցիչ բոցերը՝ որոնք հարուստների
տանը դադարելու չ'էին փողփողել նրանց մո-
ռանալ տալու արեւի ջերմութիւնը : Իրաւամբ
ուրեմն այդ արուարձանը կոչւում էր խեղձների
թաղ : Երկու կարգ ծուխից սեւացած տուներ
կազմում էին նորա բազմամարդ համարուած
փողոցը . արեգակը կարծես թէ խնայում էր
իւր ճառագայթները անցուցանել նեղ պատու-
հանների պատառոտուն վարտգուրների միջով .
որոնք այժմ չորաննալու համար պարանի վերայ
կախ , ծածանում էին մինչեւ տանիքը , իրրեւ
թշուառութեան դրօշներ : Զը կար այս տեղ
եւ ոչ մի մժին խցիկ՝ որոյ մէջ չը բնակէր
ամբողջ գերգաստան . այդ սեւ տուները
թանձր մրցիւննոցներ էին մարդկանց՝ որոնք
վերէն ՚ի վայր լցուած էին :

Այդ փողոցի միջով վազում էր մի վտակ
և նորա ագի վերայ խաղում էր երեխայներու .
մի խումբ , մէկուն գլուխը շէկ , միւսինը սեւա-
մազ , վարսը քամիներուն տուած , թուշէրը
վարդագայն . թէ և որոնց մէջ քիչ չ'էին և այն-
պիսիք՝ որոնց մայրերը մոռացել էին առաւա-

առւն քանի մի կաթիլ զով ջուր սրսկել նրանց
երեսին . Աղջկունք և տղայք , բաճկոնները .
և պատմու ճանները պատառուած , ոտները մերկ .
տիզմի մէջ զբօսնելով շրջում էին . Մի փառաւոր
թղթից շինած նաւակ ձգել էին ջրի վերայ և
ուսսափիկ անձկութեամբ նայում էին , թէ ուր
կը գնար նա , փողոցի ծայրը արդեօք , ուր
վտակը լայն և ընդարձակ էր . թէ կը շրջէր
մի տեղ կաղնու կեղեւի նման . Նաւակը ե-
րերում էր եւ մի թեթեւ բաղխիւնը ծռում
էր նրան դէպի ափը . Երեխայների խումբը ափի
բերան կեցած էր . յանկարծ յորձանքը զարկեց
նաւակին , պտուտկեց նրան և ջրասոյզ ըրաւ .

Այս միջոցին , Մագթաղինէն՝ որ կամաց
մօտեցել էր Երեխերքին , ձեռնը դրաւ մի
աւելի հասակաւոր աղջկայ ուսի վերայ , իսկ
սա բոլորովին ահաբեկուած՝ դև մքը դարձուց
դէպի օրիորդը . Ոչ մէ կը մինչ այժմ նկատել
չ'էր սիրուն օրիորդին և այն ինչ տեսին նրան ,
իսկոյն ցրուեցան , ինչպէս ծիծեռնակի ձագեր
իւրեանց բոյնից . Աղջկը նոյնպէս կամեցաւ
փախչել , բայց նա արդէն որսացուած էր ,
ուստի բարձրացուց շփոթուած հայեացքը
դէպի օտարուհին՝ որ նրան գերել էր եւ
Մագթաղինէի մարդասիրական ժպիտը բա-
ջալերեց նորան այնպէս որ՝ սա ինքն եւս ժըս-
տեց . Յրիօրդը հարցուց նորա տարիքը և ա-
նունը . աղջիկը բոլորովին ընտելացած՝ համար-
ձակ պատասխանեց նրան . Մագթաղինէն հա-
նեց դրպանից մի ուռած քսակ և նորա միջից

մի վայլուն ոսկի տուաւ աղջկան իւր համբոյրի
հետ միասին և խնդրեց նրան գնալ իւր ընկեր
ներին գտնել և բերել իրաք մօտ :

Երեխերը հեռի չ'էին . Մագթաղինէն տե-
սաւ որ՝ քսան քայլ միայն բացակայ իրանից ,
կծկուած միասին , ակնկուռ նայում էին դէպի
ինքը . Պատգամաւոր աղջիկը խօսում էր ընկեր-
ների հետ ճառաբանօրէն . հրաւիրելով նրանց
իւր հետ գնալ . Ամենամեծ վարանաց մէջ էր
նա , թէ ինչպէս բացայացտէ նրանց այդ ան-
ձանօթ տիկնոջ ով մինելը . « Սա սյն ողորմասէր
կիներից չ'է , ասում էր աղջիկը . այլ ծաղկա-
հասակ օրիորդ է , ահա եւ նրանից ստացած
ոսկին ո . Օրիորդ Մարսելեթը , լաւ հասկանա-
լով բանի օրպիսութիւնը , սկսեց քաջալերել
նրանց հրաւիրական նշաններով . Չը կարելով
այլ եւս ընդդիմանալ , երեխերը ակնկոր եւ
յամրաքայլ մօտեցան օրիորդին . Մագթա-
ղինէն որ դեռ եւս ուռած քսակը կասկել
չ'էր , նորէն հանեց նորա մէջից ոսկիքը , ամեն
մէկի ափի մէջ դրաւ մի ոսկի և նկատեց մանր
ձեռների դիւրաշարժութիւնը ընդունելու հա-
մար . Փայլուն խաղալիկը՝ որ աղջկունք երբէք
տեսած չ'էին , անսովոր հիացման մէջ ընկղմնց
նրանց . եւ այնուհետեւ սկսեցին նրանք վա-
զել և ոսասոսել Մագթաղինէի շուրջը . խա-
ղայնելով մատների մէջ ոսկու սիրուն կտորիկը ,
ամենից փոքրիկը , իւր հատիկը խաղացնելու
ժամանակ , անդգուշութեամբ վտակի մէջ ձգեց
և ահա յորդ արտասուրը , հեկեկանքը և յու-

առհատութիւնը խեղջում էին նրան . վազվա-
շեցին միւսները վտակի մէջ , փորեցին տիզմը ,
որոնեցին , օրիորդը ինքը հովանոցով ուղղում
էր նորանց խուզարկութիւնը և ահա վերջապէս
ոսկին գտան . Փոքրիկ աղջիկը վեր առաւ եւ
ձեռնում պինդ բռնած՝ վազեց դէպի տուն .
Եարժեցաւ և բոլոր խումբը և աղաղակելով
գնաց նորա քամակից . Հազիւ մի բոպէ անցած
Մագթաղինէն մինակ էր :

Ա Խվ սուրբ կոյս , Բնչպէս ողորմած Էք
դուք , տիկին , որքան բարեսիրտ Էք , ամենքին
մի մի ոսկի տուիք ո : Այս ցաւազին և ողոքիչ
խօսքերը յանկարծ լսեց Մագթաղինէն իւր
քամակից կամ ետեւից :

Ա Այս , կրկնեց միւսը դաժան ձայնիւ , այս .
քաղցրահաց վաճառող կինը լսւ օգուտ կը քաղէ
տիկնոջ բարեբարութիւնից . Ըստ իմկարծեաց ,
այդ ոսկիները պէտք էր մայրերուն տալ .

Ա Այս անգամ զարմացած Մագթաղինէն
մտաք ժողովեց և յետս նայեցու . Երկու կին
մօտեցել էին նորան բոլորովին անշունչ եւ
պէտք է կարծել , թէ շատուց արդէն լրտեսում
էին օրիորդին : Մին անհաճոյ էր Մագթաղի-
նէին իւր մուսանման երեսով , դեղնած շրթուն-
քով , ստրկական հայեացքով , կարծես թէ
սողում էր սա մարդկանց բոլորափքը նրանց
հոգւոյ դռնիկը գտնելու համար . իսկ միւսը
իւր թաղձագին դիմօք վախեցուց նրան .
Մագթաղինէն , մի վայրկեան մտածելուց յետոյ ,
ուղում էր խուսափել այդ օտարութի թախան-

միւներից և գառնալ իւր բնակարանը . նա
զգում էր որ և է մի յորդոր բաւականալու
մինչ այժմ գործած բարերարութիւնով , բայց
ահա ցաւագին խնամին հասկացաւ այդ գի-
տաւորութիւնը :

“Դուք նոր կին էք ողորմածութեան , և ս
տեսնում եմ այդ . ասաց նա նոյն խղճահար
ձայնիւ՝ որ սաստիկ անախորժ էր օրիորդին .
Ահ , փոքրիկ բարեսիրոտ տիկին , Պարոն ժաղո-
վըրդապետը գուցէ խօսել է ձեզ հետ իմ
մասին”

—Այլ ոչ իմ մասին , միջահատեց յանկարծ
առնադէմ կինը . գլուխս կուտամ որ չէ խօսել .
մենք ոչխարաց հոտից չ'ենք , մենք եկեղեցի
չ'ենք գնում

—Ես չորս երեխայ ունիմ կերակրելու :

—Եթէ ես երկուսէն աւելի չ'ունիմ . այդ
իմ յանցանքը չ'է . աղաղակեց երկրորդը .

—Իմ խեղճ ամսւամնը հիւանդ է .

—Ես մեղաւոր չ'եմ որ իմը բոլորովին առողջ
է . թէ եւ իմ Բախտից թողել է զիս . Է՛ .
դրացի , չ'էք թոյլ տալու որ մի խօսք ամեմ .
միայն դնեք պէտք է խօսէք . մինչդեռ ամենքը
գիտե՞ն որ՝ եկեղեցիից և բարերարական պաշ-
տօնատանից ստացածով դուք կարող էք ամեն
շաբաթ մի սագ փեարել .

—Վայ ինձ , պատասխանեց միւսը վրէժխընդ-
րական ձեւով , եթէ այդ սագը ձեր տանը
փեարէին , դուք նրան որսկելու դինի եւս
կը գտնէիք . Դուք եկեղեցի չ'էք գնում . բայց

մենք գիտենք . թէ ինչ էք գործում , առ կը
մներ որ շըխօսէիք

— Ցիրաւի լաւ կը լինէր որ՝ երկուքդ եւս
լւէիք , ասաց Մագթաղինէն , ամօթու ծիրա-
նեգոյն դարձած եւ շոտապաւ ողորմութիւն
տուաւ նրանց և հեռացաւ .

Հազիւ մի քանի քայլ փոխել էր՝ նա զդաց
որ հանգերձը քաշում էին , ահա մի կին եւս .
մի ծեր կին :

« Օրինրդ , ասաց նա բեկրեկեալ ձայնիւ .
օրինրդ . . . Այս կինը սխալում չ'էր խորհրդա-
ւոր բարեգործուհւոյ հանգամանոց մասին ,
որ առաջին անգամ երեւում էր նրանց խեզզ-
թաղում իբրեւ տեսիլ ՚ի բարձանց : Օրինրդ ,
շարունակեց նա ժպիտ ՚ի շրթունս , շատուց
չ'է , թուի թէ , ձեր բարերարութեանց սկրո-
ուածքը ո : Մագթաղինէն նկատեց եւ սղա-
ռաւի ժպիտը նորան երեւեցաւ փոքր ՚ի շատէ
պարզ եւ անկեզծ : Կինը կը լինէր ութունա-
մեայ , նորա գէմքը բոլորովին խորշոմած էր ,
ինչպէս խնձորը ձմեռուայ վերջերում , աչ-
քերը սաստիկ ծերութիւնից փոքրկացած էին ,
ծանրացած արտեւանունքի տակից խորամանկ
լոյսը երեւում էր բարակ թելի պէս :

— Գիտեմ , ձեր վերայ անհաճոյ աղդեցու-
թիւն գործեցին այդ երկու կանացք , ձեզ
տրտմեցուցին նրանք , ահա ձեր թուշերը
բոլորովին կարմրած են , ասաց ձեր կինը :

— Ճշմարիտ է , պատասխանեց Մագթաղինէն
միամտութեամբ , միշտ ցանկալի է բարութիւն

կտնել նրանց մէջ, որոնք վշտացած են եւ սրոնց հարկ էր օգնել, բայց երբ այդ բարութիւնը գտնում չ'են

— Այս, ասաց պառաւը, խրտնում են, զայրանում են և շտապում են վատ դատողութիւն անել խեղճ մարդկանց մասին: Զեր կարծեք Բնչպէս պէտք էր շարժէին նրանք: Միթէ հարուստների սիրտը խղճահարելու համար պէտք չ'էր, որ անոյշ կերպարանք մի ցուցնէին: Եթէ միայն անկեղծութեամբ ասէին, թէ դժբախտ են, կարծում էք, թէ կը հաւատային նրանց:

— Հասկացայ ձեր խօսքը . պատասխանեց Մագթաղինէն: Եթէ թշուառութիւնը բազմիցս լինում է մայր կեղծաւորութեան, սորա պատճառը այն է որ՝ հարուստների վշտակցութիւնը սակաւ երբեմն յայտնուում է իրրեւ ծնունդ ճշմարիտ ողորմանութեան: Բայց դուք, որ այդպէս բացասիրտ խօսում եք

— Ո՞չ, ես չ'ունիմ կարօտութիւն ինչ, իմ հասակում եթէ ունենայի եւս, այդ կը լինէր: Միայն մահու կարօտութիւնը, բայց ես խօսում եմ այլոց համար:

— Ուրեմն՝ պէտք է օգնէք ինձ նոցա զիշտը թեթեւացնելու համար: դուք աւելի տեղեկութիւն ունիք քան զիս, ուստի կարող էք ուղեկից լինիլ և ցոյց տալ ինձ բարերարութեան ճանապարհը: Կամիք արգեք ո:

Պառակի փոքրիկ աչքերը շողացին:

« Եթէ այդպէս է, յիրաւի կամիմ: Եկէք

ուրեմն։ Այսուհետեւ նա սկսեց վաղել օրիորդ Մարտելեթի կողքից կարժիկ քայլերով։ որ նորա ութսունամեայ սովերի համար փառք համարելու էր։ Այդ ընթացքի մէջ պառաւը գլուխը ճօձելով և ինքզինքը մոռացած, բարձր ձայնիւ խօսում էր։ «Վերջացաւ, ասում էր նա, այլ եւս չի բարկանալ . . . նրանք կը գրկախառնուին . . . փոքրիկը կ'երգէ ո . . . Մագթաղինէն, նեղացած այդ օտարութի և կիսատ խօսքերը չը հասկանալուց, վճռեց կանգնեցնել պառաւին և բռնեց նորա թեւը։

“Ուր ենք գնում, հարցուց նա, ապահով էք որ ինձ տանում էք պատուաւոր մարդկանց մօտ։

— Անտարակոյս, պատասխանեց կինը, քըքքիչով։ Ես ձեզ տանում եմ իմթոռնի մօտ։

Աղջիկ թոռնի մօտ։ Մագթաղինէն յանկարծ կասեցաւ։ Այս էր ուրեմն պառաւի գեղեցիկ ճառախօսութեան վերջաբանը, թէ այլոց համար է խօսում։ Բարեմիտ կերպարանքը, բացասիրտ խօսակցութիւնը ուրեմն խորամանկութիւն էին կամ ճարտարութիւն անձնական շահախնդրութենէ և ազահութենէ ծագած։ Այսքանը շատ էր արդէն Մագթաղինէի սրտի մէջ կասկած ձգելու համար։ Պառաւը շատ լաւ հասկացաւ բանի որպիսութիւնը։

«Աւազ, ասաց նա աղերսագէմ, սա իմ որդւոյ դուստրն է։ ամուսնացած է։ այնչափ աղքատ էն, որ ամեն բան կը պակսի իրենց։ կինը տասն և եօթնամեայ է։ իսկ մարդը հաղիւ

բաններկու . . . բաց աստի աւելցուց՝ ինչպէս
սիրում են միմեանց .

Այս կախարդիչ խօսք . որպիսի արագու-
թեամբ կրկին սկսեց դնալ Մագթաղինէն .
Նրանք սիրում են միմեանց . քանի հաճելի է
ուրեմն այդ վշտացած տարփածուների առջեւ
յայտնուիլ իբրեւ բարերար ոգի . նրանց գըգ-
ուանաց մէջ սահիլ իբրեւ արեւու ճաճանչ
և նորանց արտասուքը ցամաքեցնել . Խաբուած
սէրը բորբոքուում էր ցանկութեամբ բազմել
երջանիկ սիրոյ մօտ , որ վշտացած էր , և ձեռը
մեկնել ամուսնին , իբրեւ եղբօր . Մագթաղին
նէն այժմ ինքն էր շտապեցնում պառաւին .
Ալացան նրանք երերուն սանգուղի վերայէն
դէպի աղքատիկ ընակարանը և այն ինչ հասել
էին վերնայարկը . Մագթաղինէն յանկարծ
կանգնեցաւ սաստիկ զարմացած : « Տէր Աստ-
ուած , ասաց նա . այս ի՞նչ աղմուկ է ո . Պառաւը
կորագլուի մեաց լուռ . Լսելի էին երկու զայ-
րացական ձայն , բարկութեան աղաղակ , նաև
խատինք , սպառնալիք , հայհոյութիւնք և սո-
րանց հետ միասին բուռն հարուածք կահերուն
եւ կսկծալի կանացի ձայն . Բոլոր այս գը-
ղըրդիւնը մի ահագին կռիւ էր . « Ի՞նչպէս
սիրում են դորանք միմեանց , կրկնեց ակամայ
Մագթաղինէն . Ի՞նչ ուրախութիւն է ուրեմն
յայտնուել իբրեւ բարերար ոգի երկու տար-
փածուների առջեւ , որոնք համբերութեամբ
տանում են իւրեանց թշուառութիւնը և փոր-
ձութեան մէջ վարւում են բազրութեամբ :

Պառաւը ընկել էր սանդուղի մի աստիճանի վերայ, առանց մի խօսք արտաքերելու . ամօթը, տարապանքը և երկիւղը կործանել էին նորան . Մագթաղինէն տասն ոսկի դրաւ նորա մօտ և կամաց իջաւ սանդուղից .

Թաղի ծայրը հասած, շինուածոց կարգի վերջերը, քսան քայլ բացակայ երեւում էր մի կիսաւեր խրճիմ, վշտագին նկարի վերջին տուերագիրը, այնքան երերուն որ՝ պէտք էր ամեն վայրկեան սպասել որմերի անկումը հողի վերայ, որմէ կառուցած էին . Կիր ու գաճը, ասնիքից թափուած քարերը, կոտրած պատու հանների ապակիրը խառն ՚ի խուռն սփոռուած էին գետնի վերայ, նոյն իսկ տան դուռը ընկած էր . Ինչու կանգնեցաւ Մագթաղինէն այդ աւերակի առջեւ . Պէտք է հաւատալ նախազգացութեանց՝ որոնք ճակատագրի պատգամաւորներն են . Մի անդիմադրելի ոյժ արգիլում էր Մագթաղինէին թաղնել այդ տունը և անցնիլ գնալ . մի անքննին ազգեցութիւն տիրեց նորա սրտին . և նա քաջութեամբ մոտաւ ներս . Նախ և առաջ նա շրջեցաւ գետնայարկը . անընակ և թափուր էր . Վեր ելաւ երկրորդ յարկը եւ նկատեց որ՝ մի նկուղի կը հասնի, այնուհետեւ փոքր ինչ երկիւղ և տարակուսութիւն զգաց . Նորա առջեւ մի կիսարաց դռւուկար, եւ համարձակեցաւ Մագթաղինէն մեղմիւ ձայն տալ . ոչ ոք պատասխանեց . աներկիւղ ներս մոտաւ .

Սարսափի ճիշով ընդունուեցաւ այցելուհին .

Նկուղի մէջտեղում նստած էր տան և չորս
կամ տասն և հինգ տարեկան մի աղջիկ և սո-
րա առաջին շարժնեմբ այն եղաւ որ՝ խսկցն
դնաց ապաստանեցաւ իւր անկողնակալի քա-
մակում, երկու սեւ աշունքը զարհուրած փայ-
լում էին, նայելով խշտեակի վերայից, անկո-
ղինքը յոռի էին եւ աթոռը՝ որմէ հրաժար-
ուել էր այնպիսի արագութեամբ, միակ կահն
էր և միակ զարդը այդ թշուառութեան դահն
լըմին, որոյ մէջ քամին, ցուրտը և անձրեւը
աղատութեամբ զբօսնում էին, ինչպէս դաշ-
տավայրերում։ Աղքատաց բարերարելու մուա-
ծութեան մէջ, Մագթաղինէն շատ անգամ
երեւակայութեամբ նկարել էր չքաւորութեան
աղէտները, բայց բնաւ երբէք այդպիսի սոս-
կալի պատկեր չ'էր երեւել նորա աշաց առջեւ։

Այդ տեսարանը սառեցուց օրիորդի սիրտը
եւ մինչ ուզեց նա խօսիլ երեխայի հետ, որ
դեռ եւս ծածկուած էր մթին անկիւնում, մինչ
կամեցաւ քաջալերել նորան և կանչել իւր մօտ,
— նոյն շրմունքը միայն հեծեծանք արտաքե-
րեցին։ Այդ ցաւակցութեան հնչումը ամեն
բանից աւելի արժէք ունի վշտացելոց համար։
Ո՛չ պատուէր եւ ոչ սպառնալիք կարէին այն
զօրութիւնը ունենալ, որ ունեցաւ Մագթա-
ղինէի որտի խորքից դուրս ելած հեծեծանքը։
Երեխան լսեց, վեր կացաւ և եկաւ նորա մօտ։
Նորա մերկութիւնը հազիւ ծածկում էին մի
կոճկենիկ և մի պատառոտուն շապիկ։ Յրտաշունչ
հողմը ամեն կօղմից փչելով այդ փեռեկուած

ասն մէջ, հասնում էր խեղճ աղջկայ մերկ և
կարմրած ուսերին և նորա արեան նուազու-
թիւնը ցուցանում էր մարմնի մորթոյ տակէն.
նորա ատամունքը կափկափում էին և ձեռները
գողում տենդից . բայց թուշերը դեռ եւս դա-
լար էին և վարդագոյն ու փոքրիկ սոված բե-
րանը նման էր գարնանաբեր ծաղկի .

Աղջիկը չ'սպասեց որ՝ օտարուհին հարց
ու փորձ անէ նորան, նա ինքը շտապեց ներո-
զութիւն խնդրել օրիորդից իւր սոսկալի չքա-
ւորութեան մասին. ամօմու նա սկսեց խօսել
եւ առաջին խօսքը այն էր, թէ նա միշտ այդ-
պէս խեղճ չ'է եղել և թէ երկու տարի առաջ
նորա հայրը՝ որ մի մօտակայ քաղաքում վաճա-
ռականութիւն էր անում, հարստութիւն ու-
նէր եւ յայտնի էր իւրեանց նահանգում, իսկ
մինչ մեծամեծ զնամներ և կորուսաներ կրեց .
պարտասէրները նորան չը ներեցին : Երբ որ
մարդիկ տեսնում են թէ սուտ աստուած կը
պաշտեն, նորանք բաւական չ'են համարում
միայն դադարել այդ աստուծուն պաշտելուց ,
այլ եւ պարտաւորւում են ոտնակոխ անել նո-
րան . թէ ինչպէս էին պատահել նորան այդ
զնամները, աղջիկը գրեթէ չը գիտէր, նրան
յայտնի էր միայն իւր հօր մահը այդ պատճա-
ռաւ . իսկ մայրը ընչից մնացորդը մի առ մի գրաւ
դնելով, մի տարի լաւ թէ վատ ապրել էր և
այնուհետեւ չքաւորութիւնը և սորա ընկեր
արհամարհանքը վտարել էին խեղճ ընտա-
նիքը քաղաքէ քաղաք մինչեւ Աէն-Դէնիս եւ

տունէ տուն մինչեւ այդ նկուղը , ծիւլիէթը
(աղջկայ անունն է) արտասուելով պատմեց .
թէ մայրը օրը մի քանի սու աշխատում էր
գործարանատանը , իսկ եղբայրը՝ որ պատրաս-
տուում էր իրաւաբան լինել . քար տաշում է
ընդարձակ ճանապարհի շինութեան համար .
բայց աւազ , այս ամենը բաւական չ'էին աւուր
պարենի համար անգամ . Սենեկի մէջ միայն
ծիւլիէթի անկողինը մնացած էր եւ տակաւին
նախընթաց օրը տարել էին աղջկան վերջին
շրջազգեստը հնավաճառին :

Ուրբան և հաստրակ բան լինէր այդ պատ-
մութիւնը , այնու ամենայնիւ Մագթաղինէն
ցաւագին մոտպրութեամբ ունկն դիր եղաւ .
Միամիտ ծիւլիէթը նոյնշտփ վստահ էր այժմ
դէպի օրիորդը , որչափ մի ժամ առաջ զար-
հուրանաց մէջ էր : Աորա ամենայն բնաւո-
րութիւնըը զգայուն , ազատ , ինքնայօժար
մինչեւ անգամ փոքր ինչ վայրենի էին . Այս
նոր օրինակ երեխայն կարծես թէ այնշափ ու-
րափ էր որ՝ շարժել էր այցելուհու քնքուշ
վշտակցութիւնը , մանաւանդ մինչ մոտածում էր .
թէ ոչ ոք նրանից առաջ գթացել չ'էր դէպի
իւր թշուառութիւնը . Այսպէս մինչ Մագ-
թաղինէի աչկունքը լցուում էին արտասուքով ,
աղջիկը սկսում էր առանձին տենչանօք եւ
քննափրութեամբ նայել նորան , միջահատում
էր իւր պատմութիւնը , որպէս զի նրան ասէ .
թէ բարի է նա եւ գեղեցիկ և թէ պէտք է
ներէ իրան որ այնպէս լիմարար վախեցաւ նո-

բանից եւ փախաւ :

Բայց և այնպէս, ծիւլիէթի երախտագիւ-
տութեան կցորդ էր եւ մի նշանաւոր մասն
զարմացման, նա նման էր այժմ այն թռչուն-
ների երախտագիւտութեան, որոց մի անձա-
նօթ բարերար ձեռը մեկնում է հացի փշրանք
սփռելու և որոնք ակիզըք զարհուրած թռչում
հեռանում են, կրկին վարագառնում և նորէն
թռչում են, իսկ վերջապէս մօտենում են եւ
յափշտակելով փշրանքը, ճռուողում են ՚ի նշան
շնորհակալութեան : Այն ինչ Մագթաղինէն
համբուրեց ծիւլիէթի ճակատը նրան քաջա-
լերելու նպատակաւ, աղջիկը յանկարծ ընկաւ
նորա ստքերը եւ բռնելով ձեռքերը սկսաւ
համբուրել :

Օրիորդ Մարսելեթը մեծ դժուարութեամբ
կարողացաւ ինքզինքը ազատել այդ երեխայական
յափշտակութենէն : Յայտնելով նրան, թէ կամի-
հրաժարուիլ, իւր շալով ծանկեց նորա ուսե-
րը, ընծայեց իւր քսակը՝ որոյ մէջ կիսով չափ
սովում էին : Երեխան թոյլ տուաւ գոր-
ծել ըստ կամաց, բայց մինչ նկատեց որ՝ Մագ-
թաղինէն պատրաստում էր գնալ, կախուեցաւ
նորա շորերից և աղաչեց մնալ, « Ես սիրում
եմ քեզ, յաւիտեան չը կամիմ հրաժարուել
քեզնէ, այլ քեզ քոյր կամիմ լինելո : Այս խօս-
քերը և ուրիշ յիմար բաներ եւս նա ասում
էր այնպիսի քնքութեամբ, մինչ զի Մագթա-
ղինէի կաստատամտութիւնը սկսեց նուազել,
իսկ ծիւլիէթը շարունակելով իւր աղեքսը :

համազում էր օրիորդին, թէ զեռ եւս կանուխ է և որովհետեւ շալը տուել է իրան, ուստի պէտք է սպասէ մինչեւ գիշեր, ըստ որում առանց շալի քաղաքի միջէն անցնել չ'է կարող. Օրիորդ Մարսելեթը քաղցրութեամբ նկատել տուաւ նորան, թէ օրը արդէն երեկոյանում էր և խոստացաւ հետեւեալ օրը կրկին գալ. Աղջիկը մնաց լուռ, բայց նոյն ժամայն Մագթաղինէն տեսաւ որ՝ նա վազեց դէպի իւր անկողինքը, հանաւ բարձի տակից մի փոքրիկ խաչ և զարմանալի հանդիսաւորութեամբ օրիորդի առջեւ դնելով, աղաչեց նորան երդնուլ այդ նշանի վերայ, որ հետեւեալ օրը կէս օրից առաջ կուգայ իւր մօտ. Մագթաղինէն ծիծաղելով փոքր ինչ ընդդիմացաւ, բայց տեսնելով նորա արտասուախառն աղաչանքը, զիջաւ եւ երդուեցաւ. յայնժամ միայն աղջիկը թոյլ տուաւ նորան գնալ.

Մագթաղինէն կրկին անցաւ խեղճերի թաղը և կրկին հազար ու մէկ զգացմունք պաշարեցին նորա սիրտը՝ զոր համարում էր թեթեւացած. Արան քաղցը էր մոտածել այն բարերարութեանց վերայ, զորս միայն մի օրուայ մէջ գործել էր. նա կարծեց, թէ վերադառնում էր այժմ մաքրուած անրջական աշխարհը ճանապարհորդելուց և թէ հեռացել էր անցեալի չարայուղութիւնից և ձանձրոյթից. Յանկարծնա յիշեց եւս, թէ առաւօտէն մինչեւ երեկոյ և ոչ անգամ մի մոտածել էր թեռնարի վերայ, Ո՞րպիսի պարծանօք անցնում գնում էր և ո՞ր-

քան ցանկալի էր նորան այն վայրկենին հան-
դիպել ապերամստին , կանգնել դէմ առ դէմ
և ասել նորան՝ « Գնացէք այժմ , ես ոփ չ'ու-
նիմ դէպի ձեզ , ձեր կարօտութիւնը զգում
չ'եմ բախտաւոր լինելու համար , ես ահա ոռ-
վորեցի ապրել առանց ձեզ սիրելու ո . Այս
երկպատիկ նենգաւոր միտքը օրիսրդին դէպի
տուն տարաւ այն փողոցով , ուր բնակում էր
Բեռնարը և յիրաւի նա ցանկանում էր հան-
դիպել ճանապարհում Բեռնարին , կարծելով ,
թէ ամենեւին տկարանալու կամ շփոթուելու
չ'էր նորան տեսնելուս , բայց եւ այնպէս այն
ինչ մտել էր նա այդ փողոցը՝ որուն քաջանա-
նօթ էր , սկսեց վարանիլ . ակամայ տարակու-
սութիւն էր այդ կամ նորա սրտի վերջին մատ-
նութիւնը . Տիկին Լէկուրի բնակարանի մօտ
հասած , Մագթաղինէն յանկարծ նայեցաւ դէ-
պի վեր և ահա տան պատուհանները փայլում
էին այնպիսի լուսաւորութեամբ , որ կարելի
չ'էր ենթադրել . թէ մայր և որդի մենակ խօ-
սում լինէին տանը իւրեանց խարուած փառա-
սիրութեան վերայ . « Ա՛ , իւրովի ասաց օրի-
որդը փախչելով , ուրեմն փօխարինական ճաշ-
կուտան և Սէն-Սորլէնի տիկինները այս տեղ
են » :

Յիրաւի տիկին Լէկուրի տանը ժողով էր .
մեծ ժողով : Փառաւոր լոյսը ճաշարանի պա-
տուհաններից էր ցոլանում , ուստի պէտք էր
կարծել . թէ ճաշում էին . Բայց Մագթա-
ղինէն սիսալլում էր , ենթադրելով , թէ

հրաւիրականք ԱԵՆ — Սօրլէնի տիկիներն ԵԲՆ :
Մի այդպիսի ծանր կարծեաց վերաբերութեամբ ,
տիկին ԼԵԿՈՒՐԸ զգուշանալու էր ուրիշ կոչնա-
կաններ հրաւիրելուց , բացի իւր սիրուն աչ-
քերը պաշտող լիսունամեայ մեծարոյ մարդիկը՝
որոնք տեսնելով նորա սոսկալի աչաց յարատե-
բորբոքը , ամենեւին երկրայսւթիւն չ'ունէին
նորանց ծերացած լինելու մասին : Հանճարեղ
կինը առաւել բարեպաշտ բարեկամներ չունէր
իւր պատմութիւնը արդիւնաւորութեամբ լը-
սել տպղու համար : Կատակերգութիւնը սկսուե-
ցաւ մօր և որդւոյ մէջ երկուստեք խանդաղա-
տական յարձակումներով . Մրգեղէնը սեղանի
վերայ էր : Կոչնականք հանդարտ միտքերը ժողո-
ված կարծում էին դեռ ևս երկար մնալ այս տեղ
և խօսակցիլ առանց մի բան ասելու և մանա-
ւանդ որ և է միտք յայտնելու , մինչ յանկարծ
խորին հառաջանք և մի խուլ եւ ազիսզորմ
աղաղակ՝ որոյ մէջ լսուեցաւ “ Խեղջ Բեռնար ո
խօսքը , — շփոթեց բազմականաց անդորրութիւ-
նը : Արուեցան լսելիքը , բացուեցան աչքերը :
Նկատեցին Բեռնարի պատրաստութիւնը խօսե-
լու համար եւ տիկին ԼԵԿՈՒՐԻ մատը՝ որ դրել
էր իւր շրմունքի վերայ , մինչդեռ ինքը դուրս
արձակեց մի նոր հառաջանք : Յետ այնորիկ ,
աղնիւ որդւոյ և սքանչելի մօր ձեռները միա-
ցան և սոքա երկուքը սկսեցին միմեանց նայիլ
այնպիսի մորմոքեցուցիչ քնքշութեամբ , խոս-
վեալ հոգւով և յուսահատական դիմք , մինչ
զի նորանց ջերմ բարեկամները , առանց ամե-

ՆԵՐԻՆ բանի զօրութիւնը իմանալու , արտա-
սուք զգացին իւրեանց արտեւանունքի տակ :
Տիկին Լէկուրը իւր արտասուքը պատրաստ ու-
նենալով , թափեց համարձակ :

Արժանայարդ բարեկամներ , ընտիր բարե-
կամներ , որպիսի սրտատուղոր շնորհակալութիւն
յայտնեց տիկինը այդ Պարոններին , կարծես
թէ նորա ամբողջ հոգին հալուելու վերայ էր .
թէեւ անտարակոյս այդպիսի բան երբէք նրան
պատահած չ'էր . Ի՞նչպէս կարէր նա չ'ընդու-
նել նրանց անկեղծ համակրութեան վկայու-
թիւնը մի այդպիսի ցաւագին դիպուածի մէջ ,
որուն ենթարկուել էր իւր տունը . նա ընդու-
նում էր այդ ցաւակցութիւնը՝ որ կարէր նրան
միխթարել և առաւել քան որ ինչ և իցէ , ըն-
դունում էր իւր որդւոյ սէրը , ներսզութիւն
խնդրելով , որ այդ սիրով աւելի էր պանծալու
քան նրանց բարեկամնութիւնով և յիրաւի նա
ներում էր Բեռնարին սիրել իրան որքան եւ
կամէր , որովհետեւ այս մասին գոնէ իւր որդին
ապահով էր , թէ նովին չափով վայելում է
իւր մօր սէրը . Ո՛հ , նա փոքր ինչ շտապել էր
մի ուրիշին սիրել եւ նուազեցնել իւր սէրը
դէպի մայրը , բայց թող ինքը այժմ վճռէ ,
թէ այդ անարդ դաւաճանուհին արժէր ար-
դեօք իւր մօրը . Թող ինքը դատէ , թէ սիրել
էր արդեօք իրան այդ փառասէրը՝ որուն
յանկարծահաս յաջողութիւնը բոլորովին մո-
լորեցուցել է

Օ՛, այսքանը հերիք էր ասելու : Զգածեալ

բարեկամները խռովեցան ՚ի հոգիս . Տիկին Եւ-
կուրը նկատեց իւր գործած ազգեցութիւնը
և դադարեցաւ և յետոյ սկսեց զգալի ձեւով
ներողութիւն ինդրել . որ անփցյթ լինելով
սովորական պատշաճութեան , թոյլ տուաւ
իրան խօսել մի այնպիսի նիւթի վերայ , որոյ
մասին երդուել էր ամենեւին չը խօսել . կան
այնպիսի հարուածներ՝ որոց գաղտնի ցաւա-
գին գառնութիւնը անքժշկելի է . Նենդաւոր
աղջիկ , ով կը կարծէր նրանից մի այդպիսի
բան . Նենդաւոր աղջիկ և այլ ոչ ինչ . աւելի
նշաւակելը անօգուտ է , ըստ որում ամենքը
ճանաչում են նրան .

Եւ Բնչ արդեօք , ոչ ապաքէն թեռնարը
քսան և հինդամեայ էր , ուրեմն ինչո՞ւ պէտք է
մի մայր , առանց որ և է ամբարտաւանութեան ,
չը մտածէ . թէ ամենայն պարագայիւք նա
պատրաստ է համելի լինելու համար . Միթէ
նրան յաջողելու չ'էր առաւել բարձր պաշտօն-
ներ ստանալ , բայց նա փափաքում էր ապա-
հովել իւր համար ընտանեկան կեանքը , որ
նորա ցանկութեան նպատակն էր և այսպէս
հաստատուն մնում էր իւր համեստ պաշտօնի
մէջ , առանց երկբայելու գծնէ որա առաջին
կարգը անցնելու մասին . Ոչ ապաքէն մի անա-
կրնկալ ամուսին էր նա այն զինւորի աղջկայ
համար , որ մի դանդ անդամ թողել չ'էր իւր
մահից յետոց . բայց ահա անծանօթ հօրեզբայրը
վճռում է մեռնիլ և տես թէ փոքրիկ Մագթա-
ղինէն օրսպիսի փոխակերպութեան է ենթարկ-

առւմ։ Թէեւ յիրաւի փափուկ զգացմանց մի փոքրիկ մնացորդը դեռ եւս արգելում է նրան ազատօրէն յետս առնուլ իւր խօսառումը, բայց և այնպէս որպիսի ճարտարութիւն է գործածում դորա համար և որպիսի մեծամտութեամբ է վարւում այնուհետեւ։ Այժմ նա խօսում է իրեւ ժառանգուհի և գնահատում է իւր անձը։ Ուրեմն կարելի էր որ՝ թեոնարը, վաղուց նորա սիրած տարփածուն, յանկարծուրանարով ընդունէր այն ձեռը, որ երբեմն երջանկութիւն էին համարում առաջարկել նրան եւ որ բոլորովին թափուր էր։ Կարելի էր ընդունիլ այնպիսի գաշնագիր՝ որ աներկիւղ բախտախնդիրները անգամ ամօմթ կը համարէին կարդալ, ընդունել անարդ զգուշութիւններ պատուաւոր մարդկանց դէմ, որոնց մասին կասկած ունենալու պատճառ չը կար։ Կարելի էր . . . Ամենեւին, ամենեւին կարելի չ'էր։ Այս միակ ազազակը դուրս ելաւ սեղանը շքապատող կոչնականների բերանից։ Տիկին Լեկուրը այնպէս վերջացուց իւր ճառը, ինչպէս ժողովրդից պատուուած խեղկատակները վերջացնում են իւրեանց դերի աղդու մասը, ընդհանուր ծափահարութեան մէջ։ Նա ասաց, թէ անակնկալ եղելութեան նախկին ազդեցութենէն որդւոյ սիրտը ջախջախեցաւ, — նրան հաւատացին։ Բեռնարի սիրտը, — ինչ ասել կ'ուզի։ Նա աւելցուց, թէ այդ որդին սակարկութիւն չ'արաւ իւր պարտականութեան եւ

պատւոյ վերայ եւ թէ նա հրաժարուեցաւ
առանց գանդատանաց, — ոչ ոք չը տարակուսե-
ցաւ այդ մասին։ Ցիկին Լէկուրը լաւ ճանա-
շումէր իւր բարեկամներին և գիտէր նոյնպէս,
թէ մարդկանց մորի մէջ որ և է կարծիք անցու-
ցանելու հաստատուն և անվրէպ հնարը այն է որ՝
այդ կարծիքը զուրկ լինի ամենայն հաւանակա-
նութենէ և անհամաձայն սովորական իմաստի
հետ։ Ահա այս գաղափարից էր յառաջանում
նորա կարծիքը, թէ իւր պատմութիւնը՝ որով
կարծում էր ապահովել իրան հասարակու-
թեան դատողութենէն, կարօտ չ'էր, ոչ զօ-
րաւոր բանահիւսութեան և ոչ վկայութեանց
վերայ հիմնուած լինելուն։ Եւ յիրաւի որբան
որ կոպիտ էր նորա լարած որոգայթը, այնու
ամենայնիւ հրաւիրականներից միայն մէկը
չը բռնուեցաւ նորա մէջ։

Այդ մէկը տան բժիշկն էր։ Նրան վաղուց
յայտնի էին այն վայելուչ ումանները՝ որ զա-
նազան ընտանեաց մէջ յօրինւում էին անար-
դարութիւնը արդարութիւն երեւցնելու հա-
մար և այն շինական սովորութիւնը՝ որով ու-
ղում էին իրաւունքը իւրեանց կողմէ կարծել
տալ, մինչդեռ արդարութեամբ նա միւս կող-
մումն էր։ բժիշկը իսկոյն զգաց գարշելի ստու-
թեան հետքը։ Այսպէս, մինչդեռ ճաշատանից
անցնում էին միւս սենեակը, տիկին Լէկուրի
մտերիմ բարեկամները, մօտենալով նրան եւ
սրդուն, սկսեցին քաջալերել նրանց, թէ հարկ
չ'էր չափից առաւել նեղանալ մի ուխտադրուժ

աղմկաց ողաւնեաւաւ, որ ամենեւին հոգի չ'ունի, թէ այդ կորուսոը այնքան մեծ բան չ'է դեռ եւս, որովհետեւ շատ օրիորդներ կան, որոց ուրախութիւն կը պատճառէ թեռնարէն ու զուիլը, օրինակի համար յիշենք Աէն - Սորլէնի օրիորդին՝ որ նրանց կարգումն է և որ թէեւ քառասուն հազար ֆրանք եկամուտ չ'ունի, գոնէ հինգ հազար ունի հաստատապէս և թէ վերջապէս . . . բժիշկ Դեկլենը այս խօսքի վերաց, նկատելով տիկնոջ ժպիտը, ոկուց բնքն եւս ծիծաղել. « Ի հարկ է, ասաց նա, փոքրիկ, բայց ապահով յաջողութիւնը ընտրելագոյն է քան մեծ և ապարդիւն յոյսը ».

Մագթաղինէն այս միջոցին շարունակում էր իւր ձանապարհը, բայց վերջացել էին նրա խաղաղութիւնը և ծիւլիեթի երեսից քաղանց ծաղկանց զուարձութիւնը: Ի զուր յանդիմանում էր նա իրան նախանձի եւ բարկութեան անխորհուրդ դարձը իւր մէջ այդ խնջոյակատար տան առջեւ, որմէ պատրաստ էր աշխարհի ծայրը փախչել, եթէ բանականութիւնը չը կասեցնէր նրան: Լաւ կը լինէր, եթէ ՚ի բաց մերժէր այն կերպարանքը՝ որ շփոթելու էր նորա սիրտը, բայց ահա անցեալը պաշտրեց նրան և վիրաւորուած յիշատակները յարձակուեցան նորա վերաց ինչպէս հեղեղ՝ որ գահավիժելով քաշում տանում է գետափների ծաղկունքը: Նոյն միջոցին, երբ թեռնարը ուրանում էր Մագթաղինէի սէրը, այդ օրիորդը ակամայ թոյլ տուաւ իրան մի անգամ եւս

Երեւակացել այն երջանիկ օրերի ցնորքը, որոնք
անցել գնացել էին. Անգնեմ յիշատակ սրտի,
որ միայն է անմշնելի. Մագթաղինէն սկսեց
մտածել այն վերջին զբոսանքի վերայ, երբ
իեռնարի հետ միասին գնացել էին անտառ
և անցել էին նորա խորքը.

Ամառուայ մէջն էր այդ, երբ մի օր վաղ առա-
ւոտուն, Սէն-Դէնիսից դուրս եկած, տապագին
արեւու տակ, սկսել էին նրանք գնալ. Ո՛քան
քարքարուտներ, ուր Մագթաղինէի փոքրիկ ոտ-
քերը չըկարէին գնալ առանց նրա հաճոյակատար
սիրականի օգնութեան. Ո՛քան պարզ և վճիտ
առուակներ, որոց վերայ վազելով անցնելուց
յետոյ, ծիծաղաղէմ օրիորդը նայում էր միւս
ազի վերայ կանգնած անհամբեր տարփածուին
և յանկարծ որոշում էր մի թռիչքով ընկնել
նրա գիրկը եւ այնուհետեւ անտառի խորքը
մտած՝ սկսում էին որոնել առաւել անհետ
առանձնութիւն. իեռնարը ձարխուների մէ-
ջով անցք հարթելով, վերջապէս գտաւ ցան-
կացած դադարատեղին մի մամուապատ լեռ-
նակի վերայ, ուր նստեցին նրանք գեռ եւս
լուռ ու մունջ. բայց յանկարծ զարհուրեցան
այն մտքից, թէ մինակ էին իւրեւանց սիրոյ
կատարեալ ազատութեան մէջ. կաղնիների
տերեւախիտ ոստերու տխուր կամարը գլուխ
ներու վերայ, եւ հեղեղատի խորքերի փոքր
ծառերը ոտներու տակ, ինչպէս տերեւային
կրկին ովկիանոսք բարձրանում էին և հողմա-
կոծվում ՚ի խորս, մինչև թռչնոց երգեցօղական

միմունջը լոելի էր լինում ամենուրեք խիտ
կանաչութեան մէջ .

Միջահատելով լոռութիւնը , Բեռնարը սկսած
էր խօսել տե՛նջայոյդ ձայնիւ նա ճնշում էր
Մագթաղինէին և բազմատեսակ անձկացուցիչ
և պատրողական հարցումներով աշխատում էր
անդադար կրկնել տալ նրան , թէ սիրում է
զինքը , բայց և այնպէս տրանջում էր նրա
պատասխանների սառնութենէն . Օրիորդը ժըստ
տում էր , խսկ պատանին բարկանում և աղա-
շում էր ծանրաբարոյ լինիլ , ըստ որում խնդիրը
նրա համար մահու կամ կենաց խնդիր էր .
Բեռնարը դժգոյն էր եւ նեղացած , ոչ նրա
աչքերը երբ և իցէ փայլել էին այդպիսի տար-
փանօք և ոչ նրա շրթունքը այդքան խռովայոյդ .
Յանկարծ նա ծունը իջաւ Մագթաղինէի առ-
ջեւ և գլուխը ամփոփած նրա ձեռների մէջ
դառն արտասուեց . Բեռնարի մայրը այս տեղ-
չ'էր որ տեսնէր նրան կամ լսէր եւ ասէր ,
թէ անարժան էր նրան ճնկաշոք լալ իւր տար-
փածուի առջեւ և ահա այսպէս , հեռի իւր
բռնակալ մօր աչքից , Բեռնարի տկար սիրոր
դուրս արձակուած էր վերջապէս , ըստ որում
մինչ ցայն վայր ստիպուած էր զսպել իւր պատա-
նեկական բորբոքը . “Ես սիրում եմ քեզ , ասում
էր նա , և այլ ոք չը կամիմ սիրել , որովհետեւ
դու իմ բարի հրեշտակն ես , խսկ միւսները
փարձիչներ են . Ես քեզնով բարի եմ և քեզնով
կը լինիմ հզօր , խսկ առանց քեզ ոչինչ կը լինիմ .
Բնշու որ զգում եմ որ՝ դու իմ հոգին ես ” .

Ահա այսպիսի խօսքերից յետոյ թշուառա-
կանը մռացաւ Մագթաղինէին :



Զ.

Բժիշկ Դեկլէնը՝ որուն, առաւելքան միւս
սիրելի ծանօթները, շօսւմ եւ գգւում էր
տիկին Լէկուրը եւ որ պատեհ դիպուածում
փոխարինում էր դառնահամ խնամակալու-
թեամբ եւ բարեկամութեամբ, իրաւամբ
կարէր պարծել, թէ բոլոր քաղաքը պահում
էր իւր երկու մսեղ ձեռների մէջ. ուրեմն
եւ տիկին Լէկուրի կեանքը եւ մահը նորա
ձեռքումն էին. Աէն — Դէնիսի մէջ ընդհան-
րապէս նորան համարում էին Ֆրանսիոյ քա-
ջափորձ բժիշկ եւ միանգամայն այլանդակ
անձն բոլոր աշխարհի մէջ. Բայց եւ այնպէս
ոչ ինչ չ'էր զանազանում նրան միւս մարդ-
կանց բազմութիւնից, ոչ եւ նորա բժիշկ ըն-
կերներից. ոչ գեղեցիկ էր նա եւ ոչ տգեղ,
ոչ երիտասարդ և ոչ ծեր : Որքան և աշխա-
տում էին չարակամբ ընդունիլ նորան իբրեւ
յիմար, և բարեկամբ — իբրեւ իմաստուն, այնու-
ամենայնիւ նա ոչ մին էր և ոչ միւսը . թերեւս
նա ոչ չար եղած էր և ոչ բարի, բայց խորա-
մանկ էր իբրեւ կապիկ և հետաքրքիր իբրեւ
կին. նորան տիրելէր մի այլանդակ մոլութիւն,

այն է նորա այնշափ ցանկութիւնը միշտ պարզ
տեսնելու իւր մերձաւորի օրտի խորքը։ Արդա-
րեւ նորա պաշտօնը զօրաւորապէս օգտում էր
այդ նպատակին, բայց՝ միւս կողմից առաւե-
լում էր նորա հետաքրքրութիւնը։ Որ և է ան-
նշան դիպուածը՝ որոյ մէջ նա չ'էր կարողացել
մի և եթ հայեացքով խորամուտ լինել, չափից
դուրս գրգռում էր նորան, մի փոքրագոյն մը-
թութիւնը չարչարում էր և եթէ չ'էր յաջո-
ղել նորան անարգել կարդալ մարդկանց գոր-
ծերի մէջ և նորանց հոգու մէջ ինչ օր ուղում
էր, բժիշկը դորանով հիւանդ էր։

Այսպէս ահա կատակերգութիւնը՝ որ մի
քանի օր առաջ խաղացել էին նորա առջեւ տի-
կին լէկուրի տանը, կարէր գոհացուցիչ հա-
մարել. բայց զգալով նորա մէջ որ և է գաղտ-
նիք և ստութիւն, բժիշկը սաստիկ զայրացած
էր Բեռնարի եւ նորա մօր դէմ, որովհետեւ
նորա մենամոլութիւնը այն աստիճանին էր հա-
սել, որ անձնական թշնամի պէտք է համարէր
նորանց՝ որոց մասին կասկած ունէր, թէ մի
քան թաքուցանում էին իրանից, ուստի յիշ-
եալ օրից սկսած չ'էր դադարում հարցանել իւ-
րան, թէ ում էին արգեօք խարում այդ քանի
մէջ և յաւելցնում էր, թէ խարուողը բնաւ ին-
քը չ'էր։ Այն պատմութիւնը՝ որ ափիին լէ-
կուրը յօրինել էր մրգեղէնը ուտելու ժամա-
նակ, յիրաւի կարելի էր համարել և նորա սո-
վորական ծանօթների համար հաճոյական, բայց
սրատես բժշկի համար այդ կտոր քանը քաւա-

կան ոսկեջրած չ'էր : Ի՞նչ էր նշանակում այդ յանկարծագէպ գժտութիւնը օրիորդ Մագ- թաղինէի և նորա խօսնայրի մէջ : Ի՞նչ խորա- մանկութիւն, ինչ դարձուածքներ, ինչ նախա- տակական զգուշութիւն էր, որոց վերայ խօ- սում էին և որոնք իբր թէ ստիպել էին Բեռ- նարին հրաժարուիլ օրիորդից : Եւ ի՞նչ էր այն հոյակապ դաշնագիրը՝ որու մէջ ուզում էին թակարթել Բեռնարին : Քառասուն հազար ֆր- րանք եկամուտ և այդ ամբարտաւանները դեռ եւս կը խօսէին պայմաններու վերայ՝ զորս Բեռնարը ըը կարէր ընդունել Կարէին լինել այնպիսի պայմաններ, որոնք տարակու- սութիւն պատճառէին այդ հարստութեան առջեւ :

Բժիշկը այդ խորհրդածութեան, երկրայու- թեան, կամ լաւ եւս ասել իւր սովորական թերահաւատութեան մէջ էր, երբոր մի տոմ- սակ տուին նորա ձեռը : Զբաղուած մոքով բացաւ նա այդ նամակը . . . զարմանքը քիչ մնաց որ գլխիվայր կործանէր զինքը : Արդարեւ բժիշկ Դեկլէնը այնպիսի մարդ էր, որ հաւա- տում էր Նախախնամութեան, բայց հաւատում էր քիչ թէ շատ, նայելով ժամանակին և իրո- զութեանց ընթացքին, նա չ'էր համարում նորա մէջ այդքան կարողութիւն և պատշաճու- թիւն : Տոմսակը օրիորդ Մարսելեթից էր, նո- րանից գրուած և նորա ձեռքով ստորագրած : Նա խնդրում էր բժշկին գալ իւր հիւանդ մօրը տեսնելու :

Վազեց բժիշկը դէպի իւր գլխարկը, ճէպը
դրաւ գործիքների պահարանը և այնուհետեւ
ոչթէ արշաւեց, այլ թռչունի պէս ոլացաւ :
Քանի քանի մտածութիւնք ընկերութիւն արին
նորան այդ ճանապարհում: Ազնիւ տիկին Մար-
սելեթը որպիսի դիպող ժամանակ հրաւիրում
էր բժշկին՝ որ գրեթէ չ'էր ճանաչում նորան,
որովհետեւ նա երբէք բժշկի կարօտութիւն
չ'էր ունեցել և ովկը հաւատար, թէ բելլոնը
մի օր հիւանդանալու է: Որ ինչ վերաբերում
է Մագթաղինէին, սորան կարճ միջոցի մէջ մի
քանի անգամ հանդիպած լինելով մոռացած
չ'էր նորա սիրունութիւնը: Բժիշկը, ինչպէս և
տիկին Լէկուրի միւս բարեկամները, գիտէր
արդէն, թէ բեռնարը սիրահարուած էր այդ
վայելլագեղ աղջկան. այդ մասին սկզբից նորան
ցուցել էին առաւել ընտանեկան մտերմու-
թիւն, որովհետեւ նա ինքը սկզբից հետամուտ
լինելով այդ տեղեկութեան, լսել էր ամենին
պէս, թէ մի սքանչելի ժառանգութիւն Նրկ-
նից ընկել էր օրիորդ Մարտելեթի վերայ, ինչ-
պէս շանմթ կայծակի. միայն այս էր նորա իմա-
ցածը, բայց ունէր սաստիկ բաղձանք ուրիշ
պարագայներ եւս իմանալու :

Ահա այդ քննասիրութիւնը սկսեց գնալ
նորա առջեւկց, իբրեւ հրեղէն սիւն՝ որ առաջ-
նորդել էր անապատում Մովսէս մարդարէին:
Ճանապարհում նա հանդիպեց երեք մարդու,
որոնք նորա օգնութեամբ բժշկութիւն էին
ստացել եւ այժմ բոլորովին առողջացած՝ ող-

ջունեցին նորան, նա մոռացաւ փոխադարձ ողջոյն տալ նորանց : Ուրիշ երկու անձինք, տենդովի հիւանդ, մօտեցան բժշկին և առաջարկեցին իրեւանց բաղկերակը, բժիշկը երեսը դարձուց նրանցից : Այսպէս երբոր նա հասաւ տիկին Մարսելեթի բնակարանը, քրտինքի մէջ լողում էր և այնպէս սաստիկ բաղխեց դուռը, որ տեսնողները պիտի կարծէին, թէ նորան հետամուտ էին գողեր կամ որ և է մի պատահար :

Դուռը բացաւ Մագթաղինէն, Բժիշկ Դեկլէնը չկարէր երեւակայել, թէ այդքան գեղեցիկ էր օրիորդը. Երբէք նա մօտուստ տեսիլ չ'էր, ոչ նորա մետաքսեայ վարոքը՝ որոնք անթիւ կայծերի պէս դուրս էին թափւում նորա գլխարկի տակից եւ ոչ այն նուրբ արիւնը՝ որ հոսում էր կաշւոյ տակ : Մագթաղինէն նոր քնից զարթած եւ երազներից սթափուած, պայծառ էր իրբեւ կարմիր վարդ, նորա հագուստը մի կարմելագոյն լոգիկ էր մէջքը ժապաւէնեայ գօտիով զսպած : Բժիշկը մտածեց, թէ օրիորդի նոր յաջողութիւնը կը պարտաւորէր զինքը մի ուրիշ առոնին շոր հագնելքան թէ այդ բրդեայ պարկը, թէ եւ այսպէս եւս նորա բնական վայելլագեղութիւնը բնաւչ' վնասուում : Մի թեթեւ շացութիւն զգաց բժիշկը իւր արտեւանանց վերայ, երբոր Մագթաղինէն գնաց նորա առջեւից և միայն շարսատանան կարէր իմանալ, թէ բնչպէս պատահեցաւ որ, այս իսկ վայրիկենին Դեկլէնը միտը բերաւ որ՝ այդ ազնիւ օրիորդը քառա-

սուն հազար ֆրանք եկամուտ ունէր : Մագ-
թաղինէն, ամենեւին կասկած չ'ունենալով այդ
ծանրաբարւոյ մարդու մասին , չը հոգաց յար-
դարել իւր դէմքը եւ դիրքը : Այն ինչ մտել
էին սենեակը , օրիորդը այնպիսի կայտառ շար-
ժումով յետս դարձաւ դէպի բժիշկը , որ սա
շփոթուած՝ դիպող միջոց չ'ունեցաւ մեղմա-
ցընելու իւր սոսկալի նայուածքը , աչքերը
բեւեռեց ծաղկահաս օրիորդի աչքերի մէջ եւ
մնաց ապշած այդ սիրուն կերպարանքի գծագ-
րութենէն : Յայտնապէս մի հոգի կար նորա
մէջ , բայց բժիշկը չը կարողացաւ այլ եւս հե-
տեւիլ իւր դիտողութեանց : Օրիորդ Մարսե-
լեթը թողուց նորան , ասելով թէ հիւանդին
բերելու կ'երթայ :

Երբոր տիկին Մարսելեթը ներս մտաւ իւր
աղջկայ բազկին կոթընած , բժիշկը չ'էր ուզում
հաւատալ իւր աչքերին , նա միտն էր բերում
նորա ահացուցիչ մարմնոյ դիրքը , նորա հաս-
տատուն հասակը , զինուորական ընթացքը և
այն նշանաւոր կրկնաչափ քայլերը՝ որոնք զար-
մացնում էին ամբողջ քաղաքը : Ի՞նչ փոփոխու-
թիւն . մէջքը կորացած , դէմքը մաշուած , ձեռ-
ները դոզդոջուն , նայուածքը տիսուր և անզգայ:
Տիկինը այս տեղ իւր տան մէջ առաւել
նման էր մի օտարուհւոյ՝ որ չը դիտէ թէ ուր
է . կարծես թէ նորան զրկել էին իւր անձնա-
կան գոյութեան դիտակցութիւնից կամ լաւ
եւս ասել՝ այդ գոյութեան մէջ անզամ մի
այնպիսի անսահման և խորին ներքսական բան

կար , որ նորան երազի մէջ էր կարծել տալիս .
Նորան տիրել էր հեղցուցիչ խորհուրդ , մի
վլշտ՝ որ մաշտմ էր միանգամայն նորա հոգին
և մարմինը . բժիշկը սկսեց մոտածել հաճոյական
կերպիւ , թէ հիւանդն է յանցաւորի դէմք ու
նեցողը և յիրաւի կարելի էր կարծել . թէ նա
էր ուրացել բեռնարի սէրը եւ այժմ խիղճը
տանջում էր նրան :

« Տեսէք , Պարոն , շատ կամաց ասաց Մագ-
թաղինէն . ոչ ապաքէն երեւակայութեան հի-
ւանդութիւն է , որ դուք պէտք է բժշկէք ո :

Այս վերջին խօսքը զարմացուց հազարա-
պետի տիկնոջը , նա չը ճանաչեց Դեկէնին .
դուստրը ասել էր նորան , թէ բժիշկը գալու
է . բայց մայրը մոռացել էր . նա թոյլ էր որ-
ւել տանել իրան դէպի օտարականը , առանց
իմանալու , թէ նա բժիշկ է , իսկ մինչ իմացաւ ,
միայն մի նշան տուաւ ուսերը բարձրացնելով .
« Պարոն , ասաց նա անհոգութեամբ . բժշկա-
կանութեան յայտնի չէ այն բալսամը՝ որ հար-
կաւոր է իմ վերքին . Չ'արժէր ուրեմն որ աշ-
խատ լինէլիք ո :

Բայց բժիշկը այնպիսի մարդ չ'էր , որ խռո-
վէր այդ փոքր բանից : Նա ապահով կերպիւ
մնաց իւր աթոռի վերայ , մի քիչ հազար , կէս
ըսպէի չափ զբաղեցաւ ակնոցի ապակիքը սրբ-
բելով և վերջապէս , որովհետեւ հրաւիրուած
էր Մագթաղինէից եւ ներկայացուցած նորա
մօրը իբրեւ հիւանդի . իրաւունք համարեց
առանց որ և է կանխակալութեան եւ միայն

իւր բժշկական կոչման հետեւելով, հարց ու փորձ անել, թէ ինչպէս էր պատահել նորա տկարութիւնը։ Տիկին Մարսելեթը զգում էր ընդհանուր թուլութիւն՝ որ պէտք էր կարծել, թէ բարոյական և մտաւորական պատճառներից էր յառաջ եկած։ Ուրեմն՝ ինչ կամէր լսել բժիշկը։ Միայն խոստովանութիւն, թէ ացդ պատճառները յիրաւի կային եւ այնուհետեւ նա աշխատելու չ'էր խորամուտ լինել այլ և այլ որպիսութեանց մէջ, ըստ որում գիտէր իւր պաշտօնի պարտաւորութիւնները՝ որոց առա թինը իրաւամբ սաստիկ զգուշութիւնն էր . . .

Այդպէս դատելով, բժիշկ Դեկլէնը պատշաճ համարեց կարճատև դադար տալ իրան, առ ՚ի ցոյց, թէ սպասում է պատասխանւոյ, բայց պատասխան չ'ստացաւ։ Հազարապետի այրին կրկին ընկել էր իւր անմեկնելի մտախոհութեան մէջ։ Մագթաղինէն խռովուած հոգւով մտածում էր իւրովի և տարակուսում գեռ եւս։

“Պարնն, ասաց նա վերջապէս, ոչ ապաքէն այժմ իսկ պարզօրէն բացատրեցի ձեզ, թէ իմ խեղճ մայրը հիւանդ է երեւակայութեամբ, ոչ ապաքէն ամենայն ինչ որ հարկ էր իսկապէս ասացի ձեզ։ Իմ մայրը չարչարում է, նորա կեանքը սպառում է . . . Նայեցէք նորան, աւելցուց Մագթաղինէն մօտենալով բժշկին։ Եթէ բժշկականութիւնը, չը կարէ օգնել նորա հոգւոյն, զոր լաւ գիտեմ, գոնէ չ' կարող աղատել նորա մարմինը հալումաշ լինելուց ու . . .”

Բժիշկը գլուխը շարժեց, այս էր առ
այժմ նորա պատասխանը . բայց եւ այնպէս
այս ողջունական նշանով կամէր ասել, թէ
բժշկականութիւնը ամեն դիպուածի մէջ հնա-
րաւոր է : Այնուհետեւ նա բռնեց տիկին
Մարսելեթի ձեռքը, որ ոչ միայն ընդդիմութիւն
չը գործեց, այլ և ոչ նայեցաւ անգամ բժշկին,
ըստ որում ընկզմուած էր մտածութեանց եւ
յիշատակութեանց մէջ : Նկատելով այդ ան-
շարժ դէմքը և նորա փղոսկրեայ դեղնութիւնը,
կարելի էր հարցանել, թէ այդ սիրութ բարա-
խումէ արդեօք միւս սրտերի պէս . և յիրաւի
բժիշկը տեսաւ որ՝ հիւանդի կեանքը այնքան
ծանր և յամի էր, մինչեւ անգամ կենդանութեան
նմանութիւն չ'ունէր : Բայց եւ այնպէս նա
սկսեց մտածել, թէ քառասուն հազար ֆրանք
եկամուտը, իրրեւ հարստութիւն, առաւել
զօրաւոր սպեղանի էր քան բոլոր բժշկական
դեղորայքը . Այսպիսի մտածութեանց մէջ նա
տեսաւ որ՝ Մագթաղինէն ուշադրութեամբ
լրտեսումէր նորա մտքերը, ուստի տրտում
դէմքով սկսեց գլուխը շարժել .

« Ի՞նչ կայ, միմնջեց Մագթաղինէն, զգու-
շանալով աղաղակելուց . մի գուցէ վտանգաւոր
է վիճակը :

— Ես այդ չ'ասացի, պատասխանեց բժիշկը
զգաղի կերպիւ, բայց և այնպէս բնական քան է
երկիւղ ունենալ նորանց մասին, զորս սիրում
են : Ահա մի խեղճ գլուխ սաստիկ խօժացած
և ներդեր սաստիկ յուզուած . այդպիսի հիւան-

գութիւնները յիրաւի նոյնչափ յամառ են .
որչափ և անագորոյն և շատ անգամ որ և է
ջնջին բան , այսինքն՝ պատեհ ժամու առաջար-
կած զբոսանք , օդոյ կամ կլիմայի փոփոխութն ,
ճանապարհորդութիւն զոր օրինակ դէպի Իդա-
լիա

— Ճանապարհորդութիւն դէպի Իդալիա ,
ազաղակեց Մագթաղինէն , դուք այդպէս էք
դատում :

— Այս , ճշմարտապէս , պատասխանեց ազնիւ-
թիշկը զարմացած , միթէ որ և է արգելք կա-
րէին լինել . Ես չը կամիմ երեւել ձեզ անխոր-
հրդապահ , որովհետեւ գիտեմ այնքան միայն ,
որքան հռչակուած է ամբողջ քաղաքի մէջ .
մանաւանդ և իմ սկզբունքը և սովորութիւնքը
ներում չ'են ինձ խառնուիլ ընտանեկան գոր-
ծերու մէջ , բայց եթէ հաւատանք վերջապէս
հասարակաց զբոյցներուն , ձեր նիւթական
վիճակը , ձեր յաջողութիւնը . . . բաւական
փոփոխուած են և այս պատճառաւ միայն ճա-
նապարհորդութիւն առաջարկեցի ձեզ

— Իդալիա , կրկնեց Մագթաղինէն ինքն իրան
հետ խօսելով , ինչու չ'է . . . Տէր Աստուած ,
Ես չը կարեմ տարածել իմ ազնուամտութիւնը
մինչև մոլեգնութիւն , մինչև յանցանք և մինչև
մօրս մահու կամաւոր թոյլտուութիւնը
Մայրիկ , գոչեց նա , լսում էք . բժիշկը հրա-
մայում է Իդալիա ճանապարհորդել , ինչու
այիտի չը գնանք :

— Զը գիտեմ լաւ հասկացայ արդեօք , պա-

տասխանեց հազարապետի այրին յանկարծ արթննալով . Թուի թէ դուք ինձ ասացիք . դստրիկ , թէ իդալիս պէտք է ճանապարհորդել :

— Այս , ասաց Մագթաղինէն դողալով .

— Այդ Բնչ անմտութիւն է , սիրելի , մրտեղաց պէտք է առնենք այդ ուղեգնացութեան ծախըք , եթէ չ'առնենք այն կայքից , որ մեր սեփականութիւնը չ'է . Պարո՞ն , իմ դուսարը խօսում է իրեւ երեխայ և չ'է մտածում , թէ մենք խեղճ ենք :

— Խեղճ , աղաղակեց բժիշկը ապշած . Այն ժառանգութիւնը

— Այն ժառանգութիւնը կար , շարունակեց տիկին Մարսելեթը նոյն մահանման անզգայութեամբ , բայց և նոյն անվիշտ ազնուութեամբ , մենք հարուստ էինք միայն մի ժամ , այդ ժամու մէջ ես տեսայ մայրական երազներիս իրադործութիւնը , բայց յետոյ ճշմարտութիւնը յայտնուեցաւ և ես ահա վար եմ ընկած իմ անուրջների բարձրութիւնից . անտարակոյս այդ իսկ է և իմ ցաւու պատճառը . Այժմ դուք լաւ տեսնում էք , Պարո՞ն , որ իմ դուստրը յանցանք է գործել ձեզ հրաւիրելով : Իմառողջութիւնը որ և է բժշկի օգնութեան կարօտ չ'է :

Դեկլէնը , այդ հետաքրքիր բժիշկը մնաց լուռնաա փոփոխաբար նայում էր տիկին Մարսելեթին և նորա դստերը , նա վախում էր , թէ գուցէ եւ ինքը խաղալիկ էր որ և է խաբէութեան : Բոլոր լսածները այժմ խառնիխօւոն շնչում

էին նորա լսելեաց մէջ և այնպէս վրդովում
էին նորան , մինչ զի իւր սովորական արագա-
թուիչ մոտքի գործածութիւնը կորուսել էր .
Հաղարապետի այրին վեր կացաւ , բժիշկը հարկ
համարեց նոյնը գործել , բայց և ոտքի վերայ
անդամ , նա չ'էր մտածում հրաժարուիլ անի-
ծած հետաքրքրութիւնը կարծես թէ բեւեռել
էր նորա ոտքը տախտամածի վերայ . Այժմ նա
համոզուած էր , թէ սքանչելապէս հասկանում
էր թեռնարի և նորա մօր հրաժարման նշանա-
կութիւնը , բայց մնացմբդը , բայց քառասուն
հաղար ֆրանք եկամուտի գաղը , նորանց ձեռ-
քից գնալը .

“ Ո՞հ , գոչեց նա , ներեցէք , տիկին , իմ
այլայլութիւնը , ներեցէք իմ զարմացման ան-
շափութիւնը . Ինչ որ ինձ պատմեց տիկին
Լէկուրը , բողորովին անհամաձայն են ձեզնից
լսածներուս հետ ո .

Յաջորդեց երկարատեւ լուսւթիւն : Մագ-
թաղինէի այլագունութիւնը սոսկալի էր . Բա-
րեմիտ բժիշկը դիտում էր նորան ծայրագոյն
անհամբերութեամբ , կարծելով , թէ նորա
խօսուածքից միայն կարէր լոյս ծագել , բայց
օրիորդը մնում էր լուռ : Վերջապէս կրկին
սկսեց խօսիլ հաղարապետի այրին :

“ Տեսնում ես , Մագթաղինէ , այդ վերջին
հարուածը : Թեռնարը անտարակոյս զրպարտել
է քեզ :

Այս անդամ Մագթաղինէն ոչ թէ այլա-
գունեցաւ , այլ կարմբեցաւ ինչպէս հասած

նուռն : Բարեմիտ բժիշկը իւր խորհրդաւոր իմաստութեան արդիւնքը տեսնելով , անդէն իսկ խղճահարութիւն զգալու վերայ էր , մինչ շտապեց առաջքը առնել : « Պարսն , ասաց նա , որքան եւ ապստամբ երեւի իմ մայրը դէպի բժշկութիւնը , այնու ամենայնիւ նա կարօտ է ձեր բազմարդիւն հմտութեան և ձեր հոգացողութեան . յուսամ ուրեմն որ մենք յաճախ կը տեսնուինք , միայն աղաչում եմ ձեզ բնաւ ք յիշել նեռնար Լէկուրին :

— Օրինք . . . մրմնջեց բժիշկը .

— Մի դառնաք այդ առարկային , միջահատեց Մագթաղինէն փոքր ինչ մեծամտութեամբ , իսկ եթէ դուք կը պնդէք , ես պարտաւորուած կը լինիմ արգիլել ձեզ ո :

Բայց յամառ բժիշկը յաղթուած չը համարեց իրան եւ հրաժարական ողջոյն տալով . խոստացաւ մի քանի օրից յետոյ կրկին դալ .

Մինչդեռ Մագթաղինէն առաջնորդում էր նորան դէպի դուռը Աշապա , ասաց նա հոգացողական ձեւով , ես կը մոտածեմ հիւանդիմասին , բայց ափսոս որ դուք չ'եք կարում իդալիա գնալո :

Այդ նետի հարուածը ուղղակի հասաւ Մագթաղինէի սրտին . օրիորդը մնաց սառած : — Արդեօք վերջին արդարութիւնն է այդ , մտածեց նա , կամ վերջնական վճիռ է : Գարշելի՛ հարստութիւն , կատակ թշնամական նա խախնամութեան , որ ապականած էր նորամէրը , անմեղութիւնը , ծաղիկ հասակը և որ

ը կարեր պիտանի անդամ լինել իւր մօր կեանքը
պաշտպանելու համար . Ո՞չ , ոչ նորա անձնա-
կան վիշտը , ոչ նորա ջախջախած կեանքը բնաւ-
չեին կարողացել մի վայրկեան . միայն շփոթել
նորա միտքը , իրը թէ կարեր դրժել իւր եր-
գում՝ որպի ուխտել էր չը մօտենալ անիծած
ժառանգութեան : Այդ ճանապարհորդու-
թիւնը հանդիպեցաւ իբրեւ առաջին փորձու-
թիւն , բայց այնքան հզօր , որ պէտք էր կար-
ծել , թէ որ և է մի հանճարեղ դեւ հնարել
էր նորան առաջարկելու համար :

“ Իդալիս , ասաց նա , թողլինի ո :

Եւ ահա կանխաւ իսկ հարիւրաւոր պատ-
ճառներ իրաւունք էին տալիս նորան խնդիրը
այդպէս լուծել . մի բոպէի մէջ նա առաւել
կորովամտութիւն եւ ճարտարութիւն գտաւ
դորա համար , քան երբ եւ իցէ գտել էր
Աստուածաբանութեան վարդապետը որ և է
մեղաց թողութիւն տալու համար . Յիրաւի
նա երդուել էր իւր համար մի բան չը հանել
0նօրէ Մարսելեթի անարդ հարստութիւնից ,
բայց նա երդուել չ'էր իւր մօր համար . Եւ
ոչ ապաքէն կան այնպիսի զօրաւորագոյն դի-
պուածներ՝ որոնք խափանում են առաւել
հաստատուն խոստումների կատարումը և որոնց
առջեւ տկար կամքը յետ է քաշւում ինչպէս
ալիքը թումբի առջեւ . Մահու վտանգի առջեւ
ովէ երբէք յանցաւոր եղել տուած խօսքը
չը պահելով . Այսպէս էր պատճառաբանում
Մագթաղինէն և մինչ արդէն զգաց իւր ամուր

կամբը , շտապեց դառնալ գէպի իւր մայրը .
նա բացաւ սենեկի դուռը եւ մնաց իւր տե-
ղում . Ոչ նորա պատճառաբանութեանց ար-
դիւնքն էին նուազել նորա մաքում և ոչ նորա
խզմուանքն էր տագնապի մէջ , այլ նորա սրտի
դրացմունքը արդիւցին զինքը այդ սեամբի
վերայ .

Այս տեղից նա սկսեց սաստիկ տրտմու-
թեամբ դիտել քաղցրիկ մայրական ստուերը ,
որ երբեմն քնքուշ էր և հսկուն , իսկ այժմ
լուռ և անզգայ : Տիկին Մարսելիթը շատ լաւ
տեսաւ իւր աղջկան , բայց ամենեւին տեսնելու
նշան չը տուաւ , թէ եւ դիտէր , թէ բժշկի
խօսակցութեան մէջ Բեռնարի անունը յիշելուց
Մագթաղինէն սաստիկ վշտացած լինելով .
սպասում էր իրանից մի հայեցուած , կամ
ձեռնի սեղմումն էր կամ մի խօսք . « Միթէ ոչինչ
ասելու չ'է ինձ , ինքն իրան հարցնում էր
օրիորդը դառնութեամբ ո եւ սոսկալի մողեր
պաշարում էին նորան , ինչպէս ուրուականք
գիշերուայ մէջ պաշարում են շնչասպառ ճա-
նապարհորդին . Մի գուցէ կորուսած հարրո-
տութեան ափսօսանքը , պատիր երեւոյթի յան-
կարծակի ցրիւ գալը մաշում էին նորա կեանքը
և ձգում նորան անընդհատ անուրջների մէջ :
Հարկ էր արդեօք այդ վիճակի մէջ նկատել
որ և է սիսակալութիւն նոյնչափ անգութ .
որչափ եւ ակամայ ծպտուած ըստ պատշաճի
վշտերի դիմակով . բայց գուցէ և աւելի ինչ
եւս լինէր , այսինքն՝ այդ յարատեւ լոռութիւնը

լինէր մի կշտամբանք . “ Մայրիկ , ասաց նա ,
մօտենալով կամաց դէպի հիւանդը , գիտէք որ
բժիշկ Դեկլէնը ամենեւին չ'է փոխել իւր կար-
ծիքը և պնդումէ ընդունել առաջարկած ճա-
նապարհորդութիւնը . . . Մայրիկ , իմ խիղճը
առումէ , թէ մենք կարենք այդ կատարելու :

— Ձեր խիղճը արգահատողէ , պատասխանեց
հազարապետի այրին խստութեամբ , բայց ես
չ'եմ գնալ իդալիա . . . : Յիրաւի , աւելցուց
նա կամաց և դստերը չը նայելով . ձեր խիղճը
կարեւոր պատկառանք չ'ունի դէպի ձեր մայրը
. . . : Դուք ինձ ճանապարհորդութեան ողոր-
մութիւն էք անում , դուք ինձ դասում էք
ձեր խեղջների կարգը .



Է .

ՄԱԴՐԱՂԻՆԵՆ գահավեժ արագութեամբ
դուրս եկաւ սենեակից : Նա ոդ էր խնդրում
և ընդարձակ վայր . նա կարօտ էր իւր սրտի
քաջալերութեան . նորան պէտք էր զօվացնել
իւր գլուխը՝ որ բոլորովին բորբոքուած էր լսած
խօսքերի ազդեցութենէն . Այդ վերջին հա-
րուածը այնքան բռւռն և խիստ էր , որ դուցէ
սպառէր նորա զօրութիւնը , եթէ մի միակ յոյս
մնացած չը լինէր տարակուսել եւ երկբայել

դեռ եւս , թէ գուցէ լաւ չ'էր լսել մօր խօսքերը : Ո՞չ , ոչ , անկարելի էր որ նորա մայրը հակառակած լինէր դստերը եւ մըտածէր յանդիմանել նորա այն վճռական գործը՝ որ կատարել էր իւրեանց պատուոյ համար : Այդ խղճուկի հոգին հիւանդ էր եւ հեշտիւ գրգռւում էր . նա չը կարէր ընդունել առաջարկած ճանապարհորդութիւնը եւ անհամբերութիւնը անտարակոյս մղում էր նորան անդր քան իւր մտածութիւնը : Ահա այսպէս էր մտածում Մագթաղինէն , բայց չ'էր կարող այս վայրկենիս դառնալ դէպի իւր անսղորմ մայրը : Նա զգում էր որ իւր արիութիւնը անկեղծապէս և պարզ կերպիւ վարուելու համար կարօտ էր քաջալերութեան , ինչպէս այն բժացած զէնքը՝ որ քուրայում կարմրացնելուց յետոյ կրկին կարծրանալու համար կարօտ է կենդանի ջրոյ մէջ ձգուելու :

Մագթաղինէն գնաց դէպի փոքրիկ ծիւլիէթի բնակարանը , ուր շատուց այցելութեան չ'էր գնացել . Այդ բնակարանը այժմ նոյն կեսաւեր նկուղը չ'էր , այլ մի փոքրիկ , բոլորովին նոր և սպիտակ տնիկ էր . զարդարած յասմակի ծաղիկներով և ձողաբարձերով . ծիւլիէթ այլ ևս մինակ չ'էր իւր բնակարանին մէջ , իւր մայրը տիկին Մարմօլիէն նորա հետ էր : Ծիւլիէթը չը կարէր այլ եւս ողբալ իւր եղբօր վրայ , որովհետեւ օրիորդ Մարսելէթը նորա մասին յանձնարարական նամակաւ խնդրել էր Պ. Ճավոյնին՝ որ թէեւ իբրեւ կանոն ընդունել էր

Երբէք շը կարգալ դէպի ինքը ուղղած յանձնաւ
բարական թղթեր, բայց Մագմաղինէինը կար-
դացել էր և ոչ այսափ միայն, այլ և չ'էր գը-
ժուարացել Լուգովիկոս Մարմօլիէին երկրորդ
գրագրի պաշտօն տալ, յայտնելով նորա ընկեր-
ներին, թէ պատանին նշանաւոր ապագայ ունի:

Մագմաղինէն նստեց փոքրիկ պարտիզի
մէջ ձողաբարձի առջեւ, որոյ վերայ կարմրած
տերեւների մէջ կախ էին դեռ եւս մի քանի
կիսաչոր ողկոյզներ: Անշուք արեւը խնայումէր
իւր ջերմութիւնը. ալեւոր աշունքը մռմռում
էր տիսուր ձայնիւ. օդը խոնաւ և ցուրտ էր,
բայց և այնպէս աշխարհի այդ փոքրիկ անկիւնը
վայելուչ էր Մագմաղինէի համար. որսվհետեւ
այստեղ գոնէ նա ապահով էր, թէ սիրում
էին իրան: Խեղճ տիկին Մարմօլիէն նայումէր
նորան մնապաշտական երախտագիտութեամբ
եւ տարակուսական զարհուրանօք, այն բարե-
պաշտ անձանց նման, որոնք նկատելով սուրբ
պատկերի հրաշագործութիւնքը իրեանց օդտի
համար, դեռ եւս մասնում են, թէ արդեօք
նա է գործում հրաշքը: Որ ինչ վերաբերումէ
Ժիւլիէթին, այդ փոքրիկ և զուարթուն աղաւ-
նին, այնքան ընտելացած էր արդէն օրիորդի
հետ որ՝ գնաց նստաւ նորա առջեւ, արմաւկ-
ները գրաւ իւր բարերարուհւոյ ծնկաց վերայ,
պուխը թեքեց դէպի նորա ուսը եւ սկսեց
շաղփաղփել:

Մատաղ աղջիկը մռերմական խորհրդակ-
ցութիւն ունէր Մագմաղինէի հետ և միան-

դամայն նշանաւոր աղաջանք դէպի նա : Բանը
իւր եղբօր մասին էր , որ այս միջոցին պիտի
դար և որուն Մագթաղինէն դեռ եւս լաւ չէր
ճանաչում , որովհետեւ Լուդովիկոս Մարժօլի-
էն հաղիւ թէ տեսած էր օրիորդին . Ժիւլիէթը
արտասուախառն ծիծաղով սկսեց պատմել , թէ
Լուին աշխարհի ամենամեծ վայրենին է և թէ
օրիորդ Մարսելէթի անունը միայն նորան այն-
պէս վախեցնում է որ՝ մինչ այժմ ոչ մի կեր-
պիւ չ'են կարողացած արդիլել նորա փախուս-
տը տանից ամեն անգամ , երբ կ'իմանար թէ
օրիորդը իրանց տունը պիտի գայ : Բայց Մագ-
թաղինէի բարեհոգութեան վերջին ապացուցը
արդէն յաղթել էր նորա երկչուտութեան եւ
այժմ նա ինքը խնդրում էր թոյլ տալ տեսնալ
իւր ընտանեաց պաշտպան բարի ոգուն և հե-
ղուլ նորա առջեւ իւր նուիրական երախտագի-
տութիւնը . Ժիւլիէթը աղաջում էր մնալ եւ
սպասել եղբօր գայլուն : Մագթաղինէն կամաւ
և հաճութեամբ ընդունեց այդ խնդիրը .

Կէս օրէն յետոյ Լուի Մարժօլիէն կա-
նուի դարձաւ տուն , նա սաստիկ փութացել
էլ , որպէս զի չի կորուսանէ այցելուհոյն տես-
նելու պատեհութիւնը : Այն ինչ առաջին քայ-
լը գործել էր , տարակուսութիւնը տիրեց նո-
րան . պարտէզը այնքան փոքր էր որ՝ Մագթա-
ղինէն արդէն նորա առջեւն էր եւ պատանին
նորան տեսնում էր կարծես թէ կից իւր հետ :
Այն կենդանագիրը՝ որ պատանւոյ մայրը եւ
մատաղ քոյրը պատկերացուցել էին նորա առ-

շեւ իւր բարերարուհւոյ անձնաւորութիւնը .
Լուի Մարժօլիէին համոզելէին կիսով չափ մի-
այն , բայց այժմ նորան տեսնելով , յիշեց նա
այն պահապան հրեշտակները . որոնց հաւատալ
ռւսուցելէին իւր երեխայական հասակում :
Սա էր այն աներեւոյթ պաշտպանը՝ որ օրիորդի
շեկ մազերի և շնորհալից գէմքի տակ պահուած ,
ծննդենէ մինչ այժմ հսկում էր նորա վերայ
եւ փրկելէր նորան փորձութեան եւ նախա-
տանաց դժբախոդութիւնից . Լուին ողջունեց
օրիորդին գողալով :

Մագթաղինէն կը դիտէր նորա գալը , ծիւ-
լիէթը սեղմում էր եղքօր ձեռը , արմուկով
կը մշտէր նորան եւ կը կծէր իւր շրթունքը ,
որպէս զի չը ծիծաղէ խղճուկի շփոթութեան
վերայ . Օրիորդը նոյնպէս դժուարանում էր
չափաւորել իւր զուարթութիւնը եւ մինչ
նորա հայեցուածը ընկաւ այդ երիտասարդի
խոշոր և գեռ եւս սեւ և փապարոտ ձեռ-
ների վերայ , մինչ տեսաւ այդ երաշխէպքը
աշխատութեան և խղճութեան , նա զգաց որ՝
արտեւանունքը լցւում էին արտասուքով . Լուի
Մարժօլիէն բարձրահասակ տղայ էր , ոչ այնքան
գեղեցկադէմ , որքան վայելլադէմ . նորա ընդ-
հանուր դիմագրութիւնը յայտարար էր ան-
կեղծութեան , միայն այս միջոցին շփոթուած
հայեացքը հակառակ կարծեաց պատճառ կա-
րէին լինել . Բարեբախդաբար փախչելու հա-
մար նորա կարողութիւնը այժմ այնքան նուա-
զէլ էր՝ եթէ թոյլ տային անգամ , նա գեռ եւս

կը տարակուսէր , որովհետեւ անհամբեր ցան՝
կութիւնը տոչորումէր նորան , որպէս զի շու
տով լսէ պահապան հրեշտակի ձայնը . Եւ ահա
այդ հրեշտակը , տեսնելով որ՝ պատանին չ'էր
կարող նորից իրան մօտենալ կամ իւր հետ
խօսել , չ'էր կարող , միով բանիւ , յաղթել
իւր երկչոտութեան , ինքը ողորմեցաւ եւ մի
քանի քայլ յառաջ գնաց դէպի նա , բայց նոյն
պէս շփոթուած այն մասին , թէ ինչ կարէր
ասել . վճռեց ձեռը մեկնել Մարժօլիէնին :
Այս անգամ պատանին երկչոտութիւնից ան-
ցաւ դէպի մոլեգին յանդգնութիւն , նա նը-
ւաճեց այդ սիրունիկ ձեռը եւ սկսաւ համ-
բուրել . Երախտագիտութեան համբոյները
անուշութեամբ լցուցին Մագթաղինէին սիր-
ող . Յուղուած այդ քաղցր զգացմունքով , նա
միտք բերեց , թէ Բեռնարը երբեմն իրաւունք
կ'ունենար նախանձելու .

Երբոր օրիորդը և պատանին նստեցան որ-
թատունկի տակ ծիւլիէթի մօտ , որ մնացել
էր նորանց սպասելու , մի միջոց լռութիւն յա-
ջորդեց , որովհետեւ Մարժօլիէի սիրող այնքան
զեղուն էր որ՝ չըգիտէր թէ ինչից սկսէ զայն
բացատրելու : Քոյրը բոլորովին անշիռթ և ան-
տարօյս , թէ եղբօր ազդեցութիւնը Մագթաղի-
նէի վերայ բարեգուշակ էր , վճռեց հաւաս-
տել և հակելով դէպի բարեկամուհւոյ ականջը
կամաց հարցուց , թէ գուցէ գոհ չ'էր նա իւր
եղբօրից . իսկ Լուին հարիւրապատիկ առաւել
կը ցանկար փոխանակ խօսելու , ծունը իջանել

իւր բարերարուհւոյ առջեւ կամ կրկին բռնել
այն ձեռնիկը , որ մի ժամ առաջ ունէր իւր
ձեռների մէջ . բայց այդպիսի ցանկութիւնը
արգէն անգործադրելի էր . Այնու ամենայնիւ
նա փորձեց մի քանի խօսք թոթովել եւ ան-
դէն իսկ յուսահատեցաւ , չը կարելով յայտնել
իւր հոգու խորին և սաստիկ զգացողութիւնքը .
Այն ակնկուռ հայեցուածը՝ որ նա բեւեռել
էր այժմ Մագթաղինէի վերայ , պարտաւորեց
Ժիւլիէթին վերջաբանել եղթօր խօսակցութիւ-
նը . Նրկրորդ անգամ Մագթաղինէն խղճահա-
րեցաւ , հրեշտակը կրկին օգնեց պատանւոյն .
Նա սկսեց խօսել և բացատրել , թէ իւր մար-
դասիրութիւնը դէպի նորա ընտանիքը բալորո-
վին բնական բան է և թէ աւելորդ է համա-
րում խօսել անգամ դորա վերայ , այլ սպա-
սում է նորանից առաւել բարութիւն քան որ
լոկ խօսքերը կարէին լինել . վերջապէս իւր սո-
վորական անկեղծութեամբ խօստացաւ փորձել
մի օր նորա երախտագիտութիւնը . Լուի Մար-
ժոլիէն , ուրախութեամբ յափշտակուած , եր-
կու ձեռքով կալաւ սիրելի քրոջ գլուխը և ա-
մենայն զօրութենէ համբուրեց . կայտառ եւ
խորամանդ աղջիկը , պատճառելով եղթօր ըն-
թացքը , հարկ համարեց կռուիլ նորա հետ ,
որպէս զի յաղթէ նորա մնացորդ երկչուու-
թեան և սքանչելապէս յաջողեցաւ . որովհե-
տեւ Լուին ոգեւորուեցաւ առանց բնաւին
տարակուսելու քրոջ դիտաւորութեան մասին
եւ այնուհետեւ . խօսք ու զբացը նրանց մէջ

զուարձութեամբ շարունակեցաւ .

Մագթաղինէն խաղաղ եւ անոյշ հաճութեամբ լսում էր նրանց խօսակցութիւնը , ունկնդիր էր մանաւանդ ժիւլիէթին՝ որոյ ձայնը լիշեցնում էր նրան այն զուարժ երգը՝ որ գարունքին լավում է անտառաց եղերքում : Մատղաշ աղջիկը օրըստօրէ գեղեցկանում էր եւ նորա ծաղիկ հոգին վիթթում շնորհալից վայելլութեամբ : Երջանիկ էր , եթէ մի օր կը սիրէին նորան այդ գեղազարդութեան և հոգւոյ ձիբերի համար : Իսկ Լուին : Սա իւր կեանքի . այն կարծատեւ շրջանն էր անցնում , երբ մեր ժամանակի մարդիկ գեռ եւս կարեն սիրել , որովհետեւ աշխարհը եւ կեանքը չ'ենցուցած նրանց , թէ ինչ պէտք է առաւելքան սէրը նախադաս համարել : Եթէ այդ քըսանամեսայ հասակում նա սիրէր , գուցէ հաւատարիմ մնար իւր տղայական երազներին , մինչդեռ այն կարծեալ կարեւորութիւնը , որոյ օգնութեան միշտ հետամուտ են անտիական մարդիկ , չ'էր բացել նորա հոգւոյ գուռը դէպի թշնամի յօժարութիւնքը և փառասիրութիւնը , ագահութիւնը . վայելլասիրութեան եւ հարստութեան ծարաւը չ'էին պաշարել և ըսպառել նորա սիրուը : Ահա այսպիսի բարեմիտ խորհրդածութիւններով զբաղուած էր Մագթաղինէն , մինչ գիշերուայ մօտենալը հանեց նրան ախորժ մոռացութենից՝ որոյ մէջ ընկըշմուած էր երկու ծաղկահաս ստեղծուածների խօսակցութեան պատճառաւ : Յիշատակը այ-

նուհետեւ ներկայացուց նրան այն անողորմ
տեսարանը՝ որ առաւօտուն զինքը հալածելէր
տանից . նա կրկին մտածեց իւր մօր վերայ եւ
կամեցաւ գառնալ տուն :

Սաստիկ եռանդով նա ուզումէր տեսնել
իւր մօրը , այն ապերախտ և պաշտելի մօրը՝ ո-
րոյ խօթացած հոգին անձուկ փափաքանօք
կամէր փորձի տակ դնել և եթէ դիպուածը
՚ի գերեւ հանէր նորա յոյսը , իմանալ գոնէ ,
թէ բնչ նոր ալաք էր պահում իւր դստեր հա-
մար : Բայց ՚ի զուր փութացուց նա իւր քայլե-
րը , զի ահա արուարձանը անցնելուն , առաջ
մի քանի խեղճ կանայք ճանաչեցին նորան եւ
կամեցուցին , յետոյ այն երեխայք՝ որոնք չ'էին
մոռացել փայլուն ոսկիները , վազեցին եկան
ամէն կողմից եւ քաղցած ճնճղուկների պէս
փոփսալով և ճղալով շուրջ պատեցին նորան ,
առանց սաստիկ աղմօւկ յարուցանելու : Մագ-
թաղինէն անհանգիստ հոգւով շարունակում
էր իւր ընթացքը միշտ առաջըք նայելով եւ
կասկածելով թէ մի գուցէ հանդիպի որ եւ
է քաղաքացւոյն՝ որ նորա ողորմութիւնների
գաղտնիքը ստուգելով , գուշակէ նմանապէս
եւ նորա հարստութեան գաղտնիքը : Նորա
մէջ մնում էր դեռ եւս սիրոյ պատկառանք ,
ըստ որում այդ երկիւղը ոչ այնքան իւր հա-
մար էր , որքան իեռնարի համար՝ որոյ հրա-
ժարուելու իսկական պատճառը չ'էր ուզում
հռչակել :

Բայց ահա ճակատագիրը՝ որ երբեմն ար-

դարութեամբ է վարւում, այլապէս էր պատ-
ռւիրել, Վերջին անգամ իւր ճանապարհում
նա հանդիպեց այն մարդուն՝ որոյ մասին կա-
րէր կանխատեսած լինել: Փողոցի անկիւնը
հասած, մինչ ուղում էր կողմնային փողոցը
անցնիլ, նորա առջեւ յայտնուեցաւ բժիշկ
Դեկլէնը: Այդ պատուական, հետաքրքիր եւ
միշտ համեստաբարոյ անձը պարտուպատշաճ
ակնածութեամբ ողջունեց օրիորդին և անցաւ:
Անտարակոյս քաղաքի այդ հեռաւոր տեղում
նա կարէր դիպուածօրէն հանդիպել, մանաւանդ
որ՝ խեղճերի թաղում այդ միջոցին յիրաւի
ջերմավ հիւանդ կար: Մագթաղինէն շատ հե-
ռի էր մտածելուց, թէ բժիշկը նորա հետքից
էր գնում, ինչպէս երեխերքի խումբը, արուար-
ձանը մտնելու սկզբից: Բայց եւ այնպէս նա
սարսափեցաւ և մի տարօրինակ ազդեցութիւն
դգաց: Նրան այնպէս թուեց, իբր թէ կոր-
զում էին այն վերջին քողը՝ որով նա ծածկել
էր իւր սիրտը և թէ ամէնքը տեսնում էին նո-
րա վէրբի խորիքը: Նա հասկացաւ որ՝ բժիշկը
դիւրաւ կարէր տեղեկանալ նորա ամօմոյ և
դժբախտութեան անցքին, և թէ նորա շնոր-
հիւ այդ լուրը հասարակաց եղած լինէր:

Եւ յիրաւի երկրորդ օրը Մագթաղինէի սի-
րուն ձեռներով սփռած արքայավայել ողոր-
մութիւնների հռչակը տարածուեցաւ ամբողջ
քաղաքի մէջ: Հիւսիս, հարաւ, արեւելքից
արեւմտւաք մի գոշիւն էր, թէ օրիորդ Մար-
սելէթը խելագար է: Ի՞նչ չէին խօսում այն

յիսուն ոսկւոց մասին , որ մի նուագում միայն պարզեւել էր զաւակօք բեռնաւորուած մի խեղճ մօր . Մարդ չըկայ . որքան և սովորաբար բարեգործ , որուն այդ առատաձեռն ողորմութիւնը չը վրդովէր բարեպաշտական սրտմտութեամբ . Օրիորդ Մարսելէթը չափազանցում էր ողորմութեան մէջ , օրիորդ Մարսելէթը վատահամբաւում էր հարուստների ամենափափուկ բաղձանքը . Ի՞նչ տարօրինակ ձեւ է ժառանգութեան այսպիսի գործածութիւնը . Ի՞նչ այլանդակութիւն է , Բնչ յիմարութիւն է . ասում էին ոմանք . Ո՞՛չ , հառաջում էին միւսները , Բնչ գաղտնիք է այդ , միթէ բնական քան է մի միջին կամ փոքր ինչ պակաս հարըստութիւնը կամաւ այդպէս վասնել և ոչ ապաքէն սոսկալի պէտք է լինին այդ զարմանալի ողորմածութեան պատճառները . Այսպէս յուղմունքը , փոխագարձ հարցուփորձերը չ'էին դադարում . և ամենքը նոյն իսկ խորագէտներն էլ մոլորում էին խաւարի մէջ . Յայտնի էր միայն մի քան և այն՝ ահագին խորհրդածութեամբ ծածկուած . թէ օրիորդ Մարսելէթին առաւել սիրելի էր իւր հարստութիւնը աղքատաց սփռել , քան թէ բաշխել բեռնարին , իւր նշանածին :

Յիրաւի բժիշկ Դեկլէնը չըկարէր պատմել առաւել քան զոր ինչ գիտէր մինչ այժմ : Բայց Բնչ գիտէր նա՝ թէ օրիորդ Մարսելէթը քառասուն հազար ֆրանք եկամուտ չ'ունէր արգէն , մինչդեռ միւս կողմից հիմնաւոր պատճառներ ունէր կարծելու , թէ այժմ իսկ նա

ուներ այդ հարստութիւնը։ Բժիշկը բաւական ազնիւ մարդ լինելով, խղճմանօք վարուեցաւ և չըկամեցաւ հռչակել որ և է վստահութիւն կամ մտերմութիւն դէպի ինքը, որ չ'էր ստացել քնաւին։ Չ'ուշացաւ նա այցելել տիկին Մարսելէթին՝ որոյ խորհրդաւոր հիւանդութեան օտարուափ վիճակը բժշկի քունը կրտրել էր։ Մագթաղինէն՝ որ առաջին անգամի պէս պարտաւոր էր առաջնորդել բժշկին դէպի մօր սենեակը, այն ինչ տեսաւ նրան, նոյն սարսափը և նոյն կասկածանաց ազդեցութիւնը զգաց, հանդերձ մի փոքր չարայուղութեամբ՝ որուն չ'էր կարում յաղթել, զի թէեւ ոչինչ շշուկ հասած չըլինէր նորա ականջաց բժշկին հանդիպելուց յետոյ, այնու ամենայնիւ աներկբայ էր որ նա խօսել էր։ Խոկ բժիշկը ամենեւին ուշ չըդարձուց դէպի այն պարագայ ները, որոնք պարզապէս նկարուած էին օրիորդի տենչալի դիմաց վերայ։ Մի կարծ խօսակցութիւնից յետոյ, նա արդէն նստած էր տիկին Մարսելէթի մօտ, առանց որ և է ընդդիմութեան վերջինի կողմից։ Երկարօրէն քննում էր նրան եւ յօնքերը խոնարհեցնելով մտածում էր առանձին ուշադրութեամբ։ Կրկին քննում էր և իբր նոր և երկիւղալի պատճառներ ունենալով, չ'էր ուզում հեռանալ նրանից։ Վերջապէս վեր կացաւ, խորաքննին ձեւով առաջարկեց մի քմակելի որ ուամկական անուն մի ունէր, որոյ անօդուտ լինելը իրան խոկ կատարելապէս յայտնի էր եւ հառաջանօք վեր

առաւ իւր գաւաղանը . Նա գիտէր որ Մագթա-
շինէն ուղեկից էր լինելու նրան դէպի գուռը .
և Պարմն , ասաց օրիորդը , ես քաջասիրտ եմ ,
ի սէր Աստուծոյ մի թաքցնէք ինձնից ձեր
կարծիքը

— Գնացէք Իդալիա , գոչեց բժիշկը , և առանց
պատասխանի սպասելու , հեռացաւ .

— Մագթաղինէ , աղաղակեց հազարապետի
այրին . այդ մարդը կրկին խօսեցաւ արդեօք
Իդալիոյ մասին .

— Այս , խօսեցաւ . մայրիկ , կը հաճիք եւ
կ'ընդունիք խոհեմութեամբ այդ խորհուրդը
· · · · ·

— Ահաւադիկ բժիշկներ , միջահատեց տիկին
Մարսելէթը տկար ձայնիւ և 'ի խորոց սրտի ,
ուղարկում են Հռովմ մեռնելու , թէ եւ սորա
համար հարկաւոր լինէր երկինքը այլակերպել ,
միայն թէ չը փոխէին իւրեանց կարծիքը .

— Աւազ , ասաց Մագթաղինէն , տեսնումեմ
որ գուք այդ մտքով բոլորովին պաշարուած էք .

— Զգլումը հեռի է քեզնից , դուստր իմ ,
կրկնեց այրին դառնութեամբ , բայց և հեռի է
ինձնից քո փիլիսոփայութիւնը .

Մագթաղինէն մի քանի վայրկեան մնաց լուռ
և յետոյ կրկին խօսեցաւ . ջանալով բռնել հի-
ւանդի ձեռը .

“ Մի գուցէ քէն պահած լինէք դէպի ինձ
և միթէ յիրաւի է որ

Նա մնաց այս խօսքի վերայ և կարձեց իւր
մորմոքը ո : ”

— Ի՞նչ էք ասում, նորէն հարցուց տիկինը անհոգութեամբ . Եթէ ես զղայի կամ ափսու սէի, ինձ համար չ'էր լինելու այդ . ինձ բնական է այժմ անտարբեր լինել դէպի հարըստութիւնը և չքաւորութիւնը, մինչդեռ քաջ դիտեմ որ իմ կեանքս արդէն սակաւօրեայ է . Դու առատապէս ճանապարհորդութեան ամենայն ծախքը կ'անէիր ողորմելով ինձ, բայց ես անյօյս եմ իմ առողջութիւնը վերականգնելու մասին . Ուրեմն խոստացիր ինձ այլ իմն կերպիւ կատարել այդ ողորմութիւնը, խոստացիր յետ իմ մահուան ամփոփել իմ մարմինը թելֆօրում՝ որ իմ ամուսնոյ վերջին զօրատեղին էր : Նորա նման կը մեռնեմ ես մի վէրքից, որ ստացայ ոչ թէ պատերազմի մէջ, այլ կեանքի պարագայից դէմ ճակատամարտ տալուս . Ո՛հ, չը գիտեմ ես, ինչ կը գործէր նա, մեզ այսպիսի խղճութեան մէջ տեսնելով Չը դիտեմ նմանապէս ինչպէս կը վարուէր նա այդ ժառանգութեան հետ :

— Ո՞ւր է թէ կամքն Աստուծոյ կենդանի լինէր նա, աղաղակեց Մագթաղինէն . գուցէ նա առաւել լաւ վարուէր, քան թէ ես վարուեցայ :

— Բաւական է, ասաց այրին, այսօր աւելի ինչ չը կամիմ խօսիլ: Գո հայրը այնպէս կը գործէր, ինչպէս դու գործեցիր .

— Թողնենք այժմ ինչ որ իմ հայրը կարէր գործել, ասաց Մագթաղինէն աղդու ձեւով . Որքան կարողացայ հասկանալ, դուք այժմ ձեր

մահու սպառնալիքը խօսեցիք ինձ . կերանքը ան-
տանելի է ձեզ , բայց ինչպէս էք կարծում ,
մայրիկ , արդեօք նա քաղցր է ինձ : Եթէ այն
անցածի յիշատակը , որ միայն մի վայրկենիք ցը-
նորք էր , ձեզ բոլորովին պաշտելէ , քանի ա-
ռաւել վիշտը իբրեւ հրացայտ շրջան տառապե-
ցընում է իմ կերանքը , մինչ տեսնում եմ որ՝
դուք հիւանդ էք և չ'էք ուզում առաղջանալ :
Բժիշկը առաջարկում է ձեզ գնալ ուրիշ եւ-
բարեխառն կլիմայի մէջ բնակել , իսկ դուք ինձ
ասում էք , թէ այլ ճանապարհորդութիւն կը-
ցանկայիք կատարել : Կատարենք ուրեմն ըն-
կերութեամբ մեր հոգւոց ճանապարհորդու-
թիւնը : Ո՞հ , ես բոլորովին պատրաստ եմ :
Շղթան ծանրացաւ արդէն իմ վերայ և աղա-
տութիւնը փափաքելի է ինձ , որքան և յայտ-
նի լինէր ինձ նորա անկարելիութիւնը : Ասում
են , թէ հոգին ազատ է , բայց դուք տեսնում
էք որ այդպէս չ'է , որովհետեւ մարդիկ չ'են
կարող մեռնիլ , երբ ուզում են : Ինձ ակնե-
րեւ է այժմ , որ ձեր սիրտը կտրուել է ինձնից .
Դուք՝ որ մինչ այժմ ձեր հոգին միաւորել էիք
իմ հոգւոյ հետ , հրաժարուել էք ինձնից և այ-
լոց պէս մատնիչ և դաւաճան էք դարձել ինձ :
Զ'եմ գանդատում ձեր անգմթութենէն , ներո-
զամիտ եմ դէպի ձեր ցաւը , բայց հարկ էր
արդեօք որ այդ ցաւը առաւել դառն և ան-
արդար լինէր քան իմը , Ոխակալութիւնը , ե-
թէ ներելի լինէր ձեզ ունենալ , պէտք է ար-
դեօք ընկնէր իմ վերայ , որ առաջին վիրաւորն

է ձեր յիշած ճակատամարտի : Հարստութիւնը ,
այդ ատելի հարստութիւնը յանկարծ փայլեց
ձեր աչաց առջեւ . և խոկոյն աներեւութացաւ .
ինչուց զբկուեցիք դուք , — մի երազից , իսկ ես
ի՞նչ կորուսի , — ոչինչ , ի՞նչ են նշանակում իմ
ունայնացած սէրը , իմ անարդ անուրջը . Ի՞նչ
են նշանակում իմ անձկութիւնքը , արտասուքը
և ամօթը — ոչինչ : Ո՞՛հ , ձեր կեանքը միշտ դա-
ժան է եղել և այն պատիր տեսիլը՝ որ յանկարծ
դէպի ձեր սիրուր ուղղեցաւ , անյագ գետին
դատաւ այն տեղ մի ժամու մէջ , և այնքան զօ-
րացաւ որ արդէն անձեռնհաս էք նրան ձեր
սրտից կորպելու համար : Աղաչում եմ ձեզ .
մայրիկ , ժողովեցէք ձեր ուշը ու միտքը

Հաղարապետի այրին շատուց արդէն լսում
չեր դստեր խօսուածքը . մտախոհութեան մէջ
ընկղմուած՝ ինքն իրան հետ խօսում էր ինչ-
պէս իւր սովորութիւնն էր , բայց ահա դըս-
տեր վերջին խօսքի վերայ սկսեց գլուխը շար-
ժել : « Ուրեմն՝ Ֆրանսիայից հրաժարուելը
մեր կամքից էր կախուած , ասաց այրին մեղմ
ձայնիւ եւ եթէ այդպէս է , պէտք էր Նօ-
տարի հաշուետնից դուրս եկած օրը չուէինք
դէպի իդալիս :

— Ո՞՛հ , մայրիկ , գոչեց Մագթաղինէն , քա-
նիցս ճգնեցայ ես իմանալ թէ Բնչ էր արդեզ
ստիպել Օնօրէ Մարսելէթին այդ ժառանգու-
թիւնը մեզ թողնել և այժմ միայն հասու ե-
ղայ . նա գուշակել էր այն չարիքը՝ որ մեզ
գործելու էր , նա գիտէր հարստութեան զը-

Ժոխային զօրութիւնը և իւր վրէժը որ բոլոր
պատուաւոր մարդկանց գէմ էր՝ մեր վերայ
կամեցաւ կատարել ։



Ը.

ԱՅՆ առաւօտուն օրիորդ Մարսելէթը գը-
նացել էր Փարիզ մի քանի կարեւոր գործեր
տնօրինելու իւր խորհրդատուի, առաջնօրդի,
Հաւատարիմ բարեկամի և գանձապահի, մե-
ծապատիւ եւ փոյթեռանդն Նօտարի Պ. Օնե-
զիմ Ճավոյնի հետ։ Սա իւր գրասենեակումն էր
բոլորովին պատրաստ և ճիշդ սովորական սեւ-
ու սպիտակ շորերով, ուստի մինչ նկատեց իւր
պաշտպանութեան ենթակայ օրիորդի մտնելն,
յանկարծ վեր կացաւ, յայտնի երեւում էր որ՝
նա սաստիկ շփոթուած էր եւ ավ գիտէ, թէ
Բնէ էր այդ շփոթութեան պատճառը, օրիոր-
դի քառասուն հազար ֆրանք եկամուտը, թէ
նորա խարտեաշ մազերը և երկնագոյն աչկունքը
և կամ այդ երկու վայելլագեղութիւնը միա-
սին։ Ո՛վ չը գիտէ, թէ շատ անգամ չար
միտքը սկզբնաւորութիւն է որ և է բարի մոքի։
Մարդկային սիրտը իբրեւ պարզիչ գործիք ըն-
գունում է սեւ ջրային նիւթ եւ բղխում է
երբեմն պարզ և մաքուր ջուր։

Ինչ և իցէ , որովհետեւ Մագթաղինէն քա՞յլ
նիցս անդամ արդէն եկել էր առաւօտուն նօս
տարի գրասենեակը և նորա առջեւ նստել էր
իբրեւ մի մատղաշ թագուհի իւր նախարարի
մատ , ուստի Պ. Ժավոյնը փորձիւ գիտէր , թէ
որպիսի իմաստուն ձեւով պէտք էր վարուիլ
նորա հետ : Այսպէս նա սկսեց խօսել նախ
և առաջ նորա գժուարալոյծ գործերի մասին ,
որոց պատճառաւ օրիորդը ստիպուած էր
գալ իւր գրասենեակը և ՚ի հարկ է պէտք է
զգուշանար ուրիշ նիւթերի վերայ խօսելուց :
Բաժանորդութիւն , պարտատօմ , առք , վա-
ճառք , դաշնագիր , ապահովուութիւն , անշարժ
գրաւ , ահա այս խօսքերն էին կարկուտի պէս
թափւում Մագթաղինէի շուրջը , որ արդէն
տաղտկացած էր և անզգայացած . խորամանգ
Նօտարը երեք ամբողջ ժամ առանց միջահա-
տելու կարէր այդպէս շաղակրատել և վկայու-
թիւն բերել , թէ իրանից լաւ գանձապահ
չը կար աշխարհում և թէ Օնօրէ Մարսելէթի
կտակած հարստութիւնը նորա ձեռնում տաս-
նապատկելու էր . — եթէ Մագթաղինէն յուսա-
հատութիւն ցոյց տալով , շնորհ չը խնդրէր
նրանից շահաւորելէ դադարելուց :

Այդ գիպուածը Դեկտեմբեր ամսոյ մէջ
լինելով , Պ. Ժավոյնը մեղմիկ մօտեցուց Մագ-
թաղինէի թիկնաթոռը դէպի հրաբորքոք կրա-
կարանը . և մինչ օրիորդը իւր մանրիկ ոտները
տաքացնում էր , ինքը գաղտագողի նրան նա-
յելով , պատրաստեց մի քանի թղթեր՝ զորս

պէտք է ստորագրէր օրիորդը : Այդ թղթերը
առաջարկելու ժամանակ Նօտարի ձեռը սկսեց
այնպէս շարժիլ, իբր թէ ներբին յազեց դող-
դողում էր և այս պատճառաւ նա համարձա-
կեցաւ միայն ասել օրիորդին . թէ ցուրտը ու-
րիշ կանանց տգեղացնում է , իսկ նորան , ընդ
հակառակն , գեղազարդում է և թէ նա այժմ
վարդի պէս պայծառ և զուարժէ ։ Օրիորդը չը-
կարաց արդիկել իւր ժպիտը և ով դիտէ , թէ
այդ ժպիտը ինչ յիմարութիւններ գործել կու-
տար ծավոյնին , եթէ Մագթաղինէն յանկարծ
վեր չըկենար տեղեց :

Պրագիրների սենեակը անցնելու ժամանակ
օրիորդը կանգնեցաւ Լուդովիկոս Մարժօլիկի
մօտ . նա ուրախ էր որ՝ նորա ձեռքի մէջ տես-
նում էր իրմէ ստացած գրիչը եւ ոչ առա-
ջուայ բրիչը . Պատանին եռանդուն աշխա-
տութեամբ պատրաստում էր մի ցանկ , զուար-
թարար եւ սքանչելի գործ , որուն բոլորովին
անձնատուր եղած , հազիւ նկատեց որ մի նուրբ
ստուեր հակել էր իրա քամակից և մինչ դար-
ձաւ եւ տեսաւ օրիորդ Մարսելէթին , նորա
սեւ աշկունքը փայլեցին յանկարծահաս լուսով
և օտարոտի հայեցուածը ուղղեցաւ գէպի բա-
րերարուհին . Միւս գրագիրները խորամաննէ
ուշադրութեամբ զննեցին իւրեանց նոր պաշ-
տօնակցին՝ որ կարէր պարծիլ այդ սիրուն , մատ-
ղաշ եւ հարուստ բարեկամուհւոյ ներկայու-
թեամբ : Պ . ծավոյնը ակներեւ անհամբերու-
թեամբ յետկոյսը կեցած՝ նկատում էր զգու-

շութեամբ թէ Մագթաղինէին եւ թէ նորապաշտպանութեան ենթակայ դրագրին : Օրիորդը դժգոհ էր որ զինքը շրջապատած անձինքը տենչալի հայեացքով նայում էին եւ նորանց թաքուն խորհուրդները պարզ երեւում էին . ուստի նա ստիպուեցաւ դուրս ելնել , բայց ահա Լուին աղաջական նշանով պահեց նրան . վաղվաղակի գնաց դրասեղանի վերայից առաւ մի փոքրիկ տուփ , և որովհետեւ ինքը այս երեկոյ վերադառնալու չէր Աէն-Դէնիս , խընդրեց Մագթաղինէից այդ ընծան , իւր աշխատանաց առաջին երախայրիքը տալ իւր քոյր Ժիւլիէթին : Օրիորդը խոստացաւ կատարել այդ խնդիրը .

Եւ այն ինչ դարձաւ նա Աէն-Դէնիս , առաջին հոգուը եղաւ . տանել Ժիւլիէթին տալ նորա եղբօր ընծան : Փոքր ինչ անհանգիստ էր նա ճանապարհում , որովհետեւ Մարժօլիէի յանձնարարութիւնը օտարութիւնը տարուած էր երեւում նորան , իսկ նորա հայեցուածը , մինչ աղաջում էր կատարել իւր խնդիրը , ակամայ շփոթում էր նորան խորագոյն մտածութեամբ : Թէեւ երեկոյեան ժամանակը դեռ եւս մօտ չ'էր , այնու ամենայնիւ օրիորդը չ'ուզեց երկար մնալ սպիտակ տնակում և Ժիւլիէթի խանգաղատուրախութիւնը այդ այցելութեան պատճառաւ անզօր էր այժմ ստիպել նրան մնալ , ինչ պէս սովորաբար պատահում էր . և այսպէս նա հրաժարուեցաւ յառաջ քան թէ Ժիւլիէթը բացել էր խորհրդաւոր տուփը եւ տեսել էր

Եղբայրական սիրոյ նուերը . Մագթաղինէն
կարծես թէ վախնում էր որ այն տուփից չ'եւ
նէին բարին և շարը միասին , ինչպէս ֆանդորի
տուփից :

Ի զուր աշխատեցաւ նա ՚ի բաց մերժել այդ
միտքը՝ որ առաւել ատելի էր քան միւս միտ-
քերը՝ որոնք պաշարել էին նորան այն ժամա-
նակից , մինչ դադարել էր հաւատալ մարդ-
կանց բարեմառնթեան եւ աղնուութեան .
Անվտահութիւնը նորա սրտի մէջ մտած , սո-
զումէր ստուերում , իբրեւ մի օձ՝ որ սպրդած
լինէր տան մէջ . թէ ինչո՞ւ էր նա վախնում
ծիւլիկթի եղբօրից , գեռ եւս չը կարէր ինքն
իրան խոստովանիլ , բայց զգուշացաւ նոյնպէս
հաւատալուց , թէ իւրան սիրելու զգացումը
կարէր լինել միայն քաննեամեայ հասակի յան-
դրգնութիւն , վտանգաւոր նորա սրտի համար ,
առանց հաշուի տակ ձգելու իւր հարստու-
թիւնը . որովհետեւ օրիորդը չ'էր կարծում ,
թէ այնուհետեւ կարէին իրան սիրել այնպէս ,
ինչպէս սիրում են միւս կանանց . նա այժմ
իրան համարում էր հրապոյր և նպատակ , հա-
մարում էր տենչանք ամենքի համար՝ որոնց ա-
նարդ երազների կատարումը պէտք է լինէր
այն աշխարհում՝ որոյ գեգերանաց նպատակը
հարստութիւնն է . Նոյն առաւօտը , լսելով
Պ . Ճավոյնի մեծարանքը , որ կարծում էր հը-
նարիմացութեամբ սքօղել իւր յոյսը , օրիորդը
միայն ժպտեց . բայց մատաղահաս մարդը , կամ
լաւ եւս ասել , այդ երեխան՝ որ ամեն բանով

պարտաւորուած էր օրիորդից . այդ երեկուայ սովածը՝ որ նորա խնամօք թշուառութիւնից ապահովուած էր , մի՛թէ իր պարաքը ուզում էր համատանօք հատուցանել օրիորդին :

Առակալի ախտ , կորստաբեր բնազդեցութիւն , անիծեալ ծարաւ , որ տանումէ մարդկանց , ինչպէս կենդանի մսի և արիւնի ծարաւը տանումէ վայրենի գաղաններին : Ինչո՞ւ լուի Մարմօլիէն՝ որ սցնչափ ուղղամիտ եւ արի էր աղքատութեան մէջ , հազիւ այդ չքաւորութենէ աղատուած , հարկ չը համարէր նոյնպէս հարստութիւն երազել : Ինչո՞ւ նա եւս չը վեճուէր կարելի օգուտը քաղել այդ յածող դիպուածից և խորհուրդ չը դնէր իւր մողումը բաքանչելի ազդեցութեամբ սիրահարել իւր բարերարուհուն : Մի միաքը միայն բաւական է երբեմն սրտի զգացմունքը փոխելու համար . թեանարը նմանապէս մաքուր էր . նա փառասէր էր երբեմն եւ դժգոհ իւր չքաւորութենէն , բայց և այնպէս հեռի էր անարդցանկութիւններից : Ագահ տենջանքը չէր անցուցել նորա աշաց առջեւ իւր հրապուրիչ հայելին՝ որոյ մէջ բարին և չարը երեւում են մի և նոյն կերպարանօք , որոյ մէջ մին և միւսը յայտնուում են իբրեւ պարզամիտների երկպատիկ ցնորք . որոյ մէջ ամենաքաղզը զգացմունքը փոքրկանում են և անհետանում և ոչինչ այլ եւս մնում չ'է , բաց ՚ի տենչացողաց սեփական ցանկութեանց փայլումը : Ո՞հ , թեանարը անտարակոյս իւր աղնիւ սրտի զայրացու-

թեամբ կը պատասխանէր, մինչ ավ և իցէ գար
նորան ասելու, թէ մի փոքրից յետոյ նա ու-
րանալու է իւր աստուածներին, ուրանալու է
ինքնիրան եւ թէ ամաչելու չ'է մի օր ան-
պատիւ գործ առաջարկել իւր տարգածուին
նորա սէրը դէպի ինքը մշտնջենաւորելու
համար :

Մագթաղինէն միջահատեց իւր մտածու-
թիւնքը, որովհետեւ հասնում էր տուն։ Օրը
խոնարհում էր դէպի երեկոյ։ Նա կարծեց ՚ի
սկզբան, թէ աչքերը խարում էին իրան, բայց
և այնպէս սաստիկ խռովեցաւ, ըստ որում ե-
րեւոյթը յանկարծահաս էր և ակնունելի. եւ
ով էր արգեօք, կամ որո՞ւն էր կարծում, թէ
տեսնում էր։ Բեռնարին արգեօք . . . Այն,
Բեռնարին։ Մագթաղինէի առաջին շարժումը
դէպի փախուստ էր, բայց հազիւ մի քանի ըսպէ
անցած, նա կասեցցից իւր գնացքը. նորա կա-
րողութիւնը սպառել էր եւ ամօթը տիրել էր
նորան. միայն նա գոհ էր երեկոյեան մութից՝
որ կարէր արգելք լինել նորա փախուստը նը-
կատելուն։ Դարձեալ նա շարունակեց գնալ
և դարձեալ վարանեցաւ. տասն անգամ կասե-
ցաւ և վերջապէս ամենամեծ զգուշութեամբ
յառաջ գնալով գիշերային աղջամուղջի մէջ,
հասաւ տուն։ Բեռնարը անհետացել էր.

Ի՞նչ գործ ունէր Բեռնարը այդ բնակարանի
մօտ, որոյ առջեւից անցնելուս պարտաւոր էր
այլուր դարձուցանել իւր հայեացքը։ Երկու
պատճառներ ծընան Մագթաղինէի մոքին

մէջ . առաջինը պքանչելապէս համաձայն էր
բժիշկ Դեկլէնի մարդասիրական ազդարարու-
թեանց եւ տիկին Լէկուրի քաջածանօթ խո-
րամանկութեան հետ , այն անողոք կանոնի
հետ , որ հնարապէտ կինը գործիք էր շինել
հասարակաց դատողութիւնը դէպի իւր օգու-
որ դրաւելու համար . Միթէ սորա ազդեցու-
թեան արդիւնքը չ'էր որդւոյ այդ տարօրինակ
դարձը . Միթէ սորա խորապէտ թելադրու-
թիւնը չ'էր քաջալերել Բեռնարին գալ այդ
տան շուրջը թափառել , ինչպէս մի վարանդի՝
որ անարդարութեամբ աքսորուած հայրենիքից,
գալիս գեգերումէ նորա եզերքը . Եւ ոչ ա-
պաքէն այդ ամենը գեղեցիկ տնօրինուած էր ,
որպէս զի ամբողջ քաղաքը կարծէ , թէ Բեռ-
նարը մի յուսակտուր տարփածու էր , որ եր-
բէք չ'էր դադարել հաւատարիմ մնալ օրիորդ
Մագթաղինէին և թէ արդարեւ նա կ'ամսւս-
նանար նորա հետ , թէ խեղճ լինէր նա և թէ
հարուստ , ուստի եւ յանցանքը այս մասին
վերաբերում էր փառասէր օրիորդին՝ որ իւր
նորահաս յաջողութեան պատճառաւ յղացել
էր եւ նորանոր պահանջներ եւ յոյսեր եւ
աքսորել էր Բեռնարին իւր տանից . Մագթա-
ղինէն բառ առ բառ և առանց ամենեւին երկ-
մըտելու կրկնում էր մտզք այն հանճարեղ ա-
ռասպելը՝ որ Բեռնարի մայրը պատմել էր բա-
րեկամաց խնձոյքի երեկոյին . ուրեմն նա լաւ
ճանաչում էր տիկին Լէկուրին . Նրկրորդ պատ-
ճառը , որ Բեռնարը . . . բայց չ' . . . ի՞նչ հետ-

նութիւն է և յիմարութիւն . միայն առաջինը կարե լինել ճշմարիտ , իսկ երկրորդը անմիացնորդ էր , որ Մագթաղինէի տկար և երկչուածութիւննել

Բայց եւ այնպէս նա անկասկած էր որ Առանարը զինքը սիրած էր , իւր հոգւոյ լիապատար տարփանքը իրան նուիրած , ամենայն անկեղծութեամբ պատրաստ էր ամուսնանալ նորա հետ , չը նայելով իրենց աղքատութեան . անփոյթ նմանապէս և տիկին Լէկուրի խուլ ընդդիմութեան եւ զարհուրանաց . զոր զգացել էր որդւոյ կամակորութեան պատճառաւ : Այս , Բեռնարը սիրում է եղել . կենսական կայծը բորբոքել էր այդ տիսուք սրտի մէջ եւ նորա բոցերը անցել էին նորա սառնասառոց կենդրոնը . սէրը մի նոր հրաշք էր գործել և այդ հրաշքը տեւել էր երկու ամբողջ տարի : Խորհրդաւոր և սքանչելի կայծ՝ որ փոքր ինչ առաջ գեռ եւս փայլում էր ապերախտ սրտի մէջ և մի գուցէ այդ կայծն էր յանկարծ ցայտում նորա յիշատակի թերաշէջ մօխրոյ տակից , այդ կայծը՝ որ խղճահարութենէ արծարծուելով , զարթնում էր նորա էութեան խորքում և տանում էր նրան դէպի այդ վըստացած տունը . . . Ո՞հ , Մագթաղինէն հալումաշ էր լինում տարակուսութիւնից , թէ արդեօք տիկին Լէկուրը զիտակ էր իւր որդւոյ սուարոտի ընթացքին . կամ եթէ ինքը համախոհ չէր որդուն . ինչն էր արդեօք դրդել թեռնարին գալ անցուդարձ առնել նորա պատուհանների

առջեւ . Բնչ յուսով էր նա իրան պարաբռմ ,
Ամբողջ սոսկալի գիշերը Մագթաղինէն անցուց
մի հարց միայն կրկնելով . թէ արդեօք վաղիւ
եւս կուգայ թեռնարը :

Հետեւեալ օրը Մագթաղինէն՝ որ մինչեւ
երեկոյ կարծես թէ իւր մօր ցաւը լինէր ստա-
ցած և նորա պէս մտախոհութեան մէջ լինէր
ընկղմուած , յանկաքն սթափելով վաղեց դէպի
պատուհանը . թեռնարը այն աեղէր . թնազդե-
ցական շարժումով օրիորդը դարձաւ դէպի
մայրը . նա ուզում էր իւր վիշտը պատմել եւ
նրանից օգնութիւն խնդրել . բայց այդ սառած
ստուերի տեսքը , որոյ մէջ սէրը դէպի դուստրը
անհետացած էր երեւում , կասեցուց օրիորդի
շրթունքի վերայ նորա թաղծալի հոգւոյ Ճիշը .
թեռնարը երթեւեկում էր փողոցի մէջ , առանց
ամենեւին հայեացք ուղղելու դէպի պատու-
հանը . կարծես թէ նա չ'էր համարձակում ,
բայց և այնպէս գուցէ գուշակում էր , թէ օ-
րիորդը վարագուրի քամակում դողդողուն ձե-
ռօք թեհեղը պատառում էր . Մագթաղինէն
դիտում էր թեռնարի ընթացքը այնպիսի ան-
յագ ուշադրութեամբ , մինչ զի շուտով նորա
աչքերը սկսեցին պղտորուել և այնուհետեւ
իրեւ ընդ մէջ քօղոյ կը տեսնէր զայն . Թալ-
կացած վեր ընկաւ նա ամոռոի վերայ . երե-
սը ամփոփեց ձեռների մէջ եւ ջանք գործեց
միտքը ժողովել . որ կարծես թէ խոյս տալու
վերայ էր . բայց արդեօք թեռնարին էր նա
տեսնում : Եթէ ստրջանիքն էր նրան առաջնոր-

գել դէպի այս վայրը , միթէ նա կարծում
էր . թէ բաւական էր այդ լուռ վկայութիւնը ,
կամ հերիք էր նրան յաւէժ թափառել այն
տան բոլորտիքը , որ լի էր նորա յանցանօք :
Միթէ նա չ'էր բաղխելու այն գուռը՝ որոյ
սեամբը յաճախոակի անցել էր սիրաֆսուելով :
Միթէ չ'էր գալու ծունր իջանել նորա առջեւ ,
զոր թշնամանել էր , կրկին նուիրել նորան
իւր կեանքը , խոստովանելով . թէ իւր ազնը-
ւութիւնը և պատիւը նորա ձեռաց գործն էր
և ասել , ինչպէս երբեմն՝ Պու իմ հոգին ես ո :
Տես թէ ինչ զօրութիւն ունի ցանկութիւնը
որ՝ Մագթաղինէն նոյն վայրկենին յայտնապէս
լսեց դրան բաղխումք , բայց ովէլ մնէր , Բեռ-
նարը չ'էր , որովհետեւ օրիորդը կրկին մօտե-
ցաւ պատուհանին եւ տեսաւ որ Բեռնարը
հեռանում էր :

Տարակոյս չը կար այլ եւս , տիկին Լէկուրը
սպասում էր տանը . իւր որդուն , 'ի հեռուստ
հսկելով այն խորհուրդի յաջողութեան վերայ ,
որոյ հեղինակը անշուշտ ինքն էր . ինչո՞ւ պէտք
է Մագթաղինէն հաւատար , թէ Բեռնարը
եկել էր ինքնին , որովհետեւ , կրկին ասում
ենք , եթէ նրան ստիպել էր խղճմտանաց տագ-
նապը , նա չ'էր կարող ընդդիմանալ իւր բուռն
և թաղծագին բաղձանաց , նա կը մտնէր ներս ,
ուրեմն նա բոլորօվին համաձայն էր մօրը հետ :
Երկուքը միասին նոր նենգութիւն էին հնարել
օրիորդին խաբելու , բայց ինչպէս , ուր էր
որոգայթը , ինչ էր նրանց ծածկեալ խոր-

հուրդը , որոյ մասին Ապօթաղինէն աներկ-
բաց էր :

Աիւս օրը անմեկնելի բանդագուշանք տի-
րեցին Ապօթաղինէին , մինչ նոյն ժամուն , ինչ
պէս անցած երկու օրը , թեռնարը յայտնուե-
ցաւ նորա պատուհանների առջեւ : Օրիորդը
աննպատակ շրջում էր սենեկի մէջ եւ ժամա-
նակ առ ժամանակ կանգնում էր մօր առջեւ :
Հաղարապետի այրին քնից զարթելով , յանկարծ
բեւեռում էր իւր ախուր և զայրագին հայեց-
ուածը գտներ վերայ , զարհուրանօք փախչում
էր յետ կոյս : Երբէք օրիորդը այդպիսի յոզ-
չէր զգացել իւր հոգու մէջ , այժմ նորա շր-
թունքի վերայ պատրաստ էր ոչ թէ տրտունջ ,
այլ անէծք : Նա թողուց իւր առանձնութիւնը
և ակամոյ մօտեցաւ պատուհանին թեռնարին
տեսնելու : Անարդ սիրտ , ստուերացած սիրոյ
կատակ , ծաղրալի ուրսւական , սին կերպարանք՝
որուն նա սիրելի էր : Դառնագոյն ժպիտ փայ-
լեց այնուհետեւ նորա դիմաց վերայ : Ո՛չ , ո՛չ ,
մտածեց նա , ինչն կուգայ նա ինձնից թողու-
թիւն խնդրելու , մինչդեռ նորա քաջութիւնը
ամբարտաւանութիւն է : Օրիորդը նկատեց որ ,
թեռնարը թէեւ ամենեւին չ'էր նայում դէպի
իրանց տունը , բայց անտարակոյս էր որ , նո-
րան տեսնում էին , գուցէ և փափաքում էին .
նկատեց նմանապէս , թէ նորա իւրաքանչիւր
շարժումը և քայլը առանձինն մտադրութեամբ
հաշուած և ուղղած էին և որ առաւելն է , այդ
յանգուգն արշաւանքը գործելու համար նա .

նոր օրինակ կերպիւ զարդարուած էր։ Խղճուկ
 տղայ, մայրը նրան ասել էր՝ « Բեռնար, վա-
 յելուչ կազմէ քեզո, և նա երեխայի պէս հը-
 նազանդել էր, հանգիստ և ապահով իւր պատ-
 րաստած յաղթութեան մասին։ Նոյն միջոցին
 և տիկին Լեկուրը, նկարելով իւր ճարպիկ ե-
 րեւակայութեան մէջ օրիորդի ապաշաւանքը,
 որ իւր որդու միայն տեսքը աղդելու էին նո-
 րան, իւրովիս ասում էր՝ « Մենք կը յաղթենք
 նրան, այսօր նա մեզ անձնատուր կը լինի եւ
 ինքը մեզ կը կանչէու ի՞նչ խեղկատակութիւն է,
 բայց Մագթազինէն որքան և ծաղրական հա-
 մարէր այդ միտքը, այնու ամենայնիւ գեռ եւս
 հարցնում էր իրան, թէ մի գուցէ ճշմարիտ էր
 այդ, մի գուցէ սա մի պատիժ էր այն ըզ-
 գացման՝ որ երբեմն միաւորել էր նրան Բեռ-
 նարի հետ, մի պատիժ այն շուտափոյթ և մը-
 տադիւր սիրոյն, այն երեխայական մոլեգնու-
 թեան, օրոնք յափշտակել էին զինքը Բեռնարին
 առաջին անգամ տեսնելու ատեն, մի պատիժ
 այն անխոհեմութեան՝ որ ծնել էր նրանց մա-
 տաղահաս համակրութենէն, այլ ոչ հոգեկան
 ցանկութենէն։ Կորստարեր և ատելի սէր՝ որ
 մեռուցել էր Մագթազինէի սիրտը, բայց եւ
 այնպէս, եթէ այդ սիրտը մեռած էր, ինչ էր
 նշանակում օրիորդի բարկութիւնը, նորա
 անձկալի ակնկալութիւնը, մինչ մի ակնարկ
 արձակեց գէպի այն ձեռը՝ որ նոր ձեռնոցով
 զարդարած էր իրեւ մի պարահանդէսի հա-
 մար, ինչու միտք բերեց նա, թէ այդ ձեռը

երբեմն սեղմել էր իւր ձեռի մէջ կամ բնշոն
կամաց կրկնում էր մի և նոյն խօսքը . թէ նա
չեղաղ մեր դուռը բազմալու



թ .

Երբոր օրիորդ Մագթաղինէն կը մտնէր
սպիտակ տնակը , Ժիւլիէթը սովորաբար վա-
զում էր նորա առաջ , ողջագուրում էր եւ
այնուհետեւ սկսում էին զուարճալի ձայ-
նարկութիւնք , ծափահարութիւնք , շաղ-
փաղփանք , քըքջանք , որպէս թէ թռչունք
լինէին ճռւողում . Բայց այս անգամ , մինչ
Մագթաղինէն ներս մտաւ , Ժիւլիէթը մնաց
իւր աթոռի վերայ նստած , նորա արտե-
ւանունքը փոքր ինչ ուռած էին եւ ակունքը
փայլուն արտասուօք . Բարերարուհին մօտե-
ցաւ նրան , Ժիւլիէթը կարմրեցաւ ինչպէս
կեռաս : Այդ խռովութիւնը այնքան տարբեր
էր նորա սովորական զուարթութենէն , որ
Մագթաղինէն անհամբեր հարցուց պատճա-
ռը . Ժիւլիէթը սկսեց լալ , օրիորդը ստիպում
էր որ պատասխանէ եւ ահա փոքրիկ աղջիկը
հեկեկանօք սկսեց պատմել , թէ այն օրը , որ նո-
րա եղբայրը ժավոյնի գրասենեակում մի տուփ
էր յանձնել օրիորդին , որոյ մէջ իբրեւ թէ մի

ընծայ էր ուղարկում քրոջ համար , երեկոյին
ինքը դարձել էր տուն դժգոյն եւ բոլորավին
շփոթուած : “ Նորա առաջին հարցումը , ասաց
ծիւլիէթը , այն եղաւ , թէ բացել էիք արդեօք
դուք այն տուփը . եւ մինչ ես բացասական
պատասխան տուի , նա գնաց ընկաւ աթոռի
վերայ խորին հառաջանք արձակելով . Բայց ես
ինքս բացել էի այն տուփը եւ նորա մէջ
գրած նամակը՝ որ նոյն միջոցին ձեռքս էր .
Լուին այն ինչ նկատեց այդ , խկոյն խլեց ինձ
նից , մտաւ իւր սենեակը և առաւօտուն միայն
դուրս ելաւ . Բոլորովին մոլորուած , նա կար-
ծում էր , թէ նամակը պատռել էր . բայց նա
մռացել էր և ես տեսնելով որ կնիքը քակած
էր , կարդացի նորա գրուածքը ո : Վերջին խօս-
քերը արտարերելու ժամանակ ծիւլիէթը ըս-
կըսեց առաւել եւս լալ եւ ազաղակել դէպի
սիրանուէր բարեկամուհին , թէ նա միայն կա-
րէր խափանել վերահաս սաստիկ աղէտը եւ
յետոյ կամացուկ նրան ասաց , որ ինչ Մագթա-
զինէն քաջ իսկ գուշակում էր . թէ նամակը
ուղղած էր դէպի օրիորդ Մարսելէթը .

Մագթազինէն խորին տրտմութեամբ լսում
էր առանց ամենափոքր բարկութեան . Նորա
կարողութիւնը հատաւ այդ վերջին ցնորքի շը-
նորհիւ , որ անցնում էր ծաղրելով նորան , ինչ
պէս այն վատ ընտելացուցած թռչունքը՝ որոնք
կրծում են իւրեանց վանդակի ձողերը և թը-
ռելով փախչում են , ծաղրալից ճիչ արձա-
կելով . Ուրեմն՝ կանխազգացութիւնը խարել

չ'եր Մագթաղինէին, զգուշացնելով նրան այդ
երիտասարդի գեմ, ահա նորա կատարումը,
ահա մի գիմակ եւս վերցուցած և նոր անդունդ
բացուած։ Օրիորդը ակամաց և խանդաղատանօք
շրջահայեցաւ այդ սենեակի մէջ, միտք բերե-
լով, թէ հարստանալու օրից մինչ այժմ, միայն
այդ տունը համարել էր իւր պատսպարանը,
որոյ որմաննքը անդամ պէտք էր ձայն խնդրէին
նորան օրհնաբանելու համար եւ որոյ միջից
Լուգովիկ Մարժօլիէի անարդ անմտութիւնը
յաւիտեան հաղածում էր զինքը։

« Ժիւլիէթ, ասաց օրիորդը, այժմ գու
պէտք է գաս ինձ տեսնելու — Այդ բնչէ
գոյեց ժիւլիէթը, գուք այլ եւս չ'էք գալ մեզ
մօտ, գաղարեցի՛ ձեզ սիրելի լինել, կամի՞ք
պատժել մեզ սոսկալի կերպիւ, լքուած թո-
զուլ մեզ և հրաժարուել, որովհետեւ լուին
հեռանում է մեզնից

— Հեռաննում է, հարցուց Մագթաղինէն .

— Ո՞չ, միջահատոեց աղջիկը, « Զը կարդացիք
ուրեմն նորա նամակը ո, և խսկոյն հանեց ծոցից
պահած նամակը և առաջարկեց օրիորդին .

— Հապա՛, մըմնջեց Մագթաղինէն, հարկը
սախում է կարդալ ո .

Լուի Մարժօլիէն իւր նամակի մէջ ասում
էր, թէ երկար ժամեր ինքն իւր հետ մաքա-
ռել էր որ չը գրէ այդ տողերը և նոյն պատե-
րազմը երկար ժամանակ մղել էր մինչեւ զայն
գրելու որոշում տալը . Մահագոյժ երկիւղ էր
զգում եղել, թէ մի գուցէ թշնամանք գործէ

նրան, բայց չը կարելով ընդդիմանալ իւր տե՛ս-
շանաց, յղում էր իւր երախտագիտութեան
այդ վերջին վկայութիւնը.

— Վերջին, ըստ որում արդէն պատրաստ էր
ըուել իւր հայրենիքից. Ի զուր պէտք է աշխա-
տէր, եթէ ուզէր նկարագրել օրիորդի գործած
աղդեցութիւնը նորա սրախ վերայ, և այդ պատ-
ճառաւ նորա բովանդակ անտարբերութիւնը
դէպի աշխարհի մնացորդ բաները. Նորա շըն-
չառութիւնը տեւում էր միայն եռանդի մէջ,
որ իւր կեանքը զոհէ օրիորդի որ և է հաճոյ-
քին, եթէ այդպիսի արժանաւորութեան ա-
մենաթեթեւ շնորհ ցուցանէր նմա, զի ահա
նա պատրաստ էր մեռնել նորա աչաց առջեւ,
իսկ նորա մօտ ապրելու քաջասրտութիւնը ան-
հնարին էր. Տեսնելով նրան այնքան գեղա-
նի, այնքան ողորմած, նա կ'ուզէր պաշտել
նրան, իրբեւ մի սրբուհու, բայց երկիւղը,
կամ լաւ եւս ասել՝ արհամարհանաց միայն
կասկածը զինքը կը սառեցնէին, որովհետեւ
քաջ գիտէր, թէ օրիորդի յարաբերութիւնքը
դէպի ինքը միայն նորա գործած բարերարու-
թիւնքն էին և թէ իւր նուաստութեան ըզ-
գացումը օրիորդի առջեւ այնքան անտանելի էր
արդէն, որ հրաժարումը համեմատաբար ա-
ռաւել ախործ էր երեւում, քան ներկայ չար-
չարանքը. Եթէ նա լինէր անկախաբար ա-
ղատ, անտարակոյս կ'ընտրէր ամենահեռա-
ւոր աքսորը, որպէս զի մի բովանդակ աշ-
խարհ անջատէր նորան այն էակից, որուն

բոլոր իւր կեանքի մէջ կ'ուզէք ՚ի ծունը իջած
սպասաւորել, բայց չքաւորութիւնը միայն մի
հնար էր թողում նրան, այն է՝ շղթայել իւր
կամքը, որպէս զի շղթայէ և իւր անմտութիւ-
նը. Այսպէս նա վճռել էր վերջապէս զինուոր
գրուիլ . . .

Ահա այսպէս էր գրուած ամբողջ նամակը,
որ թէ և յիրաւի յանդուդն էր, բայց անհեր-
քելի է որ անկեղծ էր: Եղկելի լուին սկաշ-
տում էր օրիորդին. իբրեւ մի սրբուհու, այլ
ոչ թէ սիրում էր նրան իբրեւ մի կնոջ. նա
իւր յանդգնութիւնը այնքան չը հասցց որ՝
խոստովանէր զայդ և սոսկալի սէր բառը՝ որ
թութուում էր Մարմօլէի շուրջը, չը համարձա-
կեցաւ թղթի վերայ մոնել նորա գրչի տակ:
Անտարակոյս այդ՝ սիրոյ առաջին նամակն էր,
որ պատանին գրել էր, ուրեմն՝ մի երեխայա-
կան թոթովանք, սակայն լուին մօտ քանա-
մեայ էր. Թէ եւ դժբաղդութեամբ ապրած էր,
բայց պահպանած էր իւր հասակի թարմու-
թիւնը և իւր սիրտը թշուառութեան սառց-
ցին տակ երկար ժամանակ չ'էր բողբոջել,
այսպէս ուրեմն հաւանական է որ՝ չքաւորք
ընդ միշտ անշափահաս են: Բայց այն ինչ
իւրանարի տմարդի վարքը Մագթաղինէի միտ-
քը եկաւ եւ նորից զկնեցուց նորա հին վէր-
քերը. ով, թէ նրափիսի նշանակութիւն պէտք
է ունենար նորա համար այս մատաղ և ճրշ-
մարիտ սէրը՝ որոյ արձագանքը լսվում էին
աղիողորմ տողերից: Օրիորդը մնաց լուռ, նա

ուղում էր կրկին կարդալ նամակը՝ որ իրա սրտի մէջ անուշահոտութիւն էր բուրել. Լուին նամակի վերջին տօղերով ազայում էր թողութիւն շնորհել իրան. Ո՞չ, եթէ թողութիւնը համաշափի լինէր գործած անարդանաց, անշուշտ նրան համելի կը լինէր ստանալ. Մագթաղինէն փոքր ինչ խորհրդածելուց յետոյ, վճռեց իւր դիտաւորութիւնը. Նա սրբեց Ժիւլիէթի արտասուքը եւ խոստացաւ դարձնել նորա եղբօրը զինուորութեան խորհրդից :

Առանց ուրիշ բացատրութեան օրիորդը դուրս եկաւ եւ ուղղեցաւ գէպի իւր բնակարանը ծառուղւոյ ճանապարհով. որ տեղից անցնելու էր եւ լուի. Մարժօլիէն Փարիզէն վերադառնալուս Գիշերը մօտ էր և եղանակը ցուրտ, այնու ամենայնիւ Մագթաղինէն յառաջ էր գնում անվեհեր և անփոյթ ամենեւին որ երկինքը թխպում էր և իւր ոտքերը զգում էին եղեման սառնութիւնը. Նա զբաղուած էր այժմ այն խոստումով որ յանձնառու էր եղել կատարել. Նա կամէր արդեամբ քոյր և սփռ փիչ լինել յուսակտուր երեխային և նորա մոլորեալ եղբօր խորհուրդը խափանել. Հեռուից նա նկատեց Մարժօլիէին ծառերի տակում, իսկ սա դեռ եւս տարակուսելով թէ օրիորդին էր արդեօք տեմում. փոքր ինչ կանգ առաւ և ապա հաւաստեաւ ճանաշելով, շոտապեցուց ընթացքը. Մագթաղինէն՝ որ ձեռնում ունէր նորա նամակը, մարդասիրութեամբ ցուցուց նրան այդ թերթիկը. եթէ շանթ և կայծակ

թափուէին պատանու առջեւ , կարող չէին
առաւել նրան զարհութեցնել . Օրիորդը ձեռը
տուաւ նրան , Լուին դողդողումէր :

Այս շփոթութիւնը՝ որ պէտք է կանխա-
տեսած լինէր օրիորդը , ոչ սակաւ նեղեց զին-
քը , բայց այն ինչ պատանին իւր սեւ և մեծ
մեծ աչքերի նայեացքը ուղղեց դէպի նա ,
Մագթաղինէն առանց ամենեւին վիրաւորուե-
լու , նկատեց որ՝ այդ աչքերը երկըտութեան
և տրտմութեան մէջ անգամ առաւել միամբ-
տութիւն էին յայտնում . քան նոյն իսկ ծիւ-
լիէթի աչքերը . Պատանին այնքան ստոյգ իմա-
նումէր իւր յանցաւորութիւնը , մինչ զի ա-
կրնկոր կեցած՝ չ'էր կարող արտաքերել և ոչ
մի խօսք . Մագթաղինէն երկապատիկ առաւել
տարակուսեցաւ , բայց եւ այնպէս պէտք էր
ինդիրը լուծել , որովհետեւ անդէպ էր առա-
ւել երկար թողուլ իւր ձեռը նորա ձեռի մէջ
եւ հակուած մնալ դէպի մատաղ սիրտը որ ,
ինչպէս մի շուշան ծաղիկ պղտոր ջրի մէջ , ծը-
փումէր անձկութեամբ . «Պ . Լուդովիկ , ա-
սաց նա այլայլեալ ձայնիւ , մենք այսուհետեւ
կարող չ'ենք տեսակցիլ ո .

Մարժօփէն , առանց որ և է պատասխան
տալու , այնպիսի յուսահատական շարժում մի
արաւ , մինչ զի օրիորդի աչքերը արտասուօք
լուսեցան :

«Մնացէք Փարիզում , ասաց Մագթաղինէն
զգալի ձեւով , բայց ես ձեզ արգելում եմ զի-
նուոր լինել ո .

Իսկոյն այս խօսքից յետոյ հեռացաւ նա
արագ ընթացիւք, երդուած յետ կոյս չիղառ-
նալ բնաւին :

Իրանց բնակարանը մոտած, Մագթաղիւ-
նէն տեսաւ իւր մօրը նոյն տեղում նստած,
ուր էր առաւտուն : Հազարապետի այրին,
հիւսուածքից կարուած թելի ծայրը ձեռնում,
այնպէս անշարժ և անզգայ էր որ՝ կարելի էր
կարծել, թէ քարացած կամ քանդակործած
էր : « Աւաղ, մսածեց Մագթաղինէն, ահա
Բնէ էր սպասում ինձ այս տեղ, ահա այսպէս է
երեկոյանում մի պատուական օր ո : Բայց այդ
Բնէ սբանչելիք, քարանման կերպարանքը շըն-
շաւորւում է, սառած շրթունքից դուրս է ել-
նում ծաղրական ծիծաղի շառաչ :

« Մագթաղինէ՛, ասաց տիկին Մարսելէթը,
մի նամակ կայ քո անուամք, կարծում եմ, թէ
թեռնար Լէկուրիցն է :

Մի նամակ, կրկին մի նամակ և թեռնարից:
Մագթաղինէն ուզում էր պատառել այդ թեր-
թը առանց կարդալու . որովհետեւ նա յիշում
էր Լուի Մարժօլիէի նամակը և կարծում էր,
թէ թեռնարինը ամօթ էր կրելու նորա առջեւ :

« Զ'ես ուզում կարդալ, գուշակում ես
նորա բովանդակութիւնը այնպէս, որպէս եւ
ես իսկ ո :

Մագթաղինէն նայեցաւ դէպի մայրը,
բայց նկատելով նորա սառն և անողոք դէմքը.
Թալկացաւ եւ աչքերը գարձուց նրանից,
յետոյ գնաց վեր կալաւ նամակը եւ քակեց

նորա կնիքը . Ահա ինչ եր գրած :

“ Այդ ինչ է , Մագթաղինէ , երկու ամբողջ ամիս ոչ որ և է զիղջ , ոչ որ և է յցու սրտի եւ ոչ մի խօսք՝ որ մեզ իրաւունք տար հաւատալու , թէ դու մեզ ատում չ'ես , ինչպէս իմ մայրը կարծում է : Նա լալով միշտ կրկնում է ինձ , թէ քո կանխազգաց կարծիքը նորա դէմ այն ժամանակից է , երբ դեռ եւս բոլորովին երեխայ , դու զինքը տեսար առաջին անգամ : Դու չը գիտես , թէ որպիսի չարիք գործեցիր ինձ , բռնաբարելով իմ սիրու բաժանուել դէպի երկու համազօր սէր : Եթէ իմ մայրը չը լինէր այնչափ բարեսիրտ , որչափ է , ես յանձնառու կը լինէի թշնամանք գործել նրան , ցուցանելով , թէ միայն դու ես իմ մըտածութեան նպատակը եւ լսել նրանից , թէ ապերախտ եմ , մինչ ասէի , թէ մինչեւ ՚ի մահ սիրելու եմ քեզ : Ո՞ւր է թէ իմ յիշողութիւնը լինէր այնչափ թոյլ կամ այնչափ անողոք , որչափ քոյդ է : Ես մեղաւոր չ'եմ որ՝ կարում չեմ հեռանալ , թէ քո մատաղ հասակում եր զել եմ քո ընկեր , քո եղբայր և քո տարփածու : Քանիցս մայրս ինձ զգուշացուց , թէ քո միտքը փոխուեց այն օրը , երբ քո նիւթական վիճակը փոխուեցաւ դէպի յաջողութիւն . այժմ ինձ քաջ յայտնի է որ՝ այդ կարծիքը իրաւացի է , բայց ես չ'եմ համարձակում կնքել այդ փոփոխութեան դատավճիռը , որովհետեւ՝ որպէս միտքս բաւական ազատ չէ , նոյնպէս և իմ ամբողջ էութիւնը այնչափ լցուն է քեզմով որ՝

անհնար է ինձ լինել արդար դատաւոր։ Մի օր՝
մի ժամ անցնում չ'է որ՝ յետախոյզ չը լինիմ,
թէ ինչ է արդեօք մեր մէջ ծագած այլակերպ
կարծեաց պատճառը և չ'եմ կարող իմանալ։
Այս մի փոխօրիկ է կապուտակ երկնակամարի
տակ, դու տեսնում ես, բայց ինչո՞ւց է որ
այդքան երկար է տեւում։ Ասում են, թէ քո
նորեկ հարստութիւնը որ ես ատելով ատում
եմ, դու գործ ես ածում օտարոտի կերպիւ և
թէ նորա եկամուտը սփռում ես ազքատաց։
Ի հարկէ սորա համար մի պատճառ պէտք է
ունենաս (ոչ ապաքէն նրան յայտնի էր այդ
պատճառը)։ Աւաղ, այդ իմ բանը չ'է այսու-
հետեւ, բայց ես չը կարեմ զգուշանալ մտածե-
լուց և ինչո՞ւ պէտք է չ'ասեմքեզ, Մադթա-
ղինէ, թէ այդ ազնիւ գործի մէջ, որ դու
առանձինն ես կատարում, քանի գեղեցիկ կը
լինէր, եթէ երկուքս միասին աշխատէինք։

“Բայց քեզ անտանելի է իմ մայրը, այն ինչ
նա արժանաւորագոյն է քան զքեզ։ ըստ ո-
րում նորա սիրտը կարօտ է բացուելու, իսկ քո
սիրտը պարսպուած է։ Երդնում եմ քեզ, թէ
նորա միակ ցանկութիւնը այն է որ՝ քո անար-
դարութեան յաղթէ։ Մի անգամ դէպք եղաւ
մեզ երկուքիս խօսակցել ձեր բարեգործու-
թեան մասին։ “Ես կարծում եմ, գոչեց նա
յանկարն, թէ մեր սիրելի ապերախտը ընտիր
որոշումն է արել, եթէ յիրաւի նորա ստացած
ժառանգութիւնը պիղծ է և անարդ, կտակա-
ւանդը ամենամեծ յանցաւոր է եղել, օրիորդին

իւրաքանչիւր ողորմութիւնը աղօթք է նորա
խղճակի հոգւոյ համար ո : Յիշէ՛ որ իմ մայրը
շափազանց բարեպաշտ է : Ահա այսպէս ենք
անցուցանում մեր երեկոյեան ժամերը , որոնք
այսուհետեւ տիսուր եւ թափուր են , — Անք
խօսում ենք քեզ վերայ , իմ սիրասնն հոգի :
Ո՞հ , միթէ չը տեսար դու ինձ՝ որ քո պատու-
հանի առջեւ երթեւեկումէի , մի ակնարկ մաղ-
թելով նրանից՝ որ պէտք էր իմը լինէր հոգւով
և մարմնով մինչեւ ՚ի մահ : Ինձ թուի թէ ամե-
նայն ինչ՝ որ քեզ շրջապատումէ , պէտք է մեր
բացակայութիւնը յիշեցնէ քեզ : Արեգակը՝ որ
քեզ այցելումէ քո սենեակի մէջ , ուր դու
գժկամակումես մեր դէմ ինչպէս մի չար եւ
ամբարտաւան երեխայ , միթէ նոյն արեգակը
չէ , որ անցած տարի լուսաւորումէր մեր սի-
րատենչ զրօսանքը անտառի մէջ : Յիշէ՛ , իմ ան-
դին կեանք : Ես սպասում եմ քո մի քաղցր
խօսքին , որպէս զի արշաւակի գամ առ քեզ :
Ո՞չ , ոչ , ես ամենեւին հաւատալու չ'եմ իմ
մօրը , թէ քո սիրուր փոխուած է ո :

Ո՞վ էր գրել այդ նամակը , թեռնարը , թէ
նորա մայրը : Անտարակոյս վերջինը , որովհետեւ
նորա անունն է յիշում իւրաքանչիւր տողի
մէջ : Ի՞նչ հանձար , ի՞նչ ձարտարութիւն ,
ի՞նչ ամբարտաւան դանդատանք , ի՞նչ մարդա-
սէր դառնութիւն : Այդ գրուածքը կարդալուս՝
Մագթաղինէն զգում էր իբր թէ մի սրուակ
ուներ ձեռքում , լի պարզ ըմպելեօք՝ որոյ յատ-
կութիւնը թէեւ չը գիտէր , բայց անկասկած

էր նորա մահագեղ լինելու մասին։ Օրիորդը
 քաջ ճանաչում էր նրան՝ որ այդ գեղեցիկ
 խօսուածքը յօրինել էր։ Կրկին կարդաց նա
 ամբողջ նամակը և ամեն մի բառի առջեւ ճրմ
 լեցաւ նորա սիրտը։ Ի՞նչպէս լաւ, թէեւ ակա-
 մայ, նկարագրուած էր թեռնարը այդ խիթալի-
 ծալուածքի մէջ, նորա մէջ էր դրած իւր ամ-
 բողջութեամբ։ Բնչպէս ակներեւ էին նորա
 ստայօդ ուղղամտութիւնը, նենգաւոր խանդա-
 ղատանքը, հոգւոյ սուտ եռանդը, որ սովորա-
 կան էր նորան և որով կարող էր ծածկել իւր
 փառասիրութիւնը և ոչընչութիւնը, մեղկու-
 թիւնը և ամբարտաւանութիւնը։ Աւաղելի՛ և
 կըյր անձնաւորութիւն՝ որ և այսպէս բոլորո-
 վին հլու էր իւր մօր կամաց։ Եղկելի՛ կուռք՝
 որ լցուն էր քրմուհու կորստաբեր խելքով եւ
 խօսում էր նրանով և նորա համար և որ չ'էր
 տեսնում այն հնարների վտանգը, որոնց յա-
 ջողութիւնը միասին աշխատում էին ձեռք բե-
 րել։ Այդ բազմատող նամակի մէջ, որ տաս-
 նապատիկ երկայնագոյն էր քան զոր կարէին թելադրել որ և է զղջումը և աղաշաւը, ու-
 րիշ քան չ'էին ունեցել գրելու, այլ միայն ճար-
 տարահիւս կշտամբանք դէպի Մագթաղինէն և
 զգուշութեան հոգս իրենց մասին։ Թեռնարը
 անարգ համբերութեամբ գրել էր երեսուն
 տող, մինչդեռ բաւական էր միայն մի տողը,
 մի խօսքը, մի թեթեւ սրտառուչ խօստավա-
 նութիւնը, այն քաղցր բարբառը՝ որ ինքը պա-
 հանջում էր իւր տարփածուից։ Ահա այս էր,

որ տիկին Լէկուրը, որբան և քաղաքագետ լինէր, չ'էր հասկացել, ըստ որում չ'էր զգացել, բայց միթէ և բեռնարը չ'էր հասկացել, նաև որ գոնէ երբեմն սիրումէ եղել.

Առաւօտուն Մագմաղինէն յանկարծ մտաւ իւր մօր սենեակը և ծունը իջած նորա անկող նակալի մօտ, « Մայրիկ, ասաց, մինչեւ Երբ պէտք է զլանաս ինձ քո վշտակցութիւնը, մինչեւ Երբ թողնես ինձ մենակ։ Դու շատ լաւ գուշակելէիր այդ նամակի բովանդակութիւնը, ուրեմն՝ ասա ինձ, Բնչ անեմ, եթէ բեռնարը նորէն գայ մեզ մօտ ո։

Հաղարապետի այրին մի քանի վայրկեան մնաց լուռ, նա ձեռը մեկնելէր գէպի դուստրը և մեքենայօրէր մասներով խաղում էր նորա վայելու գեղնագոյն վարսերի հետ, որ մի փոքր յառաջ այնչափ սիրում էր։ Մագմաղինէն արդէն գոզգոզում էր յուսոյ ազգեցութենէն։

« Շատ բարի, Մագմաղինէ, ասաց մայրը վերջապէս, դու պէտք է այսուհետեւ սովորես մենակ լինել եւ գործել այնպէս, ինչպէս կը գործէիր, եթէ ես չըլինէի։ որովհետեւ ես անցյու եմ այս աշխարհում երկար մնալուց

— Մայրիկ, աղաղակեց Մագմաղինէն։

— Ո՞հ, քաջ գիտեմ, որ դու չ'ես հաւատում, կը կնեց մայրը. դու կարես լինել տէր և վարիչ քո հարստութեան, բայց աչ իմ կենաց, ուստի պէտք է թոյլ տաս ինձ մեռանիլո։

Օրը անցաւ այնպէս, ինչպէս անցել էին նախընթաց գիշերը և առաւօտը, ժամերը հետ-

զիետէ գլորուեցան յաւիտենականութեան մէջ եւ ահա յաջորդեց երեկոյն . մի փոքր եւս եւ ահա գիշերը . իններորդ ժամը զարկեց և ժամցուցի իւրաքանչիւր զարկի հետ Մագթաղինէն զգում էր իւր սրտի մէջ արեան վտակի ծփանքը և խաղացքը . Օրհնեալ է Աստուած , գոչեց նա , երանի թէ այսօր չը գայ :

Դուռը բաղխեցին . Մագթաղինէն յակամայս գնաց բանալու և ահագին ձիչ արձակեց , մինչ տեսաւ որ՝ այցելուն տիկին Լէկուրն էր :

Ի սկզբան փոխադարձաբար նայեցան սոքա . Մագթաղինէն ակամայ կասեցաւ , տիկինը մնաց անշարժ , յետոյ ձեռը մեկնեց , բայց օրիորդը հրաժարեցաւ . Մէկը և միւսը միօրինակ ըզգում էին իւրեանց վիրաւորուած սրտի ցաւը , ուստի և միակամ ատելութեամբ մնացին միմեանց առջեւ ակնկոր և անշըռնչ : Մագթաղինէն կանխեց իւր պաղարիւնութիւնը վերըստին գտնել և նշանացի հրաւիրեց տիկին Լէկուրին իւր հետեւից գնալ առանց մի բառ արտասանելու :

Այդ կարճ ընթացքի ժամանակ որքան շըփոթուած էր օրիորդը . որպիսի հպարտութեան եւ արդար վրէժինդրութեան զգացմամբ էր ոգեւորուած : Նա իշխում էր այդ կնոջ վերայ , իւր բախտի անողոք թշնամու վերայ , ըստ որում ստիպել էր նրան գալ իբրեւ աղաչաւոր այդ տան գուռը . ստիպել էր թեռնարի նենակաւոր ուսուցչուհին իւր հետքից գնալ , մինչ նա յոյս ունէր սիգաճեմ անցանել այդ յարկի

տակ : Թէեւ օրիորդը ինքը յուզուած էր եւ դժգոյն ինչպէս և տիկին լէկուրը , այնու ամենայնիւ այդ յաղթութիւնը զմայլեցնում էր զինքը . բայց մինչ մտան տիկին Մարտելէթի սենեակը , Մագթաղինէն տարակուսանօք մըտածեց , թէ ինչպէս էր արդեօք վարուելու նորա մայրը այդ զարմանալի կնոջ հետ . որովհետեւ իւր խօսակցութիւնը եղել էր թեռնարի վերայ և այն ինչ տիկին լէկուրը մի քայլ յառաջ գնաց դէպի հազարապետի այրին , օրիորդը կասեցուց նրան : Այս միջոցում տիկին Մարտելէթը երեսը դարձուց Ո՞հ , Մագթաղինէն վախցաւ ոչ թէ իւր մօր կանխազգաց խստութենէն դէպի այդ ատելի կինը , այլ նորա վայրկենական անմոռութենէն և մանաւանդ նորա անզգայութենէն և տիկին լէկուրը խսկոյն գուշակեց այդ պարագան : Խորամանկ կինը զննեց այդ սենեակը , նորա մէջ տիրած գերեզմանական լուսթիւնը , նորա մի անկիւնում նստած յաղթամարմին և անշարժ էակին և յանկարծ լուսոյ նշոյլ ծագեցաւ նորա մօքի մէջ և նա իմացաւ ինչ որ անցել էր այդ տանը երկու ամսուայ միջոցին : « Մագթաղինէ , ասաց նա , ես տեսնում եմ որ ձեր մայրը այլ եւս չ'է սիրում ձեզ » :

Այդ էր առաջին խօսքը՝ որ նա համարձակեցաւ տսել , բայց թէեւ մեղմ ձայնիւ , այնու ամենայնիւ մրմունջի հնչումը՝ որ յայտնի թեռնարինը չ'էր , ապշեցուց տիկին Մարտելէթին : Եւ յիրաւի նա սպասում էր թեռնարին , խսկ

երբ աչքերը բացաւ եւ ճանաչեց տիկին Լէ-
կուրին, զսրթեցան նորա հոգու մէջ թմրած
զգացողութիւնքը. կանգնեցաւ նա ուղղորդ և
անվիշտ, իրեն արդարութեան ստուեր, յե-
տոյ ընդ մէջ անցաւ սենեակը, առանց անդամ
մի շուրջ նայելու և դուրս եկաւ.

“Ահա, տիկին, մի ապացոյց ձեզ, որ նա
դեռ եւս ինձ սիրում է. որովհետեւ նորա
նախկին մտածութիւնը եղաւ հեռանալ ձեզ-
նից ո.”

Տիկին Լէկուրը ընկաւ նոյն թիկնաթոռի
վերայ, որ հազարապետի այրին թողել էր եւ
երեսը ծածկեց. “Արդեօք նամ է այդ խօսողը,
մրմթեց տիկինը, մեր Մագթաղինէն է, ո՛հ,
ապերախտ ո.”

—Եւ ես նոյնպէս, ասաց Մագթաղինէն սըրտ-
մըտութեամբ, կարէի հարցանել՝ նամ է արդեօք,
որ ինձ կոչում է ապերախտ. բայց հաւատացէք
ինձ, տիկին, ժամ է արդէն այդ տիսուր խեղ-
կատակութիւնը վերջացնել, ժամ է արդէն ան-
կեղծ լինել. որովհետեւ ամենայն որոգայթք
այսուհետեւ ընդունայն են, ամենայն բանսար-
կութիւնք տղայական են. Ո՞վ է բերել ձեզ
այս տեղ, կը փորձէի հարցանել ձեզ, եթէ
չը գիտնայի, թէ ձեր անհամբերութիւնն է
ստիպել գալ անձնովի քննել ձեր ձեռաց գործը.
Ո՞հ, դուք յարուցել էք անողորմ պատերազմ
մի աղջկայ գէմ, որուն համարում էք անպաշտ-
ուան, որովհետեւ իրաւամբ նա պաշտպանուած
էր միայն, չ'եմ վախում ասել, իւր սրտի կա-

բողութենէն և անմեղութենէն . դուցէ՛ դուք
եկել էք այն դիտաւորութեամբ , որպէս զի
անձամբ համողուիք , թէ ես պատրաստ եմ
անձնատուր լինել ձեզ , կամ թէ խօնջած եմ
վերջապէս :

— Մագթաղինէ՛ , պատասխանեց տիկին Լէ-
կուրը , ինձ այսօր բերել են միայն բեռնարի
աղաչանքը :

— Անօգուտ է այժմ , ասաց Մագթաղինէն
սառնութեամբ . Զեր որդին արդարեւ առա-
ւել շահ չ'ունի ինձ սիրելուց , որչափ ունէր
յառաջ քան հարուստ լինելու եւ մինչ դուք
ճգնութեամբ եւ անհամբերութեամբ աշխա-
տում էիք , որ նա զիս սիրէ . հարստութիւնը
այժմ իմը չ'է , ես զիս զրկել եմ նրանից :

— Մագթաղինէ՛ , Մագթաղինէ՛ , ասաց տիկին
Լէկուրը՝ բռնելով նրա երկու ձեռքերը , ահա
մի ստութիւն՝ որ բաւական թշնամական է
մեզ համար :

— Չ'եմ ստում , գոչեց Մագթաղինէն : Եթէ
մինչ այժմ չ'եմ գործել այդ , երդվում եմ ձեզ
որ վաղիւ կը գործեմ :

— Գործեցէք ուրեմն , պատասխանեց տիկին
Լէկուրը կատարեալ պաղարեամբ : Ի՞նչ փոյժ
է մեզ , եթէ ասեն՝ թէ այդ սպառնալիք է և
թէ մենք քեզ արդելում եմք :

Մագթաղինէն մնաց լուռ . նորա կարողու-
թիւնը նուազում էր , նորա ատելութեան բոր-
քորը մօտ էր շիֆանելու . այն ձեռները՝ որոնք
իւրը բռնած ունէին և որոնց շօշափումը եր-

բեմն անտանելի էր նրան , ըստ որում հրա-
տենդ էին , այժմ նա զգում էր սառուցեալ .
սառութիւնը անցնում էր օրիորդի երակների
մէջ և բարձրանալով գրաւում էր նորա սիրտը ,
մինչդեռ տիկին Լէկուրի փայլուն նայեացքը
ակամայ կախարդում էին զինքը :

Ա երջապէս նա զգաց իւր տկարութիւնը ,
հակառակորդի յառաջիկայ յաղթութիւնը , հե-
տեւաբար և իւր ամօթը . յանկարծ ինքզինքը
ազատեց նորա ձեռքից :

“Փոյթ չ'է ձեզ , ասաց նա . փոյթ չ'է ձեզ ,
թէ հարուստ էի լինելու , թէ խեղճ . Այդ
չ'է ձեր խօսքը . կրկնեցէք , կ'աղայեմ , մի ան-
գամեւս , որովհետեւ այդ պարագան վերա-
բերում է իմխղճի խաղաղութեան . Դուք ինձ
կը խղճահարէք , իբր թէ ձեզ դատել էի անի-
րակութեամբ : Ափսնս որ Բեռնարը այս տեղ
չ'է որ հաստատէ իմառջեւ այդ անկեղծ խօսք-
քերը . Ապահով էք որ նա կը համարձակէր
հաստատելո :

— Ա՞հ . գոչեց տիկին Լէկուրը , ես բոլորովին
ապահով եմ , որ նա գոնէ կ'ասէր ձեզ , թէ
նորա սիրտը երբէք չ'է դադարել ձեզ հետ
լինելէ և ոչ ապաքէն նա կարող էր ապահովել
զձեզ իւր պաշտպանութեան համար : Խեղճ
Բեռնար , որքան մաշեցի ես զինքը չարչարա-
նօք . Ամեն օր մի կողմից ձեզ տեսնելու ցան
կութիւնը , միւս կողմից ակնածութիւնը դէպի
իմ խորհուրդները՝ որոնք , խօստովանում եմ ,
պահում էին նրան հեռի այդ տանից , ստիպե-

լով բացորոշակի ընտրել կամ իւր մօրը և կամ
իւր սիրուհուն . . . բայց ճէ , ինչն պէտք է
պատմել ձեզ այդ , մինչ արդէն դուք նորան
չ'էք սիրում ո :

Այս խօսքի վերայ , Մագթաղինէն վեր
կացաւ տեղից սարսափելով :

“ Իսկ արդ՝ տիկին , ասաց նա , յայտնապէս
տեսնում եմ որ՝ խեղիատակութիւնը նորից
սկսուելու վերայ է . ինչն չ'էք մեղադրում
ինձ նաեւ , թէ ձեզ եւս չեմ սիրում արդէն ո :

— Այս , պատասխանեց տիկին Լէկուրը տըրտ-
մագին , դուք արդարեւ իրաւունք ունիք սխա-
կալութեան դէպի ինձ և ես , աւազ , ընդու-
նում եմ այդ ատելութիւնը , միայն թէ կարելի
լինէր ՚ի բաց տանել այդ թեռնարից՝ որ անմեղ
է . Գաջ գիտեմ որ դուք նրան սիրում էք ,
բայց դուք նորա մայրը չ'էք . Եթէ լինէիք նորա
մայրը , եթէ լինէիք յիսունամեայ եւ փորձիւ
ճանաչէիք , ինչպէս ինձ թուի թէ ճանաչում
եմ ես կեանքը , աշխարհը եւ մարդիկ , դուցէ
նոյնշափ խոհականութեամբ շարժէիք , որշափ
ես շարժեցայ . . . բայց թաղ ես խարուած
լինմ և ահա ասում եմ ձեզ , թէ իրաւամբ
պէտք է կրեմ դորա պատիմը . թեռնարը չ'էր .
այլ ես էի , որ երկար ժամանակ մտածում էի .
թէ հրաժարելով այն ժառանգութենէն՝ որ մի
պատահական հրաշալի դիպուածով ձեզ հասել
էր , ծաղըալի յիմարութիւն էիք գործած . բայց
ես փոխեցի իմ կարծիքը , մինչ տեղեկացայ
և վերահասու եղայ այդ գարշելի դէպին :

Միայն ես հաւատում չ'եի այդ բանին , միայն ես կարում չ'եի պահպանել ինձ փոքր ինչ կառ կան ունենալուց ձեր վերայ , որովհետեւ լիա պէս զգում էի , թէ ատելի էի ձեզ . Ես չըգիւտէի ձեր բնաւորութիւնը , չը գիտէի , թէ մի քսանամեայ մատղաշ օրիորդ կարէր ունենալ իւր կամաց և գործոց ազատութիւնը՝ և բարձ բաձայն պահանջել զայն . Ես եմ միակ շարա գործը եւ երդնում եմ ձեզ , թէ բեռնարը անմեղ է այդ բանի մէջ

— Հաւատում եմ , տիկին , միջահատեց Մագթաղինէն սոսկալի հեգնութեամբ , և գալով Բեռնարին . այլ եւս չ'եմ մեղադրեր զի՞նքը

— Բոլորովին , ասաց տիկին Լէկուրը . Զայդ պահանջում են արդարութիւնը և բանականութիւնը . Բոլոր այդ բանի մէջ բեռնարը ոչինչ գործել չ'է

— Բոլորովին , կրկնեց Մագթաղինէն անտարբերութեամբ .

— Տէր Աստուած , նորէն սկսեց տիկին Լէկուրը հառաջանօք , դուք այժմ ծաղրում էք զմեզ , Մագթաղինէ . Երեւի թէ այդ եւս իրաւացի է , ուրեմն՝ այս երեկոյ ինձ անկարելի է համոզել զձեզ և որ և է միսիթարական լուր հազորդել բեռնարին . տեսնում եմ որ՝ նա ինքը պէտք է գայ իւր դատը պաշտպանելու համար . այդ է ձեր կամքը .

— Միթէ , գոչեց Մագթաղինէն , և դուք այդ պաշտպանութիւնը նորա համար պատրաստել

և ապահովել էք այնպէս որ չըկորուսանէ իւր դատը . բայց ես ահա անկեղծօրէն ասում եմ ձեզ , թէ նա կանխաւ դատապարտուած է ո :

Օրիորդը իւր խօսքը չը վերջացուցած , տիկին Աէկուրը նորէն մօտեցաւ նորան . “ Մագթաղինէ , ասաց նա , կ'երդուընցնեմ ձեզ նորանով՝ որ յաւէտ քաղցր եւ սիրելի է ձեզ , խնայեցէք մեզ , եթէ այլ եւս չ'էք սիրում : Ա՛հ , երբոր ազնուամիտ մարդու վեհանձնութիւնը վիրաւորուած է , երկար ժամանակ կը հարկաւորի այդ վէրքը՝ բժշկելու համար : Միտառապեցնէք Բեռնարին , մինչ նա ՚ի ծունը կ'իջանէ ձեր առջեւ . ըստ որում այս է ձեր ուզածը , ամբարտաւան աղջիկ , մի ասէք , թէ նա կանխաւ դատապարտուած է , ըստ որում անարդար է այդ . Բեռնարը վաղիւ կուգայ , կամիք արդեօք .

— Թող դայ , գոչեց Մագթաղինէն , — Ես կ'ըսպասեմ նորան :



Ժ.

Բժիշկ Դեկլէնը առաւօտուց փիլիսոփայում էր չաղ կրակի առջեւ , բայց նորա փիլիսոփայութեան յատկութիւնը տիսուր չ'էր . ա Յիրաւի , ասաց նա իւրովի , ունելեօք զարնելով կրակի մի խարսչկը , բաւական չ'է հա-

ւատալ միայն Նախախնամութեան , ես հաւատում եմ նաեւ ճակատագրին , որոյ շըրջանի մէջ ամեն մարդ շարժումէ այս աշխարհում : Վայ նրան՝ որ ուզումէ դուրս ելնել այդ շըրջանէն . Գրուած էր , թէ Բեռնար Լէկուրը իւր բազմատեսակ յիմարութիւնների պատճառաւ , պաշտելի օրիորդ Մարսելէթի ընչաւէտ ձեռը կորուսանելուց յետոյ , կրկին հասնելու էր այդ նպատակին , բայց գրուած էր նոյնպէս , թէ այդ յաջողութիւնը տեւելու էր միայն մի օր ու :

Ովթէ , քսան և չորս ժամու միջոցում , բըմիշկ Դեկլէնը որքան շփոթ և աղմանկ սփոեց քաղաքի մէջ վաշխառու Մարսելէթի պատճութիւնով . Եթէ սորանից յետոյ եւս Լէկուրները կերպիւ իւիք չը հրաժարուէին այդ ամուսնութենէն , ամօթոյ տակ պէտք էր թողէին զիրենք . Բայց և այնպէս սոքա սերտ կերպիւ միաւորուած էին իւրեանց դերի մէջ , օրիօրդի սիրտը կրկին որսալու համար . Ուրեմն՝ առաւել պատեհ ժամ էր արդէն , պատուելով բարոյականութիւնը և արդարութիւնը , կարճել այդ բանը : Ահա ինչ է կեանքը՝ մի սրահ սուսերամրցութեան , ուր ամեն մարդ , սուրը ձեռին , սիրտը հրդեհուած , քրտինքը ճակատից վազելով , հաշում մաշումէ զինքը օդոյ մէջ սաստիկ հարուածներ գործելու համար : Խեղճ մողի՝ որ չ'է տեսնում . իւր գլխի վերայ թելով կախուած մի այլ սուր . այն ինչ այդ թելը կը կտրուէր , մնաք բարեան այնուհետեւ խոր-

հուրդներ և յայսեր Այսպէս ոչ տիկին է կուրը և ոչ թեռնարը , մինչ իւրեանց սուրերը ընդունայն խաղացնում էին , չը տեսան բժիշկ Դեկլէնի ձեռը , որ վերը լիշած միւս սուրն էր :

Եւ սակայն , բարեմիտ բժիշկը մինչ քըննում էր իւր արարքը , չ'էր կարող ազատ մընալ մի քանի տաղտուկ մոտածութիւններէ՝ որոնք ժամանակ առ ժամանակ պաշարում էին զինքը եւ որոնց գէմ . յիրաւի , մեծամութեամբ առում էր՝ “Սատանան տանի , այդ բնչէ , գուցէ խղճահարութիւն կարծեն ո : Եւ ինչու պէտք էր խղճը տանջէր բժշկին , ոչ ապաքն միշտ եւ հանապազ ատելով ատում էր նա տիկին Լէկուրին , թէեւ օա իւր բարեկամաց . կարգում թուէր նորան եւ սովորաբար ծաղրական եւ անսպարկեշտ աղմուկ յարուցանէր այդ բարեկամութեան մասին : Բժիշկը հրաշալի կերպիւ ճանաչում էր տիկին Լէկուրին և քանի քանի չարամտութեան փոթորիկներ նկատել էր նորա հոգու մէջ , իսկ կիսաստուած թեռնարը իւր ամբարտաւանութեամբ միայն ծաղու արժանի էր նորա կարծեօք : Հերիք է ուրեմն , ոչ որդին և ոչ մայրը կարեկցութեան արժանի չ'էին այնուհետեւ . ըստ որում հարստութեան ծովածուփ և դքւարամատոց ափունքը հասնելու համար մնում էր արդէն մի տախտակ փրկութեան , այն է Սէն-Սօրլէնի օրիորդը և նորա տարեկան հինգ հազար ֆրանք շահու օժիտը :

Բայրէկ Դեկէնը ուղում էր երթալ այցելու-
թիւն գործելիւր հիւանդ տիկին Մարսելէթին
եւ նորա դուստր Մագթաղինէին . բայց այդ
Մեփիսթոփիլեան բժիշկը յանկարծ միտքը փո-
խեց . կարծելով . թէ դեռ եւս վաղ էր .

Մագթաղինէն սպասում էր Բեռնարին և
երկրորդ միջօրէին միայն սկսեց մտածել . թէ
տիկին Լէկուրի այցելութիւնը մի գուցէ մի
կատակ էր , նաև ինչու Բեռնարը նորա հետ չէր
եկել . Այսպէս նա կարծեց թէ փոքր ՚ի շատէ
ճշմարտութիւնը նշմարում է եւ թէ անողոք
կնոջ ընթացքը անտարակոյս որ եւ է գրա-
ւադրութիւն էր : Ժաղիրհ ծաղը եւ անողո-
րը թշնամանք նորա սրտին . Այու , տիկին Լէ-
կուրը վճռած լինելով վերջապէս , թէ օրի-
որդի նուաճումը յաջողելու չ'էր և թէ պէտք
էր հրաժարուել հարստութենէն , եկել էր մի-
այն կոյր կատաղութենէ դրդուած . Զը կարե-
նալով բռնաբարել նորա խղճմուանքը , թիւրել
նորա կամքը , նա եկել էր անյագ վրէ ժխնդրու-
թեամք ստուգելու միայն , թէ արդեօք նորա
սիրտը յիրաւի այնքան հզօր էր . Նա գրաւա-
զիր էր եղել . թէ Բեռնարի անունը միայն յի-
շելով և երաշխաւոր լինելով . թէ ապերախտ
որդին ստրջացած էր իւր բարբի վերայ , ստի-
պելու էր օրիորդի ամբարտաւանութեամք պըճ
նած սիրտը թնդալ և դոզալ . Նա երդուել էր ,
թէ պիտի կարողանար բանալ այդ փոքրիկ ապս-
տամբի վէրբը և ահա արդէն բացած , նա անցել
գնացել էր ձեռները արիւնաշաղախ , իսկ սիրտը

ուրախ գարշելի փորձոյ յաջողութեան վերայ :
Երկու ամբողջ օր նա խնդում էր բեռնարի հետ
միասին , ըստ որում իրանց վրէժը առել էին :

Այսպիսի մոածութեան մէջ Մագթաղի-
նէն զգաց որ՝ իւր հօր , հինօրեայ զինուորի ա-
րիւնը զարթնում էր իւր երակների մէջ : Մայրը՝
որոյ առջեւից այս միջոցին անցնում էր նա
գէմքը չառագունած և աչքերը բորբոքուած ,
մայրը՝ որ սովորաբար կարծես թէ չ'էր տես-
նում դստերը , սկսեց օտարոտի կերպիւ քննել
նորան եւ հետեւից նայել :

Մագթաղինէն մոլեգնութեամբ բողոքեց
բարձրաձայն դէպի Երկինք և երկիր . նա տըր-
տընջում էր Աստուծուց՝ որ ստեղծել էր զին-
քը կին . անիծում էր անարդ եւ ագահ մարդ-
կանց՝ որոնցմէ և ոչ մէկը այնքան խիզճ չունե-
ցաւ , որ պաշտպանութեան ձեռն կարկառէ
իրան . Նա չ'էր կարող հալածել իւր երեւա-
կայութենէն այն տեսարանը , ուր մայր և որդի
դէմ առ դէմ կեցած՝ զուարձանալու էին իւ-
րեանց նենդաւոր գործի յաջող կատարածով :
Նա իւրովի հարցուց , թէ գուցէ իւր ար-
գահատութիւնը իրաւունք էր տալիս նոցա
խնդալու . միտք բերեց չարանիւթ տիկին Լէ-
կուրի տեսակցութեան ամենայն մանրամաս-
նութիւնքը և չը կարենալով ծածկել իւրմէ , թէ
ինքն էր թոյլ տուել տմարդօրէն խաբել իրան ,
որոգայթ լարել , ինքն էր շնորհ ցուցել ատելի
կնոջ կեղծաւորութեան և պատրողական աղա-
չանաց , իւր բերանով հաճութիւն էր տուել

Բեռնարի գալուն և թողութիւն պաղատելուն,
— յիշեց վերջապէս, թէ ինչ ձեւով էր ասել
թող գայ. Եւ այնուհետեւ անարդ գաւաճա-
նութեան ամենայն պարագայքը՝ որոնց զոհ էր
եղել չափազանց դիւրահաւանութեամբ, խրո-
նուած դիզուեցան նորա երեւակայութեան
առջեւ. Մագթաղինէն յանկարծ սկսեց ծիծա-
ղել, մոտածելով, թէ յիրաւի ատելութիւնը այս
տեղ սիրուն հնարագիտութիւն էր ճարտա-
րել.

Տիկին Մարսելէթը երկրորդ անգամ ակրն-
դէտ նայեցաւ իւր դստերը՝ որոյ հոգւոյ վիճա-
կը կորզեց մօրը անրջական անշարժութենէն.
ուրուականը կարծես թէ ոգեւորւում էր. Նա
չը միջահատեց իւր մահանման լռութիւնը, բայց
անտարակոյս նա մոտածում էր, տեսնում էր
և պատրաստ էր նորէն սթափելու. Հաղարա-
պետի այրին ամենեւին չը գիտէր, թէ ինչ էին
խօսել դուստրը և ամիկին Լէկուրը, բայց գու-
շական էր նա այդ խօսակցութիւնը. Մագթա-
ղինէն բնաւ չ'էր նկատում, թէ մայրը երկու
ամրող օր արթուն էր, որպէս և ինքը և այս
իսկ վայրկենին, մինչ բարձրաձայն գոչումը և
դառն ծիծաղի հնչումը դուրս ելան նորա շըր-
թունքից. տիկին Մարսելէթը պատասխանեց
միայն զայրացկոտ հառաջանօք և նոյն բորբոքը՝
որ մի ժամ առաջ փայլել էր օրիորդի աչքի
մէջ, անցել էր գէպի մօր աչքերը. Մագթա-
ղինէն ոչինչ չը տեսաւ.

Ամբողջ օրը ինչպէս և հետեւեալ օրը, օրիորդը

շարունակաբար զայրանումէր, ծփումէր եւ
թափումիւր անէնքը իբրեւ մի ապստամբ հր-
բեշտակ: Վրէմինդրութեան տենչը նորա ա-
կանջաց մէջ փլումէր անգութ մտածութիւն-
ներ: Եիշեց նա այն թշնամանած թագուհինե-
րին՝ որոնց մասին Պատմութիւնը ասումէ,
թէ անողորմաբար սպանել էին տուել իրանց
նենգաւոր և խաբերայ տարփաճուներին եւ
հաւանեց այդ: Երբեմն սկսումէր զգօնու-
թեամբ խորհել այլ եւ այլ գործադրութեանց
միջոցներ՝ որոնք նոյնչափ ցնորական էին, որչափ
եւ նորա զայրութը: Նա սւզումէր աճուրդի
դնել իւր հարստութիւնը, անձը եւ հոգին,
անխտիր անձնատուր լինել, յափշտակած ժա-
ռանդութիւնով հանդերձ այն մարդուն՝ որ
կը խոստանար պատժել Բեռնարին նորա անար-
դութեանը արժանի կերպիւ: Միւսանգամ վե-
րադարձ խաղաղութեան մէջ նրան թուումէր,
իբր թէ իւր սիրտը նաւարկումէր արհամարա-
նաց ովկիանոսի վերայ և նա գոհ էր իւր անզօ-
րութենէն՝ որ ստիպումէր նորան փոխանակ
վրէմինդրութեան՝ անտարբերութեամբ զին-
ուել: Բայց ահա ստացած նախատինքը նորէն
արծարծեցին նորա մէջ ատելութեան առաւել
դառն և բուռն զգացողութիւն, այնպէս որ՝
այդ սոսկալի վայրկենին նա տեսաւ որ՝ ամօմոյ
Ճնշողութեան տակ չը կարէր այլ եւս մնալ
կենդանի, այլ պէտք է կամ մեռնէր և կամ
իւր վրէմը առնէր:

“Մագթաղինէ՛, ասաց յանկարծ մայրը՝ որ

նստած էր պատուհանի մօտ, զգուշացիր, ահա՛ բժիշկը » :

Երեք ամսէ՝ ՚ի վեր մօր քնքշութիւնը դէպի Մագթաղինէն օր քան զօր առաւել նուազելով այնքան պակասած էր որ՝ օրիորդը վւտալի յուսահատութեան մէջ չը մոտածեց անդամ դառնալ դէպի մայրը . նա չը հասկացաւ նորա խօսքը և կարծեց թէ այն ահագին հեղնութիւններէն էր, որով տիկին Մարսելէթը բազմիցն ամել էր նորա սիրտը :

« Ինչո՞ւ պէտք է զգուշութիւն ունենալ այդ մարդուց, պատասխանեց օրիորդը :

— Մագթաղինէ՛, կրկնեց հաղարապետի այրին, այդ մարդը մի օր այցելու եղաւ ինձ, մինչ դու բացակայ էիր և ես նորա պատմեցի քո հօրեղբօր և նորա ժառանգութեան ամեն պարագայները, պատմեցի այն պատճառաւ որ՝ բոլոր քաղաքը իմանայ . որովհետեւ ես ամենեւին չ'եմ կարծում, որպէս դու, թէ պէտք է ծածկել մեր դժբախտութիւնը Ո՛հ, ես ահա բոլորովին յաջողեցայ . Աստուած վկայ, դուստր իմ, որ ես շատ հեռի էի հաւատալուց, թէ դու տակաւին սիրում ես թեռնար Լէկուրին, իսկ այժմ

— Ա՛յժմ, գոչեց Մագթաղինէն

Բժիշկ Դեկլէնը մանում էր ներս . Հաղարապետի այրին սեղմեց դստեր ձեռք, « Շտապէ, ասաց նա կամաց ո կաղմէ՛ կերպարանքդ, վըստահ եղիր դէպի քո մայրը, ահա դու կ'իմանաս, թէ ինչո՞ւ բեռնարը չ'եկաւ ո :

Ու ոք խորհուրդ չ'էր տուել բժշկին ըստ
պատշաճի կազմել իւր դէմքը , բայց տես թէ
ինքն ըստ ինքեան ինչպէս գեղեցիկ կատարելէր
նա այդ գործը : Ո՛րպիսի քաղցրութիւն , որպիսի
խաղաղութիւն դէմքի գծագրութեանց և նայ-
եացքի մէջ . որպիսի ժայիտ , նուրբ ժայիտ մա-
սմբ զզման և մասամբ մեծամտութեան , ո-
րոնք պատշաճ են միայն քահանայից և բժշկաց ;
այդ երկու կարգի անձանց՝ որոնք քաջ գիտեն ,
թէ իշխումեն մարդկանց և մանաւանդ կանանց
վերայ և հաւաստի են , թէ այդ իշխանութիւնը
մշտնջենաւոր է : Հանձարեղ բժիշկը մօտեցաւ
տիկին Մարսելէթին . մեղմիկ բռնեց նորա ձե-
ռը , ըստ որում այդ նորա իրաւունքն էր եւ
պարաւորութիւնը և շօշափեց նորա երակի
դարկը ամենակերպ մտերմական հաճոյակատա-
րութեամբ , ուղղելով դէսի նա մի քանի քա-
ջայերական խուբեր : « Լաւ է , ասաց նա , ես
գոհ եմ ձեղնից , շատ լաւ է , բնութեան զօ-
րութիւնը , ձեր երկաթեայ կազմուածքը , նոյն
ու բարոյական ազգեցութիւնը , մհ , ազնիւ տի-
կին , որքան օգնում են մեզ սոքա և մանաւանդ ,
Երբոր հիւանդի մէջ մենք հանդիպում ենք քա-
ջարի հոգւոյ՝ որ մրցում է մարմնոյ վհասու-
թեան հետ և կենսաբեր փոփոխութիւն է գոր-
ծում . թոյլ տանք ուրեմն ժամանակին կա-
տարել իւր գործը . . . բայց պէտք է մեկնիլ
Սէն - Դէնիսից , յաւելցուց յանկարծ բժիշկը
այնպիսի ձեւով՝ որ առաւել կը վայելէր պե-
տական դատաւորի անբողոքելի վճռոյն :

— Ինչու, հարցուց հազարապետի այրին զարմացած :

— Ցետոյ կ'ասեմ ձեզ, պատասխանեց բժիշկը ժպիտ ՚ի շրթունս ։

Այսմ միայն բժիշկը ուղղակի նայեցաւ դէպի Մագթաղինէն, ըստ որում համարում էր, թէ իւր պաշտօնի պարտաւորութիւնը և պատշաճութիւնը դէպի հիւանդը բաւօրէն կատարել էր . Բայց Մագթաղինէն, երեւի թէ, ոչ լսում և ոչ տեսնում էր նորան . մեքենայօրէն սրահի մի անկիւնը նստած՝ իւրովի կրրկնում էր մօր այս վերջին խօսքերը՝ «Դու ահա կ'իմանաս, թէ ինչու թեռնարը չ'եկաւ ո եւ նոյնպէս իւրովի հարցնում էր՝ արդեօք նա էր, երեկուայ ուրուականը, մոռացկոտ և անգութմայրը՝ որոյ սիրտը դստեր չարչարանքից յուղուած՝ խօսեցնում էր նորան . Բարեմիտ բժիշկը յոնքերը պրոտեց, նա երերում էր տարակուսանաց մէջ, թէ մի գուցէ Մագթաղինէն գիտէր արդէն, ինչ որ ինքն իրան խոստումն էր արել ամենամեծ սիրելութեամբ հազորդել օրիորդին

«Դուք իրաւունք ունիք պնդելու այս մասին և չը պատասխանելով ձեզ, ես ամենամեծ յանցանք գործած կը լինէի, ասաց բժիշկը եռանդուն ձեւով և կրկին բռնելով տիկին Մարսելէթի ձեռք . այդ կը նշանակէր, տիկին . չը վարուիլ ձեզ հետ որպէս համբկն է և ինչ օգուտ ունի զգուշութիւնը ձեր բնաւորութեան առջեւ . չ'է, չ'է, ես ուղղում եմ այժմ իսկ ասել

ձեզ, ինչն չը կարէք մնալ Աէն — Դէնիս :

— Նոյնչափ և ես ցանկանում եմ խմանալ, պատասխանեց տիկինը :

Բժիշկը ուսերը փոքր ինչ շարժեց, նշանացի անելով գէպի Մագթաղինէն, այնպէս որ միայն մայրը կարէր նկատել զայդ :

“ Իրաւ է որ՝ ես շատ առաջ եմ գնում, ասաց նա կամաց եւ բնաւ տարակուսանքից ազատ չ'եմ, մինչ օրիորդի առջեւ Դուք շատ թշնամիներ ունիք, որոնք չ'են ներում ձեզ ձեր գերմարդկային առաքինութիւնը՝ որ ջախ-ջախում էր զիրենք : Այս քաղաքը ձեր տառա-պանաց թատրոնն է և քանի որ մնաք այս տեղ, չէք կարող մոռանալ զանոնք : Անհանդուրժելի յիշատակներ՝ որոնք կը լինին առաւել հզօր քան աշխարհի բոլոր բժիշկների գիտութիւնը ու անձնութրութիւնը Եւ արդեօք կը հա-ճիք դուք, որ ձեր դուստրը ամեն օր հանդիպի այն մարդուն՝ որ Է՛՞, տիկին, ահա տես-նում էք, թէ մւր էք ինձ քաշում տանում . . . Աէն — Դէնիսի օդը ծանր է և անառողջ, ասաց նա յանկարծ բարձրաձայն, որպէս զի Մագ-թաղինէն կատարելապէս լսէր, ջրերը՝ շատ, չափազանց շատ, գործանոցները, մէզը, ծու-խը

— Ի՞նչ պէտք է նոցա պարզ երկինքը . ճա-ռագայթաւէտ արեւը, եթէ սրտերուն մէջ խաւարչտին աղջամուղջ է, միջահատեց հազա-րապետի այրին : Ես տեսնում եմ որ՝ դուք նո-րէն Խդալիոյ վերայ կամկը խօսիլ : Ի՞նչպէս

հաստատ էք դուք ձեր պատուէրների վերայ...
բայց, խնդրեմ ներել, խօսեցէք անկեղծու-
թեամբ, գուցէ դուք այսօր եկել էք մի ուրիշ
բանի համար ո :

Այդ անակնկալ հարցումը ապշեցուց բժը-
կին, և այսպէս նորա շրթունքի վերայ ժափո-
նկարուեցաւ : Հիւանդի կերպարանքը, նորա
զարմանալի հեզութիւնը դէպի բժշկի յորդո-
րանքը և խնամքը, որոնց գէմ սովորաբար տի-
կինը խստութեամբ էր վարվում, պէտք էր ըս-
տիպէին փորձառու բժշկին խորագոյնս մտածել:
Այս անգամ օդոյ մէջ զգացվում էին սպառ-
նական և դատապարտական տարրեր, որոնցից
հարկ էր զգուշանալ . բայց ազնիւ բժիշկը չ'էր
նկատում զայդ . նա իրան համարում էր իրբեւ
ճակատագիր ; անվրէպ և անհրաժեշտ :

“Յիրաւի կարելի էր խօսել և իդալիոյ վե-
րայ, բայց այժմ ամենեւին այդ չ'է իմ միտքը :
Այդ փառաւոր երկինքը, տիկին, շատ հեռի է
ինձնից, իսկ ձեր բժիշկը ցանկանում է որ դուք
անհետ չը լինիք նորա աչքից, ըստ որում ձեզ
խնամելը պարձանք է համարում իւր համար :
Ձեզ պէտք է լինել այնպիսի քաղաքում, ուր
կարէին ապահովուած լինել ձեր զուարձու-
թիւնը, ազատութիւնը և հաճոյքը : Այն, այն,
ձեզ վայել է այն միակ անկիւնը աշխարհի,
ուր կարելի է իւր կեանքը սղահպանել քննա-
սէր նայեացքից և չարահնար դիպուածներից .
Փարիզն է վերջապէս...ո : Եւ նորէն ցած ձայ-
նով աւելցուց, Փարիզն է, ուր այդ մարդկանց

ատելութիւնը չկ գալ ձեր դստեր հետքից

— Պարո՞ն , միջահատեց տիկին Մարսելէթը , եթէ ես գնամ Փարիզ բնակելու , նոյնպէս ձեզից կը հեռանամ . այս չ'էր , որ դուք ամենեւին չ'էիք ուղում :

— Ես աղաչում եմ ձեզ , աղաղակեց բժիշկը , իմ մասին կարգադրութիւն անել ըստ հաջոյից ձերոց , որովհետեւ պատրաստ եմ հետեւել ձեզ , երբ և հրամայէք :

Հազարապետի այրին նայեցաւ նորան դանդաղ և պշուցեալ աչօք , նա կարծես թէ նորէն և յանկարծ ենթարկուել էր նախկին մահանման վիճակին : Բժիշկը ոչ միայն չը զարհուրեցաւ տիկնոջ լուսթենէն , այլ և գոհունակութեամբ մի թեթեւ հառաջանք արձակեց , կարծելով թէ հարկացել էին իւր միտքը : Տիկին Մարսելէթը խոկոյն զգաց , թէ բժշկի խորհուրդը Փարիզ գնալու մասին նուրբ և ճարտար բացառութիւն էր : Այդ հնարագէտ մարդը չը կարէր առաւել բացերեւակի խօսել , որպէս զի չը հասկանային առաւել քան որչափ ուղում էր ինքը եւ յուսով էր թէ յաջողութեամբ կատարել էր այդ :

“ Պարո՞ն , ասաց հազարապետի այրին , ես հիւանդ էի և իմ դուստրը հրաւիրեց զձեզ . դուք խնամ տարիք ինձ առանց որ և է ընդդիմութեան իմ կողմանէ . բայց ես կ'ուզէի այսօր իմանալ և հարցնում եմ ձեզ , ինչ ցաւ ունիմ ես ո . ”

Այս անգամ բժիշկը մնաց լուռ , կամ լաւ

եւս՝ շփոթեցաւ, ինչպէս այն մարդը՝ որ աչքերը վեր ամբարձած գնալուս մի մեծ քարի վերայ ընկած լինէր. «Այդ կինը ծաղրումէ զիս ո, մտածեց նա. Այդ անյաջողութեան մէջ դարձաւ նա դէպի Մագթաղինէն, բայց սա նոյնչափ անշարժ և պարտասուած էր, որ չափ և առաջ, և ոչ միայն ուշ չ'էր դարձնում, այլ և չ'էր լսում անգամ.

«Զեր ցաւը, թոթովեց բժիշկը, ահա, տիկին, մի օտարոտի հարց. չը գիտեմ, թէ ինչ յարաբերութիւն ունի սա դէպի իմ այժմու խօսուածքը.

— Իսկ ես գիտեմ, պատասխանեց տիկինը. Եթէ այդ ցաւը թեթեւ է, ես կարօտ չ'եմ ուրեմն ձեր ծայրագոյն անձնուիրութեան՝ որ առաջարկում էք իմ առողջութեան դարձի համար. իսկ եթէ մահաբեր է, ինչպէս ես կարծում եմ, ձեր անձնուիրութիւնը՝ որոյ մասին ձեզնէ շնորհակալ եմ, առաւել եւս անօգուտ է, ըստ որում գիտեմ ինչպէս պէտք է մեռնիլ

— Առանց իմ թոյլտուութեամն, միջահատեց բժիշկը յաւէտ ծաղրալի կերպիւ, այդ անկարելի է.

— Թողնենք զայդ, ասաց տիկին Մարսելէթը. մի վայրկեան առաջ դուք ինձ ասացիք, թէ ինչ փոխազդեցութիւն ունի հոգու եռանդը մարմնոյ տկարութեան վերայ. ինչպէս ուրեմն չ'էք տեսնում որ իմ հոգին է այսօր կանգուն կեցած, ինչպէս հասու չ'եղաք, որ ես լսւ

Եմ զգում ինձ , որովհետեւ դուստրս վշտացած
է և թէ ես փոխաղարձաբար պարտաւոր եմ
հսկել նորա վերայ և խնամել նորա առողջու-
թիւնը :

— Կամիք ասել , թէ ձեր լաւութեան պատ-
ճառը ես չ'եմ , պատասխանեց բժիշկը՝ որ ճրդ-
նում էր ծիծաղերես երեւիլ , թէ եւ փոքր
իշտե՞ ակամայ : Բարի է , դուք արդարեւ
իրաւունք ունիք , տիկին : Դերերը այժմ փո-
խուած են և որովհետեւ ես չընկատեցի զայդ ,
ուրեմն չը կարեմ այլ եւս իմ պաշտօնը կատա-
րել . Հիւանդը այժմ օրիորդն է . Տէր Աստուած ,
չը լինի թէ նորան յայտնի է արդէն այն դժնդակ
պատմութիւնը՝ որ շրջաւմ էր քաղաքի մէջ այս
առաւօտ :

Մագթաղինէն յանկարծակի վեր թռաւ :
« Ի՞նչ պատմութիւն , աղաղակեց նա » :

« Վ երջապէս , Պարոն , ասաց հաղարապետի
այրին , մի՛ գուցէ այս անգամ ձեր այցելութեան
նպատակը այդ պատմութիւնն է , խօսեցէք :

Մագթաղինէն կանգնած էր բժշկի առջեւ
շնչասպառ , աչքերը բեւեռուած նորա աչքերի
մէջ , որոնց որ և է խորհուրդը այնպէս պարզ
և ազգու կերպիւ երեւում էր , մինչ զի իւր
մէջ եւս լոյս ծագեցաւ : Այժմ նա հասկա-
նում էր մօր խօսքերը : Այդ մարդը ոչ միայն
գիտէր , թէ ինչու բեռնարը չ'էր եկել , այլ և
գուցէ մասնակից էր այդ անարդ խեղկատա-
կութեան՝ որոյ լուծումը կարծէր գուշակել
և խորհուրդը որոշել .

և Պարսն , մրմթեց նա , միանգամ ես ձեզ
խնդրեցի բնաւին չը լիշել այս տեղ Բեռնար
Լէկուրի անունը , բայց այսօր . . . այսօր մի
եւս խնայէք ինձ .

— Օրինորդ , պատասխանեց բժիշկը ուժգնա-
կի , հրաշապէս միտս է ինչ որ գուք ինձ
արգելել էիք . բայց՝ եթէ այժմ այդ արգելքը
չը բառնայիք անգամ , գուցէ քաջասրտու-
թիւն ունենայի կարեւորութիւն չը տալ այդ
արգելքին . Թող չ'ասե՞ն , թէ ձեր դժբախ-
դութեան և առանձնութեան մէջ , չ'էիք հան-
գիպել մի ազատամիտ մարդու՝ որ խորին յար-
գանքը գէպի ձեզ պատրաստ էր իւր կեանքը
անգամ ստորագրել ձեր հրամանին , եթէ ար-
ժան համարէիք և որ , իրբեւ պատույ աւան-
դապահ , առիթ ունի ցուցնելու ձեզ , թէ
մարդիկ ընդհանրապէս անարդ եւ նենդաւոր
չ'են . Խոկ արդ՝ ես , այն , կը խօսիմ Բեռնար
Լէկուրի վերայ , եթէ արհամարհանքը՝ որ զօ-
րաւորագոյն է քան իմ կամքը , չը գոցէ իմ
քերանը . Ահա այն անարժան պատմութիւնը՝
որ ձեզ բոլորովին անյայտ է և ես հոգւով չափ
կը ցանկայի որ՝ դորա տեղեկութիւնը ձեզ հա-
զորդելու ցաւալի պարտաւորութիւնը ինձ վի-
ճակուած չը լինէր . Բայց՝ կը տեսնէք ահա ,
որ այժմ ակամայ կը հրաժարիմ . . .

— Մի խնայէք , կրկնեց Մագթաղինէն , տես-
նում էք որ ես ակամայ ունկնդիր եմ ձեզ .

— Թող լինի , եթէ կամիք , ասաց բժիշկը
ախուր և վճռական ձեւով . Այն մարդը՝ որուն

դուք սպասում էիք եւ որ պէտք է դար իւր
ապերախտութեան ներումը խնդրելու ձեզնից .
այն պատճառաւ չ'եկաւ որ՝ ճշմարտութիւնը
վերջապէս հոչակուել է . Այս, օրիորդ, մեզ
արդէն յայտնի է ձեր ժառանգութեան աղ-
բերը, դիտենք նմանապէս ձեր վարմանց գաղտ-
նիքը եւ ամենքս խոնարհում ենք ձեր դիւ-
ցազնական առաքինութեանց առջեւ . Այսու-
հետեւ ինչ է գործելու այս տեղ թեռնարը .
Դուք հարուստ էք . նա պէտք է ամուսնանար
ձեզ հետ , մինչ դուք իսկապէս չքաւոր էիք
եւ ընկերանար այժմ ձեր բարերարութեանց
մէջ . Այսուհետեւ նա կարող չ'է դարձնել
ձեզ ձեր աղնիւ որոշումներից , որ անտարա-
կոյս փորձելու էր ամուսնանալուց յետոյ .
այսուհետեւ կարող չ'է չարագործել ձեր դէմ
խարէական խոստումներով առանց տուժելու ,
չը կատարելու դիտաւորութիւն ունենալով
իւր մոլում . Եթէ նա ձեր ամուսինն էլ լինէր ,
չ'էր կարող ձեր հաւանութիւնը կորզելով
անգամ , ձեռն միսել այդ ժառանգութեան .
առանց յաւիտեան զինքը խայտառակելու .
Ինքը դիտէր թէ հասարակաց կարծիքը չը պի-
տի ներէր զայդ Ահա , կրկնում եմ ձեզ
թէ ինչու համար չ'եկաւ թեռնարը :

— Բարի է , ասաց Մագմաղինէն ձեռները
դալարելով , թէեւ ուզում էր խաղաղերե-
ւիլ . . . եթէ ես այդ չ'իմանայի անգամ , կա-
րէի գուշակել , պարզն , ուրեմն մի կարծէք ,
թէ ես զարմացած եմ Նկատում էք

արդեօք որ և է վիշտ իմ կերպարանաց վերայ :
— Իրաւունք էր ձեզ առաւել արհամարհանք
զգալ բան բարկութիւն , պատասխանեց բժիշկը
եռանդագին . Չեր մայրը այժմ իսկ հաստա-
տում էր , թէ դուք հիւանդ էք , և ես , իբրեւ
բժիշկ , պարտաւոր եմ ասել , թէ առողջացած
էք . Ո՞՛չ , օրիորդ , օրհնեցէք այն դիպուածը՝
որ յայտնելով ձեր յաջողութեան ազգիւրը ,
կացուց ճշմարտութիւնը ձեր եւ նրանց մէջ ,
որոնք զձեզ խարում էին . Եթէ այդ դիպ-
ուածը չը լինէք եւ եթէ լինէք , զոր օրինակ ,
մի անծանօթ բարեկամ՝ որ ամենայն ինչ յայտ-
նապէս խօսած լինէք , միայն ձեզ ծառայելու
նպատակաւ , մի միակ դիտաւորութեամբ , որ
ձեզ կորդէ այն ագահ ձեռներից , որոնցմէ
ձերբակալ լինելու այնքան մօտ էիք , վերջապէս
ձեզ փրկելու համար Եւ եթէ այդ լինէք
միայն սկիզբը նորա անձնութրութեան

— Օ՛ , եթէ այդպէս է , ես չնորհակալ եմ
ձեզնից , գոչեց օրիորդը . բայց արդեօք լաւ
կատարեցիք ինչ որ հարկաւոր էր զիս երախ-
տագիտութեամբ պարտաւորելու համար , ար-
դեօք այդ բնութակ Պատմութիւնը վերջացաւ եւ
աւելի բան մը չ'ունիք ինձ ասելու ո :

Աղնիւ բժիշկը կանգնեցաւ բարկութենէն
շառագունած : Երկրորդ անգամն էր արդէն , որ
այդ անխոհեմ կանայք , փոխանակ ընդունելու
նորա վեհանձնական օգնութիւնը , մերժում է-
ին , արհամարհելով և թշնամանելով նորան :

“ **Այս** , ունիմ , ասաց նա խստութեամբ ,

բեռնար Աէկուրը ուղեց սուտ հանել այն ամէ
բաստանութեան լուրերը՝ որոնք ձնշում էին
զինքը . նա պէտք է լուցնէր իւր բարեկամնե-
րին և թշնամիներին միակ հարուածով և ահա
անանցանելի պատուար կանգնեց նա իւր եւ
ձեր մէջ 'ի տես ամենեցուն . այս առաւատ
ամուսնութեան խօստումն ստացաւ Սէն-Սօր-
լէնի օրիորդից ո .

Մագթաղինէն ձեռը դէպի սիրտը տարաւ ,
աչքերը խփեց և ընկաւ յատակի վերայ : Բը-
միշկը ուղեց բարձրացնել նորան , բայց հազա-
րապետի այրին խլեց նորա ձեռնից :

«Պարոն , ասաց նա , դուք սլարծում էիք
փրկած լինելով մի մօր կեանքը , իսկ այժմ կա-
միք 'ի մահ մատնել նորա դուստրը : Միթէ չէք
տեսնում որ՝ այսուհետեւ բան չունեք այս տեղ .

— Աշխարհի բանը այսպէս է , պատասխանեց
բժիշկ Դեկլէնը , խորին խօնարհութեամբ հրա-
ժարական ողջոյն տալով տիկնոջը . Տեսնում եմ ,
տիկին , որ երկուքիդ եւս չափէն աւելի ծա-
ռայեցի , ոչ դուք և ոչ օրիորդը երբէք ներե-
լու չէք ինձ զայդ ո : Յետ այսորիկ ելաւ դնաց :

Տիկին Մարսելէթը վեր առաւ աղջկան իւր
ծնկանց վերայ , ինչպէս ուրիշ անգամներ .
Արտասուքի աղբիւրը բղիսում էր նորա շատուց
սառած արտեւանունքի տակից : Նա լալիս էր
դառնագին Մագթաղինէի թարմ երեսի վերայ ,
որ այս վայրկենիս ծածկուած էր մեռելութեան
քօլով :

«Զօրացիր , ասում էր նա , մի մեռնիր . ինձ-

Նից առաջ, Մագթաղինէ, աղաշում եմ քեզ. ահա մայրդ՝ որ քեզ կոչում է, որ ՚ի սէր Աստունց թախանձում է մոռանալ նորա տմարդութիւնը և մոլորութիւնը » :

Մագթաղինէն կիսով չափ աչքերը բացաւ :
“ Զարթիք, աղաղակեց հաղարապետի այրին, ողջագուրելով աղըկան, ես կարող եմ դեռ եւս միտթարել զբեզ և քաջալերել . . . զեզ հաւատում որ՝ իմ սիրելիս ես :
— Աւազ, մայրիկ, հառաշեց աղջիկը, շատ ուշ է արգէն :



Ժ Ա .

Անորանուկի, թէ օրիորդ Աէն-Սօրլէնը ամենապատռական հարսնացուներից մէկն էր, ունէր նա հարիւր հազար ֆրանք օժիտ, մի եղանակ փափկակազմ, մի մայր որ հազիւ երբեմն տանից դուրս էր ելնում և մի հայր անդամալան : Պ. Աէն-Սօրլէնը՝ որոյ յատուկ անունը Գոշերօն էր, քսան և կինդ տարի շարունակ մի բան վաճառում է եղել, բայց թէ Բնչ, այդ ժամին զանազան կարծիք կար. ոմանք ասում էին՝ շօքալստ, միւսները՝ նուրբ ասղնագործեր . յայտնի էր միայն, թէ վաճառաշահութեան անմեղ խաղալ, կամ որ եւ է

արուեկոտագործութեամբ մի միջին արդէն ճա-
րել էր . Խնչու ուրեմն այնուհետև ջանք չը պի-
տի անէր ճոխանալու մի ուրիշ անունով եւս ;
թէեւ սա լինէր բոլորովին ծաղրական : Այս-
պէս Գօշերօնը Սէն - Սօրլէն անունը սեփակա-
նած՝ զգումէր իրան բարձր տռաւելքան մի
ոտնաշափ և պարտաւորուած էր այնուհետեւ-
նոր դեր խաղալ աշխարհի մէջ : Այն ժամանակ
գեռ եւս հնարել չ'էին սուտ աղջիւների դէմ
ուամկապետական օրէնք՝ օրոյ նպատակն էր
պահպանել աղնուականութեան իրաւունքը՝ օր
թողուած էր մոռացութեան ենթարկուելու :
Մի ատենակալ չը գտնուեցաւ , որ ընդդիմո-
նար Գօշերօնի Սէն - Սօրլէնութեան , իսկ առ
մուածումէր միայն իւր փառասիրական ջան-
քը ՚ի կատար հասուցանել եւ ահա գնեց մի
կալուած , իբր անհրաժեշտ կարեւորութիւն
պատշաճաւոր միջինատէր լինելու համար :

Այս միջոցին Սէն - Դէնիոի մօտ վաճա-
ռելու նշանակած էր մի շքեղ տռւն ընդար-
ձակ պարտէզով զբապատած : Մէկը հաւատաւ-
ցուց Սէն - Սօրլէնին , թէ գիւղ էր այն և նա
համոզուեցաւ ու գնեց : Առանց այդ քաջ հմատ
բարեկամին՝ որ հաճել էր ապացուցանել մի
լիօնատիրոջը , թէ Սէն - Դէնիոը թէեւ գործաւ-
րանների , գպրօցների և զօրանոցների քաղաք
էր , բայց և յարմար էր գեղջուկ բնակութեան
համար . . . Բեռնար Լէկուրը գուցէ յաւիտեան
չը հանդիպէր սիրունիկ Լոռ . Սէն - Սօրլէնին .
Զքնաղ Լոռի հասակը բարձր էր + դէմքը

թիսագոյն, աղնուռութիւնը ճոխ, մարմնոյ դիբքը
հրապուրիչ, աշկունքը թաւիշեայ, աղդիչ
խորհրդածութեան: Նորա դաստիարակութիւ-
նը կատարեալ էր. ինչ որ նա ստացել էր իւր
հօրից, անտարակոյս կարէր զօրաւոր բան լի-
նիլ, եթէ հայրը իւր բազմաշխատ կեանքի մէջ
ժամանակ գտած լինէր ինչ և իցէ ուսանելու
համար, բայց երեւի թէ միջոց չ'էր ունեցել.
Իսկ որ ինչ կարէր ստանալ աղնիւ տիկին Աէն-
Սօրլէնից, որ մայրն էր, կարելի է ստուգել այն
զբօսուցիչ պատմութենէն՝ որ հռչակուած էր
քաղաքում: Պ. Աէն—Սօրլէնը, որ գիտէր, թէ
իւր կինը ժիւրա քաղաքում ծնուած, փափա-
քում էր մի բան ունենալ իւր երկրից իրրեւ
յիշատակ, վայելուչ դիտաւորութիւն երկնեց
Զուիցերից սիրուն կովեր եւ կովարած բերել
տալ իւր կալուածքի մակաղատեղը: Եւ ահա
շատ չ'անցած փառօք պատուով կովերը եկան,
շունիթը թնդաց պարտիզի մէջ, անասունները
բառաջում էին, լեռնաբնակ կովարածը թոքերը
ուռեցաւցած փում էր փողը, Պ. Աէն—Սօրլէնը
առաջնորդում էր և մինչ ամենքը կանգ առին
մարդագետնի վերայ տան առջեւ, տիկին Աէն—
Սօրլէնը՝ որ թէեւ հիւանդու, քաջալերե-
ցաւ ծննդական երկրի դաշնակաւոր հնչումից
և վազեվազ մօտեցաւ: Կովարածը, դեռ եւս
հեռուից նկատելով այդ պաճուճաղարդ տիկ-
նոջը, սկսեց խնդալ և քրքջել ամենայն զօրու-
թեամբ. յետոյ փողը վայր նետեց, եկաւ ուղ-
զորդ կանգնեցաւ աղնիւ տիկնոջ առջեւ եւ

ձեռները լայն գրպանների մէջ կոխած , ասաց
նրան՝ « Մարիօն , արդարեւ դու ես Մարի-
օնը » :

Զքնաղ Լոռի անթերի դաստիարակութիւնը
կատարուել էր շարունակ տասնամեայ աշխա-
տութեամբ եւ քսանի չափ արժանաւորագոյն
անձինք եղել էին նորա դաստիարակուհիք ,
հոգաբարձուհիք , լեզուագիտութեան եւ
հեծելագարձութեան ուսուցիչք , պարի ,
երգեցողութեան եւ նկարչութեան վարժա-
պետք . Երբէք Պ. Ժուրդէնի վարժատունը
անգամ չ'էր տեսել այդպիսի մրցումն գիտ-
նական անձանց . Այդ վարժապետներին եւ
վարժապետուհիներին կարելի էր հանդիպել
ամեն օր , թէ առաւտուն , թէ կէս օրին եւ
թէ երեկոյին , մինչ շտապում էին գէպի օրի-
որդը և բնչպէս վառուած էին ամենքը և մին
քան միւսը առաւել եռանդուն նախանձով ,
մին քան միւսը առաւել անձնուիրութեամբ
նորա միտքը և սիրտը կրթելու և իւրեանց աշ-
խատութեան առատ վարձատրութիւնը ստա-
նալու համար . նոցա ջանքը յաջողութեամբ
պատակուեցաւ և այդ մատաղ սիրտը շատ շուտ
ամբողջապէս կաղմուեցաւ . զի ահա օրիորդ
Աէն-Աօրլէնը՝ օր դեռ եւս տասն և եօթնամեայ
էր , մի առաւօտ հրաւիրանօք իւր երգեցութեան
ուսուցչի օր հրեշտակային ձայնիւ կ'երգէր .
գնաց նորա հետ մի փոքր պտոյտ անելու . Պ. Աէն-
Աօրլէնը , այդ իրողութեան տեղեկացած , իսկոյն
փոստայի ձի կաղաւ և գնաց սօրանց հետքից . նա

պիգառու անգամ կ'ուզէր, եթէ խմանար ուր կա-
 րող էր գտնել: Այսպէս ահա, գիշեր ցերեկ
 թափառելով, նա հասաւ վերջապէս երկու ըդ-
 բօսասէրներին իդալից մի լշի մօտ, որոյ կախար-
 դիչ ափունքը գրաւել էին նոցա սրտերը փոքր
 ինչ հանդիստ վայելելու: Տուն վերադարձած՝
 Պ. Սէն—Սօրլէնը յանդիմանեց դաստիարակու-
 հուն, իբր թէ նա թոյլ էր տուել Լուին աւե-
 լորդ ռօմաններ կարդաղ, բայց բարեբախոյ կինը
 անընդդիմադրելի փաստերով համոզեց նորան,
 թէ չքնաղ զբօսուհին բացի և Ռօրինզօն կրու-
 զէն ո ոչինչ չ'էր կարդացել, բայց և այնպէս
 դաստիարակուհուն արձակեցին տանից: Եւ-
 որովհետեւ ոա մի երկչոտ կին էր և չ'էր սի-
 րում մինակ ճանապարհորդութիւն անել, ուս-
 տի, համաձայն նորա աղաջանաց, աշակերտու-
 հու եղբայր իվարիստ Սօն—Սօրլէնը ուղեկից
 եղաւ նորան: Հայրը կրկին սուրհանդակ ելաւ,
 հապճեպ ընթանալով այս և այն կողմ. յաղթեց
 մեծամեծ գժուարութեանց և վերջապէս զյուց
 յանցաւորներին գտաւ Միջերկրական ծովե-
 զերքի վերայ: Վիրունիկ Լուի ճանապարհօր-
 դութեան օրից շատ ժամանակ անցել էր,
 այնու ամենայնիւ գորա մասին խօսք ու զը-
 րցցը գեռ եւս չ'էր դադարել: Քսան և եօթ-
 նամեայ օրիորդը գեռ եւս ամուսնացած չ'էր,
 երբ Բեռնար Լէկուրը ուղեց նորան: Եռամ-
 սեայ շարունակ երթեւեկութեան և ընդունայն
 դեգերանաց մէջ թէեւ յայտնի երեւում էին
 նորա տարակուսութիւնքը և վարանքը, սա-

կայն նա վճռեց վերջապէս խնդրել օրիորդի
ձեռքը : Բարեբար 8էր , ոչ հայրը և ոչ մայրը
մի վայրկեան չը մոտածեցին մերժել թեռնարի
առաջարկութիւնը կամ պատասխանը երկարա-
ձգել : Վաղուց , շատ վաղուց արդէն Պ . Աէն-
Սօրբէնը անհամբերութեամբ սպասումէր որևէ
որոշ դիտաւորութեան այն մարդուց՝ որ ամ-
բողը երեք ամիս չ'էր հրաժարում նոցա տա-
նից : Այդ աղնիւ միլիօնատէրը այնքան գոհ էր
իւր երկնապարգեւ գերդաստանով , որ միայն
անձկութեամբ կը փափաքէր նորա աճումը
տեսնել : Բայց լսած լինելով , թէ թեռնար-
էկուրը չքնաղ Լոռից առաջ երազումէ եղել
օրիորդ Մարտելէթին , իբրև իւր հարսնացուին ,
բարեմիտ հայրը փոքր ինչ վիրաւորուած հա-
մարեց իրան այն մարդուց՝ որուն այժմ նայում
էր ինչպէս իւր սեփականութեան եւ որմէ
պատրաստ էր հաշիւ պահանջել . իսկ սիրու-
նիկ Լոռը , այդ դիտաւորութեան ընդդիմա-
նալով , առաւել խոհեմութիւն ցուցուց .
Ո՛չ թէ չքնաղ օրիորդը նոյնչափ մեծամիտ չէր ,
որչափ և միւս սիրուն կանայք՝ որոնք արեւի
տակ փթթում են . ոչ թէ նորան հրաշալի կեր-
պիւ յայտնի չ'էին թեռնարի երկարատեւ տա-
րակուսութեան պատճառը յառաջ քան իւր
առաջարկութիւնը , նորա վարանոց գաղանիքը .
նորա շարունակ հնարագործութիւնքը գէպի
Մագթաղինէն , նորա յանկարծահաս յոյսը և
անյաջող վախճանը . ոչ թէ մահու չափ ատում
չ'էր նա իւր ոսոխ օրիորդին և նենդաւոր խօս-

նայրին, այլ նա սաստիկ և բազմիցս մտածում
էր այն զբօսանաց մասին, զոր կատարել էր եր-
գեցղութեան ուսուցչի հետ Աաժէօր լճի մօտ։
Ահա այս էր պատճառը որ՝ երբ հայրը Բեռ-
նարի ձեռը բռնած, վախելով թէ չը փախչի,
բերաւ զայն դստեր մօտ և ապագայ ամուսինը
ասաց՝ “Օրինքդ, ես աղաշեցի ձեր հօրը հա-
ւանութիւն շնորհել մեր ամուսնութեան ո,
չքնազ Լոռը պատասխանեց միայն քաղցր շա-
ռագունութեամբ եւ ժպիտ ՚ի դէմս . թէ եւ
ունէր ներքին հակակրութիւն դէպի ապագայ
ամուսինը, բայց փափաքում էր այդ ամուս-
նութեան։ Փառասէր, թոյլ, սնապարծ, բայց
մատաղահաս, գեղեցկակազմ և գեղեցկադէմ
Բեռնարը հաճելի էր նորան և լաւագոյնը ցան-
կալ չը կարէր։ Ճշմարիտ է որ՝ տիկին Լէկու-
րը սոսկալի սկեսուր լինելու սպառնալիք էր,
բայց չքնազ Լոռը անփոյթ էր այդ մասին եւ
նորա ահ և երկիւղը այլուր էր։

Յիրաւի մեր ժամանակի հարսանեաց պա-
րագայքը անմիտ և շնական են . չքնազ Լոռը
զգում էր այդ, ուստի և առաւել հաճելի էր
նորան անցեալ ժամանակի ամուսնութիւնը՝ որ
մի ժամնւ մէջ վիճում, կարգում, վերջացնում
էին, ծնողը ասում էին՝ այս, Կոտարը նախասե-
նեակն էր, դաշնագիրը ստորագրած, անցնում
գնում էին Եկեղեցի, ծեր Գահանան մրմնջում էր
սպակի արարողութիւնը և ահա կենակցութիւնը
կատարուած էր։ Ո՞վ գեղեցիկ հին ժամանակ
այն մատաղ օրիորդների համար, որոնք երբեմ

զբօսանաց ուղեգնացութիւն էին արել երգեցութեան ուսուցչի հետ . իսկ այժմ տեսթէ ինչ է՝ յայտարարութիւններ , տոմսակներ , պատշաճութիւններ , օրինապահանջ յետաձրդութիւն , և այլն և այլն . Արարիչը միայն գիտէ , թէ ինչ էր մռածում օրիորդ Աէն-Աօրլէնը այդ բոլոր պարագայից մասին , բայց նորահայրը որոշակի յայտնեց , թէ շտապումէ կատարել այդ բանը և շտապեցին . ամենայն ինչ միարան որոշեցին , կարգադրեցին , հոգացին երկու շաբաթուայ մէջ . Օրիորդ Աէն-Աօրլէնը , մօր հիւանդութեան պաաճառաւ , պարտաւորեցաւ ինքը հոգալ հանդիսի պատրաստութիւնքը և թէպէտ նորահամեստութիւնը մեծ վնաս կրելու լինէր , այնու ամենայնիւ պէտք էր հրաւիրել խօսնայրին իրան օգնելու . Հարկաւոր էին փառաւոր ճաշ , խնճոյք , մեծաշուք և հանդիսաւոր հարսանիք . և անթերի տօնակատարութիւն . Զօյդ մատաղօրեայք միասին յօրինեցին հրաւիրելոց ցանկը . Այս և սորանման հոգսէրը շատ օրեր զբաղեցուցին նորանց , այնպէս որ միմեանցից բաժանուելու հնար չը կար . ուստի այդ երկարատեւ առանձնութեան մէջ աղագայ ամուսինքը առաւել ծանօթացան միմեանց . Թէ այդպիսի դրութեան ազգեցութիւնը , թէ միմեանց հաճելի լինելու ջանքը եւ թէ փոխադարձ հրապոյրը այնպէս յայտնի մօտեցուցին նոցա սրաերը , մինչ զի Պ . Աէն-Աօրլէնի աչքերը արտասուօք լցան և նայելով այդ զոյգին , նա բարձրաձայն ասաց՝

« Ա Խ՞նչ սէր ո : Եւ յիրաւի օրիորդ Սէն - Սօրլէնը
երբէք գաղրած չ'էր իւր խօսնայրը սիրելէ .
նա օր ըստ օրէ դէպի իւր տարփածուն աճող
սիրոյն մէջ եղակի էր . միոյն թէ երբեմն նա
յացնում էր արհամարհանք և վրէժխնդրու-
թեան անմեղ փափաք նորա երկարատեւ ան-
տարբերութեան եւ անհաւատարմական փոր-
ձերու համար . Մինչդեռ թեռնարը գրում էր
հրաւիրանաց տոմսակները , նա չը նկատեց որ
չքնաղ հարսնացուն մի տոմսակ գողացաւ ,
գնաց իւր սենեակը , գրեց տիկին եւ օրիորդ
Մարսելէթների հասցէն եւ անձամք հոգաց
որ շուտով տանին :

Եկաւ Յունվարի առաջին օրը . Մի օդ եւս
գնաց մոտաւ ժամանակաց շղթայի մէջ , որ ար-
դէն բաւական ծանր էր նոցա համար , որոնք
անցեալին կշխող զգացել էին . Ամենուստեք
լսելի էին բաղձանք եւ շնորհաւորութիւնք ,
աղմկալից խանդաղատանք և բարեպաշտական
ստութիւնք . ամենքը տօնախմբում էին և կեղ-
ծեօք զուարձախօսում իւրեանց ծերանալու վե-
րայ . Հազարապետի այրին եւ նորա դուստրը
սովորականից աւելի սերտ սրտիւ գրկեցին մի-
մեանց , նոր տարու փոխադարձ բաղձանք յայտ-
նելով . Մէկը իւրովի ասում էր՝ « Տէր Ասո-
ուած , ամբողջ այս տարին ես ապրելու չ'եմո ,
միւսը՝ « Բարերար Տէր , դու ինձ կը դատապար-
տես արդեօք այդ տարու վերջը տեսնելու . Սա
ստախօսում էր վերաբերութեամք դէպի իւր
անտիական հասակը և իւր անձը , իսկ առաջինը

խորհում էր ճշմարտապէս : Առողջութիւնը երեւութապէս վերահաս դատուած՝ հազարա պէտի այրին չ'էր այլ եւս մտախորհում. դստեր անշափ յուսահատութեան պատճառաւ նորա հոգւոյ և սրտի մէջ ծագած լցոսը դեռ եւս չ'էր շիշել, նորա կարողութիւնը անգամ կարծես թէ վերադարձել էր բանականութեան հետ, բայց նա սորանով խաբւում չ'էր և գիտէր, թէ բռ լորը ՚ի միասին շուտով անցնելու էին . ցեսնելով մահը իւր կշտում, կը դառնար ուղղակի իրեն նայելու եւ կ'ասէր՝ ժամը կը մօտենայ, բայց եկել չ'է : Խանդաղատ վեհանձնութեամբ քաջասիրտ և զօրեղ զգալով իրան, եւ խեղճ Մադթաղինէին նայելով, նա մրմթում էր՝ և գոնէ նորա մօտ կանգնած կը մեռնիմո :

Այս առաւօտուն մայր եւ դուստր, միմեանց փոփոխակի համբուրելուց յետոյ, պարկեշտ ընծաներ եւս մատուցին միմեանց : Եկաւ և փոքրիկ ծիւլիէթը՝ որ իւր պաշտպանուհու շնորհիւ ծանօթացել էր և նորա մօր հետ և ահա Մադթաղինէն, գողցես երջանիկ այդ երկու հաւաաարիմ սրտերու մէջ, մի ձեռը տուել էր մօրը, միւսը՝ ծիւլիէթին, Նոյն իսկ այդ վայրկենին մի մարդ դուռը բաղկնեց և նամակ բերաւ : Մադթաղինէն բացաւ . . . և մեկնեց դէպի մայրը : Բեռնար Լէկուրի և օրիորդ Աւն-Սօրլէնի հարսանեաց հրաւիրական նամակն էր :

“ Մադթաղինէ . . . թամավեց տիկին Մարսելէթը զարհուրած, բնչ ես մտածում, բնչ պէտք է անես :

— Ի՞նչ . գուշեց Մագթաղինէն , կը գնամ այդ խնջսքը . Անարգները ինքեւանք իսկ ցոյց են տալիս մեզ , թէ ինչպէս պէտք է պատժել նորանց . մեզ կանչում են ասպարէզ և ես ահա պատրաստ եմ ստրջանաց դժոխք յարուցանել նոցա սրտերու մէջ . Մայրիկ , դուք ինձ ընկերութիւն կ'անէք դէպի Փարփակ . մերժում էք . . . պատրաստ չ'էք . Զ'Է . դուք կը հաճիք եւ միասին կ'երթանք Նօտարի մօտ . Հապա , ընդ փոյթ ո .

Մայր եւ դուստր ելան գնացին Փարփակ . Տիկին Մարսելէթը դողդոջելով գնումէր դստեր հետքից . մի քանի անգամ փորձեց նա կանգնեցնել նորան , կախուելով նորա թեւից , բազոր և փաղաքուշ ձայնիւ հարց ու փորձ անել .

“ Մագթաղինէք , հարցուց նա , ուր ենք գնում , արդարեւ Նօտարի մօտ , Բ'նչ է քո դիտաւորութիւնը . մի գուցէ բարկութիւնը մոլորեցնումէ քեզ եւ որ և է անմիտ գործի կամիս ձեռնարկել .

— Եկէք . պատասխանեց Մագթաղինէն , ես գնում եմ մեր վրէժը խնդրելու .

— Մեր վրէժը , կրկնեց հազարապետի այրին .

— Եկէք , ասաց օրիորդը , միթէ կարծումէք , թէ բաւական չ'էք , որքան մենք չարչարուեցանք . առանձնութեան և լռութեան մէջ և ովերբէք մտածեց ձեռնտու լինել մեզ . Այժմ ես պէտք է գնամ պաշտպաններ գտնելու , աշխարհի համակրութիւնը խնդրելու .

— Անջշ դստրիկ , մըմնջեց մայրը . Թողնենք

մինչեւ վաղը այդ փորձը՝ որ ես չ'եմ հասկա-
նում, բայց կարծում եմ, թէ վաղիւ դու
փոքր ինչ խաղաղ կը լինիս :

— Եկէք, կրկնեց Մագթաղինէն :

Հաղարապետի այրին, յաղթուած դստեր
կերպարանաց օտարոտի աղդեցութենէն եւ
հեգնութենէն, նորէն սկսեց գնալ, թէ եւ
յակամայս :

Ահա նոքա Նօտարի տան մօտ էին : Մագ-
թաղինէն բուռն զօրութեամբ կալաւ մօր ձե-
ռը, և Հաղա, մայրիկ, ասաց նա, ոքքան եւ
նուազ լինի ձեր քաջասրտութեան մնացորդը,
ես յանձնում եմ ինձ ձեր պահպանութեան :

Մագթաղինէն մտածում էր, թէ գրադիր-
ների սենեակը անցնելուս նա տեսնելու էր
Լուդովիկոս Մարմոլինէն եւ չը գիտէր, թէ
նոյն առաւօտուն սա արդէն Տանապարհորդել
էր գէսի Ամերիկա : Մայր եւ դուստր մտան
Ժավոյնի գրասենեակը . Նօտարը շտապ տագ-
նապաւ ընդունեց զանոնիք :

«Պարմն, ասաց Մագթաղինէն, իմ այցե-
լութեան խորհուրդը անշուշտ զարմացնելու է
զձեղ . ես տասն հազար ֆրանքի հարկաւորու-
թիւն ունիմ :

— Տասն հազար ֆրանք, գուեց հազարապետի
այրին, Մագթաղինէ, այդ քո խեղճերին տա-
լու համար չ'է բնաւ :

— Չ'է, մայրիկ, կամաց սկատասխանեց դուստ-
րը . ինչոյքի հանդերձ պատրաստելու համար է :

Պ. Ժավոյնը բաւական համարեց խոնարհե-

ըով ընդունել օրիորդի առաջարկութիւնը , և
առանց մի խօսք ասելու , ուղղեցաւ դէպի
երկաթեայ արկղը՝ որ սենեակի անկիւնն էր և
մինչդեռ բանալին մոցնում էր կարծես թէ
սաստիկ աշխատութեամբ , գաղտնագործ փա-
կանքի մէջ , հարեւանցօրէն ուշադիր էր նոյն
պէս մօր եւ դստեր անշուտկ խօսակցութեան
մի քանի հատուկտոր ասացուածներին : Նօտարը
Կներքուստ զուարթ էր այն մտօք , թէ Մագ-
թաղինէի խղճմութիւնը և դիւցազնութիւնը
վերջացել էին , ըստ որում գաղտնում էր արդէն
ժառանգական կայքին : Ինչ որ այժմ գործում
էր Մագթաղինէն , գուցէ Նօտարը կանխա-
տեսած լինէր , բայց դէպքը գերազանցում
էր աչ միայն նորա նախատեսութիւնը և ցան-
կութիւնը , այլ և նորա ցնորքը . և Զեռքը հպեց
կարկանդակին , մտածեց ճարպիկ մարդը , միթէ
ես չըկարեմ այդ իսկ ձեռքը սեփականել ինձ ։
Հանեց նա արկղից տասն գրամատոմն , իւրա-
քանչիւրը հազար ֆրանքի արժողութեամբ և
եկաւ դէպի Մագթաղինէն սառն և անվիշտ
կերպարանօք , սաստելով իւր շրթունքին մի
թեթեւ ժպիտը անգամ . միով բանիւ նա այն-
քան համեստ էր , որքան կը պատշաճէր մի
կատարեալ Նօտարի :

“ Օրիորդ , ասաց նա , ահա այն գումարը՝
զոր դուք պահանջում էք :

— Ենորհակալ եմ , Պարօն , կարճ պատասխա-
նեց Մագթաղինէն և մօր ձեռքը բռնած գուրս
ելաւ :

“ Ակսենտ , մայրիկ . Հասկանում էք այժմ
ինչ կամիմ գործել , առաջ նա , երբ մինակ
մասցին . Այս , այս , ես գնալու եմ այդ խըն-
ջութը , զարդարուած իմ հօրեղբօր Օնօրէ Մար-
սելէթի ժառանգուհուն արժանաւոր կեր-
պիւ . խնայելու չ'եմ ոչ պատուականք ակունք
և ոչ ասզնագործ զարդեր . Ամենքը կը հաւա-
տան , թէ անցել եմ լուծի տակ և ընդունում
եմ վերջապէս իմ ժառանգութեան անպատ-
ուաւթիւնը եւ արդիւնքը . կը հաւատան , թէ
իրաւամբ ես ժառանգ եմ այժմ և տէր ստաց-
ուածոյս : Այդ խնճոյքի երկրորդ օրը , մինչ
ամբողջ քաղաքը համոզուած կը լինի , թէ ես
թոյլ տուի ինձ հարուստ լինել , յայնժամ , ոհ ,
մենք կը հրաժարուինք Սէն – Դէնիսից , համա-
ձայն քժշկի խորհրդոյն : Ո՞վ է այնուհետեւ
խօսելու վաշխառուի հարսի կամ սորա դստեր
վերայ . գուցէ ասեն միայն , թէ մեկնեցանք
այստեղաց մեր ամօթը և մեր հարստութիւնը
հեռաւոր առանձնութեան մէջ ծածկելու հա-
մար . ոչ միայն փոյթ ինչ չ'է ինձ այդ , այլ եւ
հաճելի է . Իցէ՛ թէ վատթարների կարծիքը
եւ նոցա կեղծաւոր պարսաւը վախեցնում են
ձեզ , մինչ ես համոզուած եմ որ՝ ՚ի խորոց՝ սրտի
նոքա կը ծափահարեն մեղ եւ առաւել կը
պատուեն . Ո՞հ , կրկնում եմ , մայրիկ , ես ու-
ղում եմ ստրջանաց գժոխք բանալ Բեռնար
Լէկուրի աշաց առջեւ , որպէս զի Մագթաղի-
նէ Մարսելէթի պատճառաւ անողոք և անվերջ
ատելութիւն ծնանի մօր . և որդւոյ մէջ . որպէս

զի միայն կշտամբանօք եւ յանդիմանութեամբ
մերձենայ որդին մօրը եւ նորան ասէ՝ « Դու՝
որ ինձ զատեցիր նորանից , ստիպեցիր մոռա-
նալ իմ երդումը , արհամարհել իմ սէրը եւ
իմ պատիւը , դու չար խորհրդառու եղար ։ ։
Ես ուզում եմ հրացայտ պարիսպ կառուցանել
թեռնարի և այն անձի միջեւ , որ այժմ իրան սի-
րած է համարում և որ ահա պատրաստ է ա-
մուսնանալ նորա հետ . Ուզում եմ որ այդ ա-
նարգ սիրու ինքն իրան սպառէ և նորա կատա-
զութիւնը այնքան տեւէ , որքան և նորա կեան-
քը՝ որոյ վաղահաս վախճանը իւր յանցանաց
արդիւնքն է լինելու , վասն զի նա երբէք հաս-
կանալու չ'է իւր մոլորութիւնը .

— Եւ դու քո վրէժը առած կը լինիս , միջա-
հատեց տիկին Մարսելէթը . Մագթաղինէ ,
ծանը է այդ լուծը՝ որ դու ստանձնում ես .
դու ոչ միայն չարաչար կը վարուես նոցա
հետ՝ որոնք չար գործեցին քեզ , այլ և պատ-
րանաց մէջ կը ձգես զանոնք՝ որոնք գովում
և պատուում են քո ողջմոռութիւնը և այսպէս
կ'ենթարկուիս երկուստեք պարսաւանաց .

— Գովեստիւ և պատուով խօսողներ չը կան ,
ասաց օրիորդը .

— Գնանք ուրեմն վրէմխնդիր լինելու , հա-
ռաշանօք ասաց մայրը .

— Եւ ահա գնացին նոքա գէպի խանութ-
պանները , խնձոյքի հանդերձ , կամ որ նոյն է ,
վրէժ գնելու .



ԺԲ.

Ա ԵՍ ԳԻՇԵՐԻՆ մի քառորդ մնացած էր .
փայլուն պարահանդէսը ամբողջապէս դղըր-
դում էր, երաժիշտք սկսել էին վալս (vals) պա-
րը, երիտասարդաց եւ օրիորդաց գրկախառն
և մոլեգնաբար պտուտուելու համար : Զքնաղ
Լոռ արդէն կախուած իւր երջանիկ ամսու-
նոյ բաղուկից՝ նշան կը տար հետեւիլ իրան,
մինչ սրահի դուռը բացուեցաւ և վարձուոր
բարապանը հանդիսաւոր ձայնիւ յայտարարեց՝
“Տիկին և օրիորդ Մարսելէթ ո .”

Ա սում են, թէ կապուտակագոյն երկնքում
տեսնուած են երբեմն որոտաձայն փայլատա-
կունք : Բարապանի ոնդային հնչումը կարծես
թէ որոտաց խնձոյքի մէջ, բայց իսկոյն յաջոր-
դեց լուսմիւն : Զքնաղ Լոռ բարեբախտա-
բար միտքը չը կորցուց . մինչդեռ վալսօղ զու-
գերը պատրաստում էին, և երաժշտումթիւնը
շարունակում էր, նա քաշեց տարաւ թեռնա-
րին՝ որ զարհուրանաց մէջ չը մտածեց անդամ
ընդդիմանալ նորան եւ վալսը սկսաւ : Բայց
Լոռ զգաց ամուսնոյ ձեռքի սառնութիւնը
իրենին մէջ և թէ եւ ինքը շփոթուած էր, բայց
ժպիտը չ'էր կարող զսպել, նկատելով թեռնարի
շնչահատութիւնը : Անիծած վալսը տարաւ նո-
րան սրահի ծայրը . նա իմացաւ որ՝ Մագթա-

զինէն այս տեղէր, շուրջ պատաճ հարիւրաւոր հետաքրքիր և անյագ հայեցուածօք, արգելուած պարախաղու, ծփանքից, թեռնարը յանկարծ զգաստացաւ. նա փորձեց դադարեցնել կնո՞թը պար գալուց, բայց չը գիտէր, թէ որքան ուժեղէր այն սիրուն բազուկը՝ որ նորան փաթաթելէր. ուզեց խօսել եւ մի քանի միջահատ խօսք միայն արձակեց շրթունքից դէպի սիրուհւոյ ականջը, իսկ սա բեւեռեց նորավերայ վալսի շլայտթենէն ծիւրուած աշկունքը. չը լսեց թեռնարի խօսքը եւ նորա թախանձանաց դէմ անհամբերութեամբ ասաց միայն՝ և ջափով գնա, Պարոն ո. Վերջապէս նուագածուք դադարեցին :

“ Ո՞վէ դրանց հրաւիրել, ասաց թեռնարը անշունչ ձայնիւ, ձեր հայրը արդեօք :

— Ո՞վէ հրաւիրել տիկին և օրիորդ Մարսելէմներին, հարցուց Պ. Աէն-Սօրլէնը՝ որ ըշտապաւ մօտեցելէր : Ո՞վ :

— Ո՞վէ հրաւիրել այդ կանանց, մրմնջեց տիկին Լէկուրը, խեղճ Աէն-Սօրլէնի թեւը բըռնելով, դուք արդեօք :

— Ո՞չ ապաքէն հրաւիրանաց տոմսակները դուք գրեցիք, ասաց չքնաղ Լոռը, դեռ եւս թալկացած աչօք նայելով դէպի ամուսինը : Թուի թէ դուք :

— Արդարեւ դուք, կրկնեց Էվարիստ Աէն-Սօրլէնը՝ որ նոյնպէս շտապով եկել էր ո.

Պ. Էվարիստը՝ որ ատում և արհամարհում էր իւր փեսային, քրոջ հետ ամուսնանալու

սպատճառաւ, հասկացաւ առեղծուածը եւ
Լոռի մօտով անցնելով, հծնեց նորա ականջին՝
և ի՞նչ սիրուն խաղէ քուրիկի ո. այնուհետեւ
նա յառաջ գնաց դէպի Մարսելէթները, առա-
ջարկեց իւր թեւը Մագմաղինէին և տարաւ
նորան դէպի բաղկաթուր :

Չքնաղ Լոռ գլուխը բարձրացուց : Ար-
դարեւ նա ընաւին չ'էր կարծում, թէ օրիորդ
Մարսելէթը կ'ընդունէր նոցա հրաւերը և կը
յայտնուէր ինչպէս ասպետի արձանը ամպա-
րիշտ Դօն — Ժուանի ընթրիքի վերայ . բայց նա
չը տարակուսեցաւ իւր խրսխտական հրաւիրա-
նաց հետեւանիքի առջեւ : Այդ շփոթը անցած,
մի ակնարկ նետեց դէպի ոսոիսը, ակնարկ ամե-
նահամարձակ և նոյնժամայն կրկին շառագու-
նեցաւ և գմկամակութեամբ յետ քաշուեց :

Օրիորդ Մարսելէթի բոլոր զարդը մի սպի-
տակ հանդերձ էր, բայց Բրիւքսելեան ասեղնա-
գործութիւն, և մի ականակուռ և մարգարտաշար
վարսակալ, որոյ անոյշ փայլը սքանչելի էր ու-
կեգոյն մազերի վերայ . ոչ ապարանջան ունէր
նա և ոչ մանեակ, ուստի բազուկները և ու-
սերը մերկ էին և փայլուն դողդոջը սահում էր
նորա վարդի պէս զով եւ շառագոյն կաշ-
ւոյ վերայ . Ո՞վ մոլորելու չ'էր այդ ճոխ պա-
ճումանաց յանդուգն պարզութենէն, որ տասն
հազար ֆրանք արժէր եւ որ նա զգեցել էր
իրաւամբ իբրեւ հարուստ ժառանգուհի :
Մագմաղինէն ընդունեց Էվարիստ Սէն — Սօր-
լէնի բազուկը եւ սեւազգեստ մայրը գնաց

դստեր կողքից ծանր և ուղորդ ընթացիւք .
նա վերադարձուցել էր նախկին անաշառ դէմքը
և զինւորանման գնացքը . ուստի այդ թատրո-
նական դէպքի հանդիսականք կրկին տեսնում
էին Բելլոնին . Խուռան բազմութիւնը ձեղքուե-
ցաւ , ամենքը շշնջում էին . միմեանց կամաց
հարցնում էին , ոչինչ չ'էին հասկանում , եւ
այլ և այլ բաներ ենթադրելով , ծիծաղում էին .
Այս մարդիկ շրջան կազմեցին այն սրահի մէջ .
ինչ տեղից ժառանգուհին անցնում էր . իսկ
կանայք բազմոցների վերայ կեցած , ակնապիշ
նայում էին նորա առասպելական հանդերձին .
Հրաւիրականք արմնուկով միմեանց խմբում էին ,
ցուցանելով տանուտիրոջ Սէն - Սօրլէնի տա-
պալեալ կերպարանքը , տիկին Լէկուրի թափ-
նալի հայեցուածը . Բեռնարի դեղնութիւնը
եւ չքնազ Լոռի բորբոքուած այտերը . իսկ
Պ . Եվարիստ Սէն - Սօրլէնը , բոլորովին զուարժ
և ժափիտը շրթունքի վերայ , տանում էր օրիոր-
դը դէպի բազկաթոռը .

Տէր Աստուած , բնչպէս մի բոպէի մէջ
չքնազ Լոռը սասափիկ զզացել էր Մագթազի-
նէին հրաւիրական տոմսակ ուղարկած լինելուն
վերայ : Այն ոլաքը՝ որ նետել էր դէպի օրիորդ
Մարսելէթը , դառնալով հարուածում էր իւր
սիրտը : Նա չը գիտէր ամենեւին , թէ փոքրիկ
Մագթազինէն այդպիսի կախարդիչ գեղեց-
կութիւն ունի , այդպիսի պայծառ գոյն , այդ-
քան շնորհազարդութիւն եւ թէ նա կ'ուգայ
այդպիսի անպատեհ ասզնակար զգեստի մէջ

վաթաթուած : « Զափը երեք հարիւր ֆրանք ,
ասաց նա իւր սկեսրին , կարծելով , թէ նա էր
իւր կողքում : Երեւի՝ վաշխառուի ստացուած-
քը ամբողջ չ'են անցել խեղճերի ձեռքը ո . Բայց
այս տեղ չը կային ոչ տիկին Լէկուրը և ոչ
բեռնարը . կանգնած էր միայն Պ . Աէն – Սօր-
լէնը՝ որ մեքենայօրէն ողջունում էր , ըստ ո-
րում Մարտելէթները անցնում էին նորա առ-
ջեւից : Երկու ոսոիսք նմանապէս փոխադարձ
ողջոյն տուին միմեանց , բայց որսպիսի ողջոյն
էր այդ եւ բնչպէս նայեցան նոքա միմեանց :
Պ . Եվարիստը օրիորդի համար առաջարկած
տեղը հասած , սկսեց աշօք որոնել իւր փե-
սային , յուսահատուելով նորան չը տեսնելուց :
Մագթաղինէն նոյնպէս շրջեցուց հայեացքը ,
որպէս զի տեսնէ բեռնարին , բայց սա յիրաւի
անհետացել էր : Այս միջոցին երաժիշտք ոտ-
քի կանգնեցան :

« Առագածութեան ձայնը լսած , Պ . Եվա-
րիստը՝ որ հազիւ թէ հրաժարուել էր Մագ-
թաղինէից , կըկին գարձաւ դէպի նա և խո-
նարհաբար աղայեց նորան բնաւին ուրիշի հետ
չը պարել , այլ միայն իւր հետ : Այդ դէպիքը
յարմար էր երիտասարդ Սէն – Սօրլէնի ճաշա-
կին , ըստ օրում սբանչացած էր նա ժառան-
գուհու գեղեցկութենէն : Մագթաղինէն վեր
կեցաւ , ձեռը տուաւ նորան եւ ներողական
կամ հրամայական նայեացք մի ուղղեց դէպի
նա , կամելով ասել՝ տար զիս նորա առջեւ : Նա
գիտէր , թէ Եվարիստը հասկանալու էր և յի-

փաթաթուած : « Զափը երեք հարիւր ֆրանք ,
ասաց նա իւր սկեսրին , կարծելով , թէ նա էր
իւր կողքում : Երեւի վաշխառուի ստացուած-
քը ամբողջ չ'են անցել խեղճերի ձեռքը ո . Բայց
այս տեղ չը կային ոչ տիկին Լէկուրը և ոչ
բեռնարը . կանգնած էր միայն Պ . Աէն – Սօր-
լէնը՝ որ մեքենայօրէն ողջունում էր , ըստ ո-
րում Մարտելէթները անցնում էին նորա առ-
ջեւից : Երկու սասիք նմանապէս փոխադարձ
ողջոյն տուին միմեանց , բայց որպիսի ողջոյն
էր այդ եւ ինչպէս նայեցան նորա միմեանց :
Պ . Եվարիստը օրիորդի համար առաջարկած
տեղը հասած , սկսեց աչօք որոնել իւր փե-
սային , յուսահատուելով նորան չը տեսնելուց :
Մագթաղինէն նոյնպէս շրջեցուց հայեացքը ,
որպէս զի տեսնէ թեռնարին , բայց սա յիրաւի
անհետացել էր : Այս միջոցին երաժիշտք ոտ-
քի կանգնեցան :

« Սուագածութեան ձայնը լսած , Պ . Եվա-
րիստը՝ որ հազիւ թէ հրաժարուել էր Մագ-
թաղինէից , կրկին դարձաւ դէպի նա և խռ-
նարհարար աղաշեց նորան բնաւին ուրիշի հետ
չը պարել , այլ միայն իւր հետ : Այդ դէպքը
յարմար էր Երիտասարդ Աէն – Սօրլէնի ճաշա-
կին , ըստ օրում սքանչացած էր նա ժառան-
գուհու գեղեցկութենէն . Մագթաղինէն վեր
կեցաւ , ձեռը տուաւ նորան եւ ներողական
կամ հրամայական նայեացք մի ուղղեց դէպի
նա , կամելով ասել՝ տար զիս նորա առջեւ : Նա
դիտէր , թէ Եվարիստը հասկանալու էր և յի-

բաւի վերջինը ևս մի և նոյն միտքն ունէր : Բայց
թեռնարը չ'էր երեւում . քադրիլը կազմուել
էր , ուստի պէտք էր նորա մէջ տեղ բռնել :
Այս միջօցին , մինչ Եվլորիսար կանգնած էր
հանդէապ իւր քրոջ , զգաց որ իւր թեւի
տակով անցուցած օրիորդի սիրուն բազուկը
հետզհետէ առաւել ծանրանում էր , հասկա-
ցաւ նա զայդ և կասեցաւ : Ո՞վ էր չքնաղ Լոռի
զոյդ կազմող ազնուականը : Բժիշկ Դեկլէնը :

Թէ եւ Պ . Դեկլէնի ծանրաբարոյութիւնը
(առանց յիշելու նորա հասակը) վազուց ար-
դէն պարախաղը արգելում էր նորան , այնու
ամենայնիւ այդ բարեգուշակ զիպուածի մէջ
նա բնաւ չը վարանեցաւ , և ոչ մոռացաւ իւր
բժշկական պարտաւորութիւնը և անձնական
արժանաւորութիւնը . նա ստիպուեցաւ տօնել
այդ փառաւոր օրը : Նորա սերտ բարեկամու-
թիւնը երջանիկ փեսայի հետ , ծաղկահաս
նորահարսի հետ , նորա յարաբերութիւնքը
գէպի տիկին Լէկուրը , Պ . Սէն-Սօրլէնը , նորա
իրաւունքը գէպի ամբողջ ակումբը , նորա կարո-
ղութեան երաշխաւորութիւնքն էին : Կատաղի
ցանկութիւն ունէր նա չքնաղ Լոռից իմանա-
լու , թէ ինչ էր նշանակում Մարտելէթների
ներկայութիւնը այդ խնջոյքում , մօտուստ
տեսնելու Մագթաղինէի ականակապ զարդը ,
սպիտակ իբրեւ ձիւն հանդերձը , որոնց մասին
ամենքը խօսում էին և որոնց փայլը շողշողում
էր ամենքի աչաց մէջ : Բարեմիտ բժիշկը կար-
ծում էր , թէ իւր երեւոյթը սաստիկ շփոթե-

լու էր օրիորդին, մինչդեռ միայն ժպիտ պէտք է նկարէր նորա դէմքի վերայ, — ժպիտ պերճ և պայծառ։ Վկայ նորա անպատռութեան և վերջին ժամանակի ցաւերուն՝ որ ինքն էր պատճառել, այժմ բժիշկը վկայ պէտք է լինէր և նորա յաղթանակին։ գործակից այնքան թշնամնաց, կամաւոր հնարիչ այնքան անարդութեան, այդ մոլորամիտ մարդը պէտք է այս տեղ գտնուելը, անարդների պատժից իւրապատկան մասը ստանալու համար միայն։ Այն ինչ քատրիյլը սկսուել էր, Մագթաղինէի ոտքը թռչական զօրութիւն ստացան։ Նորէն հանդիսականը յուզուեցան և յոտն կացին։ Ա Տես ինչ խաղ խաղաց մեղ հետ, ասում էին իւրովի, ինչ սիրուն մարդարիտներ են։ Հասարակաց շնորհը Մագթաղինէի կողմն էր, որսվհետեւ հրաժարուել էր ժառանգութիւնը մերժելու անխորհուրդ դիտաւորութենէն։ Ո՞ր պիսի յօժարութեամբ մի համբոյր պիտի կնքէին տղամարդիկ նորա սիրուն ձեռքին վերայ և մի մկրատ պիտի գնէին կնամարդիկ նորա ասղնագործ հանդերձի մէջ։ Բժիշկը պար դալու խառնակութեան ժամանակ անդիտակցաբար ձմլեց Մագթաղինէի զարդը։ «Ո՞վ առաքինութիւն, ասաց նա, իւր պարակից չքնաղ Լոռին ծաղրական ձեւով, դու ոչ այլ ինչ ես, եթէ ոչ մի անուն։ — Եւ մի յանդուգն ստութիւն, պատասխանեց Լոռը բարձրաձայն։ Օրիորդ Մարտելէթի յաղթութեան մէջ պակասութիւն չը մնաց, իւր ոսօսի թշնամնքն անգամ այդ

յաղթութեան մի մասն էր . պակասում էր մի-
այն բեռնարը՝ որ աներեւոյթ էր եղել . Մագ-
թաղինէն գտաւ միայն տիկին Լէկուրին , ամ-
րացած պատուհանի որմանակի մէջ , մունջ և
կերպարանափոխ , ընդ մէջ երկու հաւատարիմ
բարեկամաց՝ որոնք եկել էին նորան օգնելու .
իսկ բեռնարը :

Յանկարծ օրիորդ Մարսելէթը զգաց իւր
օրաի ուռիլը եւ առաւել արագ բարախումը ,
տառն քրտինքը ծածկեց նորա ճակատը . նա
վախեցաւ որ շնչասպառ կը լինի . Պ . Եվարիստը
զարմանօք նկատեց օրիորդի լուսւթիւնը , մինչ
խօսակցութիւնը շարունակում էր նորա հետ
եւ արդէն բնաւին պատասխան չ'էր ստանում .
Բժիշկ Դեկլէնը՝ որ պարի մասնաձեւութենէն
ստիպուած գալիս էր օրիորդի առջեւ , նայում
էր նորան ծաղրայի վշտակցութեամբ , իրը թէ
նորա ժպտին կը փոխարինէր , բայց Մագթա-
ղինէն կարօտ չ'էր այդ հեգնական ազդարա-
րութեան , նա զիտէր . թէ բեռնարը եաեւը
կանգնած էր .

Այս ծածկաբար մտել էր այս տեղ , իրբեւ մի
աւազակ բազմութեան մէջ , խռովայոյզ աչօք
մի առ մի զննում էր Մագթաղինէի մեծագին
զարդը և ասզնագործ հանդերձը՝ որոնք նորա
երեւակայութեան առջեւն էին բերում կորու-
սած ժառանգութիւնը , հաշւում էր մարգա-
րիաները նորա շէկ մազերի վերայ , զորս անչափ
ոիրում էր . նորա առջեւ շարժում էին , իրը
երկեակ ուրուականք , օրիորդի մատաղութիւ-

նը՝ որ նա մերժել էր և նորա հարստութիւնը՝
զոր չ'էր կարացել գրաւել։ Մտածութիւնը այդ-
ժառանգութեան մասին, որ Մագթաղինէի հետ
միասին կարէր նա վայելել, եթէ կարի իմն փու-
թով ցուցած չը լինէր իւր սրտի խորքը եւ որ
այժմ օրիորդը կրկին ընդունում էր անշուշտ
ուրիշ ում և է տալսւ համար, ցնում էր նորա
հոգին կոյր, տմարդի և անմիտ կատաղութեամբ։
Իւր ապերախտութեան և անարգութեան յիշա-
տակը յափշտակում էր զինքը խայտառակու-
թեամբ։ Այս՝ նորա սովոր բացառմ էր սորջանաց
և ուժանաց դժոխը։ Յաւխտեան, յաւխտեան նե-
րելու չ'էր նա իրան այդ յանցանքը, ըստ ու-
րում առանց պատճառի խայտառակել էր իւր
կեանքը, Նա դիտէր, թէ լրտեսում էին իրան,
ըսում էր իւր մասին եղած չարամիտ դիտողու-
թիւնքը. պարու վերջին մասնաձեւութիւնը ըս-
կըսւում էր եւ ահա քանի մի վայրկենից յե-
տոյ Բեռնարը պէտք է հանդէալ լինէր Մագ-
թաղինէին, մինչ սա դէմքը կը դարձնէր դէպի
նորա կինը՝ որ անշուշտ հարցնելու էր ամուս-
նից նորա բացակայութեան, խռովութեան
եւ դեղնութեան պատճառը։ Կ'ուզէր նա
վախչել սրահից, ուր Մագթաղինէն դեռ եւս
մնում էր, բայց այդ նոյնչափ անկարելի էր
նորա համար այժմ, որչափ անկարելի էր մը-
նալ, մինչ օրիորդ Մարսելէթը յայտնուեցաւ
այդ սրահի մէջ։ Այսպէս նա ստիպուեցաւ
մի քանի քայլ յետ քաշուել եւ աչքերը իր-
փել, մինչեւ օրիորդը կ'անցնէր նորա առջե-

ւից, բայց այս միջոցին մերձեցաւ բժիշկ Դեկլէնը: «Տէր Աստուած, ասաց նա, ինչպէս հիւծուած էք դուք, միթէ դուք նոյնպէս եւ ձեր կինը չ'էիք սպասում այդ ասղնագործ հանդերձի յայտնուելուն:

— Ինչո՞ւ պիտի սպասէի, պատասխանեց Բեռնարը:

— Նոր օրինակ բան, մրմնջեց բժիշկը, բայց ինձ թուի թէ լաւ կ'անէիք, բարեկամ, եթէ գնայիք ձեր կնոջ մօտ ո:

Օրիորդ Մարտելէթը իւր վրէժը առած լինելու բերկրութենէն արբեցած, դարձաւ իւր աեղը եւ նստաւ մօր կողքում, որ մնացել էր մինակ, ըստ որում ոչ ոք այնուհետեւ ուշադիր չ'էր գէպի նա: Մագթաղինէն, Բեռնարը եւ չքնաղ Լոռը բաւական էին ամենիքի հայեացքը զբաղեցնելու: Բելլոնին մոռացել էին:

«Մայրիկ, ասաց Մագթաղինէն, Մէր գործը կատարեցաւ եւ մենք վաղ ընդ փոյթ կ'ելնենք այս խնջոյքից: Ո՛վ, որքան երջանիկ եմ ո:

Բելլոնը տիրագին ժպտեցաւ: «Եւ ես նմանապէս, ասաց նա, յոյս ունէի երջանիկ լինել, բայց տեսնում եմ որ՝ արիւնիս տաքութիւնը եւ հոգուս եռանդը նուազել են վրիժառութեան ուրախութիւնը ճաշակելու համար: Ընդ հակառակն՝ տիսուր մտքեր պաշարում են զիս և երկիւղի մէջ եմ:

— Երկիւղի մէջ, կրկնեց Մագթաղինէն:

— Այդքան թշնամիք յարուցանելով քո գէմ,

հառաջանք ասաց մայրը , Բնչպէս պէտք է պաշտպանես քեզ մինակ , մինչ ես վախճանած կը լինիմ ո :

Բարեբախտաբար Մագթաղինէն չը լսեց . նորա միտքը և ամբողջ էութիւնը այլուր էին :

“ Մայրիկ , ասաց նա , նայեցէք ո :

Բեռնարը բժշկի Խորհրդին հետեւելով , եկել էր չքնաղ Լոռի մօտ : Նորա տառապեալ վիճակը , լափիչ կիղիչ մտածողութիւնքը ապացոյց էին , թէ որքան վտանգաւոր էր լինելու նորա դրութիւնը , մինչ դէմ առ դէմ կը կանգնէր այն անձին՝ որ այժմ նորա կինն էր . Թշուառը , թէեւ յուսահատ , փոյթ գործեց նուաճելիւր կիրքը և յարդարել կերպարանքը , կնոջ քով դառնալէն առաջ :

“ Աերեցէք , որ յանկարծ ձեղնից հեռացայ , ասաց նա կնոջը :

— Ինչու է հարկաւոր այդ ներողութիւնը , միջահատեց կինը այնպիսի կատաղի և հեգնական ձեւով . մինչ զի խղճուկը ստիպուեցաւ մի քայլ յետ քաշուել : Միթէ քաջ յայտնի չէ ինձ , որ դուք գնացել էիք մտախոհելու ձեր զրհարերութիւնը իմ համար , ըստ որում ինձ ընտրելագոյն էիք համարել քան օրիորդ Մարսելէթը եւ նորա հօրեղքօր հարստութիւնը . Կը կարծէք զիս ապերախտ ո :

Այս միջոցին երկուքի նայուածքը բաղնեցին միմեանց , իրրեւ երկուց թշնամեաց սուրեր և բախիւնից լցու ցայտեց Բեռնարի մտքի մէջ :

“ԱՌ, ասաց նա, ուրեմն դուք էք ճարտարել հրաւիրական տոմսակի ուղարկումը դ:

Մագթաղինէն բռնել էր մօր ձեռը և սաստիկ ճմլրւմ էր. Մայրիկ, մրմթեց նա, ես գուշակում եմ դորանց խօսակցութիւնը. կասկածը արդէն գրաւել է երկուքին եւս և այսուհետեւ չեն կարող միմեանց խարել, վասն զի փոխադարձ ատելութիւնը մշտնջենաւոր է :

— Ուրեմն, ասաց տիկին Մարտելէթը, գործը կատարուել է, Մագթաղինէ, եւ քո վրէմը ապահովուած է : Ելնենք այժմ, աղաջում եմքեզ, հրաժարուինք այս սրահից, ուր և ոչ մի բարեկամ ունիմք :

— Դուք ինձ հարցնում էք, թէ ինչու եմ սպասում այլ եւս, չ'էք իմանում. ես մի փափաք եւս ունիմ, այն է՝ տեսնել, թէ ինչպէս կը յարձակուի բեռնարը իւր մօր վերայ :

Օրիորդը ստոյգ գիտէր որ այդ հետաքրքրաշարժ տեսարանը, այդ գերագոյն սփոփանքը իւր համար ներկայացուելու էին : Բեռնարը պէտք է պատժէր իւր մօրը՝ որմէ ինքը պատժուած էր, պէտք է վրէմիանդիր լինէր : Արդէն նորա բարկութեան աղէտաւոր շարժումը ուղղուեցաւ կնոջից դէպի մայրը, այն թշնամուց՝ որ գեղեցիկ խաղէր խաղացել նորա հետ դէպի միւս թշնամին՝ որ զինքը խարել էր, կարծելով. թէ բարերարութիւն էր անում: Նրջեցը նելով իւր նայեացքը հրաւիրականաց բազմութեան մէջ, բեռնարը որոնում էր իւր մօրը, այդ խորամանկ խորհրդականին՝ որ մի ժամ

առաջ փաղաքշում էր դեռ եւս զինքը իրր թէ
մեծ բարիք էր գործել իւր որդուն : Անհրա-
ժեշտ համարեց նա յանդիման կալ մօրը և ճըն-
շել նորան կսկծեցուցիչ գոհացողութեամբ ,
տեսաւ իւր մայրը սուտակասպաս բարեկամնե-
րի մէջ , նոյն որմածակում , կիսով չափ ծած-
կուած վարագուրի քամակում եւ ուղղակի
գնաց դէպի նա :

“Սորա յառաջ գալը տեսնելով , մայրը վեր
կեցաւ տեղից : Յիրաւի նա մտածում էր , թէ
չարայոյդ զգացողութիւնք պէտք է նշմարէր
որդւոյ մէջ . Ո՛հ , որքան անակնկալ էր այդ
ատելութիւնը՝ որոյ դէմ , անտարակոյս նա
պատրաստում էր իւր սովորական քաղաքուշ
խօսքերը՝ որոնց ազդեցութիւնը միշտ զօրեղ
էր եղած նորա թոյլ կուռքի մտաց վերայ ,
բայց այն ինչ սա աւելի մօտ եկաւ եւ մայրը
լսեց այն կշտամբանքը՝ որ թափւում էին որ-
դու շրթունքից . խորամանկ կինը մնաց լուռ .
առաջին անգամն էր որ նա ակնկոր կանգնած
էր որդւոյ առջեւ : Բեռնարը միայն մի խօսք
ասաց , բայց ի՞նչ խօսք : Մագթաղինէն չը կա-
րաց լսել . իսկ տիկին Լէկուրը սարսափիցաւ :

“Մայրիկ , այս անգամ գործը ամբողջապէս
կատարեցաւ , ասաց օրիորդ Մարսելէթը , մօր
թեւը բռնելով . այժմ մենք կարող ենք գնալ :

Երկու կանայք պարտաւորեցան նոյն սրահի
միջով անցնիլ . Նոր շվոթ բարձրացաւ , ամենքը
ցանկանում էին ականատես լինիլ ժառանգու-
հու դուրս ելնելուն և մարդ չը կար , որ հաս-

կացան չը լինէր , թէ օրիորդը ինչ գիտաւուրութեամբ էր եկել այդ խնջուքը և որովհետեւ նա յաղթող էր հանգիսացել , ուստի և բնականաբար գոհացուցիչ ազդեցութիւնը յայտնի եղաւ :

Բայց և այնպէս Եվարիստ Սէն — Սօրլէնը չ'եկաւ օրիորդին առաջնորդելու դէպի դուռը : Միայն բժիշկ Դէկլէնն էր , որ մի քայլ յառաջեց : Նա մտադիր էր իւր թեւը առաջարկել տիկին Մարսելէթին և այդ յիրաւի մի սիրուն խաղարկութիւն կը լինէր , ուղղած դէպի տիկին Լէկուրը , Բեռնարը , չքնաղ Լուր և բոլոր բազմութիւնը , բայց այդ միայն գիտաւորութիւն էր , որոյ կատարման համար համարձակութիւն չ'ունեցաւ .



ԺԳ.

ԵՐԿՐՈՒԴ օրը Տիկին Մարսելէթը վեր չը կացաւ անկողնից : Երեկոյին նա սկսեց խօսել զստեր հետ , նորա ժպիտը խաղաղ էր , բայց դէմքը դժգոյն իրրեւ ձմեռնային երկինք : “ Մագթաղինէ , ասաց նա , մեր բաժանուելու ժամը մօտենումէ , ես պարզ տեսնում եմ զայդ : Ընդ երկար է արդեօք լինելու , թէ ...”

դիտեմ միայն որ՝ մեն ուղեգնացութիւն կայ
առջեւս ո , Մագթաղինէի պատասխանը , ո՞հ ,
միայն լոռութիւն էր և զարհութանք . Եթէ տիւ
կինը որ եւ է պատիր յոյս զգում լինէր կեռ եւս ,
դուտեր հայեացքի մէջ այս վայրկենին կարէր
կարդալ մահահրաւէր վճիռը .

“Ո՞չ ապաքէն առաւել վաղ է այդ քան
դուք մտածում էիք , ասաց Մագթաղինէն ,
Մայրիկ աղաղակեց նա , եթէ զգում էք ծանը
հիւանդութիւն , ահա ես պատրաստ եմ գը-
նալ ”

— Ո՞չ , ասաց տիկինը , ես արգիլում եմ քեզ
բժիշկ կանչել . Զը կամիմ չարախօսել բժիշկնե-
րի մասին , շարունակեց նա մեղմիկ , նոքա
յոյժ կարեւոր են այն մարդկանց՝ որոնք վա-
խում են մեռանիլ . Յիրաւի այդ բուժիչները
բերում են նոցա յուսոյ լապտեր , բայց ես
քաջութիւն ունենալու համար յուսոյ կարգ
տութիւն չ'ունիմ : Քսան տարի կեցայ ես մի
քաջ մարդու հետ , որ մահը հարիւր անգամ
դէմ առ դէմ տեսել էր և ծիծաղում էր նորա
վերայ , ինձ հետ միասին երդի մի անկիւնում
նստած , առանց փոքրադոյն սնապարծու-
թեան ”

— Ուրեմն՝ գործենք և մենք այժմ , ինչ որ
մի ժամանակ դուք և իմ հայրը դիւցաղնաբար
գործել էիք , ասաց Մագթաղինէն . Մահը
դեռ եւս բաւական հեռի լինելով , մենք կա-
րենք ծիծաղել նորա վերայ :

— Բժիշկք , ընտանիք , բարեկամք , շարու-

նակեց այրին խաղաղ ժպիտը շրթունքի վերայ . քաջ գիտեմ , պէտք է գան շուրջ պատեն հիւանդին նորա ճգնաժամին , այդպէս է սովորութիւնը և մինչ որ և է ոգեվար չ'է ուզում ունենալ դորանց , հասարակաց պարսաւանքը մեղապարտ է համարում նորան , իբրեւ թէ անիրաւութիւն գործած լիներ . այդ եւս ընդունուած է : Բայց մեզ ինչ փոյթ է , ինչ կարեւորութիւն ունին մեզ համար այդ սովորութիւնները : Մի թոյլ տար ում և իցէ գալ մեզ մօտ , Մագթաղինէ , ահա ես քեզ աղաւում եմ : Կարելի է կեանքէն մեկնիլ առանց հրաժարական ողջոյն տալու մի քանի այնպիսի բարեկամների՝ որոնք մտերմութեամբ մեզ հետ կապուած չ'էին . Նոքա անցել են մեր մէջ , բայց մեր կեանքը նոցանով շէն չ'է եղել : Ինչու պէտք է ուրեմն վկայ լինին նոքա սրտի վերջին բարախման : Ոչ ապաքէն մեռնելու ժամանակ առաւել վայելուչ է միտքը ժողովել իսկապէս սիրած առարկայի վերայ : Այս այն վայրկեանն է , երբ մարդ պէտք է շղթայքը թօթափէ և աղատ լինի : Անուշնկ Մագթաղինէ , իմ ելից ժամու համբոյրը կամիմ միայն քեզ տալ : Աղատութեամբ մեռանելը մեծ բան չ'է նորա համար , որ սարկական կեանքը փորձիւ ճանաչել է :

— Աւանդ , մրմնչեց Մագթաղինէն սոսկալի ժիգով , ինչպէս կարէք այդ անմտութիւնը խօսել , դուք՝ որ մինչ այժմ միշտ մտացի էք եղած : Ես քաջ գիտեմ որ՝ եթէ մահը

տեսնում լինէիք ձեր բարձի մօտ , դեռ եւս
զգուշութիւն կ'ունենայիք մեղմիկ խօսել նորա
վերայ :

— Մագթաղինէ , ասաց մայրը պարկեշտու-
թեամբ , միայն այն մարդիկ չը գիտեն ինչպէս
պէտք է մեռնել , որոնք չ'են գիտացել . թէ
ինչպէս պէտք էր ըմպել կենաց դառն բաժակը .
Այս գաղտնիքը այն է որ՝ արժանապէս յար-
գենք , ինչ որ անցած է և դէմառ դէմ նայինք ,
ինչ որ գալիս է : Նա միայն կարէ մտածել ա-
պագայ կենաց բազդաւորութիւնները , որ ա-
րիութեամբ ստանձնել է անցաւոր կենաց պա-
տահարները . Ո՞վ թէ , մըքան դառն և ցաւալի է
բաժանուել նրանցից՝ որոնք քաղցր են մեզ . և
մտածել թէ կուցէ այսուհետեւ տեսնելու
չ'են նորանց Ո՞հ , եթէ այդ մասին տըք-
նած չը լինէի , գուցէ այժմ քաջասրաւութիւնս
նուազած լինէր : Իւր վերջին հիւանդութեան
ժամանակ քո հայրը սաստիկ խօսքեր ասաց ինձ ,
բայց նա տղամարդէր : Մագթաղինէ , ես չ'եմ
ուզում որ՝ դու զիս միս մինակ թողթւս Սէն-
Դէնիսում , ուր դու չը պիտի մնաս ինձնից յե-
տոյ , այլ կը ցանկայի ամփոփուած լինել Բելֆօ-
րում , կից իմ ամուսնոյ գերեզմաննին : Ինչու
պէտք է վախճանածները մեկնին երթան այլ
եւ այլ կողմ , մինչդեռ գերեզմանը այն միակ
տեղին է , ուր նոքա մի փոքր ժամանակ կա-
րեն գեռ եւս միասին մնալ : Դու պիտի գաս
մեզ երկուքիս ացցելելու

— Դադարեցէք , միջահատեց Մագթաղինէն ,

այդ ի՞նչ անգութե խաղէ իմ սիրտը մորմոքեցը-
նելու համար : Դադարեցէք, կամ մի այլ եւս
ասէք, թէ զիս կը սիրէք : Դիցուք թէ մա-
հը զարհուրելի չ' ձեղ, բայց իմ լքուած
և անօգնական մնալու միտքը միթէ ահարկու
չ' ձեղ :

— Ո՞չ, այս գիշեր մի քանի ժամ քնեցայ, ա-
սաց հիւանդը, գիտես՝ ի՞նչ տեսայ երազում :
ասրատիեցայ շափազանց անձնասիրութենէս,
բայց երազը տեսել էի և որչափ երջանիկ էի :
Երազս այն էր որ՝ այս աշխարհէ ելնելով, քեզ
եւս տանեռում էի ինձ հետ :

— Կամիք այդ, աղաղակեց Մագթաղինէն . . .
Զեր երազը կարէ կատարուիլ, մի վայրկեանը
շատ է դորա համար . . . , իւ մինչդեռ ես մոռա-
ծում եմ այն օրերը՝ որոնք սպասում են ինձ
ձեղ կորուսանելուց յետոյ, ա՛հ, մի հրազդուրէք
դիս, Մայր :

— Մագթաղինէն, ասաց հաղարապետի այրին,
մօտ եկ, տուր ինձ ձեռքդ : Կարծում եմ մի
ժամ առաջ իրաւունք ունէիր յանդիմանելու
անմիտ խօսուածքս, Աղջիկս, այդպիսի բաներ
շատ ենք խօսել ո :

Մագթաղինէն եկաւ մօր անկողնակալի մօտ :
Տիկին Մարտելէթը հրամայեց նորան նստել,
քաշեց դեպ իրեն եւ համբուրեց նորան :
Աւանդ, կեանքը այնպիսի զգալի կերպիւ հրա-
ժարուամ էր այդ տառապետալ մարմնից, մինչ
զի շրթունքը հազիւ կորէին բացուիլ և խը-
փուիլ դստեր թուշերի վերայ, դայն համ-

բուրելու համար : Այնուհետեւ հիւանդը նը-
շանացի առաջարկեց դստերը գլուխոր դնել
բարձի վերայ իւր գլխու մօտ , գրկեց զայն
իւր ձեռներով և մնաց անխօս : Այդպէս փա-
թամթուած անցուցին նորա օրուայ մնացոր-
դը եւ ամբողջ գիշերը : Մագթաղինէն անյագ
տենջանօք աչքերը բեւեռել էր մօր վերայ , որ
բնաւ չ'էր դադարում ժայտել դէպի գուստորը .
Մահը ընդունելու այս արիսական կերպը եւ
հոգւոյ ու կերպարանաց կատարեալ անդոր-
րութիւնը կատեցնում էին Մագթաղինէի շըր-
թունքի վերայ նորա պատրաստական լաց ու
կոճը , բայց երբեմն մորմոքը եւ հեծեծանքը
սաստակապէս յարձակուելով , խորտակում էին
նորա սիրտը . նա ուղում էր փախչել ընակա-
րանի . որ ե է անկիւնը , որպէս զի ողբայ եւ
հառաջէ ազատութեամբ , ճիգն էր թափում
ազատել ոգեվարի կապանկից , բայց սա կը բըռ-
նէր զայն իւր մնացեալ բոլոր ուժովը . Մագ-
թաղինէն կրկին ընկնում էր գուժարէր բարձի
վերայ և լավիլիզում էր իւր ցաւը . և Մագթա-
ղինէ , ասաց հազարապետի այրին , մինչ առա-
ւոտու լըսը ծագել էր , դիտես ինչ է միսիթա-
րում զիս , մինչ այս աշխարհից հրաժարւում
եմ . ես մտածում եմ , թէ այսուհետեւ քեզ
պիտանի լինելու չ'էի . տառապանքը մոլորե-
ցուցել էր իմ խեղճ գլուխոր : Ոչ ապաքէն
շատուց արդէն դու էիր զիս կառավարում
և իմ փոխարէն մտածում , ուրեմն գարձել էի
քո զաւակը .

— Այսպէս իմցաւըս մայրական համարելու է, դատեցէք ուրեմն,թէ ինչպէս պիտի շար-չարուէիք, եթէ զիս կորուսանէիք.

— Հշմարիտ է, պատասխանեց տիկին Մարսե-լէթը, տեսնում եմ որ՝ հարկ է դադարելքեղ միսիթարելուց, բայց ինձ համելի չ'է սաստիկ լայ ու կոծը իմվերայ. Բարի յիշատակութիւն խառն գորովալիր թաղծանաց հետ, հառաջանք ՚ի խորոց սրտի, մինչ կը մոտածես հանգուցելոյս վերայ, այս է ահա քեզնից ցանկացածս : Քաջ գիտեմ որ՝ դու յաւիտեան զիս մոռանալու չես, որովհետեւ առանձին փափկութեամբ մենք կապուած ենք եղել միմեանց հետ եւ երբոր կուգայ այն ժամը

— Ո՛հ, այդ ժամը հասել չ' դեռ եւս, ասաց Մագթաղինէն :

— Սիրելինս, կրկնեց հիւանդը, ամբողջ քսան տարի դու էիր իմլիակատար ուրախութիւնը : Այժմիսկ, մինչ ոչինչ խօսում չէի, երեակայում էի, չըգիտեմ ինչու համար, քո երեխայութեան ժամանակիը . Թոյլ առուր ինձ ուրեմն յիշատակել այդ ժամանակի պարագայները . կարծես թէ այժմիսկ տեսնում եմ քեզ այն ինչ ծնել էիր . շատ գիշերներ անքուն անցուցի քեզ նայելով օրորոցիդ մէջ եւ քեզ վերայ սքանչանալով : Իմ հոգին դադարել էր իմը լինել, ամբողջութեամբ դրել էի զայն այն ստեղծուածի մէջ, որ ինձնից ստացել էր կեանք, առանց զայն խնդրելու : Կայտառ էիր եւ քո մնունդը առաւել դժուարին էր քան մի փոքրիկ շե-

կահաւու սնունդը , քաղցր էին քո թոթո-
վակը եւ մրալիսի հիացումն էին պատճա-
ռումինձ . իսկ այնուհետեւ Ո՛հ . Մագ-
թաղինէ , ես փափաքումեմ որ մի օր դու լի-
նիս մայր , բայց , վայ ինձ , ես չը կարեմ մոա-
ծել , թէ քանի երջանիկ էի քեզմով , առանց
մտածելու , թէ որքան վիշտ և տառապանք եմ
հասուցել քեզ . Դու մոռացել ես , դու վե-
հանձն ես և չ'ես մտաքերումիմ մոլորութիւնը՝
որ թունաւորեց մեր սիրալիր միաւորութեան
վերջին վայրկեանները . Ինչուց յառաջացաւ
այդ փոփոխութիւնը . Հրապոյրը գրաւել էր
զիս , ինչպէս և միւսներին և դու մօրդ սրտի
մէջ գտնում էիր միայն սոսկալի կշտամբանք և
այնալիսի խորհուրդներ՝ որոնք քո դէմքը ծած-
կում էին պատկառանք . Այդ յիշատակու-
թիւնը ներկայ ճգնաժամիս մէջ տառապեցը-
նում են իմ խիզմք . Ասա ինձ , ասա , Մագթա-
ղինէ , որ ներում ես իմ յանցանքը .

— Այս , այս , ներում եմ , գոչեց Մագթաղի-
նէն , բայց գորանից մեծագոյն չարիք երբէք
գործած չ'էք ինձ .

— Կա ինձ ներեց . կրկնեց հիւանդը կամաց :
Ո՛հ , Մագթաղինէ

Այս միջոցին ձայնը կը նուաղէր , մի թեթև
կարկամութիւն զգաց և գլուխը գլորուեցաւ
բարձի վերայ . Մագթաղինէն ծունը իջաւ ող-
բալով . Բայց ահա ոգեվարը յանկարծ զօրա-
ցաւ , ժպիտը խառն այս անգամ տրամաւթեան
և տարօրինակ հեգնութեան հետ նկարուեցաւ

նորա դէմքի վերայ, կարծես թէ նորա շիջած աչքերի մէջ փայլատակունք շողացին :

“ Աղովեալ լինի 0նօրէ Մարսելէթը, ասաց, նա է զիս սպանում: Առանց նորա անարգ ժառանգութեան, դեռ եւս շատ օրեր կ'անցուցանէինք միասին: Կրկնում եմ, Մագթաղինէ՝ ես մեռած, դու կենդանի, ոչ մէկս չը պիտի մնամք մեր թշնամիների մէջ եւ մեր ամօթոյ վկաների մէջ: Դու չը կարես մինակ մնալ այս տեղ և առանց օգնականի պատերազմը յառաջ տանիլ: Խոստացիր ինձ ուրեմն հրաժարուիլ Սէն — Դէնիսից :

— Խոստանում եմ, մրմնջեց Մագթաղինէն:

— Այժմ կամիմ ննջել. գնա՛, նստիր այն տեղ, ասաց ոգեվարը, ցոյց տալով աթոռը իւր անկողնակալի մօտ: Ինչո՞ւ կ'ուշաս: Մի ժամ առաջ դու իրաւունք ունէիր ասելու, թէ հասել չ'է ժամը. թէեւ թոյլ եմ, բայց զգում եմ որ՝ աւելի լաւ եմո:

Արդէն երեկոյ էր. Մագթաղինէն խարխարանօք գնաց ճրագ վառելու և երբոր բերաւ սեղանի վերայ դրաւ մօր անկողինքի մօտ, նկատեց որ՝ հիւանդը աչքերը խփել էր. օրինդը ճիչ արձակեց :

“ Խելօք կաց, Մագթաղինէ, մրմնջեց տիկին Մարսելէթը, մօտեցներ աթոռդ և տներ ինձ ձեռքդ: Կրկնում եմ որ՝ լաւ եմո:

Յուղաւած վշտագին թաղծանօք, Մագթաղինէն բռնեց մօր հալումաշ ձեռքը՝ որ բացուել էր իւրը ընդունելու համար, գլուխը

կրկին դրաւ նորա անկողինքի եղերը և շարու-
նակեց լսիկ արտասուել։ Ժամանակ առ ժամա-
նակ անասելի անձկութեամբ բարձրանում էր
և քննում էր մօր վիճակը։ Հիւանդը կարծես
թէ յիրաւի քնած էր, որովհետեւ շնչառու-
թեան անհաւասար շըունջը լսելի էր։ Ժամերը
հետղիետէ անցնում էին, Մագթաղինէն ըզ-
դում էր արտեւանունքի ծանրութիւնը։ Երե-
քօրեայ տքնութիւնից յետոյ խոնջութիւնը
վերջապէս յաղթեց նորան և նա ննջեց։

Ուելարը կրկին աչքերը բացաւ, նա վեր-
ջին անգամ ժպտեց իւր դիւցաղնական կեղծիքի
յախղութեան պատճառաւ և մոտածեց, թէ
դուստրը տեսնելու չ'է նորա մահը։ Սաստիկ
ջանք գործեց հսկել գէպի նորա գեղեցիկ խար-
տեաշ մազերը՝ որ անչափ սիրում էր և իւր սա-
ռած շրթունքը կապցուց նորանց։ Յետոյ արձա-
կեց իւր ձեռքը նորա ձեռնից, մի վայրկեան
եւս նայեցաւ նորան քնոյ մէջ և ահա նորա կե-
նաց մնացորդը սպառեցաւ մի կաթիլ արտա-
սուքի մէջ։

Արեւագալը լուսաւորեց սենեկի պատու-
հանները։ Հազարապետի այրին իմացաւ թէ
ժամ էր արդէն, ձեռները խաչաձեւ դրաւ
կուրծքի վերայ և մեռաւ ինչպէս մի զինուոր։



ՄԱՍՆ Բ.

Ա.

Ի ՀԱՅՈՒԹՆ մինչ պարեկները շրջում էին
երբեմն մեր գծում մոլորակի վերայ , ասում
են , թէ նոցա քայլերի տակ ծնանում էին
երկրի ամենայն բարութիւնք . Մեծամեծ ծա-
ռեր , պառուղներով ծանրաբեռնուած , բարձ-
րանում էին օդոյ ընդարձակութեան մէջ . թըռ-
չունները , ձուից նոր ելած , երգում էին դե-
ռաբոյս ոստերի վերայ . դալարիք բողբոջում
էին աւազի մէջ . աղքիւնների կարկաչները
լսելի էին ապառաժի խոռոշներից . Մի այդ-
պիսի պարեկ , թէկն ընկած իւր փոքրիկ եւ
սիրելի հրեշտակին , որուն շրջեցնում էր իւր
հետ ամեն բաների ծանօթութեամք նորան
պատրաստելու համար , շարունակում էր իւր
ծանապարհը . որովհետեւ նորա գործը վերջա-
ցած չ'էր , թէեւ մի ամայութիւն պտղաւէտ
պարտիզի էր փոխարկել , ուստի նա չ'էր դա-
դարում յառաջ գնալ , իւր հայեացքը տարա-
ծելով դէպի հորիզոն . Նկատում էր արդեօք
որ և է դաւառի չարախորժ կողմում խլուրդի
մի քանի դմնդակ շեղեր՝ որոնցից դուրս էին

Ելնում մի տեսակ սեւ, վայրենի և տիսուր շըն-
շաւորներ, նա ցուցանում էր իւր հրեշտակին
ասելով՝ «Ահա մարդիկ ո և արագ շարժում էր
իւր հմայական գաւազանը : Խլուրդի շեղթերը
դառնում էին գիւղական, զուարթալի բնակա-
րաններ, սիրուն ակոսները պեղլում էին դաշ-
տի մէջ, հասունացած հունձքը ուղղորդ կանգ-
նում էր եւ սեւ շնչաւորները, կերակրոյ սե-
ղանը պատրաստ գտած, տրումութենէ գա-
դարում էին : Այսպիսի անցքից յետոյ միայն,
պարեկը վերադառնում էր իւր խորհրդաւոր
բնակարանը, աւանդած լինելով աշխարհի նոր
երկրային դրախտ . հարկ է աւելցնել, թէ նա
թողում էր այդ դրախտի մէջ և մի ապերախտ
ժողովուրդ, թէ եւ այդ պարագան բնաւին չ'էր
խափանում նորա գոհունակութիւնը իւր բախ-
տախոյդ վիճակից :

Արդ՝ այդպիսի պարեկներից մէկը եկել էր
Գէրշ գիւղը, որոյ մասին ասում էին, թէ կոչ-
ւում էր տիկին Մարսելէթ, իսկ նորա ուղե-
կից հրեշտակը՝ ծուլիէթ :

Գէրշ գիւղը անշուշտ կարօտ էր երկնքի և
պարէկի օգնութեան, ըստ որում մարդկայինը
շատուց արդէն պակասել էր այս տեղ : Նորա
մէջ չ'էր երեսում և ոչ մի մուրացիկ, որովհետեւ
ամենքը խեղճ էին : Տասը տարիէն աւելի էր Բա-
րոնների բացակայութիւնը այդ կալուանքից և
այն ապարանքից՝ որ արծուի բոյնի պէս կախ էր
բլուրի քարայրից : Ողորմութեան աղբիւրը ցա-
մաքել էր ծեր գեղջուկների համար, որոնք իւր-

Եանց յօյսը դրել էին զաւակաց բարեպաշտութեան վերայ . բայց և այս գիպուածում, ինչպէս ամենուրեք, որքան և գորովալիր լինէր այդ բարեպաշտութիւնը, որով երջանիկ ծնողք պարարում էին իւրեանց յօյսը , սաստիկ չքառորութենէ չ'էր ազատում զիրենք . Այդ գեղջուկների չոր ու ցամաք առարելուց յետոյ անմռունչ մեռանելու պատրաստութիւնը այնքան յայտնի էր , մինչ զի պարէկին եւս , որ արդէն իրենց աչաց առջեւն էր , թերահաւատութեամբ էին նայում : Բայց գիւղի քահանան և վերակացուն վազուց արդէն իմացել էին այդ հարուստ օտարուհու գալը եւ նորա ոսկէ գետ բղխեցնելու յատուկ գիտաւորութիւնը և մեծ ազմուկ էին յարուցել այդ մասին , մինչդեռ բարեմիտ գեղջուկները գլուխ ները շարժելով ասում էին՝ « Այդքան շփոթմի չնշին բանի համար ո : Առաւել շարախորժ տպաւորութիւն գործեց օտարուհու իջևանելը . այդ ինչ պարեկ էր , որ յայտնվում էր սգաւորի պէս ասրեղէն սեւ շորերով , իրբեւ թէ հասարակ որբ աղջիկ լինէր : Ֆրանսիական խորամանկ ժպիտը նկարուեցաւ այն գէմքերուն վերայ , որոնք ստէպ զուարձանալու առիթ չունէին , մինչնկատեցին որ՝ տիկինը փոստայի կառքով անգամ չ'էր ճանապարհորդում , ինչպէս տեսած էին նախկին երկրատիրոջը , այլ եկել էր Լավալի Շիլժանով՝ որ գիւղից մի մղոն բացակայ էր անցնում , հազիւ քսան երկու տարեկան էին համարում նորան , իսկ նորա հրեշ-

տակին գուցե տասն և վեց միայն , բնչպէս կարելի էր ուրեմն՝ որ շատ արծաթ ունենային նոքա այլոց տալու : Նինականք խորագէտ են և հասկանում են , թէ մատաղ հասակը առատաձեռն է , այլ ոչ հարուստ , բայց և այնպէս անուրանալի իրողութիւն էր , թէ տիկին Մարսելէթը յառաջ քան Գէրշ հասնելը պատուիրել էր գնել իրեն համար մի տուն : Պատեհ ըդ գուշութիւն էր այդ , ըստ որում Օհան Փորնիշէթի տունը , թէև ապարանք չ'էր մի հարուստ տիկնոջ համար , բայց գիւղի մէջ ամենից գեղեցիկն էր : Այսպէս ամբողջ Գէրը զարմացած էր այդ եղելութեան վերայ . ամենքը հետաքրքիր էին և իւրեանց մէջ հարց ու փորձ էին անում , թէ այդ տիկինը բնչ ունէր գործելու իւրեանց նահանգում , եթէ յիրաւի հարուստ չ'էր :

Այդպիսի մի հարց առաջարկեց իրան նոյն բնքն Մագթաղինէն , այն ինչ մոռել էր Փորնիշէթի տունը : Այդ բնակարանի փոքրիկ պարտիզի ծայրում մի հովանոց կար որթատունիկի կամարով ծածկած , պատուական կայանք դիտողութեան տարաշխարհիկ որ և է բնակչուհու համար , որ կ'ուղէր մօտուստ քննել մեր աշխարհի բանուգործը : Մագթաղինէն ելաւ հովանոցը , շրջեցուց իւր երկնագոյն աչկունքը՝ որոնք արգէն թաց էին այն գիտաւորութեան ազդեցութենէն , թէ իւր բարերարութիւնը սփռելու էր այս տեղ և ահա նորա դէմքի վերայ դժգոհութիւն նկարեցաւ :

Օրիորդ Մարտելէթը վերջին անգամ ծավանի գրասենեակը գնացած լինելով, հաղորդել էր նորան իւր ճանապարհորդութեան դիտաւորութիւնը և բարեգործական նպատակը եւ Նօտարը գեղեցիկ պատասխան էր տուել, թէ մարդիկ, և մանաւանդ շինականք, երբէք չը կարեն լինել այնքան թշուառ, որքան նկարում էն դիրենք նորասքանչ մտքի տէր հեղինակներ իւրեանց վեասակար դիրքերի մէջ։ Պ. Ճավոյնը այս դիպուածում վարուել էր բոլորովին պատշաճապէս, առաջ ծաղրելով, իսկ յետոյ զայրանալով. նա պատճառ ունէր զայրանալու, ըստ որում աշխատում էր շրջել օրիորդի միտքը այդ նոր յիմարութիւնէն՝ որ նորակարծեօք առաւել ծաղրելի էր քան նորա գործած միւս յիմարութիւնքը՝ որոնց գլխաւորը այն էր որ՝ մի քողով չը ծածկեց անցեալը, ինչպէս սովորութիւն է վարուիլ անպարկեշտ նկարների հետ, և չը կարաց վայելել վաշխառուի ժառանգութիւնը։ Պ. Ճավոյնը յանդըննել էր միանգամ եւս ներկայացնել օրիորդին, թէ աշխարհը ամեն բան ներում է, բայց ոչ խզմնանաց անչափաւոր անկեղծութիւնը եւ սրտատոչոր տագնապը։ Պ. Ճավոյնը համարձակ ծաղրել էր նորա հովուական բարքը և բարձր ձայնիւ կամեցել էր նորա միտքը բերել, թէ հարուստ լինելով, թէ եւ ակամայ, նա ուրիշ և շատ ընկերական պարտականութիւններ ունէր կատարելու և վերջապէս, թէ փոխանակ գնալու և գիւղական աղքատներին հարստացը.

նելու, պատշաճադոյն էր իւր առաստվծեռնու-
թիւնը ծաւալել քաղաքներում, ուր բարեգոր-
ծութիւնը պսակւում է փառօք և պատուով։
Այսպէս Պ. Ժավոյնը անխնայաբար խստու-
թիւն և ծաղքածութիւն վատնելուց յետոյ .
տեսաւ որ՝ այդ միջոցները անզօր էին օրիորդի
հաստատամութիւնը յեղաշրջելու համար .
ուստի, իբրեւ աղնիւ եւ անկեղծ Նօտար,
կամեցել էր իւր հաշիւները առաջարկել եւ
ստացած դրամագլուխը վերադարձնել օրիոր-
դին, թէեւ ստոյդ գիտէր, թէ Մագթաղինէն
կրկին աղաչելու էր զինքը իւր գանձը պահելու .
Այդ հնարագէտ մարդը, մտածելով, թէ ինչ
որ ներկայում անգործադրելի էր, կարէր յա-
ջողել ապագայում, ընդունեց օրիորդի աղա-
շանքը եւ պահելով նորա արծաթը, ընդդի-
մութիւն չը գործեց այնուհետեւ նորա ձանա-
պարհորդութեան և դիտաւորութեանց . Բայց
իրաւունք ունէր արդեօք հեգնութեան վերջին
յորձանքի մէջ կանխաւ ասել օրիորդին, թէ
հազիւ վեց ամիս անցած, կրկին կը տեսնէ նո-
րան յագեցած տուարածական գաղափարներով.
առանց որ և է բարիք գործած լինելու, ըստ ո-
րում գորա համար կարեւոր պատեհութիւն
ունենալու չ'էր :

Աշնանային մի պայծառ երեկոյ, երբ երկնա-
յին կամարը և անտառներու կաաարը փայլում
էին ծիրանի և ոսկեայ գոյներով, բողոք շինա-
կանք, ուշաբերուած այն յուզմունքից՝ որ պատ-
ճառել էր օտարուհւոյ գալուստը, իւրեանց

տան դռների մօտ կանգնած, խօսակցում էին
այդ տարօրինակ դէպքի վերայ, վայելելով
երեկոյեան զով սիւքը • երեխայք գուրով խա-
զում էին, խկ աւելի փոքրիկները, թաւալե-
լով գլորւում էին աւազի մէջ և պարզ ու խա-
զաղ օդը լցնում էին իւրեանց աղաղակով։
Մի թէ այս տեղ էին այն սեւ շնչաւորները՝
որոնց երեւակայում էր պարեկ Մագթաղինէն,
բորբոքուած նոցա օգնելու եռանդով։ Նշմա-
րանք անգամ չ'էր երեւում որ՝ սովածութեան
տիսուր տեսիլը երը և իցէ մօտեցած լինէր այդ
զուարթերես երեխերքի խարտեաշ գլուխնե-
րուն . ուրեմն պէտք էր յանդգնութեամբ
ծաղքէին օրիորդ Մարսելէթի վեհանձնական
դիտաւորութիւնքը և նորա դիւրաշարժ գործ-
վը դէպի թշուառութիւն . Գիբբերը, ինչպէս
ասում էր Պ. Ժավոյնը, ստել էին .

Սակայն Մագթաղինէն գեռ եւս երկրա-
յում էր այդ մասին, որովհետեւ, եթէ նորա
ականջները ասում էին, թէ նա խարուած
էր, ապշած աչքերը ուրիշ բան էին խօսում։
Նա տեսնում էր որ՝ գիւղացւոց զուարճու-
թիւնը այս երեկոյին բոլորովին զանազանվում
էր իւր չորս կողմը սփռուած տիսուր ամայու-
թենէն, այն է՝ երկրի յոռի մշակութիւնը
կամ կորդ թօղած դաշտերը, ջրերի եղեր-
քում Եգիպտական Եօմնամեայ ամլութեամբ
Նիհարացած կովեր, որոնք կը վնտուէին իրենց
Ճարակը կիսամերկ մարդագետիններու մէջ,
անտառների անօսր եւ անկարգ վիճակը :

Ահա այս թշուառութիւնքը փարատում էին
պարեկի և նորա հրեշտակի տարակուսութիւնը։
Գիւղի մէջ հինօրեայ ապարանքի ստորոտում
երեք կամ չորս խարխուլ տնակներ՝ որոնք պա-
տռհաններ անգամ չ'ունէին և յիսունի մօա
մնացորդ տռւները, հեղձուած խողանի տանիքի
տակ, որդնահար, երերուն, խոր ձեղքուած-
ներով պատառած, որոնք կօրստարեր ժա-
մանակի գործած խորշերն էին քարերի վե-
րայ եւ այս ամենը անկարգ շարած, հա-
մաձայն իւրաքանչիւր գիւղացու անձնական
քմահաճութեան, մի երկայն փողոցի վերայ,
որ արահետ անգամ համարելու չ'էր, ըստ ո-
րում ամեն տարի հունձքից յետոյ, բոլոր յար-
դը թափում էին այս տեղ. այս էր ընդհանուր
և կախարդիչ աեսարանը՝ որ վերջապէս պար-
զեց պարեկի խնդիրը եւ զուարթութեամբ
պատրաստեց զայն դէպի իւր դիտաւորու-
թիւնքը։ Այնուհետեւ քաղցրութեամբ դառ-
նալով դէպի ընկերը՝ որ նոյն նկատողութեան
մէջ էր, օրիորդը առաց, թէ իւր ձանա-
պարհորդութեան աշխատութիւնը կորուստ
չ'է համարում. ըստ որում գէրշ գիւղը թէ-
եւ այնքան թշուառ չ'է, որքան նկարագրել
էին. բայց և ոչ կը օրագո է կամ Աւետեաց
երկիր. ուստի փոքր ինչ աշխատելով, անշուշտ
կը դտնուէին այս տեղ օգնականութեան կարօտ
թշուառներ, որոնց ամենայն կերպիւ բարե-
րարելու դիտաւորութիւնը անցողդողդ էր։

Ժիւլիէթը ոչ միայն զգուշացաւ ընդդի-

մարտնելուց, այլ ընդ հակառակն զուարթութեամբ միաբանեցաւ նորա հետ և խոստանալով իւր օգնութիւնը, ասաց, թէ երկուքը միասին պիտի սքանչելիք գործէին. յետոյ բըռնեց Մագթաղինէի ձեռները և սկսեց համբուրել սիրալիք երախտագիտութեամբ և քնքշութեամբ, որոնք երկարատեւ ժամանակի աղգեցութենէն ընաւին չ'էին նուազել նորա սրտի մէջ եւ խոնարհելով դէպի օրիորդի ականջը, ըստ որում իւր հասակը առաւել բարձր էր, քան Մագթաղինէինը, սկսեց կամաց խօսել այն անձի վերայ, որ ոչ եւս էր այն հոգու վերայ, որ այնուհետեւ հրսկելու էր իւրեանց լքեալ հոգւոց վերայ, այն սիրելի հանգուցելոյն վերայ, զոր բէլֆօր տանելուց յետոյ, հազիւ վեց ամսէն աղատել էին այն տեղէն. Մագթաղինէն նկատեց իւր սեւաթօյր հանդերձը և սկսեց լալ գառնապէս. Մատաղահաս ընկերը՝ որ գիտէր, թէ այդ արտասուքը սփոփելու և քաջալերելու էին իւր բարերարուհուն, ամենեւին չը զղջաց որ այդ արտասուքը թափելու պատճառ եղաւ.

Մագթաղինէն ընկերոջ հետ մոտեւ գիւղ եւ հազիւ մի քանի քայլ առած էին, նկատեցին մի մարդ՝ որ գալիս էր իւրեանց առաջը, հաղած կտակի մաշուած տառատոք, ծանր բրիչը ուսի վերայ, ընթացքը յարմարցընելով իւր հանդարտ, միաձեւ և մրմնջուն երգեյանգին. Մագթաղինէն նշանացի կանչեց

և մարդը հնազանդելով եկաւ : Թէեւ յաղթ-
անդամ պատանի էր սա գեռ եւս , բայց դժգոյն
դեմքից և Ճնշուած մարմնից այնպէս յայտնի
երեւում էր ուժոյ նուազութիւնը , մինչ զի
պարեկը եւ նորա հրեշտակը կարեկցութենէ
դրաւուած մոռացութեան մէջ ընկան եւ մէ
քանի վայրկեան անցնելուց յետոյ միայն կարո-
զացան խօսել : “ Բարեկամ , ասաց վերջապէս
Մագթաղինէն , ի՞նչ էր ձեր արուեստը .

— Ամեն արուեստ բանեցնում եմ , պատաս-
խանեց պատանին բոլորովին զուարթ դիմօք-
ամառը հնձում և ժողովում եմ , Հոկտեմբերին
այդի եմ քաղում , երբ գինի կայ , ձմեռը ան-
տառն եմ գնում տապարով , եթէ ձիւնը ար-
գելք չ'է լինում :

— Ի՞նչ էք ստանում այդ աշխատանքից , հար-
ցուց ծիւլիէթը :

— Օրը քսան սու :

— Քսան սու , ասաց Մագթաղինէն , գոնէ
մինակ էք , ամուսնացած չ'էք :

— Ո՛չ , ամուսնացած չ'եմ , բայց բարեբախտա-
բար ունիմ փոքրիկ եղբայր մի և քոյր , որոնց
սնուցել եմ . քոյրս արդէն տասն և երեք տարեւ-
կան է եւ օրը չորս սու է վաստակում կտաւ
գործելով . ահա քսան և չորս սու երեքիս հա-
մար , եթէ կարելի լինէր ամեն օր աշխատիլ :

Այդ սոսկալի թշուառութիւնը նա պատ-
մում էր զուարթուն ժպիտը շրթունքի վերայ .
Աստուծոյ կամաց անտրատունջ հպատակութիւ-
նը երկնից զաւակ է վարդագոյն շրթունքով

և ախորժավուր ձայնով : Անտարակոյս այդ հը-
պատակութիւնը այցելել էր խեղճ թշուառին
և պահպանում էր նորա ժապտելու քաջասըր-
տութիւնը :

« Վասան եւ չորս սու , Բնչ է ուրեմն ձեր
կերածը ու :

— Ո՞հ , չոր հաց . ասաց պատանին :

Նոյն իսկ երկրորդ օրը պարեկ Մագթաղի-
նէն շարժեց իւր հմայական գաւազանը և ա-
հա հազիւ մի ամիս անցած՝ մեծ փոփոխու-
թիւն գործուեցաւ Գերշի մէջ : Աքանչեմքը
սկսեցաւ կատարուիլ տուների վերայ . չորս
անպատուհան տնակները բոլորովին նորոգուե-
ցան , հին տանիքները վար առնուեցան և խո-
ջանի տեղ սիրուն կարմիր կղմինարով ծածկուե-
ցան , երերուն որմերը ամուր և ուղղակի կանգ-
նեցան : Փողոցի յարդը ընդ օդս ցնդեց և աւաղ
սփռուեցաւ ամբողջ տաքածութեան վերայ ,
արօրը համարձակ անցաւ արտավարի մէջ , ա-
ռաջուայ վտիտ կովերին փոխանակեցին եօմն-
ամեայ առատութեան նոր և պարարտ կովեր :
Յիրաւի մի ամիս միայն բաւական եղաւ այդ
շարմանալի բաները գործելու համար եւ ով
կը կարծէր երբէք , թէ 0հան Փօրնիշէթի
փոքրիկ տունից , ուր երկար ժամանակ բնա-
կում է եղել մի ժլատ մարդ , մի օր այդքան
արծաթ դուրս կուգայ :

Ուբան գեղեցիկ լոդիկներ , որքան օժիտ
ստացան աղջկունք և Բնչպէս սիրեցին զանոնք
իւրեանց տարփածուք : Երջանիկ ժողովուրդ :

որոնց ծերերը այնուհետեւ կարօտութիւն չ'ունէին փորձիւ ճանաչելու զաւակաց բարեպաշտութիւնը եւ գորովը : Բայց այսչափը բաւական չ'էր դեռ եւս : Մագթաղինէն ծերութեան և սիրոյ հետ այդպէս լու վարուելուց յետոյ , բնականաբար չ'ուզեց մոռանալ անմեղութիւնը : Մի առաւօտ Գէրշ գիւղի մէջ հեղեղի պէս թափուեցան բազմաթիւ գործաւորներ , որմաշէն , հիւսն , յարկիչ , առաղձագործ , դարրին , նկարիչ և այլն . Եթէ Առզսմնի տաճարը կառուցանելու լինէին , գուցէ սորանից աւելի մարդիկ ժողովելու հարկ չը լինէր : Աղիւսից շինած հոյակապ տունը բարձրացաւ , լայնարձակ պատուհանների միջով ազատորէն անցնում էին օղը և արեւու ճառագույթները , ընդարձակ դահլիճի մէջ կարգով շարած էին նստարաններ և բարաշէն զանգակատանը կախած էր մի փոքրիկ գտնդակ : Գէրշի գեղջուկները բազմութեամբ ժողովուած այդ խորհրդաւոր շինուածի առջեւ , նկատում էին նորա օր քան զօր յառաջանալը : « Այդ բնէ է ո հարցնում էր մէկը միւսին : Նկարիչները պատախաննեցին , ցոյց տալով դրան ճակատի վերայ այս պատկառելի խօսքը՝ Դոդո՛յ :

Դոդոնց , ա՞ , որքան ծաղրածութիւն արեց դորա վերայ նարոնի⁽¹⁾ Տեսուչը : Գէրշ գիւղում

(1) « Paron » Բառը , իրեւ ախտզոս պատշաճ համարեցին դրել բ . առաջիւն . իսկ իրեւ գոխանակութիւն Ֆրանսիական « Monsieur » Բառին ու . առաջիւն . Ըստ որում վերջնայ համառաջական « Տէր իմ » առկա ուրեք ընդունելութիւն է դը .

ռովորութիւն էր միայն կալուածատիրոջը կո-
չել Բարոն, իսկ Ցեսուչի համար պահուած էր
հասարակ ազնուականաց կոչումը՝ որ է Պարոն
եւ սա միայն էր գիւղին մէջ . Եւ յիրաւի
Պ. Օբրին հասարակ տեսուչների կարգից չ'էր,
ուստի փոքր ՚ի շատէ ազնուական համարելով
իրան, կոչումէր էր Օբրի տէ Բիլիէթ եւ բնաւ
չ'էր ներում որ մոռանային զայդ : Մի ժամանակ
սա պատիւ էր ունեցել այժմու կալուածատի-
րոջ հօր Բարոն Հեկտորի զբօսանաց հազորդ լի-
նիլ և իրեւ վարձատրութիւն այն օգնութեան
որ ցուցել էր նորան նախնեաց կայքը վատնե-
լու գործակցութեամբ, ստացել էր այդ կալ-
ուածներու վարչութիւնը՝ որ գոնէ փրկում էր
զինքը կարօտութենէ : Երեսուն ազարակ, որ-
շափ դաշտավայրեր և անտառներ և հարիւր
հազար ֆրանք արդիւնք մի այնպիսի կալուա-
ծից՝ ուր երկիրը բուսուցանում էր նոյնչափ
եկքան, որչափ և ցորէն . ոչ ապաքէն գեղեցիկ
կալուած էր այդ և ոչ ապաքէն ազնիւ և փա-
ռաւոր էր սորա վարչութեան պաշտօնը, Պ. Օբ-
րին քնքուշ անտիականութեան օրերից սկսած
սիրում է եղել որսորդութիւնը և առաւել ևս
գինու բաժակներ դատարկելը . այժմ իսկ ծե-
րութեան հասակում նա չ'էր դադարում ոչ
զինէմոլութենէ եւ ոչ որսորդութենէ : Որ-

առաջ մը նոր զբականութեան մէջ . կործում ենք . թէ նոյն
իսկ ոչ բռնի իսկամառար որոստնութիւնը կ'ոգու նշանա-
կութեան ընտանութիւնը հասկանալուն :

քան եւ անհոգութեամբ կատարէր վարչութեան պաշտօնը, այնու ամենայնիւ կալուածի մուտքը ժողովում էր մինակ : Ամենքի վերայ ահ ու դող ձգելու համար Պ . Բիլիկթը բովանդակում էր իւր մէջ բոլոր հարկաւոր պարագայքը, այն է՝ որուտագին ձայն, աղիւսագոյն լայն երես, յաղթանգամ եւ բարձր հասակ, գաղանային բարը եւ ամենաչար ծաղրածութիւն : Վարձակալները առաւել կը յօժարէին իւրեանց հոգիքը վաճառել, քան թէ ուշացընել վարձու հատուցումը ամենայն մեծարանօք Պ . Տեսուչին : Այսպէս ուրեմն՝ չըկայ և ոչ մի փոքրիկ ժողովուրդ՝ որ մի բռնաւոր չ'ունենայ և չը գգուէ նորան : Շատ տարի էր որ՝ գիւղականք չ'էին տեսել այժմու կալուածատէր բարոնին և փոքր առ փոքր սովորել էին չը մտածել անգամ նորա վերայ : Պ . Օբրին իշխում էր նորա հրամանաւ, իբրեւ նորա ներկայացուցիչը և ոչ ոք չ'էր տարակուսիլ ընդունիլ նորան իբրեւ կալուածատէր, եթէ նա բնակէր ապա բանքում :

Մագթաղինէի անմոռանալի հռչակաւորութեամբ Գէրշ գալու հետեւեալ օրը այդ ամբարտաւան Տեսուչը այցելութիւն էր արել նորան, ուղեկից ունենալով ծերունի ժողովը դապետին և գիւղի վերակացուին . (Լաժօնէ) որոնց ամեն մէկը թեւի թեւի էր նորա հետ : Պ . Օբրի տէ Բիլիկթը, բարձրից վարուելով այդ մարդկանց հետ, խորամանկութեամբ այնպէս էր ցուցել, իբր թէ այդ ընկերները ստի-

պեղ էին զինքը Թախանձանօք գնալ այդ զար-
մանալի օտարուհուն տեսնելու , մինչդեռ իսկա-
պէս ինքն էր ցանկանում յագեցնել իւր քըն-
նասիրութիւնը : Առանց պատշաճաբար ողջու-
նելու , գրաւուած միայն օրիորդի հրաշալի գե-
ղեցկութենէն , Պ . Օքերին փոքր ինչ մեծարանք
էր ցուցել նորան , բայց և այս բոլորովին աւա-
զակային կերպիւ եւ յետոյ յանդդնութեամբ
հարցել էր , թէ յիրաւի՞ արդեօք , ինչպէս
ասում էին , նա եկել էր իւր բնակութիւնը
այս տեղ հիմնելու այն միակ դիտաւորութեամբ ,
որպէս զի բարիք գործէ , այսինքն՝ խեղձերի
թշուառութիւնը թեթևացնէ , հիւանդներուն
օգնէ և վշտացածները մսիթարէ : Մագթաղի-
նէի հաստատական պատասխանը ստանալուց
յետոյ այդ անհեթեթ Պարոնը բարձրաձայն
ծիծաղել էր եւ յետոյ նոյն քաղաքավարու-
թեամբ մի նոր հարց էր արել զարմանագեղ
օրիորդին , թէ ինչու ողորմածական ընկերու-
թեան քոյր լինիլ չ'էր կամեցել և նոյն ժամայն
նորէն քրքջելով դուրս էր գնացել :

Հետեւեալ օրը եւ շարունակ մի քանի օր
եւս Պ . Օքերին ընկղմուած էր սաստիկ մտածու-
թեան մէջ . Ո՞ր տեղաց էր գալիս այդ ուղեղը
ցրուած օտարուհին , ով էր արդեօք այդ
ծաղկափթիթ ; սիրուն , եւ անտարակոյս հա-
րուստ օրիորդը . գուցէ շատերուն անծա-
նօթ գէրշ գիւղը նա ընտրել էր նորա մէջ
թաքչելու նսղատակաւ և ՚ի հարկ է սորագաղտ-
նի պատճառը զօրաւոր պէտք է եղած լինէր ,

այն է՝ փախչիլ բարեմիտ ծնողներից՝ որոնց
շրջանիատ գորովը դուցէ ստիպուած է եղել
յիմարանոց տանել զինքը, որուն ոչ սակաւ
արժանի իսկ է։ Տեսուչը եղբակացուց վերջա-
պէս, թէ այդ իւր բանը չ'էր եւ ձեռները
լուաց, ինչո՞ւ պէտք է նա ընդդիմանար սիրուն
օրիորդի գիտաւորութիւններին, մինչդեռ սո-
ցա մէջ ուրիշ բան չ'էր տեսնում բացի ան-
մեղ ցնորիք։ Թող ալէղարդ ժողովրդապետը
կարծէր, թէ Նախախնամութեան շնորհն էր
բերել այդ հրեշտականման օրիորդին գիւղաց-
ւոց օգնելու համար։ Պ. Տեսուչը ծաղրում
էր այդ կարծիքը, իսկ որ ինչ վերաբերում էր
կամոնէին, սա ասում էր, թէ բոլոր անցքը
կախարդութիւն էր եւ ավ կ'ասէր, թէ այս
վերջին կարծիքը փոքր ՚ի շատէ ստոյգ չ'էր։

Արդարեւ կախարդական առասպելէր այդ.
զի ահա գէրշի բնակիչը, որոնք սկզբից ծաղրել
էին այդ պարեկի գալուստը, մինչ այժմ իսկ
չ'ին գաղարում և շատերը դեռ եւս, նկատե-
լով իւրեանց բարերարուհուն, գժուարանում
էին հրաժարուել կասկածանքից. գեղջուկները
առ հասարակ ծաղրածու են և սնոտիապաշտ,
որ կին Ֆրանսիոյ հարազատ զաւակաց յատ-
կութիւնն է։ Երբոր Մագթազինէն և փոքրիկ
ծիւլիէթը մտնում էին այն տնակները՝ որ
իրենք նորոգել էին, և նստում էին ընտանեաց
մէջ, պատահում էր որ՝ տանուտէրը առաւել
յօժարութիւն էր զգում երեսը խաչակներելու,
քան բարեհաճութեան ժպիտ ցուցանելու այդ

այցելուհիներին : Այսպէս գիւղացիք ըստ մեծի
մասին միմեանց հարցնում էին , թէ մի գուցէ
խաղաղիկ էին իրանք որ և է խարէական երե-
ւոյթի , իսկ առաւել թերահաւատները պատ-
րաստ էին բոլորովին ուրանալ այդ պանչելա-
կերպ դէպքի իրականութիւնը . այսպէս Պ .
Տեսուշը թուի թէ լաւ էր արել , հրաժարուե-
լով դորա բացատրութենէն : Կարե՞ն նա , եր-
բէք իմանալ , թէ ինչ էր առաջնորդել այդ եր-
կու սիրունիկ մենակեացներին դէպի աշխարհի
այդ ախուր անկիւնը . Յիմարութիւնը , անտարա-
կոյս . բայց քանի չքննաղ և սրտառուչ էր այդ
յիմարութիւնը . որպիսի ազնիւ գարշութիւն
էր մարդկային յոռութիւններէ , որպիսի երազ
էր երեխայական , բայց եւ այնչափ մաքուր ,
մինչ զի Մագթաղինէն ինքը վարանում էր այդ
մասին :

Նա չ'էր ծածկում իւրմէ , թէ այդ նոր
կենցաղավարութեան մէջ ցնորքը և գիւցաղ-
նութիւնը հաւասարակշիռ էին . Տեսուչի շա-
ռագոյն դէմքը , նորա սաստիկ չարամտութիւնը
յիշեցնելու էին օրիորդին , եթէ սա մոռանա-
լու լինէր , թէ այս վայրկենիս նա իւր թշուառ-
կեանքի վէպն էր յառաջ տանում . Պ . Օքրին
շաբաթը մի անգամ այցելելով օրիորդին , փու-
թաջան խնամք միշտ հարցնում էր նորան ,
թէ ինչ նոր բան էր գործել իւր խնամելոց եր-
ջանկութեան համար և ինչ այլ եւս մոտդիր էր
գործել . Եւ որովհեաեւ Մագթաղինէն բարե-
րարութիւնը անում էր անօրոշաբար որպէս

վարձակալներին, նոյնպէս և միւս գիւղացիներին և յայտնի է որ առաջիններին հարստացը նելով առաւելում էր և կալուածքի արժողութիւնը, ուստի Պ. Տեսուչը վստահութիւն ունեցաւ նոյն իսկ բարոնի անուամբ շնորհակալ լինիլ օրիորդից 0'. Պ. Տեսուչը սոսկալի հեգնասէր էր .

Ծերերին օգնութիւնը, մայրերին ձեռնարկութիւնը, սիրոյ բերկրութիւնը, աղջկերանց օժիտի պատրաստութիւնը, տնակների նորաշինութիւնը, գիւղի ընդհանուր գեղակերպութիւնը, բոլոր այդ պարագայները միայն զուարձութիւն էին պատճառում Տեսչին . Մի խելացի մարդ միթէ սորանից աւելի պէտք է շփոթուէր Մագթաղինէի անմտութիւններէն . Մերթընդ մերթ նա մտածում էր, թէ օրիորդին խիստ հարկաւոր էր փակուած կենալ, բայց՝ երեակայելով նորա սիրուն կերպարանքը, կարծում էր, թէ զրկանք կը լինէր այդ : Խոկ եթէ նորան հաճելի էր ցրուել իւր հարստութիւնը ամեն ձեռների մէջ, որ կը բացուէին իրա առջեւ, բնչ փոյթ էր արդիլել զայդ, մինչդեռ ոչ ոք նորա հօրեղբայր, եղբօրորդի կամ քեռօրդի չ'էր . Թող նորա ժառանգները պաշտպանէին զիրենք այդ շռայլութեան դէմ : Այդ տեսարանի ներկայացումը գէրչի մէջ այնքան զուարձակ էր ազնուական բիլիէթի համար, մինչ զի՞նչ միայն ցանկանում չ'էր նորա վերջանալը, այլ ծափահարում էր ամենայն զօրութեամբ և քրքչում էր օրսորդավայել բբտութեամբ

Բայց տես թէ Բնչպէս ծռմռեցաւ նորա դէմ-
քը, Բնչպէս յեղաշրջեցաւ նորա միտքը, երբուր
տեսաւ Դպրոցի կառուցումը :

Եւ ոչ ապաքէն որևէ դպրոցում սովորում
են կարդալ, երբեմն նաեւ գրել. Սատանան
տանի այդպիսի բանը, ինչնու է պէտք շինական
ներին գրավարժութիւնը, որ ազնուականաց
մէջ անգամ շատերը կատարելապէս չ'են սուա-
նում. ¶ . Օրբի Բիլիկիթի կարծիքը՝ որ բնաւին
նոր բան չ'էր, բավանդակում էր իւր մէջ այն
միտքը, իբր երկրագործների կարդալ սովորած
լինելը անշուշտ պէտք է զգուշութեան պատ-
ճառ լինէր նոցա համար, որոնք երկրագործ
չ'էին. Նախ և յառաջ եթէ այդ գեղջուկները
ընթերցող լինէին, ոչ ապաքէն իմանալու էին,
թէ օրէնքը զիրենք կը պաշտպանէ, մինչդեռ
հնուց սովորաբար հակառակը կարծում էին :

Այս անգամ ¶ . Տեսուչը կորցուց իւր հան-
գիստը և զուարթութիւնը, ամեն մի հացկե-
րոյթը վերջանալուա՛ նա սկսում էր սաստիկ
մտածել և այլ և այլ չարանիւթ խորհուրդներ
յղանալ, որոնց մէջ փոքրագոյնը այն էր որ՝
գրով ծանուցանէ նահանգապետին կամ աւ-
րութեան պաշտօնեայներին այդ օտարուհեց
այլանդակ գործերը, որպէս զի տեսնէին եւ
իմանային, թէ մինչ որ աստիճան Գէրշի դըպ-
րոցը շփոթելու էր ամբողջ Ֆրանսիոյ բարեմիտ
մարդկանց ապահովութիւնը : Բարեբախտաբար
կրկին և կրկին մտածելով, նա վճռեց վերջա-
պէս, թէ խնդիրը այս կերպիւ առաջարկելով

Ասդթաղինէի խելացնորութիւնը ապացուցելու համար, անտարակոյս նորան պատասխանելու էին, թէ խելակորոյս է նոյնպէս և ինքը՝ Այսպէս նա տեսաւ որ՝ իւր նպատակին հասնելու համար հարկ էր մի ուրիշ ճանապարհ ընտրել, մի ճանապարհ՝ որ կեղծիւ պբողուած լինէր։

Ո՞վ, ո՞րքան հանձար ծախեց Պ. Տեսուչը Գէրշի այցելուհի պարեկի դէմ ունեցած ոխակալութեան խորքը ծածկելու, կամ իւր ճաշինութան վարդապետութիւնը երկրագործների զատիարակութեան մասին ծպտելու, նոյնպէս և բոլոր այդ բաները կատարեալ յարմարութեամբ գործելու համար։ Ա՛րքան արիւնաներկ նետեր, որքան ընտիր կատարների յորձանք, ո՞րքան հեղնութիւն, բայց բռնաբարութիւն, ոչ երբէք։ Օրը տասն անգամ անցուդարձ էր անում գպրոցի առջեւ ժողովրդապետի հետ միասին։ «Ահա մի գեղեցիկ շինուած՝ որ բռլորովին անօգուտ է, ասում էր նա, այս, այս, բաւական պարզամիտ է այդ մատադօրեայ կինը՝ որ երեւակայում է, թէ Գէրշի բնակիչք կ'ուղարկեն իւրեանց երեխերքին այդ նորաշեն փայտեայ բազմոցների վերայ նստելու։ Խնչպէս էք կարծում, Պ. ժողովրդապետ, գիւղացին առաւել կարօտութիւն ունի քան նորաեզր իմանալու, թէ ինչ է գրուած գրքի մէջ։ Մի միրաւորուէք այդ բազդատութիւնէն։ Եզր քաշում է արօրը, երկրագործը մզում է, ուշեմն երկուքը մի են։ Ճսել էք երբ և իցէ ոզ

Եղները . ոչխարները ցանկացած լինին գրավար-
ժութիւն տալ իւրեանց փոքրիկներին . Քաջ
դիտեմ որ՝ կան գիտուն էշեր , բայց գեղեցիկ
տաղանդները նոցա քարէ գլուխներու մէջ
մոցնելու համար սաստիկ գանակոծութիւն է
հարկաւոր եղել : Հաւատացնում եմ ձեզ , թէ
նոքա բնաւին ցանկութիւն չ'ունեին այդ գի-
տութիւնը ստանալու եւ փառքը վայելում են
ակամայ :

— Պարո՞ն , պատասխանեց ծերունի ժողովը-
դապետը երկշոտութեամբ և խորին հառաջա-
նօք , էշերը որքան և գիտուն լինէին , այնու
ամենայնիւ մշտապէս . . . էշեն , այս , իսկ գիւ-
ղացիք . Պ. Տեսուչ , Գրիստոնեայ են .

— Անէծք և զարմանք . ուր կը լինէինք մենք ,
եթէ Գրիստոնեայ չը լինէին . ես նոցա օգու-
տըն եմ մոածում . Զեր ժողովուրդը չը դի-
տեր , թէ ինչո՞ւ պէտք է նորան Աւետարան
կարդալը , մինչդեռ դուք ամեն կիւրակէ բեմի
վերայ բացատրում էք Սուրբ Գիրքը . Ահա սո-
րա համար նոքա միայն հասկացողութիւն ունին :
Արդ բարեմիտ մարդիկը , ինչպէս դուք վկա-
յում էք , Պարո՞ն Ժողովրդապետ , Եկեղեցի գը-
նում են . բայց թէ նոքա բնաւ հասկանում են
Դպրոց գնալու կարեւորութիւնը . Թող ես
գժոխիք բաժին լինիմ :

Ահա այս էր Պ. Տեսչի անցեղլի համոզու-
մը , ոչ տարակոյս ունէր նա այդ մասին և ոչ
երկիւզ , մանաւանդ որ՝ նա արդէն շրջել էր
վարձակալների մէջ եւ թէեւ ուղղակի չ'էր

արգիլել նոցա ուղարկել իւրեանց զաւակներին օտարուհեռյ շինուածը, միայն յորդորելէր տանը պահել զանոնք, եթէ չ'էին ուղում, հակառակ գործելով, ապագային վարձակալութենէ զրկուել:

Մագթաղինէն այդ կարգադրութեան տեղեկացած, սաստիկ դինուեցաւ նորա դէմ եւ նոյն իսկ հետեւեալ օրը առաջարկեց ծիւլիթին գնալ ամենքի մօտ և երդմամբ հաւատացընել. Թէ բնաւ զզջալու չ'էին, եթէ Տեսչի պատուէրը չը կատարէին. ծիւլիթը շրջեցաւ դիւղի մէջ, երդուեցաւ վարձակալներին, իւր փափուկ ձեռը իբրեւ գրաւ դնելով նոցա կոշկուած ձեռների մէջ եւ Մագթաղինէի անուամբ խոստացաւ մի ամբողջ տարի պաշտպանել զիրենիք՝ որոնք իւրեանց զաւակունքը դպրոց ուղարկելու պատճառաւ կալուածքից կը զրկուէին. Այսպէս ահա մենամարտութիւնը սկսուել էր. Պ. Տեսուչը ապշեցաւ այդ առաջին հարուածից՝ որ ստանսում էր, բայց երբոր հաշուեց բովանդակ գումարը՝ որ անխոհեմ Մագթաղինէն պարտաւորւում էր վճարել և որ առաւել քան հարիւր հազար ֆրանք կ'անէր, ժպտեց խղճալուց. Նա կարծեց, թէ կարէր այնուհետեւ հանդիստ քնել և սպասել, թէ ինչպէս էին կատարուելու այդ բաները. Գէրշի բնակիչք յիրաւի սաստիկ տարակուսութեան մէջ էին. նոքա ցանկանում էին որ եւ է խաղ խաղալ Տեսչի հետ, բայց զարհուրում էին, գիտելով թէ նա այն մար-

դը չ'էր ; որ իւր սպառնալիքը բարձի թողի
անէր . Ռւրեմն մի հարց ներկայացաւ , թէ
երեխայք գիր սովորելու էին , թէ սովորելու
չ'էին . Մայրերը գողրոցի կողմն էին , հայրերը
հակառակելուց շատ հեռի էին , բայց և այն-
պէս ոչ մէկը այնքան քաջութիւն չ'ունէր որ՝
իւր դրացուց առաջ գործի կատարման ձեռ-
նարկէր , իսկ Պ . Օրբին հրճումէր իւր յաղ-
թութիւնով :

Բայց ահա մի որ գիւղի վերակացու Լամօ-
նէն՝ որ ագարակ վարձողներից չ'էր և որ եօթն
գեռահաս աղջկունք ունէր , սոցանից հինգ
մեծերին վեր առաւ և հանդիսաւորութեամբ
տարաւ նոր կառուցած գողրոցը : Օրինակը այն-
քան բարձրից էր որ՝ անշուշտ պէտք էր հետե-
ւողներ ունենար . Հաղիւ կէս ժամ անցած ,
գիւղի մէջ փոշւոյ ամիք բարձրացաւ և մի խառ-
նակ գունդ երեխերի վազումէր պօսալով ,
ինչպէս մեղուաբոյնից գուրս ելած պարը ,
ամենքը շոտապումէին դպրոց : Պ . Տեսուչը այս
միջոցին անպառումն էր և նորա շունը մի կրտ-
ցարի հոտը առած կանգնած էր : Այն ինչ
եկան պատմեցին նորան անցքը , ազնուականը
հրացանը ուսին շտապեց այնքան արագու-
թեամբ , որքան կարէր մի յաղթանդամ մարդ ,
եկաւ հասաւ գիւղը եւ մտաւ դպրոց : Այդ
ինչ տեսարան էր . կրկին սեռի երեխայք բա-
րեկարդօրէն շարուած էին փայտեայ բազմոց-
ների վերաց , տղայք աղակողմ , աղջկունք
ձախակողմ . մի կոյս՝ որ նախընթաց երեկոյին

միայն եկել էր վարժուհու պաշտօն կտտարելու, կանգնած էր դասատան մէջ տեղում. աղջկանց դասում ժիւլիէթը, տղայոց կողմը - Մազմազինէն, երկու կողմից մի մի երեխայ բարձրաձայն կրկնում էին այրուբենի տառերը. Պ. Տեսուչը զարհուրած, մտածեց, թէ ամիս չ'անցած՝ այդ երեխայք սովորելու էին հեգել, իսկ մի տարուց յետոյ - կարդալ: Այսպէս ուրեմն՝ Մազմազինէն արօրի մարդկանց համար աւելի բան էր գործել մի քանի շաբաթի մէջ, քան աշխարհի բոլոր օրէնսդիրը - վաթսուն տարուայ մէջ: Ինչ որ նա հնարել էր, դիմագրաւ մարդասէրները անդամ, որոնք գեռ եւս մտածում են ձրի կրթութեան մասին, հազիւ երազել էին, որքան և յայտնի լինէր նոցա եռանդուն սէրը դէպի ամենայն ստեղծուած՝ որ կոչվում էր մարդ:

Ո՞չ, Պ. Տեսուչը բոլորովին յաղթուած էր հակառակորդից, դուրս եկաւ նորաշէն դպրոցից, բուռն զօրութեամբ իջուց որսորդի գըլխարկը աչքերի վերայ և գլխիկոր գնաց դէպի իւր բնակարանը: Զանազան վրէմինդրական խորհուրդներ հողովելով իւր թանձը գլխում, վճռեց նա վերջապէս հազորդել այս անդամ բոլոր անցքը կալուածատէր Բարոնին:



Բ.

ՉՄԵՌԸ գաշտային տեղերում առաւել
խիստ է նոցա համար, որոնք կեցել են միայն
քաղաքներում։ Նոցա անծանօթ է հիւսիսա-
յին ձիւնախառն հողմը՝ որ դեկտեմբեր ամսոյ
գիշերները ճղելով գալիս զարկում է պատու-
հանի ապակիքը։ օդը պատառելով անցնում է
անտառի խոռոջքը եւ անողորմաքար ջախջա-
խում է ծառերի կմախքը։ Անձկութեամբ ըս-
պասում են առաւօտուն, բայց առաւօտը՝ որ
մի փոքր առաջ քաղցրաշնչում էր միջատների
ըզիւնով եւ թռչունների կռիչներով, այժմ
լուս է իբրեւ մահ։ Արդեօք տիւ է յիրաւի
մեր տեսածը, թէ հիւսիսային բեւեռի արշա-
լոյս։ Անցել գնացել են աշնան ոսկեղօծ արեւ-
մուտքը, ամառնային լուսնական գիշերների
կախարդիչ տեսարանը, պղնձի պարիսալը մեր
առջեւ բարձրացած, փակել է տարածութեան
եւ երազների ճանապարհը։ Երկինքը իբրեւ
բանտ է և նորա ստուերանման կամարը ճըն-
շում է մեր գլուխը։ Երկիրը եղեմնի և թար-
շամած տերեւնների պատանքի մէջ նիրհած է
անշարժ և անկենդան։ Ով որ երկար օրեր ան-
ցուցել չ'է, հաշուելով այն տերեւնները, որ
մնացել եին պարտէզի հինօրեայ ծառերի վերայ
և արտասուք չ'է զգացել աշերի մէջ, տեսնե-
լով վերջին տերեւի ընդ օդս ցնդելը, նա ըսդե-
տէ, թէ ինչ է ձմեռը։

Բայց Մագթաղինէի ներքին կենսականում
թիւնը այնքան զօրաւոր էր որ՝ կարէր պաշտ-
պանել զինքը այսուհետեւ բնութեան տիտուր
աղջեցութենէն : Այժմ պարեկը վարանում
չէր իւր մասին և ապագայն ծածկաբար ահա-
ցուցանում չէր նորան : Եթէ անմիտ եւս լի-
նէր այդ ապագայն , դիտաւորութիւնը՝ որ ձը-
գել էր զինքը այդ այլանդակ աքսորանաց մէջ
եւ նորա բարեյածող կատարումը ջնջելու էին
այդ անմտութիւնը : Մի երազ՝ որ կատարուել
է , արդէն երազ չ'է : Պարեկը և նորա քոյրը
իրանց շուրջը տեսնում էին միայն երջանիկ-
ներ և ինքեւանք եւս երջանիկ էին : Եռանդա-
գին աշխատանաց մէջ նոքա միամտութեամբ
երեւակայում էին , թէ իւրեանց խղճի սփո-
փանքը կը բաւէր մինչի վերջը իւրեանց գործը
կատարելուն : Քաղցրութեամբ յուզուած փո-
խագարձ սաստիկ սիրոյ զգացումից , նոքա հա-
ւատում էին , թէ այդ քնքուշ յարաբերու-
թիւնը մոռանալ կուտար իրանց աշխարհի մը-
նացորդ բաները : Բայց և այնպէս պատահում
էր երբեմն , որ Մագթաղինէն նորէն քննում
էր իւր անցեալը և այսպիսի դիպուածներում
յիրաւի նորան թուռում էր , թէ յետո նայելով
միայն կարէր կարծել իրը իրականութեանց
սահմանից հրաժարուած , մտել էր պատիր ե-
րեւոյթների սահմանը : Յաճախագոյն իւր կան-
խաւ կրած ցաւերու վերայ նա խօսում էր այն-
պիսի անվրդով ձայնիւ եւ հանգիստ հոգեով ,
որպէս թէ այն ժամանակը իւր կեանքի մի մասը

չ'էր, այլ մի առանձին դադարած կեանք էր. յիշում էր սակաւ երբեմն և թեռնարի անունը. մօրը չ'էր կարող միտը քերել առանց գորովալիր խանդաղատանաց եւ առատահեղ արտառուաց, իսկ 0նօրէ Մարսելէթի յիշատակը արդէն ամաչեցնում չ'էր զինքը. Անիծած ժառանգութիւնը մաքրուել էր, ոսկեղէն անձրեսի պէս թափուելով Գէրշի սեւաթոյր երկրի վերայ. Երբոր Մագթաղինէին պատահում էր մի նոր բարերարութիւն գործել, նա ակամայ ժպտելով ասում էր միայն՝ « Բաւական պատժուում է հօր եղբայրս ու Յիրաւի որպիսի պատուհաս էր վաշխառուի ոգւոյ համար, երբոր նորա տոկոսեօք ժողոված արծաթը վատնում էին հովուականութեան մէջ :

Անցաւ ձմեռը, եկաւ գարունը. Մայիս ամսոյ կէսն էր արդէն, բայց սիւքը երբեմն ցրտաշունչ լինելով, թոյլ չ'էր տալիս բոլորովին մորանալ ձմեռան նորոգ անցումը. Պարզ էր արեւը, անըշ-կապուտակ երկինքը՝ որ հաւաբարասիիւռ լուսով փաթաթուած, կազմում էր իբր համատարած մաղ արծաթագործ. Դժնէկի ոստերը՝ որոնք ցանկ էին կազմում գիւղական պարտէզնէրի շուրջը, երկու օրուայ մէջ անուշահուգութիւն բուրեցին, բազմամայ խնձորենիք թագաղարդեցան փոքրիկ եւ փայլուն ծաղկանց փունջերով, նորանին գառնիք բառաջում էին փարախներու մէջ, հաւէրը քըքչում էին գաւիխմներում, աղաւնիք մնչում էին աղաւնէտներում, պարք մեղուաց

դուրս էին թափեռում փեթակներից , ծիծեռ-
նակները թխսում էին նորաշեն տանիքների
ներքեւ . Ժամանակը մօտենում էր Մագթա-
ղինէի համար , երբ նա կարէր սքանչանալ իւր
բարերարութիւններով , ինչպէս խարսեաշ Աե-
րեար՝ որ հաճութեամբ շրջագայելով հին ժա-
մանակի գիւղօրայքը . գիւցական ձայնիւ ոռվո-
րեցուցել էր մարդկանց սերմաննելու և հնձելու
արուեստը . Պարեկը իրաւամբ կարէր ասել . թէ
ինչ որ բողբոջում , բռւսանում և ծաղկում էր
երկու մղոն շրջակայքում , նորա բարեգործու-
թեանց արդիւնքն էր , եւ ահա մի առաւօտ
գնաց նայելու մարդադետինները , արտերը և
գաշտերը .

Մագթաղինէն իջաւ գիւլվէթի ընկերակ-
ցութեամբ Գէրշի ասկառաժուտ զառիվայրի
վերայով և մտաւ գաշտերը . . . 0' . բախտաւոր
գիւղացւոց համար պակասութիւն չը կար այս
տարի , ոչ պարարտ արօտի , ոչ սերմունքի , ոչ
արօրների և ոչ եղների . Օրիորդի առատաձեռ-
նութիւնը կարծես թէ գարնան եւս օգտել
էր , զի ահա հասկը արդէն փայլում էր հա-
ճարի մէջ . որ մերթ կորանում էր հողմից և
մերթ ուղղորդ վերականգնելով , շարժում էր
իւր թեթեւ գլուխը . ցորենի գալար կանաչա-
գեղութիւնը խաղում էր արեգական ճառա-
գայթների հետ և ծաղկազարդ առոյտը արիւնա-
գոյն սփռոց էր ճաւալում երկրի վերայ . Երկու
զրոսուհիք յառաջ գնացին մինչի մարդագե-
տինքը , ուր նմանապէս նկատեցին կարճ միջո-

ցում կատարուած մեծ փոփոխութիւն . խոտը այնքան բարձր էր որ դժուարութեամբ պիտի անցնէին նորա միջով գեղի գետի ափը և ուռիների ստուերը . ծիւլիէթը սկսաւ ծաղիկներ ժողովել , մի պսակ հիւսել եւ նորանով իւր թուխ մազերը զարդարել , իսկ Մագթաղինէն նստաւ , աչքերը դարձուց գեղի գիւղը , հինարեայ ապարանքը և սաստիկ մուխոհութեան մէջ ընկղմեցաւ .

“ Մագթաղինէ՛ , ասաց ծիւլիէթը՝ որ ծաղկունքով պսակազարդուած եկաւ նստաւ նորա մօտ , կամիմ ասել քեզ , ինչու վերայ ես մուածում ։ Նոյնժամանյն այնպիսի յազթողական քրքիչով սկսեց ծիծաղիլ , որմէ վեշտասանամեայ աղջիկը շուտով չ'է դադարում . Այդ հասակում յիրաւի նա նոյնչափ իրաւունք ունէր չը դադարիլ ծիծաղելուց , որչափ Սոխակը — Գարնան գիշերը երգելուց .

“ Ա՛ , գոշեց ծիւլիէթը , պատրաստ եմ դրաւադիր լինել որ՝ տակաւին Գէրշի Բարոնն է քո մուածութեան առարկան :

— Յիրաւի , պատասխանեց Մագթաղինէն , բայց եթէ որքան և իցէ ճանաչում լինէի նորան , գուցէ չը մուածէի նորա վերայ .

— Զգոյշ եղիր , կրկնեց ծիւլիէթը նորէն և աւելի եւս ծիծաղելով , դու կամիս ասել , իրը թէ փոքր ինչ ճանաչելուց յետոյ , չ'էիր ցանկալ առաւել ճանաչել . Ո՞վ գիտէ :

— Աւազ հառաչեց Մագթաղինէն , առած է , թէ ինչ որ է տէրը , նոյն է և ծառան :

— Իսկ դու ինչ ես կարծում։

— Խոստովանում եմ, պատաժանեց օրիորդ Մարսելէթը, Պ. Տեսուչը շատ անգամ իրաւունք է տուել ինձ վատ կարծիք ունենալ բարոնի մասին։

— Ո՛, առածը այս անգամ մեղանչումէ, ազաղակեց ծիւլիէթը։ Ես չը գիտեմ առաւել մեծ զանազանութիւն քան որ Բարոնի և նորա Տեսուչինն է։ այդ մասին իմ տեղեկութիւնքը ստացել եմ Լամօնէից՝ որ Ճանաչումէ եղել կաղուածատիրոջը։ Քաղցրիկ Մագթաղինէ, ահա քո փոքրիկ քոյրը յայտնումէ քեզ, թէ քո մտախունութեան ենթակայ ազնուականը դեռ եւս երեսնամեայ է։

— Թողլինի, ասաց Մագթաղինէն, այս անգամ ինքը ժպտելով, բայց որովհետեւ այդ փոքրիկ քոյրը այնքան անաչառ է որ՝ կամի իմ ցնորամտութեան դատը վարել, թող ուրեմն սովորեցնէ ինձ և իմ պաշտպանութեան հնարը։

— Այդ հնարը դու ունիս, պատաժանեց ծիւլիէթը։ մի զարկ տուր քո հմայական գաւաղանով, սիրունիկդ իմ պարեկ, հրամայէ որ գերշն ապարանքը սանդարամետը իջնէ և այնուհետեւ կը դադարես երաղել։

— Այն, դու իմացար իմ միտքը, ասաց օրիորդ Մագթաղինէն տար օրինակ ամիսուժիւ։ Այդ հոյակապ լոիկ մնջիկ բնակարանը, անդր ՚ի վեր ուղղորդ կանգնած, ոչ ապաքէն իբրեւ սպառնալիք է։ Նորա մեծամեծ բայց տիսուր և միշտ փակած պատուհանները

Թաղկացուցիչ չ'են վերջապէս քեզ համար :
Թող տղայամոռութիւն լինի , բայց դու այժմ
իսկ չ'ես տեսնում որ՝ արեւը բաղիսելով նորա
ապակիներուն , խեղկատակ ճաճանչները ար-
ձակում է դէպի մեզ .

— Տէր Աստուած , մրմնջեց Ժիւլիէթը , ես
տեսնում եմ միայն որ՝ քո երեւակայսութիւնն է
ամեն բանի գոյն եւ պարիսպներուն անգամ
կեանք տուրողը : Բոլորովին ապահով ես արդեօք ,
որ այդ մեծամեծ պատուհանների քամակում
չը պիտի տեսնես ուրուականներ՝ որ բուռնը
բարձրացուցած՝ դէպի քեզ կը յառաջանան :

— Մազրէ , ծաղրէ , ասաց Մագթաղինէն հա-
ռաշանօք . որքան պատճառներ ունիմ ես այդ
երկիւղիւ զգացուելու համար , թէ եւ ծաղու-
արժանի լինէր այդ քո կարծեօք . սաստիկ վը-
տացած սիրող վրդովում է մի թեթեւ պա-
րագայից անգամ . Ո՞հ , իմ անուշիկ , ներում
եմ քեզ այդ անգիտութիւնը .

— Գիտեմ ես այդ , որպէս դիտեմ ուրիշ շատ
բաններ եւս , պատասխանեց Ժիւլիէթը , ողջա-
գուրելով Մագթաղինէն : Տեսնում ես ահա ,
լաւ չ'էի ասում քեզ . թէ պէտք է կործաննել
այդ վտանգաւոր ապարանքը՝ որ համարձա-
կում է մի տէր ունենալ , իբր թէ չ'էր կարելի
որ՝ այս տեղ լինէր մի ապարանք առանց

— Բայց դու բնաւ չ'ես մտածել , միջահատեց
օրիորդ Մարսելէթը , որ մեր գործը նոր է
սկսւում և մի մարդ կայ աշխարհում , որուն
շատ հեշտ է բոլորը եղծանել : Դու բնաւ չ'ես

մասնել, թէ Բարոնի իշխանութիւնը հիմնուածէ նորա հարստութեան վերայ, Թող նա դայ եւ այն ժամանակ դու կը հասկանաս, թէ ինչ են նշանակում անունը և կախարդիչ անցեալը: Նորա նախնիքը այս տեղ տէր են եղել և դու, իրբեւ երեխայ, չը գիտես, թէ այն ամենայն՝ որ ժամանակի յարատեւութեամբ նուիրագործուածէ, մեծ զօրութիւն ունի միամիտներու աշաց առջեւ: Ես կը ցանկայի միայն իրողութեանց ականատես լինիլ հեռուից: Տեսուչի հեգնութիւնիքը եւ ապիրատ սրամտութիւնը միտս բերելով, կարծում եմ թէ նորա անարդքութիւնը կարէ հրապուրել Բարոնին . . . : Մի կանխազգգաց խորհուրդ սրտիս խորբն է անցնում և ինձ ասում է, թէ մեր թշնամին մօտ է:

— Ի՞նչ փոյթ է մեղ, ասաց ծիւլիէթը այնպիսի փիլիսոփայական յամառութեամբ և վըստահութեամբ, որոնք ամենեւին անակնունելիք էին նորա ընկերին: Ե՛, չը գիտե՞ս արդեօք, որ երկիրը ազատ է. ով ունի ուրեմն իրաւունք արգիլել քեզ բնակել այս տեղ ըստ հաճոյիցդ և ցրուել քո արծաթը: Գուցէ ասե՞ս՝ Բարոնը, — Ոչ երբէք: Նորա նախնիք կարէին լիակատար իշխանութեամբ թագաւորած լինիլ այդ կալուածքին, բայց նոցա այժմու սերունդը չը կարէ նոյն իրաւանց վերայ հիմնուելով, խափանարար լինել քո բարեբարութեանց, թէեւ այդ լինէր նորա սեփական գիւղի մէջ: Թող նա մեղ ցոյց տայ, թէ ինչպէս է ընդդիւ-

մանալու և ես ահա կանխաւ ընդունում եմ
ճակատամարտը նորա դէմ։ Իսկ Եթէ դէպ լի-
նէր նորան գործել Ցեսուչի պէս և ճաղբել....
Օ՛, միթէ տարակուաելու ես նորա աշաց առջեւ
շարունակել քո գեղապանծ գործը, որբան եւ
ծիծաղէր նա։

— Ազնուական մարդիկ, որոնց կարգից է և
Բարոնը, բնաւ չ'են ծիծաղում այդպիսի բանե-
րու վերայ, բայց նրանց մի թեթեւ ժպիտը
առաւել սոսկալի է։

— Ինձ թուի, թէ այդ ժպիտը առաւել ապա-
ցոյց է բարեբարոյութեան, պատասխանեց
ծիւլիէթը միամոռութեամբ, բայց դուցէ իմ
կարծիքը թիւր է։

— Ո՞չ ապաքէն դու ինձ ասացիր մի ժամ
առաջ, թէ Բարոնը հաղիւ երեսնամեայ է,
ասաց Մագթաղինէն մտածողական դիմօք,
փոքր ինչ լուս կենալուց յետոյ։ Այդ լուրը
բարեգուշակ է, ըստ որումլած եմ յաճախա-
գոյն, թէ երեսնամեայ հասակում մարդու
սիրտը առաւել ազնիւ է, քան վաթսունամեայ
հասակում, բայց կանոնի մէջ լինում են և բա-
ցառութիւնք։ ինչուց գիտենք ուրեմն որ՝ դա
եւս մի բացառութիւն չ'է և թէ այդ ամբար-
տաւան ազնուականը

— Է՞հ, ով ասաց քեզ, թէ Բարոնը ամբար-
տաւան է, միջահատեց յանկարծ ծիւլիէթը։
Ո՞հ, Մագթաղինէ, ուր է քո իմաստութիւնը,
քո բարութիւնը, չ'եմ աեսնում այդ յատկու-
թիւնները։

— Երեխայ, Երեխայ, ասաց Մագթաղինէն, դու ուզում ես նորոգել մարդկանց սիրտը, դու կարծում ես, թէ ամենեւին անտուժելի են սիրուն պատուանունը, ազնուատոհմ նախանեաց մի ամբողջ շարքը, վարձկան ժողովուրդը և հարիւր հազար ֆրանք եկամուտը :

— Այդ իմ բանը չ'է պատասխանեց նորէն Ժիւլիէթը սաստիկ անհամբերութեամբ . Ես միայն հաւատում եմ որ՝ Բարոնը բարեսիրտ է եւ բարեմիտ, որովհետեւ Լաժօնէն հաստատում է այդ . դիտեմ նմանապէս, թէ նա սիրուն, բարձրահասակ և վայելչակաղմ է . Լաժօնէն նկարագրեց ինձ նորա պատկերը, այն է՝ մազերը կասկագոյն, աչքերը պայծառ . . . :

— Ի՞նչ պատուական նկարիչ է այդ Լաժօնէն, բացադանչեց Մագթաղինէն արտասուախառն ծիծաղով . ի՞նչպէս ես կարծում, եթէ որ և է բանդագուշանք առաջնորդէին Բարոնին դալ իւր կալուածքը և մենք փոխանակ Ալիիփիատէսի՝ տեսնեինք մի Եղորսո, որպիսի աղէտք կը լինէր այդ քեզ համար, խղճուկդ իմ Ժիւլիէթ . Բայց ահա երգվում եմ քեզ, ոչ նորա ծաղիկ հասակը, ոչ վայելտւչ շարժուածքը . սեւ մազերը կամ պայծառ աչքերը հոգս չեն . Ո՛հ, ես կը ցանկայի միայն իմանալ, թէ ի՞նչ պէտք է սպասեմ նրանից :

— Թոյլ տուր ինձ Լաժօնէին քեզ մօտ բերել, աղաղակեց Ժիւլիէթը բարկութեամբ . Ես ուզում եմ որ՝ դու ինքդ հարց ու փորձ անես նորան Բարոնի մասին և անտարակոյս նա կ'ըս-

տուգէ, թէ այդ ազնուականը ոչ ումեք չարիք գործել է . այդպիսի վկայութիւնը մի շինականի շրթունքից ելած, կը նշանակէ, թէ, ընդհակառակն, նա շատ բարիք է գործել . գեղջուկների խօսքի ձեւը այդպէս է, զի ահա և քո մասին նոքա այդպէս են խօսում, մինչդեռ յայտնի է, թէ քո բարերարութեամբ նրանք երջանիկ են եւ կը կրկնեմ թէ գերշիբարոնը բարի է .

— Իսկ իմ կարծիքը այլ է, ասաց Մագթաղինէն վճռական կերպիւ . Ո՞չ, մի դժկամակիր բնաւ . ես հաւատում եմ որ՝ նա կատարեալ ազնուական է, այն մեծամիտ և սկեպտիկեան պատրիկների շառաւիղ, որոնց սիրութ անտարակոյս վեհազնական կը լինէր, եթէ չը լինէր թոյլ եւ անհոգ . Նորա անտարբերութեան ապացոյց է այն կեանքը՝ որ նա վարում է, զի ահա ամբողջ տասն տարի տաղտկութիւնը քաշը բրցում է նորան Եւրոպայի մի ծայրից գէպի միւսը, մինչդեռ այս տեղ շատ բարի և նուիրական գործեր ունէր կատարելու . Նորա փոյթը չէ, թէ նրապիսի վաստակոց գնով, նրապիսի թշուառութեամբ է ստացւում այդ տիսուր երկրի հասքը՝ որ ամեն տարի սկսուք է գնայ ընկնի նորա արկղը . Ուրեմն՝ անուշմկ, պէտք է իմանաս որ՝ այդ ազնիւ ինքնասիրութեան գաղափարն է ինձ ակամայ բորբոքում . Ո՞չ, ծիւլիէթ, ես վախում եմ քո գեղազարդ աղնուականից .

— Դիցուք թէ անիրաւութիւն է այդ և թէ

Հիրաւի նորան կը վերաբերէր գործել, որ ինչ
դու գործեցիր, քաղցրիկ Մագթաղինէ, նորան
կը վայելէր այդ դիմագրաւութիւնը, բայց եթէ
այդ հոգսը նա թողել է մեզ, ինչու ուրեմն
գոհ չ'ես որ՝ նորա փոխանորդ ես տառապելոց
համար: Եթէ բարեգործութեանց թագը եւ
պարծանեքը թողել է քեզ, իրաւունք է արդեօք
ատելութիւն ցուցանել նորա դէմ:

— Հապա, գոշեց Մագթաղինէն ոտքի վերայ
կանգնելով, մի գուցէ մոքումդ դրել ես ապա-
ցուցելինձ, թէ ես ունիմ պարտաւորութիւն
Բարոնի առջեւ ո:

Թէկն ընկած ընկերոջ բաղկին, Մագթա-
ղինէն ուղեւորեցաւ դէպի գիւղ: Ժպիտը
բոլորովին չ'էր հեռացել դեռ եւս նորա շըր-
թունքից, որովհետեւ նա մտածում էր ժիւ-
լիէթի յամառ պաշտպանութեան վերայ, բայց
փոքր ինչ դժգոհ էր և իւր սաստկութենէն
որով յարձակուել էր Բարոնի դէմ եւ մինչ
առաւել մտածում էր, առաւել նեղում էր
զինքը իւր խիղճը: Ո՞վ ունի իրաւունք պարսա-
ւելու հարուստներին, եթէ ինքը ծնուած և
սնուած չ'է հարստութեան մեղկիչ մթնոլորտի
մէջ: Ո՞վ է այնքան քաջասիրա, այնքան հզօր,
որ ընդդէմ կանգնէ այն մարդկանց՝ որոնք բա-
ժակը ձեռնում ունին, եթէ երբէք չ'է ձգտել
այդ նենդաւոր գինու գոլորշնքը շնչելու:
Ցզիութիւնը ծագում է այն ցանկութիւնների
բաւականութիւնից՝ որոնք արագագոյն կատա-
րուել են, քան թէ յայտնուել էին, ճոխու-

թեան զգացումից յառաջ է գալիս ամբարտաւանութիւնը՝ որ կորստարեր է արդարութեան զգացումին և ազդարար արհամարհանաց դէպի մարդիկ, կամ որ փոքրն է՝ անզգայութեան դէպի նոցա ցաւերը : “Ահա մոլորութիւններ՝ որոնց անծանօթ մնացի, մտածում էր Մագթաղինէն, և սորա պատճառը այն էր որ՝ հարստութիւնը ներկայացաւ ինձ խայտառակութեամբ պատրուակուած և ես չը տիրեցի նորան, այլ եղայ ամօթապարտ աւանդապահ անիծեալ ժառանգութեան : Ի՞նչ իրաւունք ունիմ ուրեմն մեղադրել բարսնին՝ որ ծնել է բարձրագոյն կարգի և հայրենաւանդ ժառանգութեան փառաւոր պարագայից մէջ . . . ո :

Այս միջոցին ծիւլիէթը նմանապէս զբաղեցաւ փոքր ինչ խորհրդանցութեամբ այն տարօրինակ խօսակցութեան մասին, որու մէջ այնքան եռանդ էր ցուցել, մինչ զի չ'էր կարում անցանել դէպի այլ առարկայ . հակառակութիւնը այդ փոքրիկի և նորա սիրելուհու մէջ դեռ եւս տեւում էր, մինչ եկան հասան գիւղը . Ցօնական օր լինելուն պատճառաւ գիւղացիք անդործ էին . Երեխերքի բերկրապատար աղաղակը . մինչ տեսան նոքա իւրեանց բարերարուհիներուն, բարերախտաբար դադարեցուց այն մտածութիւնքը՝ որոնք յուղում էին Մագթաղինէին և ծիւլիէթին . կապելանոցի առջեւից անցնելուս, ուր մի քանի մարդիկ, սեղանի շուրջը նստած, գինի էին խմաւմ, սորմանցից մէկը բարձրացուց բաժակը

և առաջարկեց պարեկի կենացը խմել . ամենքը
բարձրաձայն աղաղակաւ ընդունեցին այդ ա-
ռաջարկութիւնը : Կանայք շտապով եկան շա-
րուեցան տնակների սեամբի վերայ , իսկ մա-
տաղօրեայ աղջկունք շրջապատեցին Մագթա-
զինէին և նորա ընկերոջը , փաթաթուելով և
ողջագուրելով երկուքին եւս . Ամենքը հագել
էին կիրակնօրեայ զգեստ , մարուաւոր գլխարկ-
ներ , մանուշակագոյն գոգնոցներ , կերպասեայ
կօշիկներ՝ որոնց անագեայ ճարմանդները փայ-
լում էին պողովատի պէս . առաւել պյուասէր-
ները ջանք էին գործում ցոյց տալ Մագթազի-
նէին իւրեանց զարդարանքի որ և է նոր բանը :
Պանդոկի առջեւ կանգնած գիւղացիք նայում
էին զուարձութեամբ , իսկ կանայք հեռուից
յանդիմանում էին աղջկանց եւ պատուիրում
էին չը նեղացնել օրիորդներին . թէ Մագթա-
զինէն և թէ նորա ընկերը այս միջոցին բոլորո-
վին մոռացել էին կալուածատէր բարոնին .

Յանկարծ այդ անմեղ գրկախառնութիւնքը
դադարեցին , զի ահա լսելի եղան՝ ձիերու ար-
շաւանաց ահագին գլրդիւն , մորակների հա-
րուածք , զանդակների հնչիւն այն երկու կառ-
քերից՝ որոնք իջնում էին բլբակի զառիվայրով .
սորանցից մինը փոստի կառք էր , իսկ միւսը՝
սայլ՝ որոյ մէջ դիզան էր զանազան սպասքի
սոսկալի խառնուրդ և որոյ վերայ բազմել էին
երեք զյուդ բախտաւոր ծառաներ , անփոյթ
ամենեւին , թէ կողովների եւ սապատների
վերայ էին նստած : Կառքի մէջ միայն մի անձն

կար և սա տղամարդ էր : Աղջկանց խումբը և
նոցա փայլուն հագուստը գրաւեցին սորա
ուշադրութիւնը եւ բնականաբար ստիպեցին
հայեացքը ուղղել դէպի կառքի դուռը : Այս
միջոցին սոյլի մէջ նստած ծառաները, թաշկիւ
նակները ծածանելով, կեցցէ էին աղաղակում
եւ այսպէս ահա երկու կառքը անհետ եղան
ծառուղւց մէջ, որ տանում էր դէպի ապա-
րանքը :

Զարմանքը, ապշութիւնը և լոռութիւնը ժա-
մանակ մի տիրեցին ամենքին . Մագթաղինէն
նմանապէս բեւեռուած իւր տեղում, նայում
էր դէպի այն ճանապարհը՝ որով կայծակի արա-
գութեամբ անցել էին կառքերը : Կանայք յա-
ռաջադոյն սթափեցան քան տղամարդիկ՝ որոնք
միշտ յամբ են նոր բանը հասկանալու համար և
ահա աղմօւկը, շփոթը և խառնակութիւնը ան-
նկարագրելի էր : Գինեմղները հեռացան պան-
դոկից, ծերուկները իւրեանց տանից, երեխայք
իւրեանց խաղից . խիտ բազմութեան շրջանը
ընդարձակում էր, միմեանց խթելով ամենքը
մի հարց էին անում, թէ նա է արդեօք, գէրշի
բարձնն է : Աղջկներից մէկը վազելով գնացել
էր մինչի ապարանքը և վերադարձած, խոնջու-
թենէ ոգեսպառ պատմում էր իւր տեսածը,
այն է՝ թէ մեծ բակը բացել էին, մարդիկ ժո-
ղովուած էին ապարանքի առջեւ, որոյ պատու-
հանները նոյնպէս բացվում էին .

Այս խառնակութեան միջոցին, Մագթա-
ղինէն՝ որ արդէն զգում էր իւր անձկութիւնը

և տագնապը, հաղիւ հազ գտաւ ընկերոջ բացուկը և երկուքը միասին հեռացան այդ խռովեալ ամբոփից: Խորին լռութիւն պահպանելով, գնացին նոքա իւրեանց բնակարանը: Ոչ մէկը չ'էր ուղում խօսել, ըստ որում զօրաւոր պատճառ ունէին լռելու, միայն Մագթաղինէն երեք կամ չորս անգամ յետկոյս նայեցաւ, կարծելով թէ բարեմիտ գիւղացիք՝ որոնք մի ժամ առաջ տօնում էին իւր ներկայութիւնը, անշուշտ նկատելու էին եւ հեռանալը. բայց, աւազ, այդ յոյսը ունայն էր, պարեկը յիշող ըրկար . . .

« Ուրեմն՝ ասաց Մագթաղինէն, նա եկել է և մենք այժմ կը տեսնենք, թէ մեղնից որո՞ւ կարծիքն է ուղիղ նորա մասին:

Ժիւլիէթը տրամադիր չ'էր պատասխանելու:

« Ա՛, ի՞նչ ես մտածում այդ փառաւոր կառքի մասին, հարցուց Մագթաղինէն:

— Սայլը ըստ սիրեցի, պատասխանեց Ժիւլիէթը միամտութեամք ո:

Եւ յիրաւի Մագթաղինէն նոյնպէս նեղանում էր այդ սայլի պատճառաւ. Անիծած սայլը նախ՝ գեղեցիկ ասպացոյց էր բարոնի եւ նորա նման իշխանների բարուց, որոնք իւրեանց հետքից ամենուրեք տանում են ծառանների մի ամբողջ խումբ. և երկրորդ՝ յիշեցնում էր, թէ կալուածատէր աղնուականը միայն մի օր մնալու համար չ'էր եկել իւր նախնեաց ապաքանքը: Ի՞նչ ելք պէտք է ունենար այդ դի-

պուածը . Բնէ պատեհութիւն և մի գուցէ ճա-
կատագրի որ և է կատակ էր այդ . Մի ժամ
հազիւ անցել էր թէ չ'է , մինչ առուակի մօտ
նստած , անհոգութեամբ երազաբանել էին
թշնամու մասին , և ահա նա իրապէս յայտնը-
ւում էր իւր բարձրաբերձ պալատում . Մի
ժամ առաջ միայն ծանկում չ'էին իւրեանց եր-
կիւղը նրան տեսնելուց որպէս եւ անհամբե-
րութիւնը զայն ճանաչելու համար եւ ահա
նա այս տեղ էր : Նորա գալուստը կարծես թէ
մի օրհասական հարուած էր եւ միանգամայն
որ և է կատակերգական խաղու սկզբնաւորու-
թիւն . Այս միջոցին Բնէ էին գործում ար-
դեօք Գէրշի Բարոնը և ազնիւ Բիլլէթը . Պ. Տե-
սուչը անտարակոյս ժամանակ կօրուսանելու
չ'էր ամեն բան իշխանազնին բացայացտելու հա-
մար և երկուքը միասին արմուկները պատու-
հանին յեցած , նայում էին այժմ գէպի այն չոր-
ու ցամաք Գէրշ գիւղը՝ որ կանաչազարդու-
թեամբ փոխակերպուել էր և խօսում էին . . .
ինչո՞ւ վերայ :

Մագթազինէի նախկին և վճռական դիտա-
ւորութիւնն էր փակուիլ իւր բնակարանի մէջ .
Նա դատեց , թէ առաւել պատշաճաւոր որո-
շումն չ'էր կարող անել . բայց եթէ՝ մեկուսի
մնալով , սպասել բանի վերջին . Տուն դարձած
իսկոյն մտաւ իւր սենեակը . ժողովեց գրեանքը ,
հաստատուն դիտաւորութեամբ պատրաստեց
զանազան ասղնագործելիք , իբր իւր պաշարեալ
միմակի պիտոյքը . Յետ այնորիկ զընեցաւ տան

մէջ մէկ ամբողջ ժամ, ուխտելով բնաւ դուրս
չ'ելնել, եւ միանգամայն տոֆորելով արգելա-
կան մնալուն համար : Այսպէս սկսեց նա մը-
տածել, թէ խոհեմութիւնը, պատուիրելով
իրան ծածուկ մնալ, արգելում չ'էր գոնե
դուրս գալ պարտէզը, ուր աշխարհի և ոչ մի
Բարսնը կարէր զինքը տեսնել . հետեւաբար
նա վճռեց և իջաւ պարտէզ : Արտմոնութիւնը
եւ խոփութիւնը եկան ընկերանալու այդ
զբօսանաց մէջ . դժնդակ միտքերը կալուածա-
տիրոջ դէմ, իրբեւ գրգռուած մժղուկների
պար, չչնջում էին նորա շուրջը . երեւակայու-
թիւնը անդադար ներկայացնում էր խոռ-
վութեան զանազան պատճառներ եւ նորա
ոտքի տակ բացում էին օտարոտի կարծեաց և
ենթագրութեանց անդունդներ :

Ժիւլիէթը նմանապէս քայլամոլոր շրջում էր
պարտէզի մէջ . բայց սա մի ուրիշ ծառուղի էր
ընտրել իւր զբօսանաց համար, ուստի ոչ խօ-
սում էին նորա եւ ոչ աեսնում միմեանց .
Երկուքը եւս այս տեղ էին, իսկ միտքերը—այ-
լուր : Կոցա ականջին հասած մի թեթեւ շշուկ,
իսկոյն կասեցնում եւ զարհուրեցնում էր
նորանց : Ժիւլիէթը յանկարծ նկատեց Մագ-
թազինէի բացակայութիւնը, իսկ սա ժիւլիէ-
թինը : Մէկը պարտէզի ծայրը անցած, պատրս-
պարուել էր կաղնւոյ ստուերում, իսկ միւսը
ապահովուել էր տան և մի մեծ ծառի միջեւ
և ահա հազիւ մի բռպէ անցած, դէմառ դէմ
հանդիպեցին միմեանց, մինչ հանդիմակաց

ծայրերից վեր էին ելնում որթատունկով ծած-
կուած հովանոցը , ուրկէ ամբողջ գիւղը կ'ե-
րեւէր . Օրիորդներին կը վայելէր տրատում լինիլ,
բայց ի՞նչպէս խափանէին ակամայ ժափար .
Դժբախտաբար որթատունկը Մայիս ամսուն
դեռ եւս ճոխ չ'է տերեւօք , որպէս զի հովա-
նոցը ապահով ապաստանարան լինէր օրիորդ-
ների համար յաջաղիստ նայուածքների դէմ .
Մագթաղինէն փորձիւ հաստատեց զայդ , մինչ
նկատեց Պ . Տեսուչին՝ որ այս միջոցին գիւղումն
էր . Այդ յաղթանդամ մարդը շատ սուր աչքեր
ունէր չը սիրած բաները շուտ տեսնելու հա-
մար . Մագթաղինէն կ'զուր յետ քաշուեցաւ ,
որովհետեւ Տեսուչը արդէն տեսած էր զինքը .
Հովանոցի ստորոտը կանգնած , նա գոչում էր
բարձրաձայն՝ « Դէհ , սիրելիք , դէհ , որդեակք
իմ , Բարոնը եկել է , կեցցէ Բարոնը ո . և բո-
լոր ամբոխը նոյնը կրկնում էր նորա քամակից :
Պ . Յարին իսկապէս հաւասարի էր , թէ այդ ա-
ղաղակը լսելով , օրիորդ Մարսելէթը յառաջ
կը գար , թէեւ այդ լինէր միայն իրողութիւնը
ստուգելու համար և ահա նորա նախատեսու-
թիւնը յաջողութեամբ պսակուեցաւ . որովհե-
տեւ օրիորդի ծիւրուած դէմքը երեւում էր
Ժիւլիէթի քամակից , որ պատնէշ էր կանգնել
քրոջ առջեւ . Տեսուչը խորին ակնածութեամբ
ողքունեց նորան . « Դէհ , քաջորիկ բարեկամք ,
սիրելի որդեակք , կրկնեց նա իւր քայլանդա-
չութիւնքը , Բարոնը ձեր հայրն է , դէհ , ով է
ձեր մէջ , որ կամակարութեամբ ձի կը հեծնէ .

և կ'երթայ քաղաք մի քանի արուեստական բան
բերելու . պէտք է տօնել մեր իշխանի գա-
լուսար , “Մագթաղինէն կարծեց , թէ բոլոր
ժողովուրդը կը յօժարէր գէպի այդ առաջար-
կութիւնը : Բայց՝ որովհետեւ Տեսուչին միայն
մի մարդ էր հարկաւոր , ուստի ընտրեց մի ու-
շիմ և գործունեայ տղայ , որ ձի հեծած ուղ-
ղեցաւ արշաւանօք գէպի քաղաք , Ազնուական
Բիլիէթը խկոյն ելաւ գնաց տօնախմբութիւնը
պատրաստելու . իսկ ամբոփունորա հետքից գը-
նալով , շարունակ գոչումէր՝ Ակեցցէ՛ բարոնը ո :

Ակս ժամ անցած , Գէրշի բնակիչը երկու
դաս բաժանուած , մեծ փողոցի միջով գնում
էին գէպի վեր . արք գլխարկներուն կապել
էին կանաչագոյն ծոպեր , իսկ կանայք մէջքի
կամարներուն : — Կարծես թէ բարոնի սիրածն
էր կանաչ գոյնը . Երեխայք նմանապէս ծաղ-
կաղարդ էին : Պ. Տեսուչը , Ժողովրդապետը և
Լաժնոնէն խումբի գլուխը անցած առաջնոր-
դում էին գէպի ապարանքը : Ո՞չ ոք չը մտա-
ծեց մի անգամ նայել գէպի Մագթաղինէի
գձուձ տնիկը , Գէրշի բարերար պարեկի բնա-
կարանը . միայն Պ. Տեսուչը հեղնական դիմք
գարձաւ գէպի հովանոցը , ուր այժմ ոչ ոք չը
կար , ըստ որում Մագթաղինէն հեռուից նը-
կատելով կանաչ խոյրերը և ծաղիկները , մաել
էր պարտէզ եւ ծիւլիէթի գիրկը ընկած ար-
տասումէր : “Ո՞վ ապէրախաններ , ասում էր
նա ո :



շեր շտապաւ վճռել պարզամիտ շինականների սպերախառութեան ամբաստանութիւնը , ըստ որում անշուշտ նորա վշտացած էին բարերար տիկնոջ բացակայութեամբ եւ ստրջանքն կամ երկիւղը միայն արգելում էր նոցա գալ և ստուգել այդ բացակայութեան պատճառը : Բայց ստոցդ միայն այն էր որ դիւղականք չէին դալիս և Մագթաղինէն օր քան զօր առաւել զայրանում էր : Փորձեց ծիւլիէթը երգով ըզբոցնել նորա միտքը , բայց ունայն . սիրուն գեղգեղահքը հանգչում էին իւր իսկ շրթունքի վերայ և սա ինքը նոյնպէս տրտում և մտամուր , որպէս և Մագթաղինէն , շրջում էր անձուկ սպարտէղի մէջ , ուր արեգակի ճառագայթները չը կարէին մտնել ազատութեամբ : Այդպիսի վիճակը շարունակուելով մահու չափ տաղտուկ պատճառեց մատաղ օրիորդին և Մագթաղինէն նկատելով զայդ , սկսեց խորհել և դատել , թէ անարդարութիւն էր իւր գերութեան հաղորդառնել այդ անմեղ արարածին , ուստի մի առաւտ բացաւ քաղցրիկ թռչունի վանդակը և ազատութիւն տաւաւ նորան :

Այն ինչ տանից դուրս ելած էր , զուարճացաւ ծիւլիէթը արձակ օդ չնչելով . նորա առջև այնուհետեւ երկու արահետք կային զբօսանաց համար . մէկը կը տանէր նորան դիւղի միջով , որ գուցէ ցանկալի էր նոյն իսկ Մագթաղինէնին՝ որ ծածկաբար կարէր սպասել , թէ փոքրիկ քոյրը այս ճանապարհը կ'ընտրէր , որպէս զի մի փոքր բալսամ բերէ նորա որտի վէրքը բժը :

կելու համար, իսկ երկրորդը այն հինգրեայ կատ-
կենիների ծառուղին էր, որ կը տանէր գէպի
բլուրը և պարանքը, Այս վերջինը հրապու-
րեց ծիւլիկթին . ուստի առանց վարանելու
կամ մտածելու վճռեց այդ ճանապարհաւ գնալ,
ըստ որում այդ էր նորա համար առաւել հա-
ճելի . Տասն և վեց ամեայ հասակի համար ոչ
ապաքէն զօրաւոր պատճառ է այդ .

Երեք կամ չորս հարիւրամեայ կասկենիները
իւրեանց մեծամեծ ոստերը տարածել էին ճա-
նապարհի այս և այն կողմը . Ըստ մեծի մասին
էրուած արեւէն, Ճեղքուած պատառուած կայ-
ծակից և բազմամեայ ձմեռների սառոցից . ուեւ
ու չոր բազուկները ուղղել էին գէպի կանաչա-
ղարդ կատարները : Ժամանակը այնպէս մաշել էր
մի քանի ուրիշ ծառեր, որ կարծես թէ նոցա
գլուխները հրաշագործութեամբ էին հաստա-
տուած փորահերձ կոճղերի վերայ, որոնք արդէն
մօտ էին փոշիանալու . Ոչինչ բուսնում չ'էր այդ
ծառերի ստուերում, բացի անօսր և գալարա-
զուրկ խոտերի ցիրուցան խուրձերը . որովհետեւ
ինչպէս գիւղացին ասում է . կասկենին երկրի
ուտիչն է . Ուրեմն՝ հարկ էր որ համաձայն մեր
ժամանակի ճաշակին և գաղափարներուն, դա
լինէր կալուածատիրոջ ծառուղին՝ որ սքանչե-
լապէս պատշաճում էր հօյակապ աշտարակի
աւերակին . հինգրեայ ծառերը կերպարանակից
էին սկայական քարակոյտին . դարերու յամրա-
գնաց ջանքը ծառերը ցտելով, մի օրինակ քայ-
քայել էր և աշուարակի : Մառափողոցը ուղ-

զաշար չը լինելով՝ յարմար էր անց ու դարձը
ծածկելու . ուստի Ժիւլիէթը տերեւազարդ կա-
մարի տակով աներիիւղ գնում էր և բոլորովին
ապահով էր , թէ ապարանքի պատռւհաններից
զինքը չը կարէին տեսնել : Օրիորդը՝ որ սովո-
րաբար աշխայժ բնաւորութիւն ունէր և միայն
վերջին օրերը սասափիկ յուղուած էր . — շրջե-
լով մորի մէջ այլ և այլ օտարութիւնուրդներ՝
որոնց շարժառիմքը այդ զբանաց տեղին էր ,
այնպէս զբաղեցաւ վերջապէս , մինչ զի մոռա-
ցաւ մի անգամ իւր առջեւը նայել , հայեացքը
մեքենայօրէն ուղղած դէպի ծառերի արմատ-
ները . Բայց ահա յանկարծ բարձրացուց աչ-
քերը եւ մի այնպիսի բան տեսաւ , որ զինքը
ստիպեց ընկրկիլ զարհուրանօք . նա պատրաստ
էր փախչել , եթէ կարողութիւն ունենար վա-
զելու

“Արդարեւ , օրիորդ , ասաց Գէրշի Բարո-
նը , մարդասիրութեամբ մօտենալով նորան ,
թոյլ տուէր ինձ օրհնել այդ դիպուածը՝ որ
արժանացնաւմ է ինձ ձեզ տեսնելու բախտին :
Քանի քանի պատճառներ ստիպում էին ինձ
հետ գառնալ այս տեղաց և վախում էի միայն ,
թէ մի գուցէ մեկնիմ առանց ձեզ հանդի-
պելու ո :

Բարսնն էր ուրեմն . տարակոյս չը կար ,
ստուգապէս նա էր , կալուածառէր Բարոնը .
բայց և այնպէս Ժիւլիէթի ապշտութիւնը այն
պէս յանկարծահաս եւ գրաւիչ էր , մինչ զի
արդելում էր նորան հարցանել իւրան , թէ

արդեօք իբապէս Բարոնն էր նորա առջեւ ,
ժպիտը շրմանքի վերայ և գլխարկը ձեռքում։
Ոչ ոք գեռ եւս չ'էր ողջունել նորան այդքան
քաղցրութեամբ . և որքան կորովամիտ պէտք է
լինէր այդ ազնուականը՝ որ , առանց մի վայր-
կեան տարակուսելու , իսկոյն ճանաչեց զինքը ,
թէ եւ երբէք տեսած չ'էր . իսկ Բարոնը , տա-
րակոյս չ'ունէր , թէ ծիւլիէթը նմանապէս ճա-
նաչելու է զինքը , ըստ որում իւր անունը չը յի-
շելով անգամ , ապահով էր , թէ ուրիշ մարդու
տեղ չէին ընդունել զինքը . Ո՞րքան և շփոթուած
լինէր օրիորդը , այնու ամենայնիւ ՚ի խորոց սրտի
շնորհաւորում էր այդ բարեբախտ դիպուածը
և ոչ պակաս քան նոյն ինքն ազնուականը . ան-
հանդիստ էր միայն այն մասին , թէ մի գուցէ
իւր զբօսանքը ապարանքի մօտ համարէին , թէ
Բարոնին հանդիպելու դիտաւորութեամբ էր
կատարել . Վերջապէս նա տեսնում էր որ՝
Բարոնը սպասում է նորա պատախանին , բայց
որ և է մտացի և համեստ խօսակցութիւնը օրի-
որդի համար անկարելի էր այս միջոցին :

Ա Օրինակ , կրկնեց Բարոնը աղդու և ստիպո-
ղական ձեռով , մեղանչեցի արդեօք ձեր առ-
ջեւ . ես ցանկանում էի զձեզ տեսնել , տեսայ
և եկայ ձեզ մօտ և այդ մի պարզ և բնական քան
է : Ես չը կամեցայ հարցի ենթարկել , թէ այս-
պիսի կերպիւ ձեզ մօտենալու ընթացքը յար-
մար էր , թէ ոչ , սովորական պատշաճաւորու-
թեան . Պատշաճաւորութիւնքը , օրիորդ , քա-
ղաքավարութեան . հրահանգների կանոն շնոր-

լով անգամ, յարտառեւ պարտաւորութեան չ'են
Ենթարկում այն պատռւաւոր մարդկանց՝ ո-
րոնք իւրեանց սրտի առաջին շարժումից թե-
լադրուած են միշտ դէպի բարեմտութիւն։
Դուք՝ որ ձեր բարերարութեամբ . . . :

— Քաջ դիտէի որ՝ սիսալուելու էիք, ազնիւ
Տեր, միջահատեց Ժիւլիէթը փոքր ինչ դժկա-
մակութեամբ՝ որ չը կարաց ծածկել, եւ ինձ
ընդունելու էիք իմ քրոջ տեղ. ինձնից շնոր-
հակալ լինիք այն նորաշինութեանց համար, որ
այս տեղ գտնում էք, այդ բարերարուհին
ես չ'եմ։

— Բայց եթէ բարեգործութեանց մէջ ձեր
օգնութիւնը նշանաւոր է, ասաց Բարոնը
զուարձութեամբ նկատելով օրիորդի եռանդը
իւրան չը վերաբերած արժանաւորութիւնքը
մերժելու համար, — Պէտք է ուրեմն ներոզամիտ
և մարդասէք լինիք և չը նեղիք տրանջանզը իմ
միամտութեան և մտերմութեան առաւելու-
թեանց պատճառաւ, որոնք ձգեցին ինձ դէպի
ձեղ։

— Ամենեւին նեղացած չ'եմ, պատասխանեց
Ժիւլիէթը, առաւել եւս ահաբեկուած։

Այդ խռովացոյզ վիճակի մէջ, Ժիւլիէթը
սկսեց ընթանալ, բայց չը նկատեց բնաւ, թէ
յետ չ'եր դառնում, այլ յառաջ դէպի ասլա-
րանիքն էր գնում։ Բարոնը նմանապէս գնաց
նորա կողքից. Ո՛վ, որքան զարմանք և մտմտուք
կը պատճառէին օրիորդին ազնուականի միտ-
քերը, եթէ դէպ լինէր խորամուտ լինել

նոցա մէջ : Նսիս և առաջ՝ ուր էր այն ամբարտաւան ազնուականը , որուն նկարում էր Մագթաղինէ չը տեսած եւ որից զարհուրում էր չը ճանաչած : Կարէ՞ր արդեօք այդ խեղչիկը երեւակայել իւր թշնամու մէջ յայտնի միամբ տութեան կերպարանքը , աշխոյժ և համեստ ընթացքը : Ի բաց թողած նորա ձայնի հնչումը՝ որ յայտնապէս մատնում էր իշխելու սովորութիւնքը , նորան կարելի էր հասարակ մարդ համարել : Առաւել զարմանում էր օրիորդը այն բանի վերայ որ՝ նա չ'ունէր իւր վերայ և ոչ նշմարք անդամ իւր պատուաւոր կարգի կամ հարստութեան . աշխատում էր նկատել ժապաւէնի մի կտոր նորա կուրծքի վերայ , բայց ունացն : Նա չ'էր երեւակայել երբէք , թէ մի Բարոն կամ միլիոնատէր կարէր լինել առանց որ և է զարդու կամ մի փոքրիկ վարդի իւր հանդերձի վերայ . բայց ազնուականը , փոխանակ այս առաւելութեանց , բոլորովին պատշաճում էր այն կարծեաց՝ որ ծիւլիէթը նորա մասին յօրինել էր իւր մոգում :

Լաժօնէն ստոյգ էր ասել , թէ Գէրշի Բարոնը բարձրահասակ էր և ազնուագոյն շարժուածք ունէր . ուրեմն՝ հակառակ Մագթաղինէի կատակաբանութեան . Լաժօնէն ճիշդ պատկերահան էր : Երեսնամեայ հասակի մէջ այդ ազնուականը մտնում էր կեանքի այն շըրջանը , ուր երիտասարդութիւնը եւ զգանութիւնը հանդիպում են միմեանց իրբեւ կրկնապատիկ հրապոյր մարդու ճակատի վերայ : Նորա

Երեսը երկայն էր եւ ուղղագիծ թէ ՚ի գիմաց և թէ կողմնակի , ականողիքը լայնաբաց էին , պքանչելապէս թափանցիկ , լուսաւոր և խորհրդաւոր , ազդեցիկ առանց քամահանաց եւ ոգելից առանց հեգնութեան : Այդ սիրուն կերպարանաց ընդհանուր տպաւորութիւնը կարէր լինել բոլորովին խաղաղասիրական , առանց այն կրկնուածքին որ երբեմն սպրդում էր նորա ընչացքի տակ , երբ դժկամակութեամբ սիրութիւն չ'էր լինում : Բարոնը հակառակութիւն չ'էր սիրում և եթէ պատահում էր այդ , նորա շրմունքի կծկութիւնը և ձայնի կարճատեւ խստութիւնը արտայայտում էին արդէն , թէ ընդդիմութիւնը տանելու համար բաւական համբերութիւն չ'ունէր , բայց և այնպէս նա փութով իշխում էր իրան և ժպիտը կրկին յայտնում էր նորա շրմունքի վերայ : Մինչ այժմ ծիւլիէթը երկիցս վկայ եղաւ այդ սիսի փոփոխութեան՝ որ անշուշտ նպաստաւոր չ'էր նորա ապահովութեան . թէ եւ բարոնի ձայնը միշտ քաղցր էր , երբ չ'էր ուղում որ նա լինի խիստ , իսկ ժպիտը կախարդիչ էր , երբ հաճութիւն ունէր ժպանելու :

“Օրիորդ ծիւլիէթ , ասաց բարոնը այնպիսի պատուական անկեղծութեամբ՝ որ երբէք տարակոյս չը կարէր լինել նորան բնական համարելու համար , դուք տեսնում էք որ մի ժամ առաջ ես սիսալում չ'էի , այլ տեղեկութիւն ունէի ձեր անուան մասին , յայտնի է ինձ և ձեր քրոջ անունը :

— Աղնիւ Տէր, պատասխանեց օրիորդը պարկելութեամբ, երախտիք մի համարիք այդքրոջ վերայ, ով այս տեղ կարէ չ'իմանալ նորա անունը:

— Այս, ասաց Բարոնը օտարուտի ձեւով, (և անիծած կծկութիւնը յայտնուեցաւ նորա ընչացքի տակ), այդ անունը մարդառէր պարեկինն է, որ եկել է այս տեղ առատաձեռնելու այն երջանկութիւնը՝ որոյ մասին ես մռուցել էի հոգալ այդ կաղուածքից հրաժարուելուս: Իւր սիրուն ձեռնով ոսկին սերմանել է նա գիւղացւոց մէջ, բայց տեսէք որ նոյն ժամայն նա սերմանել է եւ կշտամբանք նոցա տիրոջ համար: Չը կարծէք թէ այս պատճառաւ ես ատելութիւն կ'ըզգամ դէպի ձեր քսրը, բայց չը կարեմ ծածկել ինձնից որ՝ նորա գովելի բարեգործութիւնքը առաւել պարզում են իմ մնութի վարքը և ահա ես դատապարտուած եմ անբողբելի կերպիւ իբրեւ մի դատարկապորտ և վատթար մեծատուն, որոյ դատապարտիչը ձեր քոյրն է: Այսու ամենայնիւ կրկին ասում են, բնաւ ոխ չ'ունիմ դէպի նա, ըստ որում չարայուշ չ'եմ:

— Այդ Բնէ է, ասաց Ճիւլիկթը ծաղրալից զարմանօք նայելով Բարոնին, դուք կարէիք ոխ պահել մեր դէմ, բատ որում մենք այս տեղ գործել էինք, որ ինչ դուք ամենեւին . . . :

Ա՛, ազնիւ Տէր, մի խորհիք այդպէս:

— Բարին է, չ'եմ այլ եւս մտածում, պատասխանեց Բարոնը. բայց ես ուրիշ պատճառ եւս

կարէի ունենալ, բայցի ձեր բարեբարութիւնքը, իմ ոխակալութեան համար : Ո՛, մի նայիք ինձ այդպէս, օրիորդ ծիւլիէթ, ես փոքր ինչ ծեր Եմ արդէն, թէ ոչ տարիքավ, դռնէ փորձառութեամբ . և մարդկային սիրալ կարդում եմ զիւրութեամբ, ինչպէս կը կարդայի մի գիրք . ես ահա կամիս ձեղ ասել, թէ ինչո՞ւ, հակառակ ձեղ ճանաշելու բաղձանացս, չը ներկայացայ ձեր քրոջը իմ այցելութեամբ . սորա պատճառը այն էր որ՝ խորհուրդ հարցնելով միշեալ գրից, կարդացի նորա մէջ . . . թէ դուք և ձեր քոյրը ինձ չ'եք սիրումո :

Այդ խօսքը մի սոսկալի հարուած էր, որով Բարոնը բոլորովին ապշեցուց ծիւլիէթին : Գալով Մագթաղինէին, գուցէ ազնուականը իրաւունք ունէր, ըստ որում ստոյգ էր որ՝ օրիորդ Մարսելիթը սիրում չ'էր նորան, իսկ ծիւլիէթը . . . «Ո՛, ամեն բանի տեղեակ է, մտածեց Նա դողալավ, բայց ո՞ւր է, թէ նոյնպէս իմանար եւ մեր մէջ եղած սաստիկ վէճը իւր մասին ո :

« Աղաչեմ, շարունակեց Բարոնը ծիծաղելով, զննեցէք այդ ցորենի գեղեցիկ անդը՝ որ տարածումէ մեր առջեւ հաւասար ծառուղւոյ երկայնութեան . յիշում եմ որ՝ մի ժամանակ այս տեղ միայն մոշայք և թաւուտք էին : Ահա այսպէս չ'եմ կարում մի քայլ յառաջ գնալ առանց հանդիպելու ամիկին Մագթաղինէի որ և է հրաշագործութեան : Ո՞չ, կարեմ արդեօք չը խոստովանել, թէ եկել եմ իմ

կալուածքը իրեւ խափանից ուրախութեան : Դիտէք, օրիորդ, որ դուք այդ գիւղը այնպէս փոխակերպել էք, մինչ զի եւ ինքնին այս տեղ նման եմ մի բռնակալ մարդու : Կացէք օրիորդ, ես պատրաստ եմ գրաւադիր լինել անգամ, թէ ձեր քոյրը բազմիցս ինքն իրան հարցնում է, թէ ինչ պէտք է գործեմ ես այս տեղ :

— Ո՛, այդ մասին կարեմ ասել, պատասխանեց Ժիւլիէթը անխորհրդաբար, թէ միայն նա է, որ այդ հարցը իրան անում է :

— Ո՞չ ապաքէն նորա կարծեօք ես մի անձնաւոէր և անառակ մարդ եմ, հարցուց բարոնը եւանդագին : Ես ասացի ձեզ արդէն, թէ նա զիս համարում է մի վատթար մեծատուն : Իմ կեանքի մէջ որ և է նպատակ շը տեսնելով, նա սրամառում է, որովհետեւ այդ կեանքը նորան անծանօթ է : Նա կարծում է անգամ, թէ ես պարսաւում եմ նորա վարքը, եւ ով գիտէ, գուցէ և տածում եմ նորա բարերարութեանց գէմ այն նախանձը՝ որ սովորական է չար և սառնասիրա մարդկանց՝ որոնք այլոց բարեգործական փոյթ եւ եռանդը ատելով ատում են . . .

— Բայց, ազնիւ տէր, միջահատեց Ժիւլիէթը, ով է յարուցել բոլոր այդ կարծիքը ձեր մոքի մէջ :

— Գիրքը, պատասխանեց կալուածատէրը ծազրական ձեւով : Այս մտածութիւնքը ես անշուշտ կ'անէի, եթէ լինէի ձեր քրոջ տեղ և նա լինէր իմ տեղ, Ուրեմն դուք կարէք վը-

կայել, թէ ճշմարիտ է իմ խօսքը . եթէ չ'եք համարձակում հակառակել ինձ , աւելցուց բարոնը այն տրտմութեամբ՝ որ բոլորովին շփոթեց Ժիւլիէթին . Այժմ ես ստոյգ գիտեմ , ինչ որ առաջ դեռ եւս երկրացելի էր , այն է թէ՝ տիկին Մագթաղինէն իմ դատակնիքը վճռել է առանց զիս ճանաչելու և ամենամաքուր խղճի անաշառութեամբ . Գիտեմ նոյն պէս , թէ մեծ շնորհ չ'եմ գտել և ձեր աշաց առջեւ , օրիորդ . Ո՛հ , անտիականութիւնը և առաքինութիւնը անողորմ են Ձեր քոյրը յարձակում է իմ վերայ սաստիկ անգթութեամբ .

— Բայց ես , ազնիւ Տէր , գոչեց Ժիւլիէթը , չը կարելով այլ ես համբերել , ես միշտ պաշտպանել եմ զձեզ .

Օրիորդը զարհուրեցաւ այդ խօսքից՝ որ անդարձ էր արդէն . Վճռաբար դատելով , պէտք է ասել որ՝ Ժիւլիէթը թէ եւ համարում էր իրան փոքր ՚ի շատէ մտացի , բայց մի ամբողջ ժամ էր որ՝ մնուի և անմիտ զրոյց էր անում . մանաւանդ վերջին խօսքը՝ որ անզգուշութեամբ այս վայրկենիս դուրս ելաւ շրթունքից , ահաբեկեց զինքը . Նա առաւել եւս շփոթեցաւ , մինչ նկատեց բարոնի լուսթիւնը , իբրեւ թէ սա չ'էր լսել օրիորդի անմիտ պատասխանը . մըտախոհութեան մէջ ընկղմուած , նա գնումէր , կործանելով իւր գաւաղանաւ ճանապարհի եղերքը բուսած դաղարիքը . Այսպէս նօքա անցան ծառուղւոյ մնացորդը : Ժիւլիէթը նկա-

աեց որ՝ ապարանքի առջեւնն էին եկել և չ'ու-
զեց աւելի եւս յառաջ ընթանալ, բայց չ'էր
համարձակում հրաժեշա տալ, վախելով թէ
մի գուցէ որ եւէ նոր անմտութիւն խօսէ կամ
գործէ: Բայց ահա բարտնը յանկարծ կանգնե-
ցաւ և յառաջ քան օրիորդը կարէր մտածել
իւր պաշտպանութիւնը, բնական մարդասիրու-
թեամբ կալաւ նորա ձեռը:

“Օրիորդ Ժիւլիէթ, ասաց նա, կանխազդե-
ցութենէ ստիպուած եմ գուշակել, թէ մենք
շուտով կը լինինք ազնուագոյն բարեկամք: Ես
երախտապարտ եմ այն բարեմտութեան հա-
մար, որով գուք պաշտպանել էք զիս, առանց
բնաւին ճանաչելու: Կամիք այժմ պսակել
այդ գործը, առաջնորդելով ինձ դէպի ձեր
քոյրը”:

Ժիւլիէթը բարձրացուց աչքերը դէպի նա
և հանդիպեց այն պայծառ և ազնիւ հայեացքին
որ կարէր յաղթահարել ամենամեծ կասկածո-
տութիւնը, նա չը տարակուսեցաւ: “Այս,
ազնիւ Ցէր, պատասխանեց, ընդունում եմ ձեր
առաջարկութիւնը”:

Այնուհետեւ սկսեցին միասին յետ դառ-
նալ ծառուզւոյ միջով երկուստեք լուռւթեամբ՝
որ այս անգամ համակամ էր: Ժիւլիէթի շունչը
սպառում էր, որովհետեւ ուրախութիւնը եւ
անհանգստութիւնը ահազին պատերազմ էին
յարուցել նորա հոգւոյ մէջ: Յաղթութեան
զգացումը նորա թուշերի վերայ դիզում էր մե-
ծամութեան յորձանք, մինչ նայում էր իրան:

ընթացակից ազնուականին, այդ վեհանձն պատրիկին՝ որ երկշռա Մագթաղինէի անմիտ զարհուրանաց առարկան էր և որ իւր համար երբէք այդքան սոսկալի չ'էր։ Նորա սիրտը փըքվում էր, մտածելով, թէ կալուածատիրօջը իւրեանց տունն էր տանում, բայց ահա մի բովէ անցած, նոյն անվեհեր փոքրիկ սիրտը նկունեղաւ, մինչ ինքն իրան հարցուց, թէ որպիսի ընդունելութիւնն էր սպասում նոցա իւր քրոջ կողմից։ Նա կարծում էր, թէ ազնուականը չ'էր հասկանում մտակայ վտանգը իւրեանց համար, ըստ որում առաւել հանդարտ էր։ Միայն մի անգամ միջահատեց սա լոռութիւնը, գանգատուելով ծառուղոյ տաղտուկ երկայնութենէն, մինչդեռ ծիւլիէթը ցանկանում էր որ՝ նա առաւել երկայն լինէր։ Բարոնի անտարբերութիւնը զարմանալի էր։ Մառուղին՝ որմէ նա գանգատում էր, վերջապէս անցան նոքա և մտան գիւղը։ Բնակարանի մօտ, խեղճ ծիւլիէթը թալկացած, նայեցաւ դէպի իւր ազնիւ ուղեկիցը, որ առաջուան պէս անխռով էր, դողդոջուն ձեռքով բացաւ պարտէզի դուռը և առաջնորդեց նորան դէպի տուն։ Մագթաղինէն՝ որ խորին մտածութեան մէջ նստած էր, յանկարծ կանգնեցաւ։

“ Մագթաղինէ, ասաց ծիւլիէթը բոլոր ոյժը ժողովելով, ահա բերում եմ ձեր առջև Գէրչի Բարոնին։

— ծիւլիէթ, թոթովեց Մագթաղինէն, բացատրէ ինձ

— Տիկին, ասաց Բարոնը ժպիտը շրթունքի վերայ, բացատրութեան կարօտ բան չը կայ, երդւում եմ ձեզ . . .

— Եւ ոչ որ եւ է գաղտնիք կայ, մրմթեց Ժիւլիկիթը, ամենայն ինչ գործել է դիպուածը, որ մեզ հանդիպեցուց մի եւ նոյն ճանապարհի վերայ :

— Եւ այս ճանապարհը բերում էր դէպի ձեզ, տիկին, շարունակեց ազնուականը. Մի յանդիմանէք օրիորդ Ժիւլիկիթին, իբր նա շտապել է վստահութիւն ցուցանել ինձ, որովհետեւ այդ ինձ պատճառ կուտար կարծելու, թէ արժանի համարում չէինք զիս այդ վրատահութեան :

— Այդպիսի դատողութիւնը շատ հեռի է իմ մոքից, պատախանեց Մագթաղինէն, ես երախտապարտ եմ դէպի լձեր մարդասիրութիւնը և մեր վստահութեան համար բաւական է որ՝ դուք մտածել էք մեզ մօտ գալ:

— Եւ ինչպէս չը գայի, ասաց Բարոնը եռանդագին, մինչդեռ բազմամասնեայ բաներ կային այդ ցանկութիւնը ինձ ազդելու համար, այդ պարտաւորութիւնը անգամ իմ վերայ դնելու համար : Եւ դուք ինքնին, տիկին, միթէ ըսպարում չէիք այդ այցելութեան :

— Զէ, սպասում չ'էի, պատախանեց Մագթաղինէն անկեղծօրէն :

Ժպիտը նկարուեցաւ Բարոնի դէմքի վերայ, և իշ, տիկին, ասաց նա այնպիսի դիւրութեամբ և զուարձութեամբ, որոնց մէջ յակամայս կա-

բելի էր գտնել մի սուր ծայր հեղնութեան՝
որ բաց է ՚ի բաց չ՛էր երեւում. — Ի՞նչ զարմանք
է որ՝ իմ պէս նշանաւոր մարդը լաւ քննէր զին-
քը յառաջ քան թէ կուգար բաղխելու այն
տան դուռը, որտեղաց իրան անծանօթ առա-
քինութեանց անուշահոտութիւն է բուրում։
Չը գիտեմ, կարեմ արգեօք ասել, թէ այն
պատմութիւնը՝ որ ինձ հաղորդել էին ձեր մա-
սին, երազի նմանութիւն ունենալով, ինձ թո-
ղել էին շուարած Ես սասանում էի, թէ
մի զուցէ պարեկի պալատը աներեւութանար
այն վայրկենին, մինչ ոսպս կը դնէի նորա շէմ-
քի վերայ

Բարոնը դադարեց, որովհետեւ Մադթա-
ղինէն նայում էր նորան :

« Հասկա, ասաց աղնուականը թեթեւ հա-
ռաջանօք, տեսնում եմ որ՝ առաւել համար-
ձակութիւն պէտք է . . . կամիք, տիկին, բայց
ես չ'էի համարձակեր

— Մադթաղինէ, ասաց Ժիւլիէթը, Բարոնը
իմ վերայ այնպիսի ազդեցութիւն է գործում,
իրը թէ չը կամի հաւաստեաւ խոստովանել.
նա կարծում է, թէ մենք զգուշացած ենք
նորա դէմ» :

Մադթաղինէն մինչ այժմ պահպանել էր
իւր հոգւոյ խաղաղութիւնը, բայց ՚ի զուր, զի
ահա այդ խօսքից յետոյ վրդովուեցաւ և մնաց
ակնկոր :

« Ես մտածում էր, թէ երկիւղ էր ազ-
գում մեզ, շարունակեց սոսկալի Ժիւլիէթը,

և այս պատճառաւ ինքը եւս վախումէր մեզնից .

— Բարոնը մեզնից վախումէր , թաթովեց Մագմաղինէն , սաստիկ ջանք անելով դըւարթ երեւելու : Այդ բնչ խօսք է , ժիւլիէթ . Երբ կը լինիս դու զգաստ :

— Տիկին , ասաց ազնուականը , վեհերոտութիւնը շատ անգամ յառաջ է դալիս պարսաւուած լինելու կարծիքից եւ

— Բայց , ազնիւ Տեր , գոյեց Մագմաղինէն , ովէ ինձ տալու զձեղ պարսաւելու իրաւունքը :

— 0' , պատասխանեց Բարոնը , գիտեմ որ դուք անվայել կը համարէք այդ , գուցէ և ձիգն թափան լինիք Ճնշել ձեր մէջ վատ դատողութիւնը իմ մասին , ըստ որում դուք բարի էք . բայց քանի բնական պէտք է լինէր ձեր մէջ այդ մտածութիւնը . Կարելի՞ էր արդեօք , որ դուք փոքր ինչ խիստ չը լինէիք այն մարդու դէմ , որոյ վարքը ասստիկ զանազանւում է ձեր վարքից : Անտեղի կը լինէր օրինակ բերել Սուրբերի ներողամտութիւնը , որոնցից եթէ մի քանիսին տեսել եմ , միշտ անաշառ եմ գտել . ի՞նչ պէս կարէիք դուք բնաւ չը յանդիմանել զիս իմ հարստութեան ինքնասիրական գործածութեան համար , դուք՝ որ հարուստ էք այլոց համար . Դուք չէք ուզել հաւատապ ինձ , եթէ ասեմ ; Թէ իմ կամեցողութիւնքը միշտ առաւել բարեմիտ են եղել , քան իմ գործքը : Ես նման եմ այն բարի խալիքին՝ որ ամեն երեկոյ շը ջումէ եղել իւր մայրաքաղաքի փողոցները , կամելով

անձամբ տեղեկանալ իւր հպատակների կարօ-
տութեանց և վերադառնումէ եղել բորբոք-
ուած այն մոքով, թէ որբան բարիք ունէր գոր-
ծելու, բայց իւր պալատը մոտած՝ իսկոյն պառ-
կումքնումէ եղել: Ահա այսպէս պատահելէ
և ինձ հարիւր անգամ: Ո՞վ, որբան երախտա-
պարտ եմ ձեզ, որ փոխանակ իմ եկել էք այս
տեղ և սփռել էք այն բարերարութիւնքը՝ որ
ես միայն ցանկացել էի: Իմ խեղճ գիւղացիք
բոլորովին երջանիկ են, ըստ որում իմ երկա-
րատեւ բացակայութիւնը եւ անհոգութիւնը
շահեցուցել է նորանց ձեր այցելութեամբ եւ
գթութեամբ և միթէ իմ գործքը կարէին լի-
նել այդքան ազնիւ, բարերեր և քնքուշ: Դուք
քաջ գիտէք, թէ տղամարդու ձեռը առաւել
ծանր է քան մի հրեշտականման կնոջ ձեռը:

— Ազնիւ Տէր, ասաց Մագթաղինէն անկեղ-
ծաւոր ձեւով, պանծալի է ինձ այդ ձեռնար-
կութեանց հաւանութիւնը և մեծագին — ձեր
համակրութեան ցացը: բայց, ասացէք, աղա-
չեմ, եթէ գուք լինէիք իմ տեղ, կը սիրէիք
այդքան գովեստը՝ որ վարձատրութիւն է, այլ
ոչ երախտազգացութիւն: Երբոր ինձ գովում
են իմ գործած բարերարութեանց համար, ինձ
թուումէ, թէ տուած ոսկի գահեկանիս փո-
խարէն տալիս են ինձ մանր պղնծեայ դրամ:

— Բայց դուք չըկարէք երկրայել իմ անկեղ-
ծութեան մասին, գոշեց Բարոնը, և եթէ այդ-
պէս է, ինչու ուրեմն չ'էք թողում պքանչանալ
ձեր վերայ: Ամենայն ինչ ձեր մէջ նորանշան է,

սիկին, և ՚ի հարկ է իմ մեղքը չ՛ե ո՞՛ դուք ինձ
անուրջքի մէջ էք ձգել. ինձ այնքան սիրալի
բաներ եին դրել ձեր մասին, մինչ զի ես ցան
կացայ ականատես լինել, տեսայ և ահա գաղտ-
նիքը առաւել ստուարացաւ իմ առջեւ. Եւ յի-
րաւի՞ մի այդպիսի. կեանք և վարքը ձեր հասա-
կում, ձեր գեղեցկութեամբ, առանց այլ իմն
հորիզոնի, առանց այլ իմն ցանկութեանց, բա-
րի զոհողութիւնը, — ոչ ապաքէն սրանչելի է:
Դուք թուի թէ ամփոփել էք ձեզ բարերարու-
թեանց գերեզմանի մէջ մինչև յաւիտեան. Ու-
րեմն՝ թոյլ տուք ինձ ենթադրել, թէ ընդհա-
նուր մարդկութիւնը այնպէս կը վարուէր ձեզ
հետ, որպէս ես վարուեցայ. առաջ կ'երկրա-
յէր, իսկ յետոյ ստիպուած կը լինէր հաւա-
տալ, բայց երբէք չ'էր կարող հասկանալ.

— Այդ նշանակումէ, ասաց Մագթաղինէն
զուարձութեամբ, որով ուղումէր ամոքել մի
առաջ ցուցած խստութիւնը, թէ հասկանալու
համար պէտք էր երկար մտածած լինել այն
հաճոյից ունայնութեան վերայ, որոնք ամենեւ-
մին ազնուացնում չ'են մարդու խղճմանիքը:

— Ես կարծումէի, թէ փոքր ինչ մտածել
և քննել էի, այնու ամենայնիւ դեռ եւս մնում
եմ խաւարի մէջ. Դուք կարէք մի խօսքով լու-
սաւորել զիս, մի գուցէ ողորմածութիւնը
կիրք է.

— Առաւել զօրաւոր քան միւս կիրքերը.
գոչեց Մագթաղինէն ստափիկ յուզուած, միակ՝
որ իրանից յետոյ թողում չ'է, ոչ վիշտ, ոչ

խղճի տագնապ և ոչ ամօթ . սա է , ընդհակառակն , որ դարմանում է այն շարիքը , որ միւս կիրքերը պատճառել էին , վերքի մէջ ծորում է պարզ ջուր՝ որով հոգին բոլորովին մաքրըւում է :

— Տեսնում եմ որ՝ այդ բաները հասկանալու համար բաւական չ'է միայն մտածած լինել , ասաց Բարոնը , այլ պէտք է եւ չարչարուած լինիլ :

Մագթաղինէն չը պատասխանեց . Բարոնը վեր կացաւ գնալու . Ժիւլիէթը ուղեկից եղաւ նորան մինչի պարտէզի ծայրը և նորա հրաժարուելուց յետոյ մնաց այն տեղ մի փոքր ժամանակ , խոր խորհուրդի մէջ ընկղմնուած դէպի դուռը նայելով . յետոյ վազէվազ դարձաւ տուն և ընկաւ Մագթաղինէի գիրկը .

« Հապա , հարցուց նա , հաճելի չ'է ձեղ Բարոնը .

— Տէր Ասառուած , ինչու պէտք է չը խոստովանիմ որ քաղցր եւ սիրելի է նա , պատասխանեց Մագթաղինէն՝ զրաղուած դէմքով .

— Ափսոս որ՝ մեր ժամանակում այդ տգեղ շորերն են հագնում , ասաց Ժիւլիէթը . ոչ ապաքէն ասպետական կերպարանք ունի նա , թէ եւ սեւ լոգիկ լինէր զգեցած . սաստիկ կը ցանկայի սպառազինուած տեսնել զինքը .

— Անշուշտ եւ ես կը ցանկայի որ՝ նա այց ելանէր մեղ սաղավարտը գլխին եւ նիզակը ձեռին . պատասխանեց Մագթաղինէն կեղծ ժափտը շրթունքի վերայ . Բայց՝ ասա՛ ինձ ,

քաղցրիկ ծիւլիէթ , ուր հանգիպեցիր դու
բարոնին . Բնչ ասաց նա քեզ , երբոր մօտե-
ցաւ , կամ Բնչպէս խնդրեց առաջնորդել զինքը
դէսփի մեր ընակարանը . որովհետեւ կարծում
եմ . թէ նա պէտք է խնդրած լինէր քեզ . Զար-
մանում եմ որ՝ դու ինքդ զգում չ'ես այդ պա-
րագայքը ինձ պատմելու իղձը ո :

Ծիւլիէթի պատմութիւնը բաւական եր-
կար տեւեց , որովհետեւ երեք նիւթ կար նո-
րա մէջ , այն է՝ որ ինչ բարոնը ասել էր նո-
րան . որ ինչ ինքը ասել էր բարոնին եւ որ ինչ
մտածել էր ամբողջ խօսակցութիւնը տեւելու
միջոցին . Մագթաղինէն ունկնդիր եղաւ մինչև
վերջը առանց որ և է հաւանութիւն կամ դժգո-
հութիւն ցոյց տալու և երբոր պատմութիւնը
վերջացաւ , յաջորդեց երկայն լուսւթիւնու ծիւլի-
էթը սրտատութիւնից կտտամահ էր լինում :

“Ամենեւին մի հարց չ'առաջարկեց քեզ ,
ասաց յանկարծ Մագթաղինէն . չ'ուղեց իմա-
նալ քեզնից , թէ ով ենք մենք , նկատեցիր որ
նա ինձ տիկին կոչում լինէր . Գէրշում կարելի
է զիս համարում են այրի , բայց բարոնը այն
պիսի մարդ չ'է որ՝ չ'իմանայ , թէ ես ընաւ
ամուսնացած չ'եմ ո :

Ծիւլիէթը հաւատարմացուց , թէ ազնուա-
կանը ոչինչ հարց չ'էր արել նորան . Սորանից
յետոյ նոքա դուրս եկան հասարակաց սրա-
հից եւ գնացին իւրեանց որոշ սենեակները ,
համարելով , թէ արդէն բաւական խօսակցել
էին բարոնի մասին :

Այդ Բարոնը միւսանգամ գաղու Թուլու ևութիւն չ'էր խնդրել, ըստ որում հաւաստի էր, թէ նորան զյանալու չ'էին այդ : Ոչ Մագթաղինէն և ոչ Ժիւլիէթը այլապէս չ'էին մտածում, բայց և այնպէս մի թեթեւ տարակուսութեան ստուեր մնում էր փոքրիկ քրոջ մոքի մէջ և սաստիկ հետաքրքրութիւն վաղուայ մասին Մագթաղինէի մոքի մէջ : Այս վերջինը այնուհետեւ դժուարութիւն չ'էր տեսնում դիւղի մէջ երեւելու համար, ուստի առաւօտուց յայտնեց, թէ դուրս է գնալու, Ժիւլիէթը հրաժարուեցաւ նորան ընկերանալուց, բայց այդ չ'էր նշանակում, թէ նա մէկուն սպասում էր, այլ չ'էր ուղում որ տունը ոչ ոք չը մնայ : Մագթաղինէն գնաց և շուտով վերադառն բոլորովին գոհ խւր վաղաժամ զբօսանքով, որովհետեւ բարեմիտ շինականք զուարձալի ընդունելութիւն էին արել նորան . բայց Ժիւլիէթը նկատեց նորա մէջ և մի փոքր անհանգստութիւն, ուստի մի միջոց նորա շուրջը տար ու բերելուց յետոյ, վճռեց հարց ու փորձանել : Մագթաղինէն ուշ չը դարձուց, բայց տարակուսեցաւ, առաւել քան զառաւել շփոթուեցաւ և վերջապէս որոշեց պատասխանել, թէ դիւղում նորան ասել էին, թէ Բարոնի ապարանքը պիտի նորոգուի :



Դ.

Կէ՛ս օր էր դեռ եւս , մինչ Գէրշի Բարոնը
կրկին եկաւ օրիորդների մօտ իւր այցելութեան
երրորդ օրը : Այցելութեան ժամը կանուխ
լինելով , յայտնում էր ազնուականի անհամբե-
րութիւնը : Պարտէզի մէջ կաղնիների թուփի
տակ նստաւ նա երկու քուերց մէջ և խօսակ-
ցութիւնը սկզբում բոլորովին աննշան բաների
վերայ եղաւ : Ժիւլիէթը փութով վայր ձգեց
իւր ասզնագործութիւնը և խօսելով նայում
էր դէպի կապուտակ երկինքը : Պայծառ արեւը
տերեւների մէջից սպրդելով , խաղում էր Մագ-
թաղինէի սեւ շորերի եւ սիրուն վարսերի վե-
րայ , մինչ սա ինքը ասզնագործելով վեր նայում
չ'էր : Վարդերը վթթելով , մանիշակները ծաղ-
կելով , թափանցիկ անուշահոտութիւն էին սրփ-
ուում օդի մէջ . ամենայն ինչ շնչում էր պարե-
կի պարտէզի մէջ բնութեան և չքնազ ստեղ-
ծուածների գարունքը : Մագթաղինէն նկա-
տում էր որ՝ Բարօնի նայեացքը դէպի ինքն էր
ուղղած և հաւաստի էր , թէ շուտով յոգնելու
չ'էր նայելուց . բայց այնու ամենայնիւ այդպի-
սի քննասիրութիւնը բնաւին չ'էր վիրաւորում
քաղցրաբարոյ եւ պարկեշտ օրիորդին : Փոքր
առ փոքր խօսակցութիւնը սկսեց նուազել .
ըստ որում հեշտ չ'էր ազնուականի համար մի
ամբողջ ժամ աննշան բաներու վերայ խօսիլ

եւ Եթէ այլ եւս երկարելու լինէր , գուցե
Մագթաղինէն նեղանար լսելուց . իւր հրաժա-
րական ողջոյնը տալուց առաջ , ազնուականը
յայտնեց , թէ հետեւեալ օրը կրկին կ'ուգայ
և այնուհետեւ նա գալիս էր ամեն օր :

Գերշի միամիտ բնակիչը սովորութիւն արին
իւրեանց տան գուռը գուրս գալ Բարոնի անցքը
տեսնելու համար : Նորա բարձր հասակը հե-
ռուից ճանաչում էին . յամբ և սիգաճեմ ըն-
թացքով նա գալիս էր , ծխելով իւր սիգարը՝
որ իսկոյն վայր էր ձգում , երբ կը մօտենար
Մագթաղինէի տնակին . նա գիտէր , թէ այդ
տանը նորան սպասում էին . բայց բնաւ ցոյց
տալիս չ'էր : Մի անգամ իւր հանապազօրեայ
այցելութեան ժամը որոշած լինելով , բնաւ
չ'էր շեղում և այսպէս իւր երկու նորագիւտ
բարեկամուհիների կանոնաւոր եւ միակերպ
կենցաղավարութեան մէջ մեղմիկ սահելով ,
նա եղել էր իբրեւ մի սովորական բան :

Ասստիկ աշխատում էր Բարոնը պատշա-
ճեցնել զինքը պարեկի բաղձանաց՝ որոնց գըլ-
խաւորը այն էր որ՝ ամենեւին չը խօսէին նորա
բարերարութեանց վերայ , բայց եւ այնպէս
երբեմն հարեւանցօրէն ուղղում էր դէպի նա
որ և է շափաւոր գովեստ՝ որ պարարում էր
օրիորդի հոգին և որ նա կերպարանում էր իբր
թէ չ'էր լսում : Յաճախագոյն նոքա խօսակցում
էին գրականութեան , գեղարուեստից և մա-
նաւանդ նկարներու վերայ , ըստ որում ազ-
նուականը եռանդուն սիրող էր այդպիսի բա-

ները : Նա նկարագրում էր Խդալից պքանչելիքը . ուր բաղմիցս ճանապարհորդել էր , մասնաւանդ Հռովմ , այդ խորին ուշադրութեան արժանի քաղաքք՝ որ չարունակ երեք տարի արգիլել էր նորան այլուր երթալ . Այդ յաւէժական քաղաքի ճարտարագործութիւնքը վերագոյն համարելով քան բոլոր միւս բաները , նա պատմում էր այնպիսի հոգեռանդ յօժարութեամբ , մինչ զի ժիւլիէթը յանդգնեցաւ մի օր չարամտութեամբ հարցնել նորան , թէ գուցէ Բարսնը այնքան չը խնայէր , եթէ մի ամբողջ քաղաք այրուէր , որքան կը խնայէր Ռաֆայէլի մի կտոր կտաւի այրումը .

Մագթաղինէն նշանացի պատուիրեց քրոջը լոել : Աղնուականի ճաշակը նա աւելի լաւ էր հասկանում քան ժիւլիէթը , շնորհիւ այն աղնիւ և աշխարհական դաստիարակութեան՝ որ ստացել էր Սէն-Դէնիսի դալրոցում . բացի սորանից՝ նա այն սակաւաթիւ , քնքուշ և քննասէր անձերից էր , որոնց համար վայելլագեղութիւնը կախարդիչ է եւ որսնք գրգռուում են այլոց պակաս հասկացումը նկատելով . Օրիորդի պատասխանիքը արդէն ապացոյց էին , թէ նա ոչ ձանձրանում էր եւ ոչ անտարբեր դէսփազնութիւնը սիրաւի սիրած պատմութիւնները : Եւ յիրաւի երբէք որ և է արժանաւոր հեղինակութիւն կարդացել չ'էր նա առանց խորին մտածութեան և ոչ մի սիրուն նկարի առջեւից անցել էր առանց ուշադրութեան և զգայակցութեան .

Պէտք է կարծել, թէ երկուքը եւս վայել-
չութիւն էին գտնում այդ խօսակցութեան մէջ՝
որ օրէ օր առաւել երկարում էր, զի ահա
Բարոնի այցելութիւնքը՝ որ ՚ի սկզբանէ կանո-
նաւորած էին մի ժամու տեւողութեամբ,
սկսեցին երկարել եւ մի ժամը եղաւ երկու,
երկուքը—երեք, իսկ վերջապէս կէս օրից յե-
տոյ բոլոր ժամերը։ Ո՞վ, քանի վայելուչ են այդ
եղանակի երեկոյները պարտէ զի մէջ խօսակցե-
լու համար, երբ արեւմուտքի աղօտ լոյսը ծա-
ծանիչ քողով փաթաթում է երկիրը, մարդա-
գետնից հնձած խոտի խոնաւ սիւքը և անուշակ
բուրումը շնչելով։ Գէրշի տէրը մի երեկոյ
եկաւ օրիորդների մօտ և նոքա մոռացան որ՝
առաւօտուն եւս նա այցելել էր իւրեանց,
եւ հրաժարուեցաւ, երբ մեծ ժամացոցը՝ որ
Մագթաղինէն ընծայել էր եկեղեցւոյն, զար-
կոց կէս գիշերի ժամը. մինչ այժմ ոչ ոք մտա-
ծել չէր ժամերը հաշուել, Բայց ահա Բարոնը
վեր կացաւ և անխօրհրդաբար ձեռը մեկնեց
ծիւլիէթին։ Մագթաղինէն տեսաւ որ՝ նա
նայում էր և դէպի իւր ձեռը, ուստի աչքը
դարձուց։ Այս վայրկենին սօխակները եր-
գում էին մացառի մէջ, ոսկեզօն լուսոյ նըշ-
մարանքը թռչոտում էին անտառի վերայ,
որ արդէն պարիսպ էր կազմում արեւմտեան
հորիզոնի առջեւ, մինչդեռ արեւելքը պատ-
րաստում էր այդու զուարձալի ժպիտը։ Ինչու
պէտք էր զգուշանալ այդ ամառնային գիշեր-
ների ուշն ու ուրուշ մօգելուց, որոնք խաւարի

կանիտազեկոյց չ'են եւ որոնք հազիւ զանազան ևում են ցերեկից :

Հետեւեալ առաւօտուն Մագթաղինէն յայտնուեցաւ թախծաղէմ, բայց նա չը կա մեցաւ ասել, թէ ինչ էր նորա անհանդստութեան կամ տրտմութեան պատճառը: Անշուշտ նորա հոգսը այն չ'էր, թէ ազնուականի այցելութիւնքը ընդունելով, գուցէ մեղանյում լինէր պատշաճութեանց գէմ, որոնց մասին զինքը ազատ էր համարում, այլ մի ուրիշ խնդիր կար նորա առջեւ հարիւրապատիկ փա փուկ բայց եւ փշալից: Նա կարծումէր, թէ ժամ էր արդէն իրան հարցնելու, թէ այդ յանկարծահաս եւ առանձնակերպ մտերմութիւնը խորոնի հետ ուր պիտի յանդէր եւ թէ՝ միով բանիւ, պէտք էր քննել դորա վերջը: Ո՛հ, Բնյալէս խօրամուտ լինէր նա ազ նուականի գաղտնի խորհուրդների մէջ կամ որոշէր, թէ արդեօք որ և է յատուկ նպատակ ունէր նա օր քան զօր առաւել իւրան մօտենալով, թէ միայն իւր սովորական բարեվայել չութեամբ, հետեւելով բնական համակրութեան, զուարձանում էր նորա ընկերակցութեամբ, նորա նուրբ ձաշակով և զգացումով, որոնք նէ միայն մի գիւղի մէջ, այլ եւ քաղաքներում անգամ հազուագիւտ են, կամ վերջա պէս գուցէ այդ դիպուածի վայելութիւնը յանկարծահաս լինելով առաւել հրապուրում էր նորան:

Բայց ձմարտիւ, այդ երկու ենթաղրու-

թիւններից առաջինը հաւանական չ'էր Մագ-
թաղինէին, ուստի եւ կամակարութեամբ ըն-
դունում էր երկրորդը, ըստ որում ազնուակա-
նի վարք ու բարքի մէջ յայտնապէս երեւում
էին նոյն անհոգութիւնը և ինքնակամութիւնը,
որոնց ապացոյց պէտք էր համարել նորա բոլոր
կեանքը: Նա ինքը բնաւ թաքուցանում չ'էր,
թէ նորան սովորաբար առաջնորդում էին իւր
ցանկութիւնքը: Այսպէս ուրեմն՝ հարկ էր
արդեօք հաւատալ, թէ այսպիսի ազգեցու-
թիւններից մէկը, ինչպէս ինքը ասում էր ծաղ-
բաբար, բերել էր նորան գերշ. զի ահա ըն-
թանալով բանդագուշանքի հետքից, որ յայտ-
նուել էր նորան ժիւլիկթի կերպարանօք, նա
եկել էր մինչեւ ժան Փորնիշէթի տնակը, ուր
յաճախ գալու կամքը հաստատուն էր միայն
այն պատճառաւ որ՝ այդ այցելութեան շարու-
նակութիւնը հաճելի էր նորան: Եւ դարձեալ
ինչո՞ւ պէտք էր անհանդիստ լինել, ինչո՞ւ
պէտք էր չը համարել բարոնին, որպէս և ար-
ժան իսկ էր նորան լինել, մի բարեբարոյ, ան-
կեզծաւոր եւ շնորհազարդ ազնուական, նոյն-
չափ հանճարեղ և սիրելի, որչափ անհոգ եւ
անխոտիր իւր զբաղմանց և մտածութեանց մէջ:

Ավսոս որ՝ այդ սնոտի անտարբերութիւնը
նա մշակել էր իւր համար իբրեւ օրէնք, ան-
հոգութիւնը ընտրել էր իւր կենցաղավարու-
թեան կանոն, թէեւ սա յառաջացած լինէր
նորա հօգու առանձնութենէն՝ որոյ պատճառը
անտարակցոյ հարստութիւնն էր: Ավսոս որ՝

արմատացած սկեպտականութիւնը սնուտի երեւ-
ոյթով ծածկուած , այնքան նուազեցուցել էր
նորա բնաբոյս կարողութիւնը , մինչ զի նորա
կեանքը անպտուղ էր դործել : Այդ անիծած
սկեպտականութիւնը բարեբարոյ մարդկանց
մէջ զուրկի չ'է երբեմն և մեծամեծ առաքինու-
թիւններէ , որոնց առաջինը հեղութիւնն է :
Բայց մարի մշակութիւնը եւ շնորհքը , բնա-
ծին և մնայուն բարութիւնը և այլ յատկու-
թիւնները՝ որոնք մեծագին կարէին լինել . ծը-
նում են միայն թուլութիւն , եթէ սիրու
անաշառ կանոնադրութեամբ պատսպարուած
չ'է : Ահա այսպէս առաւօտուց զբաղուած զա-
նազան կարծիքներով Գէրշի Բարոնի մասին , և
մի մոտածութիւնից միւսը անցնելով , Մագթա-
զինէն վճռել էր նորա դատը : Բայց աւազ ,
եթէ կարելի չ'էր հաստատել թէ այդպիսի
մարդերից բաղկացած հասարակութիւնը վատ
թար էր լինելու , անտարակոյս էր միայն , թէ
անգործութիւնից տկարանալու էր : Ազնուա-
կանի ամենայն յօժարութիւնքը վեհանձնական
էին . նա ինքը բազմիցս իրաւունք էր համաւ-
րում ասել , թէ երբէք մէկու դէմ ատելու-
թիւն ունեցած չ'է և ժպտելով աւելցնում էր ,
թէ ատելութիւնը վշտալի է : Շատ բաներ նա
սիրել էր . բայց ոչ այն բաները՝ որ պէտք է
սիրել իւր նմաններին իսկապէս բարեկամ լի-
նելու համար : Եթէ շատ անգամ անփոյթ էր
եղել բարեբարելուց , սորա պատճառը արհա-
մարհանքը չ'էր դէպի մարդկութիւն , այլ ըստ

որում նա գիտէր թէ , չքաւորութիւնը տղեղ ,
կծնի և տփուր է և որ ինչ տղեղ էր և տփուր ,
նորա համար սոսկալի էր : Բայց և այնպէս անի-
րաւութիւն կը լինէր յանդիմանել նորա մէջ
որ եւ է նախապաշարումն , այլանդակութիւն
կամ օրինաւոր ամբարտաւանութիւն իւր բարձր
կարգի պատճառաւ : Չ'էր երեւում անդամ
որ՝ այդ մասին նա ունենար մի կարծիք կամ
գմկամակութիւնն , և ինչպէս նորա նման մարդ-
կանց սովորութիւնն էր , ասում լինէր իւր
ժամանակը . անհերքելի էր նմանապէս նորա
անակնկալ խորշումը մնապարծութիւնից և հր-
պարտութիւնից . այդպիսի գծուծ յշշքը եր-
բէք ազդեցութիւն չ'էին ունեցել նորա 'գի-
տաւորութեանց կամ նորա կենցազավարու-
թեան վերայ : Մի օր պատահմամբ պատմեց նա ,
թէ իւր ընտանեաց մէջ յետ քաշուում չ'էին
անտոհմ օրիորդի հետ ամուսնանալուց , եթէ
սորա շարժառիթը սէրն էր եւ թէ նա ինքը
ծնունդ էր ստացել մի սոսկական կնոջից .
Անտարակոյս դիպուած էր որ՝ այս վայրկենին
զարմացած ծիւլիկթը բեւեռեց Մագթաղինէի
վերայ մի այնպիսի հայեացք՝ որ կարէր օտա-
րութի մտածութիւնք յարուցանել : Մագթաղի-
նէն շառագունեցաւ , բայց եւ չը մոռացաւ
այդ դիպուածը :

Աւդ բանի տաղտկալի յիշատակութիւնը
և ազնուականի մոերմական յարաբերութիւն-
քը՝ որոնց օրիորդը չ'էր կարում խափան լինել .
նոյնպէս և իրաւացի զգացումը եթէ ոչ որ և է

վտանգի, գոնէ դժուարալցն դրութեան, վերջապէս և զանազան պատճառներ՝ որոնք զուտ յիմարութիւն էին ծիւլիէթի կարծեօք, որ բարոնի փոյթեռանդ կուսակիցն էր, — այդ ամենը ստիպում էր Մագթաղինէին գուն գործել նուազեցնելու ազնուականի օր քան զօր առաւել ածեցուն մտերմութիւնը՝ որ յիրաւի այնքան դժգոհութիւն պատճառում չ'էր օրինդին, որքան ահաբեկում էր նորան . ըստ որում վտանգաւոր էր նորա հոգւոյ խաղաղութեան և զօրութեան. Նա արդէն կորցնում էր այն ինքնագոհութիւնը՝ որ վայելել էր տարեշափ ժամանակի մէջ. Նորան թուում էր, թէ որ եւ է մեղկիչ եւ վնասակար ազդեցութիւն հանդարտ պաշարում էր նորան և թէ նա լրսում էր մի անսովոր խրատ կամ յանդիմանութիւն, իրը թէ նա չ'էր ձգտում, որպէս առաջ, դէսի իւր նպատակը եռանգագին բաղձանօք և անընդհատ հաստատամութեամբ. Առաջ, վաղ առաւօտուց նորան անշուշտ կը տեսնէին դիւղացւոց մէջ, զբաղուած այն մոլով, թէ ինչ նոր բարիք պէտք է գործէր այն օրը. իսկ այժմ պէտք է ստիպէր ինքզինքը դիւղը իջնել և վերադառնում էր առանց որ և է զուարճութիւն զգալու. Դառն էր օրիորդի համար այդպիսի մեղկութեան զգացումը, նա չ'էր կարում առանց զարհուրանաց մտածել, թէ ողորմածութեան յօժարութիւնը նուազում և ապահանվում էր նորա մէջ.

Եւ այսպէս անտանելի էր նորան այնուհե-

տեւ որ և է խօսք ու զբոյցը իւր բարեգործութեանց վերայ : Բարոնը երբեմն անհամբեր էր երեւում այդ զգուշութեան մէջ մնալուց . նա երգվում էր ծիծաղելով . թէ օրիորդի համեստութիւնը անչափաւոր էր և թէ ոչ ոք երբէք չ'էր տեսնել որ՝ Աստուածութիւնը ուրանար իւր հրաշագործութիւնքը , իսկ Մագաթաղինէն չ'էր հնար գտնում ընդդիմանալու և փոքր ինչ ամօթով ընդունում էր այդ գովեստները՝ որոնք թէեւ անուղղակի վերաբերում էին իրան . ՚ի զուր կը ջանար ինքզինքը պաշտպանել , բայց յայտնապէս չ'էր կարում արգիլել այդ առարկութիւնը՝ որ և այսպէս յաճախագոյն էր լսում քան անցելում : Վերջապէս նկատեց Մագթաղինէն որ՝ ազնըւականը անդադար նորան դիտելով և զգուշութեամբ պաշարելով իւր սիրտը ամեն օր միքայլ առաջ էր գնում :

“ Ո՞չ , ստէալ ասում էր նա , չ'եմ կարող առանց զարհուրանաց մասնել , թէ դուք երկուքդ մինակ , այդ ամայութեան մէջ , այդ տըխուր տանը , ինչպէս պէտք է անցուցած լինէք մի ամբողջ ցրտաշունչ ձմեռ . կարծես թէ այժմ իսկ լսում եմ հիւսիսային հողմունքը եւ նոցա վշտագին արձագանքը : Միթէ բնաւ չը վհատեցիք :

— Բնա՛ւ , պատասխանեց Մագթաղինէն :

— Ո՞րպիսի վսեմ անմատութիւն է բարեգործեան ոէրը , մրմթեց բարոնը . ձեր չքնաղ դիտաւորութիւնքը գեռ եւս միայն յօյս եւ

աենցանք էին , ձեր երեւակայածը կարէր տեղի
տալ դառն և ահազին պատրանաց և դուք մտա-
ծել չ'էիք այդ . ուրեմն՝ ձեր առջեւից գնումէ
եղել հաւատքը եւ դուք ապահով էիք , թէ
բախտաւորները բազմանալու էին ձեր շուրջը .
Երեւի թէ առաջին օրից այդ ենթադրութիւնը
բաւական է եղել ձեզ .

— Այս , առաջին օրից , կրկնեց պարեկը մե-
քենացարար և նոյն ժամայն զարհուրանօք մը-
տածելով , թէ մի գուցէ հաւատը և ապահո-
վութիւնը այլ եւս օգտելու չ'էին .

Բայց Ժիւլիէթը ողջագուրելով երէց քը-
րոջը , աւելցուց՝ “ Բարոնը բոլորովին մոռա-
նումէ բարեկամութեան գործակցութիւնը : ”

— Այս , գոշեց Մագթաղինէն , մենք երկուք
էինք ; բայց երկուքիս սրտերը միացած էին .
ըստ որում մի և նոյն չարչարանքը կրած լինե-
լով , մի և նոյն ուրախութիւնը զգացինք . Դուք
ինձ հարցնում էք , ունեցայ արդեօք վհատու-
թեան վայրկեաններ . Ժիւլիէթ , տուր պա-
տասխան այդ հարցման իմ փոխարէն , որով-
հետեւ որ ինչ զգացել եմ ես , նոյնը զգացել ես
և դու . ասա ուրեմն ազնուականին , եթէ յօդ-
նեցար կամ լքուեցաք երբէք .

— Ո՛չ երբէք , պատասխանեց Ժիւլիէթը ե-
ռանդուն զգացմամբ . չ'եմ կարում յիշել , թէ
այդպիսի բան երբ և իցէ եղած լինի ո :

Սովորաբար Բարոնը չ'էր հակառակում
Ժիւլիէթի վկայութեանց դէմ և այս անգամ
եւս անցաւ գնաց խոր խորհուրդի մէջ ընկըդ-

մուան : Գիւղացիք նոյնպէս իւրեանց գռների
մօտ կանդնան՝ քննասիրութեամբ նկատում էին
նորա անցքը , ըստ որում մինչ այժմ նորան
մօտուստ ճանաչելու հնար չ'ունէին և ինչպէս
ասում էին , նորա խօսքի գոյնը անգամ տեսել
չ'եին : Նոքա արդէն տարակուսում էին , թէ
նորա գալու պատճառաւ հրախաղութիւն
պատրաստելով , մի գուցէ վառօղը Ճնճղուկ-
ների գէմ գործածած լինէին . եւ ոչ ապաքէն
այդ եռանդը պէտք է շնչէր նորա մէջ որ և է
վարձատրութեան գաղափար , մինչ երբեմն
գալիս խառնւում էր նոցա մէջ : Այսպէս
նորա գարձը իւր նախնեաց ապարանքը մի նոր
բան չ'էր բերել նոցա համար , բաց ՚ի
իւր ներկայութիւնը . ինչ զարմանք է ու-
րեմն , եթէ փոքր ինչ շարամտութեամբ նա-
յում լինէին , մինչ նա անցնում էր գիւղի մէ-
ջով կորագլուխ եւ ձեռները խաչաձեւ թի-
կունքը գարձուցած : Անտարակոյս շատ բան
կար մտածելու նաեւ Բարոն Փիլիպպոսի եւ
օրիորդ Մարսելէթի բարեկամական յարաբե-
րութեանց մտան : Բայց ինչ չէին ասելու այդ
մարդիկ , եթէ տեսնէին Սեպուհ իշխանին՝ որ
օրիորդից հրաժարուելուց յետոյ , երկար ժա-
մեր զբօնում էր իւր գեղեցիկ պարտէզի մէջ
և վերջապէս անհետանում էր անտառի խոր-
քում , ամենեւին որ և է զգուշութեան մասին
չը մտածելով : Ապարանքի զանգակը հնչում էր
միշեցնելով ճաշելու ժամը , հնչում էր երկ-
բորդ անգամ , Բարոնը չ'էր լսում , սաստիկ հըն-

չում էր երրորդ անգամ, բարոնը չ'էր երեւում։ Խոհարարը անհամբերութիւնից գլխումազերը կորզում էր, սպիտակ ղենձակը ոտնակոխ էր անում, որովհետեւ առաջին կերակուրները արդէն սառել էին։ Տեսուչը շրջամալոր արշաւում էր, սպասաւորների խումբը նորահրամանաւ, սրնթացութեամբ աստանդում էր և ահա վերջապէս նորան գանում էին բոլորովին հանգիտո նստած մի ծառի տակ։ Առանց որ և է հրաւիրանաց սպասելու բարոնը վերադառնում էր ապարանք և նստում էր ճաշելու և ահա հազիւ հինգ բոպէ անցած՝ ճաշը վերջանում էր, ժամ էր արդէն կրկին գնալու տիկին Մագթաղինէի մօտ։

“ Տիկին, ասաց նա մի օր, այն ինչ մտել էր նորա սենեակը, գիտէք արդեօք, որ ես նախանձ ունիմ գէպի ձեզ։ Ո՛հ, ինչպէս խայթել էք գուք իմ սիրող և միթէ թողելու էք զիս տառապանաց մէջ։ Վաղ կամ յապաղ ես աղաչելու եմ ձեզ կատարել ձեր գործը, սովորցնել ինձ բարիք գործելը, մինչ . . . մինչ գորա արժանաւորութիւնը ես կ'զգամ իմ մէջ։”

— Այս է այս, աղաղակեց ծիւլիէթը, մեր ազնիւ բարեկամը կը հասկանայ որ՝ այն երջանիկների տեսքը, որոնց ինքը բարեբարել է, առաւել արժէ քան որ և է վայելուչ նկարը, թէև Ռաֆայէլի վրձինի արդասիքը լինէր նա։

Մագթաղինէն չը գիտէր, թէ ինչ էր նշանակում իւր գողդովը։ ըղձալի հօգւով նայեցաւ նա գէպի ազնուականը և նկատեց նորա

Ժայիտը . բայց ոչ ապաքէն սորա սովորութիւնն էր ամենակարեւոր խօսակցութեան մէջ անգամ ժայիտը չը հեռացնել շրմունքից :

“ Աղնիւ Տէր , պատասխանեց Մադթաղինէն ջղաձիք ձայնիւ , ես ստիպուած եմ կարծել , թէ դուք զուարձաբանում էք :

— Ո՛ , ամենեւին , ասաց Բարոնը : Վախում էք արդէն որ ես չը յափշտակեմ ձեր անուշանալի իրաւունքը . Երախտագիտութիւնը եւ սէրը յափշտակելու բաներ չ'են և պարզամիտ զիւղացիք չ'են թողուլ ինձ ստանալ նորանցից որ ինչ պարտ են ձեզ . Բայց ահա յօդնեցայ ես ձեր հայեացքի մէջ լոխիկ ստգտանք կարդալուց , . . . Ո՞՛ , այս անգամ մի եւս աշխատ լինիք պաշտպանել զձեզ : Դուք զիս մեղադրում էք անօգուտ անցուցած կեանքիս պատճառաւ եւ կարելի է իրաւունք ունիք . բայց ես շատ վազուց արդէն ցանկանում եմ պարզել իմ համար այն խնդիրը՝ որ սաստիկ զբաղեցնում է զիս : Ես միշտ մտածել եմ , թէ մենք , ուրիշ մարդիկս , անկարող էինք երջանիկներ պատրաստել , ինչպէս Ճիշդ նկատեց օրիորդ Ճիւլիկթը . Մենք գործում ենք անկարգութեամբ . շատ բաներ կան , որ մեր աչքերը սովոր չ'են որոշել . . . Մենք չ'ենք կարող դիմագրաւ լինել առատաձեռնելու համար , որպէս զի դիմագրաւ չը լինինք անարդարութեան մէջ . Տեսնում էք ահա , որ ես անկեղծ եմ , ուստի պէտք է հաւատաք , թէ բարերալու կամքը նուազ չ'է իմ մէջ , այլ թէ վախում եմ անվա-

յել կերպիւ շարժելուց . խոստանում էր ու-
սուցանել ինձ , ահա կանխաւ ասում եմ՝ պէտք
է հաճիք , երբ ես պատրաստ կը լինիմ դորա
համար ո :

Ինչուց էր արգեօք , որ այդ խօսքերը , թէեւ
մտացածին և յոզդողդ , բոլորովին յափշտակե-
ցին Մագթաղինէին : Նորան այնպէս թուե-
ցաւ . իբր փոխանակ արիւնի , մեղքի գետ ծո-
րում լինէր նորա երակների մէջ :

“ Ո՞չ , ազնիւ Տէր , ասաց նա անձնատուր
միամոռութեամբ , կը հաճիմ ՚ի բոլոր սրտէ ո :

Այն ինչ Բարօնը հրաժարուել էր . Մագ-
թաղինէն անխորհուրդ շարժումով բռնեց եր-
կու ձեռօք ծիւլիկթի գլուխը և համբուրեց .
Օրիորդների փոխագարձ հայեացքը բացերե-
ւապէս յայտնում էին նորանց հազարաւոր
մողերը՝ որ կարօտ էին միմեանց հաղորդելու
եւ հետեւաբար շուտով խոստովանելու ցան-
կութիւնը այնպէս բերաւ որ՝ երկուքը եւս
միասին սկսեցին խօսել :

“ Ուրեմն՝ իրաւունք է մտածել , ասում էր
ծիւլիկթը , թէ դարձուցել ենք նորան :

— Չը գիտեմ գեռ եւս լաւ հասկացսյ ար-
գեօք , ասում էր Մագթաղինէն , բայց ինչ և
լինի , ոչ մեր կամօք է եւ ոչ մեր կարծեօք .
Իսկ ես , Աստուած վկայ է որ՝ մտածութիւն
անգամ չ'էի ունեցել նորան համոզելու :

— Անշուշտ Աստուծոյ ողորմութեամբ պէտք
է լինի այդ ասաց ծիւլիկթը :

— Օ՛ , որպիսի խօրագիտութեամբ է շարժում

նա, կրկնեց Մագթաղինէն, մրափիսի վայելուչ կերպիւ պայմանաւորեց իւր ցանկութիւնը. Նկատեցիր որ նա ինձ ասաց. — Երբ ես պատրաստ կը լինիմ դորա համար. Ո՞չ ապաքէն այդ խօսքը ապագային կ'ակնարկէ.

— Փոյթ չ'է, պատասխանեց փոքրիկ քայրը երգիծական ժպիտով, դու նորան մեծապէս պատուեցիր, բայց տեսնում ես որ նա մի սոսկալի . . . ինչպէս էիր ասում. . . մի սոսկալի սկեպտական չ'է ո.

Երեց քայրը շը պատասխանեց.

« Այսմ ինչ ես երազում, հարցուց Ժիւմէթը.

— Երազում եմ, ասաց Մագթաղինէն, թէ ես և Բարոնը մրափիսի ոքանչելիք կարէինք դործել այս տեղ, եթէ միաբանէինք և եթէ մի օր երկուքս

— Ո՛, որքան վայելուչ կը լինէր այդ. միջահատեց Ժիւլիէթը, Գէրշը այնուհետեւ Երկնից արբայութիւնը անգամ մաղթելու իրաւունքը շը պիտի ունենար ո.

Թեւ թեւի դուրս եկան օրիորդները զըւարթ յօժարութեամբ և գնացին գիւղը շը շերջելու. Դիւղացիք նախընթաց օրից սկսել էին հնձած խոտը ժողովել, շտեմարան տանել կամ բարդ դիզել դաշտում. այս պատճառաւ ոչ մարդիկ, ոչ կանայք և ոչ երեխայք կային դիւղում, ուստի և տնակները բոլորովին դատարկ էին. Պարեկը եւ նորա հրեշտակը ազատութեամբ խօսակցելով ապագայի պատրաստու-

թեանց վերայ , . որ այնուհետեւ ամենեւին յանցանք չ'էին համարում , կայտառ ընթացքով գնում էին . Այս միջոցին Մագթաղինէն առաջարկեց փոքր ինչ հանգստանալ նստարանի վերայ , որ եկեղեցու առջեւն էր եւ որ նայում էր դէպի դաշտային ընդարձակութիւնը : Նստարանին մօտենալով , նկատեցին որ՝ նաթափուր չ'էր . այդ պարագայի անախորժութիւնը առաւել եղաւ , մինչ ճանաչեցին Պ. Տեսուչը՝ որ բազմել էր այն տեղ :

Պ. Բիլիէթը ստոյգ գուշակեց . թէ տիկին Մագթաղինէն անշուշտ խորշելու էր նորանից և այս պատճառաւ ինքը ցանկացաւ մօտենալ նորան : Հեռուից ողջունեց օրիորդներին եւ յառաջ եկաւ , սահելով ինչպէս թատերական կտաւեայ նկարքը անիւներու վերայ . Այն ինչ տեսաւ նա պարեկին , չար սիրու լարուեցաւ իրեւ աղեղն , աղիւսագոյն լայն երեսը փայլեց այն մորից , թէ կարէր փոքր ինչ չարիք գործել իւր սիրուն թշնամուն , արիւնը այնպէս յորդեց նորա թուշերի վերայ որ՝ կարմրութիւնը փոխեց դէպի մանիշակի գոյն : Նա ահա կրկին տեսնում էր այդ առաքինազարդ կնոջ՝ որ մի ամբողջ տարի կարծես թէ բան ու գործ էր շինել իւր համար միայն հակառակել նորան , որ ցորէն էր սերմանել տալիս , ուր նա հանգիստ արտավար էր սիրում եւ որ քարաշէն տանիք էր բարձրացնում , ուր նորա աչքերը քաղցրութեամբ հանգչում էին պատառոտած խօզանի վերայ . Նա ահա կրկին տեսնում էր

այդ անխոհեմ նորաձեւիչ կնոշը՝ որ հնարելէր
կար սորվեցնել երեխերքին . այն ճարտար կա-
խարդուհուն վերջապէս . որոյ վախճանական
գործը այն եղաւ որ՝ բոլորովին գերեց գրաւեց
խեղճ բարոնի հոգին և սիրտը . Տեսուչի բար-
կութիւնը սաստիանում էր մանաւանդ այն
պարագայից որ՝ նոյն իսկ վայրկենին նա հան-
դիպել էր բարոնին , մինչ սա օրիորդների տա-
նից ելնումէ եղել . այդ սիրելի բարոնին , իւր
բարեկամի որդուն , որուն իւր կալուածքը բե-
րած , փաղաքշումէ եղել իրան , թէ կ'ուղղէր
նորան համաձայն իւր կամաց , որ կանչուած էր
ամեն բան իւր տեղը գնելու և իրաւունք գոր-
ծելու համար և որուն ահա կախարդել էին .

“Այդ ինչ է , ամիկիններ , գոչեց նա ծի-
ծաղելով , արեւու տապը չը վախեցնեց ձեզ
դուրս ելնել . Ո՛ , տեսնում եմ որ՝ գուք ոչ
տօմից էր քաշվում եւ ոչ ցրտից . Ի հարկէ
հունձքը նայելու էիք գնացել , այս , այն , եթէ
դուք ուզէիք ձեզ համար օգուտ քաղել այդ
ցանքից , անտարակցս ձեր փողի շահը կորու-
սած չ'էիք լինիլ .”

— Այդ խորհուրդը նոյնչափ գեղեցիկ է ,
պատասխանեց Մագթաղինէն անհոգութեամբ ,
որչափ նոր է մեզ համար նոյն իսկ առարկան՝
որոյ վերայ երբէք չ'էինք մտածել :

— Բայց նկատեցէք բազմաթիւ բարդերը ,
կրկնեց Պ. Օբրին մարդասիրական ձեւով , գի-
տէք , ամիկին , որ նոցա մէջ երիցս աւելի
խոտ կայ , քան որ պէտք է մեզ տան .

— Յիշեցէք եւ դուք, թէ անցեալ տարի երիցս պակաս էր, քան որ ձեզ պիտի տային, ընդ միջեց ծիւլիէթը, չը կարելով այլ եւս համբերել, ոչ ապաքէն հաւասարակշռութիւնը ուղղվէ .

— Ե՛հ, ես չ'եմ տրտնջում, գոշեց Բիլիէթը՝ որ չը կարաց տմարդի և իւրաձեւ խեղկատակութեան տենջանաց ընդ երկար ընդդիմանալ կարծում էի, թէ առաւել լաւ կը լինէր, եթէ փոքր սերմանած լինէին, ըստ որում ցորէն կտրելու աշխատութիւնը կը պակսեցնէր. մարդագետնի վերայ եղածը կը բաւէր ամբողջ վեճակի ժաղովուրդը կերակրելու համար, բայց ահա և ձեր հունձքը մօտենում են և թուի թէ վատ չ'են լինելու. Աորա մէջ եւս մեծ չարիք տեսնելու չ'էի, եթէ իմ Տեսչութեան պաշտօնը խեթ եւ հոգս չը պատճառեր ինձ: Ո՞չ ապաքէն պատուաւոր մարդու պարտականութիւնն է հսկել իւր տիրոջ, իսկմ ասէլ իմ բարեխամիս օգտի վերայ, ուստի իրաւունք ունիմ հաստատելու, թէ բարօնի օգտին նայում չ'է վարձակալների ճոխութիւնը, ըստ որում նոքա այնուհետեւ գալիս են սակարկելու դիտաւորութեամբ սպառազինուած, ո՞հ, ուր է թէ ազնիւ կալուածատէրը հետեւած լինէր իւր նախկին խորհուրդին, մինչ այդքան փոփօխութիւն տեսաւ Գէրշի մէջ. ես այժմ ահագին ծանրութիւնը թօժափած կը լինէի վրայէս և ձեռներս կը լուանայի . . . բայց ես չ'էի այդ խորհուրդը նորա ականջը փչողը, ես

չ'էի . . . նա ինքն իրան մտածել էր և յիրաւի
խորհուրդը իմաստուն էր . . . թուի թէ ձեր
պատճառաւ մտացաւ նա այդ գործը ո :

Ժիւլիէթը զգաց որ՝ Մագթաղինէի բա-
զուկը շարժում էր իւր թեւի տակ եւ ինքն
իսկ չը կարաց զսպել իրան :

“Արդարեւ, ասաց նա, կարելի է արդեօք
խմանալ, թէ ինչ էր այդ գովելի խորհուրդը :

— Աստուած վկայ, պատասխանեց Տեսուչը,
այնպէս ծաղրական և յաջողու պատշաճ էր նորա
բացատրութիւնը, մինչ զի վախեցայ որ՝ ծիծաղը
չը սպանէ զիս : Այն ինչ մեր սեպուհ Բարոնը
մտաւ իւր ապարանքը, մենք եկանք միասին
կանգնեցանք մի պատուհանի առջեւ տիկին
Մագթաղինէի գործած պանչելեաց նայելու
համար : Կարծես թէ այժմ իսկ լուսմ լինիմ
նորա խօսքերը, մինչ, երկար միջոց կանաչ
մարդերի և սիրուն հաճարների վերայ զարմանա-
լուց յետոյ, ուսիս զարկեց ասելով՝ “ Բիլիէթ,
ինչ լաւ աշխատել են դոքա իմ համար, այժմ
զիսող ժամ է ագարակները աւելցնելու . . . ” :
“ Մագթաղինէ”, ասաց Ժիւլիէթը, այն ինչ
վերադարձել էին տուն, մի գուցէ դու կար-
ծում լինես, թէ Բարոնը որ և է կարօտութիւն
ունի մեր բարեկամութեան, եւ ինչու ուրեմն
պէտք է մոածես այսօր իսկ, թէ նա կեղծում
է մեր առջեւ իւր զգացաղութիւնքը, մինչդեռ
ևս համոզուած եմ որ՝ կեղծիքը բոլորովին օտար
է նորա սրտին : Ինձ թուի թէ քեզ տրտմեցը
նելու բաղձանօք Տեսուչը ատեց ո :

Մագթաղինէն տարակուսաննօք գլուխը շար-
յեց և չը պատասխանեց :

“Ո՞չ, դիտեմ ինչուց է այդ, կրկնեց փոք-
րիկ քոյրը սրտառուչ եռանդով. դու աւելորդ
հաւատ ունիս դէպի մարդկանց չարութիւնը
և ոորա պատճառը քո դժբախտութիւնքն են :
Երկմտութիւնը, ինչպէս ասում են, մայր չ'է
ապահովութեան, այլ յաւէտ նա մայր է ան-
արդարութեան. Որով իրաւամբ, անգամ մի
եւս ասա ինձ, կարելի է ենթադրել. թէ Գէր-
շի Բարոնը այնքան անարդ է, մինչ զի կատա-
կերգութիւն կամի խաղալ մեր առջեւ :

— Որով իրաւամբ. ուրեմն պակաս հաւատա-
լի է որ ինչ ասում է նոյն իսկ բանականութիւ-
նը Վերջապէս ինչ փոյթ է մեզ, ա-
ւելցուց նա ճիգն գործելով. Դիցնւք, ծիւլի-
էթ, թէ ես ընդունում եմ քո կարծիքը . . .
ազնուականի պատուոյ համար :

Երեկոյին, մինչ Բարոնը այցելեց օրիորդնե-
րին. Մագթաղինէն քաջարտութիւն չ'ունէր
զայն ընդունելու համար, ուստի յանձնեց
ծիւլիէթին ներողութիւն ինդրելիւր տկարու-
թեան մասին. Ազնուականը կասկածեց. թէ
մի գուցէ որ և է նոր և սպառնական բան յա-
ռաջացած լինի, այնու ամենայնիւ արժան չը
դատեց հարց ու փորձի ենթարկել փոքրիկ
քրոջը և չը կամենալով ընդ երկար մնալ, դուրս
ելաւ. նա խոստացաւ վաղիւ գալ հիւանդի
օրսպիսութիւնը իմանալու :

Մագթաղինէն, հովանոցի խորքը քաշուած

որթատունիի խիտ տերեւներու մէջ անքոյթ
ապաստան էր գտել։ Մի կողմից նայում էր նա
դէպի պարտէղը և միւսից դէպի դիտղը։ Նա
տեսաւ ազնուականի ներս մանելը, նորա գուրս
ելնելը եւ չը դադարեց դիտել մինչեւ որ նա
մտաւ ծառուղին։ Այնուհետեւ օրիորդը սկը-
սեց մտածել, թէ Տեսուչի խօսքերից յետոյ
Բարոնին ընդունելու դժկամակութիւնը տղա-
յամտութիւն էր, և ինչու պէտք է ոխ պահեմ
նորա դէմ, հարցնում էր ինքն իրան, չ'ունիմ
ես այդ իրաւունքը։ Մենք այս տեղ միակ ապա-
ւէն ենք նորա համար տաղտկութեան դէմ։
Նա մեղ շողբորթում է, մեղ հետ քաղցրու-
թեամբ վարվում է, երեւեցնում է իրան մեղ
խորհրդակից, որպէս զի մեր մտերմութեան
խորքը մտնէ։ Աշխարհասէր մարդու այսօրի-
նակ խորամանկութիւնը մի խաղ է նորա հա-
մար։ Իսկ եթէ նա մաքում դրած լինի մեղ
խարել . . . խաբում չեմ արդեօք և ես նորան։
դիտէ՞նա, թէ ով եմ ես, դիտէ, թէ որտե-
ղաց է հասել ինձ այդ հարստութիւնը՝ որոյ
գործածութեան վերայ նա սքանչանում է։
Իսկ եթէ իմանար, կ'ուզէր այլ եւս հետախոյդ
լինել մեր բարեկամութեան և չ'էր զգուշանալ
մի վաշխառուի եղբօր դստերը իւր այցելու-
թեամբ պատռելուց ու .



Ե.

Յանո՞ւ միջօրէին մի ուղեւոր երեւեցաւ ,
որ Գէրշ գիւղն էր մտնում : Կառքը ճանապար-
հումթողած , հետիւտս և յամր իջնումէր նա
բլուրի զառիվայրով , զննելով իւրաքանչիւր տու-
նը՝ որոյ առջեւից անցնումէր , առանց ում
և իցէ հարցնելու , առանց ուղեցուցի , որոյ
պաշտօնը , ապահով էր . թէ իւր սիրտը կը կա-
տարէր . Այն ինչ նկատեց նա Ճան Փոռնիշէթի
տնակը՝ որ ընկդմուած էր խիտ կանաչութեան
մէջ , սառսուեցաւ ոտքից մինչի գլուխը , բայց
բնաւ չը տարակուսեցաւ . Կարելի էր լսել մինչ
նա իւրովի ասումէր՝ « Ահա այս տեղէ ո . Նա
յառաջ գնաց դուռը բաղխելու , — դուռը կի-
սաբաց էր , դողդոջուն ձեռքով մղեց և կանգ-
նեցաւ սեամբի վերայ . »

Ժիւլիէթը՝ որ պարտէղի մէջ զբօնումէր ,
մի ստուեր նկատեց աւաղի վերայ , գլուխը
բարձրացուց և ահագին ճիչ արձակեց և յետոյ
քաջութեամբ յառաջ գնաց գէպի օտարականը :

« Կացէք . Պարոն , ասաց նա , դեռ եւս ժա-
մանակ ունիք այս տեղաց հեռանալու համար .
Եղեռնաւոր է այն միտքը՝ որ ձեզ առաջնոր-
դել է գէպի մեզ : Գնացէք , գնացէք առանց
մի վայրկեան կորսւսանելու : Նա կարէ չ'իմա-
նալ ձեր այս տեղ գալը և ես խկ կը համարեմ ,
թէ պատիր երեւոյթ էր այդ եւ կ'աշխատիմ
մոռանալ ո . »

Օտարականը առ ժամ մի մնաց լուռ . նորա
խռովութիւնը այնքան սաստիկ էր որ՝ արգե-
լում էր նորան մի խօսք յօդել . . . “ Ո՛չ , ասաց
նա վերջապէս հնչազուրկ ձայնիւ , կամիմ տես-
նել նորան ո : Այնուհետեւ մի քայլ յառաջ
գնաց . Ժիւլիկթը յարձակեցաւ նորա առջեւ :

“ Ո՛չ , ասաց նա , ձեր կինը մեռել է ար-
գեգք ո :

Օտարականը յետ քաշուեցաւ , կարծես թէ
այդ հարցը վախեցուց նորան , բայց արդէն
իսկ ժողովնեց իւր ոյժ ու միտքը :

“ Ո՞վ էք դուք , գոյեց նա , որ ուղում էք
իմ եւ Մագթաղինէի մէջը ընկնել : Իրաւունք
ունիք արգեզք նորա վերայ : Մոռանում էք որ՝
ես նորան սիրում եմ և նա եւս զիս սիրել է :
Երկու տարի չ'էի կարող իմանալ նորա առանձ-
նարանը և այս երկու տարին ես ապրեցայ նո-
րան տեսնելու յուսով : Ո՞ւր է նա ո :

Եւ որովհետեւ Ժիւլիկթը խափանում էր
նորա անցքը , ուստի մի թեթեւ շարժումով
ի բաց կացուց նորան , արշաւակի անցաւ պար-
տէզի մէջով և սլացաւ դէպ ի ներս :

Մագթաղինէն իւր սենեակի յետնակող-
մում , գրասեղանի առջեւ նստած՝ գրում էր ,
նա չը լսեց օտարականի քայլերը , իսկ սորա
նախկին դիտաւորութիւնը այն էր որ՝ սպասէ
օրիորդի հայեացքը դէպի ինքը դառնալուն և
ծունք իջանէ նորա առջեւ , բայց ահա մի վայ-
րենի տենչանք տիրեց նորան անշուկ սահել
նորա քամակը և մի համբոյր կնքել նորա խար-

տեաշ մազերի վերայ . բայց ծիւլիէթը , նորա
հետքից եկած հսկումէր Մագթաղինէի վե-
րայ . Օտարականը վճռեց խօսել եւ ահադին
Ճիգն եւ ջանք գործելուց յետոյ , հազիւ հազ
կարաց մրմնջել “ Մագթաղինէ ” :

— Այդ Բնչ ձայն է , ասաց Մագթաղինէն
յետո նայելով . . . թեռնար :

— Այս , ես եմ , ո՞հ , Մագթաղինէ , Բնչ
գործեցի ” :

Աւելի չը կարաց խօսել . Մագթաղինէն
նայում էր նորան բորբոքեալ աչօք . “ Ի՞նչ
գործեցիք ; հարցնումէր , ասաց օրիորդը . Ո՞հ ,
անցեալը ստուերացաւ եւ ես ձեզնից հաշիւ
չեմ պահանջում , բայց այժմ Բնչ գործ ունիք
այս տեղ :

— Միթէ գիտեմ ես այդ , պատասխանեց նա ,
բոլորսին մոլորուած . գուցէ ճակատագիրն է
զիս մզում , և ներում չ'է ինձ իոր՝ ուրացայ նո-
րան իմ դաւաճանութեամբ գէպի ձեզ . Ես ա-
մենը թողի , ամեն բան կործանեցի , ոտնակօխ
արի միայն ձեզ տեսնելու ցնորամիտ ցանկու-
թիւնս կատարելու համար . իմ մայրը ինձ թըշ-
նամի է դարձել եւ իմ սեփական տունը փա-
կուած է իմ համար

— Աբդէն , ասաց Մագթաղինէն , ակնարկե-
լով գէպի ծիւլիէթը և կամնլով յայտնել նո-
րան , իբր իւր վրէժը լուծուած էր .

— Ի՞նչ փոյթ է ինձ , շարունակեց թեռնարը .
ունայն են այդ բաները եւ ես առաւել լաւ
զգում եմ այդ , մինչ ահա մի վայրկեան է որ

կրկին տեսնում եմ զձեղ։ Իմ համար տիեզերքի
մէջ միայն ձեր յիշատակն էր կենդանի և սա
ահա կործանեց իմ բանականութիւնը։

— Դուք կորուսել էք ոչ միայն ձեր բանակա-
նութիւնը, այլ և ձեր յիշաղութիւնը։ Ոչ ա-
պաքէն իմ եւ ձեր մէջ կանգնած է այժմ մի
հրացայտ պարիսալ, թէ եւ դուք մտած լինէիք
իմ տունը։

— Ես կ'անցնէի նորա միջով, ասաց նա, ըստ
որում չը կարէի այլ եւս տանել այն միաքը,
թէ դուք ատումէք զիս դեռ եւս։

— Խակ եթէ խոկապէս ատում լինէի զձեղ։
Հարցուց Մագթաղինէն, յօյս ունէիք ուրեմն
փոխել իմ սիրտը։

— Աւազ, անյօյս եմ ամենեւին, մրմնջեց
թեռնարը։

— Զ'է, Պարոն Լէկուր, կրկնեց Մագթաղի-
նէն Ճնշողական հեղնութեամբ, չ'է, ես ա-
տում չ'եմ զձեղ բնաւ։ Եթէ այս երկիւղն է
առաջնորդել ձեղ դէպի ինձ, հանգիստ եղիք,
ոչ, ես գիտեմ որ՝ այդ կասկածը ծանրանալու-
էք ձեր վերայ, ինչպէս խզճի սոսկալի խայթ։
որովհետեւ դուք այն ապերախտ և մոռացկոտ
մարդերից չ'էք, որոնք սրտի կրօնը վաճառում
են դիւրագնի և որոնց դործած չարիքը նորանց
քուն և հանգիստը չ'են խափանում։ Դուք նե-
րելու չ'էիք ձեղ որ՝ ապականել էիք ձեր կեան-
քը, կործաննելով նոյնպէս եւ այն էակների
կեանքը, որոնք սիրումէին ձեղ։ Մինչ դուք
մեղադրումէք ճակատագրին՝ որ իբր թէ ստի-

պելէ ձեզ ակամայ գաղայօ տեղ, ես հաւատում
եմ ձեր անկեղծութեան . այդ ձեր խարուած
փառասիրութեան կորստաբեր վիճակն է , որ
ձեզ անտանելի տանջանք է պատճառում, այն է
թէ՝ ինչու չէք իմանում, թէ այդ երկու տար-
ուայ մէջ Մագթաղինէ Մարսելէթը Բնշպէս
վարուեցաւ իւր անձնի և իւր հարստութեան
հետ . Յիրաւի ահազին բան է մշտնջենաւոր
յիշատակը այն հարստութեան՝ որ խուսաբել
էր

— Մագթաղինէ , ասաց Բեռնարը , եւ չը
վերջացուց :

Նա ուզում էր ասել՝ « Դուք՝ որ այնքան
քաղցր և մարդասէր էիք . Բնշպէս եղաք այդ-
քան անգութ ո : Նա ուզում էր վերակոչել այն
անցեալը , որ ստուերացել էր , բայց այնպիսի
դատարկ խօսքերով նա չ'էր կարող զարթեցնել
այդ անցեալը Մագթաղինէի որտին մէջ : Առա-
ւել լաւ կը գործէր Բեռնարը , եթէ հետեւէր
իւր նախկին ազգեցութեան . մինչ այդ թշնա-
մական սենեակը մտել էր աղերսելու եւ այս
իսկ վայրկենին առաւել պատշաճ էր ուրանալ
ամբարտաւանութեան մնացորդը և ծունդ իջաւ
նել օրիորդի առջեւ . բայց ծիւլիէթը արթուն
կանգնած էր . Բեռնարի սաստիկ անձկալի ակ-
նարկը ՚ի գութ շարժեց այդ օրիորդին եւ սա
իսկոյն հեռացաւ :

Այնուհետեւ Բեռնարը մօտեցաւ և ծունդ
իջաւ Մագթաղինէի առջեւ : « Ընկճեցէք , խոր-
տակեցէք զիս , ասաց նա , ես շըկամիմ այլ եւս

Հեռանալ ձեզնից , մինչեւ որ՝ ձեր հարուած-
ներից խոշտանգուած և վիրաւորուած , նորանց
մէջ գէթ յոյս ունենացի դանել իմ մահը . ուրիշ
յոյս չ'էր որ առաջնորդեց ինձ ձեղ մօտ . Դուք
այժմ իսկ ցուցիք ինձ մեր մէջ ուղղորդ կանգ-
նած անողոք կարեւորութիւնը . կարծում էք .
Թէ ես նկատել չ'էր այդ . Անարդ սիրտը՝ որ
ձեղ ուրացաւ , սւրացել է և իրան . Իմ շրջ-
թայքը քաշքաշելով բերել եմ այս տեղ , կա-
րող չ'եմ խորտակել զանոնք , բայց Աստուած
սկահպանէ ինձ մինչի ատելի կեանքիս վերջը
այդ շրջթայքը տանելուց : Ես եկել եմ , որով-
հետեւ ճակատագիրը կամեցել էր . եկել եմ
երկարատեւ ճանապարհորդութեան վերջին
թօշակ խնդրելու , կամ պէտք է տարադրուեմ
հայրենեացս , կամ մեռանիմ : Մի խօսք դժու-
թեան , մի հնչիւն , այդ է իմ խնդիրը . Զեր
սիրտը՝ որ ինձ լսում է

— Ո՛չ , ասաց Մագթաղինէն , այդ իմ սրտի
բանը չ'է , այն խօսքը՝ որ դուք ինձնից խընդ-
րում էք , իմ խիզճը զբանում է ձեղ . Բայց եւ
այնպէս ճշմարիտ ասացի ձեղ , թէ ատելու-
թիւն չ'ունիմ գէտի ձեղ .

— Ա՛ , դուք չը գիտէք ուրեմն , ինչպէս պէտք
էր վրէմիսնդիր լինել , աղաղակեց թեռնարը ,
օրիորդի ձեռները բռնելով : Դուք կարէիք
Երկինքը մի փոքր բանալ իմ համար եւ յե-
տոյ խկոյն տարագրել ինձ մինչի յաւիտեան .
քանի չքնաղ է այդպիսի վրէմիսնդրութիւնը :
Միթէ զգում չ'էք որ՝ ձեր թշնամանքը անգամ

ըլկարէին այնքան յուսահատութիւն պատճառ
ուել ինձ , որքան կը պատճառէր ձեր թօղու-
թիւնը : Ի՞նչ ծանրութիւն էր ձեզ համար երկ-
պատկելիմիշնախայթը և ապաշաւանքը գոնէ
իմաչաց առջեւ ինձ մաքրելու համար : Մադ-
թաղինէ՛ , Մագթաղինէ՛

— Աստուած իմ , մրմնջեց օրիորդը ձեռները
քաշելով բեռնարի ձեռներից : Բոլոր բաները
նա տեսաւ ո :

Որքան և խռովուած լինէր բեռնարը , այնու-
ամենայնիւ լաւ հասկացաւ որ՝ նա բառը իրան
վերաբերում չ'էր և դեռ եւս ոտքի ըլ կացած ,
յետս նայեցաւ : Սեամքի վերայ ծիւլիէթը
չ'էր , այլ Բարսնն էր կանգնած :

Բեռնարը այնուհետեւ ուղղորդ կանգնե-
ցաւ : Նա իսկապէս իմացաւ որ՝ այդ վայելուչ
եւ անկարեկիր անձը իւր ոսոխն էր , որ զգու-
շութեամբ դիտումէր նորան , անխափան կի-
սաժափիոր շըթունքի վերայ : Աս անշուշտ Մագ-
թաղինէի նոր տարփածուն էր , որոյ մասին
այնպիսի անձկութեամբ ասել էր՝ ի՞ւր ոյտ ի՞ւ-
նըր նա դիսաւ :

Արիւնը եռաց նորա քունքի տակ , կոյր
բարկութեան ահագին յոցք փոքր մնաց որ
մղէր տանէր նորան դէպի Բարսնը , բայց ահա
նոյն անողոք ճակատագիրը , որուն մի ամբողջ
ժամու մէջ վերաբերում էր իւր արկածքը ,
վհատեցուց նորան , եւ թողուց իւր տեղում
անշարժ եւ պարտասեալ : Նորա հայեացքը
սկզբեցաւ դէպի ազնուականը . բայց սորտ

պայծառ հայեցուածի առջեւ կարծես թէ քո
զով ծածկուեցաւ և ցան ընկաւ իրբեւ մի ան-
զօր նետ : Ինչու պէտք էր գրդռել այդ մար-
դուն՝ որ ճակատագրի գործիքն էր : Թշուա-
ռականը արդէն լաւ հասկանում էր Մագթա-
ղինէի զօրութիւնը եւ խստութիւնը : Սորա
սէրը այլուր էր և ոչ ապաքէն ինքը յայտնեց
նորան , թէ անցեալը ստուերացել է : Նոր
սէրը վշտակցութեան համար տեղի չ'է թողում
կանանց սրտի մէջ : Բեռնարը նայեցաւ Մագ-
թաղինէին եւ ահա սորա ակունքը կորացած
էին բորբոքեալ թուշերի վերայ . սա գրեթէ
մտածում չ'էր այն կատաղութեան վերայ , որ
աիրել էր իւր սրտին և նղովում էր բեռնարին
միայն այն պատճառաւ որ՝ անզգաստութեամբ
թողուց տեսնել իրան ծունք իջած : Օրիորդը
անհանդիստ էր միայն իւր տարփածուի մասին
եւ խորհում էր արդէն , թէ ինչպէս պէտք է
պատմէր այդ բաները : Բեռնարը այնուհետեւ .
համբերութիւնը հատած , ձեռները բարձրացուց
գէպի երկինք և փոխանակ իւր սոսիսի հետ դի-
մագրաւելու , թափեց իւր բարկութիւնը օրի-
որդի վերայ , յետոյ անցաւ սենեակը այնպիսի
տմարդութեամբ , մինչ զի բարսնը ստիպուե-
ցաւ մի կողմ քաշուիլ նորան անցք տալու
համար և վերջապէս կանգնեցաւ դրան մօտ .
ահագին հեծկլտանք ջախջախեցին նորա սիրտը :
“ Մնաս բարեան , ասաց նա կերկերեալ ձայ-
նիւ , և գուրս ելաւ . . . ” .

“ Աստէք , ազնիւ Տէր , թոթովեց Մագթա-

զինէն և գողդովուն ձեռքով ցոյց տուաւ բազ, կամթոռը . դուք այսօր մի շտապէք մեզնից հեռանալ եւ մի զրկէք մեղ ձեր ներկայութենէն ո . Այս այսպէս , մտածեց նա , մինչ ազնուականը յառաջ քաշեց ամոռը եւ նըստաւ :

Աս նկատել չ'եր . թէ Մագթաղինէն ինչ պէս խնդրեց մնալ իւր մօտ , մի դուցէ նորա խռովութիւնը մի խաղ էր . Այսպէս նա անշուշտ սպասում էր , թէ օրիորդը կ'ուգայ կը նստի իւր առջեւ , բայց այդպէս գործելու կամքը շատ հեռի էր Մագթաղինէից , ըստ որում եթէ չը կարէր նա խափանել ազնուականի հայեացքը դէպի ինքը . դոնէ չ'եր ուզում , որ ինքը նորա դիմացը լինի . Այս պատճառաւ նա սկսեց մեքենապէս անցու դարձ անել սենեակի մէջ , որոյ սալաքար յատակը կիզում էր նորա ոտքերը .

“ Զը գիտեմ , մւր է ծիւլիէթը , ասաց նա կիսահնչիւն ձայնիւ , ես սովոր չ'եմ այդպէս երկար առանց նորա մնալուն . նա ինձ թողել է , երբ կարօտ էի նորա իմ մօտ լինելուն ո :

Բարոնը չը պատասխանեց :

“ Ազնիւ Տէր , ասաց Մագթաղինէն , յանկարծ նորա առջեւ կանգնելով , բախտը այնպէս բերաւ որ՝ դուք այսօր տեսաք մի տարօրինակ անցք :

— Տարօրինակ , կրկնեց ազնուականը անազորոյն քաղաքավարութեամբ , ոչ , այլ զարմանալի – համաձայն եմ . — Օրիորդ , ասաց նա յան-

կարծ , ապահով էք որ՝ այդ մարդը չը գնաց
ինքնասպան լինելու :

— Ինքնասպան լինելու , աղաղակեց Մագ-
թաղինէն այլագունած դէմքով , միթէ այդ-
պիսի սպառնալիք ըրաւ : Առսկալի խորհուրդ
է այդ , ասաց օրիորդը սաստիկ յուղուած
եւ ես չը գիտեմ , թէ ինչու պէտք է հա-
ճէլի լինէր ձեզ նկարել այդ իմ աշաց առ-
ջեւ . ովէ տուել ձեզ իրաւունք իմ գործքը
դատելու : Այդ մարդը՝ զոր գուք տեսաք
իմ ոտքը ընկած , անշուշտ մեծամեծ չարիք է
գործել ինձ : Դուք իմացել էիք թշնամանքը .
որպէս զի կարենայիք արդարութեամբ մեղադ-
րել զիս . թէ ինչու զլացայ նորան իմ թողու-
թիւնը : Ո՞վ իմացուց ձեզ , թէ այդ թշնաման-
քը այնքան սաստիկ չ'են որ՝ նոցա յիշատակը
մինչի մահ տեւէր . Ո՞՛ , ոչինչ է մեր մէջ այն-
քան անհանդուրժ , որքան յիշողութիւնը , ո-
րովհետեւ նա խօսում է գեռ եւս , մինչ մենք
կամք չ'ունինք արդէն լսելու . այսպէս նա սը-
նուցանում է մեր ատելութիւնը : Կարելի է
զգուշանալ ոխակալութենէ՝ որ չար խօստիչ է ,
բայց ստիպել ինքզինքը դէպի մոռացութիւն .
անկարելի է , զի անարդութիւն է մարդկութեան :
Հաւաստի էք , թէ այդ մարդը՝ որ ինձ աղա-
ցում պաղատում էր , ակամայ չ'էր եկել արդա-
րութիւն խնդրելու , որ և ես նոյնպէս ակամայ
գործադրեցի առանց բարկութեան , ըստ ո-
րում զայն չը գործադրելը անկարելի էր .
Գիտէք , թէ նա որքան աւերածք է գործել իմ

շուրջս եւ սոցա պատճառաւ հնար էր արդեօք, որ երջանիկ համարէի զիս առանց ամենեւին նորան ատելու :

— Ամենեւին անտեղեակ եմ այդ պարագայից, ասաց Բարոնը ոտքի ելած ո, Եւ անդէն իսկ խորշը նկարուեցաւ նորա շուրթի վերայ, ձայնը խիստ և հրամայական եղաւ. այդ յատկութիւնքը մի ամիս կը լինէր որ բոլորովին անհետացել էին. « Եթէ այդ մարդը իւր կեանքը չը զոհէ, ուրեմն նա արժանի չ'էր ձեզ, աւելցուց ազնուականը : Բայց ես կ'ուզէի իմանալ՝ արդեօք սաստիկ սիրել էիք նորան :

— Ազնիւ Տէր, ասաց Մագթազինէն, կարծեմթէ լաւ չը հասկացայ ձեր խօսքը .

— Մի դուցէ մտածում լինէք, թէ ես անտարբեր եմ դէպի այդ պարագան, պատասխանեց Բարոնը : Ամենայն ինչ պարտաւորում էր զիս իսկցյան հեռանալ, երբոր ձեր դուռը եկած, յանկարծ տեսայ այդ թշուառականին ծնրադրած ձեր առջեւ, բայց մի գաղտնի իշխանութիւն հրամայեց ինձ մնալ . Երկու ամիս անընդհատ այն խնդիրը, թէ արդեօք ովկ և իցէ սիրել էր ձեզ, կամ դուք ում և իցէ սիրել էիք, կենասպառ խնդիր էր իմ համար և այն ինչ այդ խնդիրը լուծելու վերայ էի այն յուսով, թէ ձեր սիրտը ազատ է եւ թէ ժամանակին պիտի յանձնէի մօտեցնել նորան դէպի իմը, մինչ յանկարծ այդ անակնկալ տեսարանը ընկաւ իմ յօւսոյ բարձունքից : Ո՛բքան եւ ունայն լինէր այդ յօյսը մինչ այժմ, բայց այս

վայրկենին եւս զգացի որ՝ չափաղանց քաղցր էր
նա ինձ։ Մի բռպէի մէջ ես այնքան չարշարուե-
ցաց որ՝ չը կարէի արդիլել այն հարցը՝ որ ձեզ
արի։ Այժմ սկսվում է իմ երջանկութիւնը՝
որ իկորուսած էի համարում։ Մի ասէք ու-
րեմն, թէ տակաւին զբաղում եմթեթեւ բա-
ներով և թէ երջանկութիւնը գտնում եմ հեշ-
տութեամբ։ Այսուհետեւ մինչ այն աստիճան
մոռանալու չ'եմ զիս, որ կրկին հարցնեմ ձեզ,
թէ սաստիկ էիք արդեօք սիրել. գոհ եմ, զի
դիտեմ, թէ դուք առաւել սիրում էք զիս եւ
եթէ մի օր անկեղծութեան, համբերութեան
և սիրոյ աղդեցութիւնը

— Ժիւլիէթ, ուր էիր դու, աղաղակեց Մագ-
թաղինէն, փութալով դէպի փոքրիկ քոյրը՝ որ
մտնում էր ներս։

— Վաղմաց ելաւ գնաց թեռնարը, կամաց
հարցուց Ժիւլիէթը. ես չը կարացի մնալ, որով
հետեւ վշտակցութիւնը անշափ նեղում էր ինձ։

Մագթաղինէն առանց պատասխանելու ըն-
կաւ ամոռոփ վերայ և գլուխը ամփոփեց ձեռ-
ների մէջ։ Ազնուականը մնում էր կանգնած։
Ժիւլիէթը անշարժ եւ ապուշ նայում էր եր-
կուքին եւս։ Յանկարծ Մագթաղինէն վեր
կացաւ։

“ Ժիւլիէթ, ասաց նա համարձակ, Աստու-
ծոյ կամքն է որ՝ խաղաղութիւնը այս տան մէջ,
ուր մենք անցուցել ենք այնչափ քաղցր օրեր,
յաւիտեան չը շիտմուի։ Պէտք է քաջասրտու-
թեամբ սպառաղինուիլ, պէտք է ընդունիլ

վոտանգը և յետ չը քաշուել այն խոստովանու-
թիւնից՝ որ դիպուածը պարտաւորումէ մեղ-
կատարել Բարոնի առջեւ։ Նա շատ բան տե-
սաւ այսօր, ուստի իրաւունք չ'ունինք զգու-
շանալու մնացորդը նորան պատմելուց, ըստ ո-
րումնա ցանկանումէ մեր բարեկամը լինելու։

Յետոյ յանկարծ մօտեցաւ ծիւլիէթին։
“Պէտք է նա բոլորը իմանայ, ասաց նա կամաց,
լսում ես, իմ ամբողջ պատմութիւնը եւ այդ
դժու պէտք է անես։”

— Ե՞ս, ասաց ծիւլիէթը, զարհուրանօք յետ
քաշուելով՝ դու ուզմում ես։

— Մի գողար և մի զարհուրիր, եթէ ինձ սի-
րում են, ընդմիջեց Մագթաղինէն։ Իմանում
չեմ որ՝ նա տեսաւ Բեռնարին, ուրեմն ինչ որ
պատահումէ, քո յանցանքից է։ Ո՞հ, իմ խրդ-
չուկ սիրելի, ինչու պիտի տանից հեռանացիր։

Մինչդեռ ծիւլիէթը աշխատումէր պահել
Մագթաղինէին, սա մեղմիկ պրծաւ նորանից,
ողջունեց Բարոնին և ելաւ սենեակից։

Կրկին առանձնացաւ նա որթատունիի հո-
վանոցի տակ, նստաւ եւ աչքերը խփեց, իրը
իւր մոածութիւնքը դադարեցնելու և հողին
թմրութեան մէջ պահելու համար, բայց այդ
ջանքը ՚ի վեր էր քան նորա կարողութիւնը, նա
չարչարանօք սպառումէր։ Նորա ուշը ու միտ-
քը գրաւած էին այն պատմութիւնից՝ որ ծիւ-
լիէթը այս վայրկենին հաղորդումէր Բարոնին։
Մի առ մի հետեւումէր նա մոքով այդ պատ-
մութեան զանազան մասերին, “Ահա այս մաս-

նի մէջ են այժմ, խօսում էր նա իւրովի, եւ ծիւլիկթը ասելու է, թէ ինչպէս բևռնարը ինձ թողուց : Քանի քանի անդամ ազնուականը ամօթ պիտի զգայ վաշխառուի եղբօր դստերը սիրելուց ո : Մագթաղինէն կարծում էր, թէ այդ խօսակցութիւնը վերջանալու չ'էր . նա կորուսել էր ժամանակի տեւողութեան դիտակցութիւնը և մանր երկրորդները ստիպուած էր թուել իւր սրտի թնդիւններով : Աերջապէս քայլեր լսելի եղան նորան պարակդի մէջ . աղնուականը ելաւ գնաց : Մագթաղինէն յետքաշուեցաւ, որպէս զի չ'երեւի . բայց յետոյ եկաւ, կացուց երեսը հովանոցի ձողապատուարին, խիտ տերեւների քամակից, անձուկ տենջանօք կամելով նկատել, թէ արգեօք խռովայոյգ էին ազնուականի գնացքը :

Եւ յիրաւի նա գնում էր առաւել ուժգին զօրութեամբ : Ճանապարհի վերայ նա հանդիպեց մի երեխայի, կանգնեցաւ և գգուեց նորան, ինչպէս մի բազդաւոր մարդ՝ որ ուզում լինէր ցուցանել ամենքին իւր բարութիւնը :

« Ով, ինչպէս թեթեւացած է երեւում նորա բեռը, մրմնջեց Մագթաղինէն, ինչպէս ազատ է շնչառութիւնը . ուրեմն իրաւունք ունէի յուսալ, թէ բժշկելու էի նորան :

— Մագթաղինէ, ասաց ծիւլիկթը գրկախառնելով, դիտես ազնուականը ինչ բանէ աւելի կը ցաւի, լսելուն, որ մենք հարազատ քոյրեր չենք :

— Ի՞նչ փոյթ է նորան, պատասխանեց Մագթաղինէն շտապաւ :

— Փոյթը այն է որ՝ նա ինձ մեծ շնորհ է ցուցանում, կրկնեց ծիւլիէթը կեղծեալ միամբ առնեամբ։ Նա կարծում է՝ որ եթէ քո քայրը լինէի, քո մի խօսքը կրբաւէր որ՝ նոյնպէս և նորա քայրը լինէի։

— Ե՞ն, չ'եմ հասկանում քեզ, ասաց Մագթաղինէն բռնազրօսիկ խաղաղութեամբ։

— Նստէ, շարունակեց ծիւլիէթը։ Ես կարծում եմ, թէ առաւել վայել է քեզ նստած լըսել որ ինչ յանձնառու եմ եղել հաղորդել քեզ։ Թագուհիների սովորութեան հակառակ է կանգուն ընդունել դեսպաններին։ Մի ընդդիմանար ինձ, Ահա այսպէս լսւ է ... Օքինորդ Մագթաղինէ Մարսելէթ, յանուն Գէրշ կալուածքի տէր Բարոն Շիլապպոսի, ձեր ձեռքը խնդրում եմ։

— Զե՞սքս, նա խնդրում է ... Անհնարին է այդ, աղաղակեց Մագթաղինէն, դու ամենայն ինչ չ'ես ասել նորան։ Նա չը գիտէ ուրեմն իմ ազգակցութիւնս ...

— Լուէ, պատախանեց ծիւլիէթը, մատը շրմունքի վերայ գրած, Քնացած օձը չ'արթընցընենք։ Որպէս այդ ազգակցութիւնը, նոյնպէս և բոլոր միւս բաները, ասացի նորան ... Նա խոստացաւ յաւիտեան անփոյթ լինել այդ մասին։

— Գուցէ շուտով զզնայ այդ վեհանձնութեան վերայ։ Նա չ'է մոածել, թէ խոստանալսվ միշտ լինել ...

— Ես կարծում եմ, թէ ընդ հակառակն, պա-

ստավսաննեց Ժիւլիէթը , վեհանձնութիւնը այն պիսի հոգեւկան ձիրք է , որ ամենքը ստանում չ'են , իսկ ստացողը պահպանում են մինչի մահ . Անկարելի է այսօր վեհանձն լինել և վաղիւ - ը լինել :

— Ահա քո մոլորութիւնը , ասաց Մագթաղինէն : Բեռնար Լէկուրին համարում էի վեհանձն , մինչդեռ հարստութիւն չ'էի ստացել : Ես պէտք է անդադար կրկնեմ քեզ , թէ ոչ աշխարհը եւ ոչ մարդիկ ճանաչում ես դու , իմ խղճուկ Ժիւլիէթ ո :

Այնուհետեւ օրիորդ Մարսելէթը լոիկ ընկըզմեցաւ խորին մոտենութեան մէջ եւ միքանի բռպէից յետոյ վեր կացաւ յանկարծ և եկաւ նստաւ Ժիւլիէթի մօտ :

« Դու երեխայ նա , գոչեց նա , և լաւ հասկացել չ'ես խարսնի խօսակցութիւնը : Ես չ'եմ կարծում , թէ նա հաստատուն մոքով յանձնած լինի քեզ . . . բայց և այնպէս ովէն նորան ասել , թէ սիրով գրաւուած եմ դէպի նա :

— Օ՛ , ասաց Ժիւլիէթը կեղծաւորաբար գըլուխը խոնարհեցնելով , 'ի հարկ է ես չ'եմ :

— Ո՞չ ապաքէն տարօրինակ է այդ ձեւը , որով նա երեւակայում է , թէ որսացել է իմ սիրաբ , կրկնեց Մագթաղինէն , առաւել և առաւել գժգունելով ամեն մի խօսքի վերայ , որ նորա բերնից ելնում էր : Ես մերժում չեմ որ՝ նա իմ վերայ տպաւորութիւն գործեց , երբ տեսայ նորան և թէ այնուհետեւ նա ինձ զբաղեցուց երբեմն , բայց այդ շատ հեռի է դեռ :

եւս այն զգացումից՝ որ կարէր թելադրել ինձ
նորա ցանկացած պատասխանը։ Եւ յիրաւի
չը գիտեմ, ովէ զիս յորդորում լռութեամբ
պատասխանել այդ օտարութի ընթացքին։ Ին-
չու ստիպում են զիս ինքզինքս պաշտպանել,
առանց ժամանակ տալու ինձ մտածել այդ
մասին։ Միթէ թեթեւ բան է շղթայել իւր
ազատութիւնը եւ այլում տալ իւր հօգին։
Եւ ես՝ որոյ կեանքը անարգանօք կործանուած
էր և որ մի ժամ տուած սպասում էի անդամ,
թէ իմ վէրքերի նորից բացուելու վտանգը մօտ
էր, միթէ չը կարեմ նոյնչափ իրաւունք ունե-
նալ, որչափ և մի ուրիշ կին, տարակուսելու
և վախսելու։ Գէրշի ազնուականը անտեղեակ չէ
արդէն իմ չարչարանաց, որովհետեւ դիպուածը
ծայրագոյն անդթութեամբ իմացուց նորան
այդ։ ուրեմն նա կարծում է, թէ սիրաը կարէ
նորոգուել, դարձեալ գտնել իւր պատրանքը
և իւր յօյսերը, կարէ շառաւիղեներ արձակել,
ծաղկունք բողբոջեցնել այն տեղ, ուր արմատը
չորացած է, ոչ ապաքէն նա քաջ գիտէ, ինչ
պէս և ամենքը դիտեն, թէ երկիցս չեն սիրում։

— Ինչու չը պիտի սիրեն, ասաց Ժիւլիէթը
սոսկալի պարզամտութեամբ, եթէ առաջին
նուագում խարուած են եղել։

Մագթաղինէն այդ երեխայի յանդուգն
խօսքի դէմ բողքեց միայն մի շարժումով եւ
այնուհետեւ կարողութիւնը սպառած, դող-
դողելով թէկն ընկաւ մի ձողարարձ փայտեայ
սիւնի և ընդերկար մնաց լուռ։

« Ի՞նչ ժամանակ է ընարել, ասայ նա վերջապէս։ Ո՞րքան բաներ տեսաւ նա և մինչդեռ եւս սարսափումէի ես . . . Գիտե՞ս, Ժիւլիէթ։ Երբոր նա ներս մտաւ, Բեռնարը չորած էր իմ առջեւ։

— Բարեբախտաբար, մրմնջեց Ժիւլիէթը, թէ Բեռնարին այդպէս տեսած չը լինէր, կը խօսէր նա արդեօք։

Մագթաղինէն չը լսեց այդ խօսքերը։

« Ամեն բանից առաջ կը ցանկայի իմանալ, թէ Երբ յղացաւ նորա սիրաը այդ հոյակապ սիրով՝ որոյ մասին այսօր խօսակցում են իմ հետ, իբր թէ մենք շատուց արդէն միմեանց կարի քաջ ծանօթ էինք, Բնաւին տարակոյս չ'ունէի ես, թէ ինձ կարէին սիրել, բայց իմ զարմանալու իրաւունքը պէտք չ'է ուրանալ, Եւ մինչ մտածում եմ, թէ Գէրշի աղնուականն է առաջարկում իւր սեպուհ նախնեաց անունը Մագթաղինէ Մարսելէթին . . . կարի յանկարծագէպ այդ եւ այնքան չքնազ, մինչ զի, ասում եմ քեզ, չը կարեմ հաւատալ։

— Դու ուղում ես իմանալ, պատախանեց Ժիւլիէթը, թէ Բարոնը Երբ սկսեց քեզ սիրել, ահա յայտնում եմ՝ այն օրը, որ առաջին անգամ քեզ հանդիպեց։ Նոյն ժամայն դու ինձ խոստովանեցար, թէ քո վերայ տպաւորութիւն գործեց նա առաջին ներկայութեան, նոյնը ինչու պիտի և դու գործած չը լինէիր նորա վերայ։ Դու զգուշութեամբ չը պահպանեցիր քո սիրաը, իմ անուշիկ Մագթաղինէ։

Եթէ չը նկատեցիր Թշնամու դէպի նա մօտենալը . Դու խփել էիր աչքերդ , բայց ես բաց ունէի .

— Չ'եմ հաւատում , կը կնեց Մագթաղինէն : Այդ որ և է անձնակամութիւն է մի սեպուհ իշխանի՝ որ կամի անգամ մի եւս սիրուն յիմարութիւն գործել և որ երդվումէ իւր փառաւոր չ'աստուածներով , թէ աշխարհ ամենայն ստիպելու չ'է նորան հրաժարուել իւր դիտաւորութիւնից . բայց ինձ բնչ օգուտ այն սիրոյ յօժարութիւնից՝ որ վաղիւ նա ողբալու է . ես կ'ուզէի հանգչել մի խօրագէտ և ուղղահաւատ հոգու վերայ և եթէ կարենայի անգամ սիրել դէրշի ազնուականին , զգուշութեամբ կը պաշտպանէի ինձ . ըստ որում ճանաչում եմ նորան : Նա մեծապէս արժանի է սիրուած լինելու եւ այս իսկ է , որ ինձ երկիւղ է աղդում : Ակեպտիկեանները պէտք էր հաւատարիմ մնային իւրեանց սկզբունքին և բնաւին սէր չը պահանձէին : Ակերը հաւատ է . բնչ իրաւունք ունին ուրեմն դորա վերայ խօսելու : Բարոնը կը ժըստի , եթէ մի օր նորան ասեմ , թէ չ'եմ սիրում զինքը և նոյնպէս կը ժպտի , երբ ասեմ , թէ սիրում եմ զինքը : Դիտե՞ն արդեօք նորանք , թէ որքան անկեղծութիւն եւ հաստատութիւն կայ այն սրտի խօրքում , որ ազնիւ և աննենգ է : Մի փոքր առաջ , երբ նա տեսաւ այս տեղ թեռնարին իմ ոտքը ընկած , որքան և խռովուած լինէի և ամօթահար , բայց և այնպէս նկատեցի Բարոնին . չը դիտեմ ինչ էր

պատճառը որ՝ ես կարծեցի, թէ նա բարկացած էր երեւելու ինձ, բայց ոչ երբէք, նա ժպտում էր դեռ եւս, ժպտում էր, երբ արդէն վճռել էր իւր կեանքը ինձ նուիրել և իմը փոխարէն ընդունել. ուրեմն նորա բոլոր յօցը պատկերանում էր մի ժպիտի մէջ :

— Այս, ասաց Ժիւլիէթը, բայց երբոր Բեռնարը գուրս էր եւել և ես այնուհետեւ ներս մտայ, ոչ ապաքէն Բարոնը նոյն վայրկենին ասաց քեզ իւր սիրոյ խոստովանութիւնը . այս միջոցին նա բնաւ չ'էր ժպտում :

Մագթաղինէն ցը պատասխանեց : Ժիւլիէթը ընկաւ նորա գիրկը երկարատև ողջագուրանօք :

— Ո՛հ, Մագթաղինէ, ասաց նա, միթէ ես պէտք էր լինէի, քո վոքրիկ քոյրը, քո երեխան, ես պէտք էր խրատէի քեզ մտացի լինել . Դու մերժում ես այն Բախտը՝ որ բաղխում է քո դուռը : Մտաճամ ես արդեօք, թէ այդուղեւոր հիւրի անցու դարձը միայն մի ճանապարհի վերայ չ'է : Քո անցեալ թախծանաց յիշատակը միթէ այնքան քաղցր է քեզ : Միթէ մեծ աշխատութիւն պէտք է քեզ յօյս և հանգիստ ընդունելու համար : Տէ՛ր Աստուած . մենք քեզ խնդրում ենք, Մագթաղինէ, թոյլտալ քո սրտին : Նա՝ որ եկել է դէսի քեզ եւ որոյ մասին դու դեռ եւս երկմտում ես, ըստ որում դու կարծում ես, թէ պէտք է միշտ Երկմտել . — Ի՞նչ յարաբերութիւն ունի անցելում քո նենդաւորի հետ : Սա մի աղնիւ եւ վսեմ հոգի է, մի միակ՝ որուն դու հանդիպել

Ես քո կենաց մէջ : Ճակատագիրը ուղարկում
է նորան դէպի քեզ իւր գործած չարիքը դար-
մանելու համար : Գո ծաղիկ հասակը նոր սկը-
սումէ բողբօջել, կեանքը միւսանգամ բաց-
վումէ քո առջեւ սիրուն, զուարձալի և ան-
վախճան, թիյլ տուր ուրեմն քեզ, եթէ չ'ես
ուզում յուսակտուր անել նորանց՝ որոնք քեզ
սիրում են և որոնք իրաւունք կ'ունենան ամ-
բարշտութիւն համարել քո մերժումը : Մի
ընդդիմանար մեզ, որպէս զի չը կարծենք, թէ
քո ամբարտաւանութեան պատճառը դժբախ-
դութիւնքդ են :

Մագթաղինէն սաքի վերայ էր . նորա զուար-
ճալի եւ երկնագոյն աչքերը փայլում էին այն-
պիսի հոգեկիր սիրով, մինչ զի ծիւլիէթը կար-
ծեց, թէ նա պատրաստ էր զիջանել դէպի իւր
աղաչանքը . . . Բայց այդ շնորհը եւ ոչ վայր
կեան մի տեւեց :

“ Ես զգացի այս տեղ նցն ցաւը՝ որ երբեմն
զգացել էի, ասաց Մագթաղինէն, ձեռը սրտի
վերայ զնելով եւ սաստիկ վհատութեամբ :
Տեսնում եմ որ՝ այդ ցաւը անփարատելի է :
Զ'եմ կարող հալածել իմ երկմտութիւնը,
որովհետեւ յիշողութիւնս հզօրագոյն է քան
կամքս : Անիծած հարստութեան պատկերը
կրկին ներկայացաւ ինձ, իմ հոգին տառապե-
ցընելու համար : Երջանկութեան հասանելու
ժաման կամիմ վերջապէս հրաժարուիլ նորա-
նից, յաւիտեան աղատել զիս այդ հարստու-
թենէն, կամիմ . . . Բայց՝ երբոր ազնուականը

կը տեղեկանայ , թէ ես մնում եմ խեղճ . . .
Ո՞չ , չ'եմ համարձակում ասել քեզ բոլոր իմ
մոտած մունկըքը :

— Օրհնեալ է Աստուած , Եթէ այդ է միայն
քեզ շփոթում , աղաղակեց ծիւլիէթը՝ որոյ
դէմքը փայլում էր մոլեգին ուրախութեամբ . . .
յետոյ բռնեց քրոջ երկու ձեռքքը և դէպի իւր
շրմունկը տանելով :

— Ազնիւ ափկին , ասաց նա , թոյլ տուեք ինձ
համբուրել ձեր ձեռները ո .

Մազթաղինէն կարծում էր , թէ Բարոնը ,
համաձայն իւր սովորութեան , երեկոյին կ'ըս-
պասէր իրանց տնակը դալու համար : Ծիւ-
լիէթը , ընդհակառակին , քաջ գիտէր , թէ նա
սպասելու չ'էր . ուստի վաղ ընդ փոյթ սկսեց
շրջել պարտէզի մէջ , ժամանակ առ ժամանակ
դուռը բանալով եւ ճանապարհին նայելով .
Այն ինչ ազնուականը ներս մոտաւ , ծիւլիէթը
բռնեց նորա ձեռքքը և առաջնորդեց դէպի հո-
վանոցը :

Օրիորդ Մարսելէթը նստած էր բազմոցի
վերայ , նա վեր չը նայեցաւ : Բարոնը մօտ
եկաւ . բայց չը համարձակեցաւ ծունը զնել
նորա առջեւ , միայն վախուլով , թէ գուցէ նորա
միտքը բերէ Բեռնարին եւ նախընթաց տեսա-
րանի միշտակը զարթեցնէ նորա մէջ եւ այս-
պէս նստաւ նորա առջեւ :

« Ճշմարիտ է արդեօք , ասաց նա , թէ իմ
սէրը հաճելի է ձեզ : Չը գիտեմ դեռ եւս , թէ

Համբկ է ինձ այլ եւս երկրայել այն երջանկու-
թեան մասին՝ որ մօտահաս է ինձ. ինձ այնպէս
է երեւում, իբր անդադար լսում եմ ձեր
շուրջը շարունակ սիրուն վէպեր : Զար-
հուրում եմ միայն, թէ մի գուցէ պարէկը
թռիչք առնու այն միջոցին, մինչ ես կը կար-
ծէի, թէ բռնել եմ նորան. սառուում եմ,
թէ իմ երջանկութիւնը չը լինի որ և է երազի
շարունակութիւն և թէ այդ բոլոր արարուած-
քի մէջ գուցէ իրական է միայն իմ սիրոյ հոյա-
կապ շքեղութիւնը և յիրաւի շքեղ է այդ սէ-
րը, ըստ որում անկեղծ է : Ոչ ապաքէն ասացի
ձեզ, թէ այդ սէրը իջաւ իմ վերայ իբրեւ
երկնային ազդեցութիւն այն օրը, երբ տեսայ
ձեզ առաջին անգամ և առաջին զգացումն էր
այդ՝ որուն թողի մտնել իմ սրտի մէջ, առանց
պայքարելու նորա հետ : Դուք փոփոխեցիք իմ
կեանքը և այսուհետեւ իմ ամենասիրելի փա-
փաքը այն է որ՝ քաղցրացնեմ նոյնպէս եւ ձեր
կեանքը : Այն անշափաւոր ուրախութեան մէջ,
որ ձեր շնորհիւ ես վայելում եմ այսօր, միայն
մի բան է մնում ինձ ցաւելու, թէ ինչո՞ւ բախ-
տը վաղ չը մօտեցուց զմեզ, որովհետեւ, թէեւ
ամբարտաւանութիւն լինէր ասել, շատ վշտե-
րից կ'ազատէի ձեզ :

Մագթազիննէն այնպէս յուզուած էր որ՝
չը կարաց խօսել, սիրոը ծփում էր ուժգին,
աչքերը լի էին արտասուօք :

“ Լաց, լաց, ասաց ծիւլիէթը՝ որ սպրդել
էր նորա քամակը, լաց, ասում եմ ո :

Ապաթաղինէն վեր կացաւ . չար ոգին նոյն պէս շշնջում էր նորա ականջում երկմտութեան վերջին նենդաւոր թելադրութիւնքը , ձեռաց չ'էր թողում չբնազ հոգւոյ աւարը . Օրիորդը ըս կարաց յաղթահարել իրան . մի քանի քան ունէր նա ասելու , բայց շատ մօտ լինելով Բարոնին , ստիպուեցաւ փոքր ինչ հեռանալ , խօսելէ առաջ :

« Ազնիւ Տէր , ասաց նա այնպիսի դանդաղ կոտ ձայնիւ՝ որ հազիւ կարելի էր լսել , ես հարուստ եմ և ձեզ յայտնի է իմ հարստութեան աղբիւրը . Այդ հարստութիւնը այժմ նոյնպէս ձերն է , որպէս եւ իմ անձը , բայց թոյլ կ'ուտանք ինձ յանձնել ձեզ մէկը առանց միւտոյն : Ինձ այժմ բաւական չ'է ցրուել վըշտացելոց այդ անինեալ գանձու եկամուտը . Ես կամիմ նոցա ձեռքը տալ ամբողջ դրամադլուխը և ազատել զիս նորա մէջ իմ ձեռները պղծելուց : Այս ուժն հարիւր հազար ֆրանք չարաբախտ գումարը ես մտադիր էի գործադրել հարիւր օժիտ պատրաստելու Գէրշի և մօտակայ գիւղերի աղջկանց համար , որոնք ըստ կարգի առաջինքը կրիմնէին այդ թիւը լրացնելու համար : Գուցէ թողութիւն գանէ նա՝ որ ինձ հարստացուց , մինչ նորա կայքը իրբեւ օգնութիւն կը սփռուին խեղճ երեխերքի դլխներու վերայ : Ահա այս էր իմ գիտաւորութիւնը , մինչ ազատ էի , իսկ այժմ ինձ պէտք է ձեր հաւանութիւնը . . . կը շնորհէք .

— Ի՞նչ իրաւունք ունիմ զլանալու , պատաս-

խանեց աղնուականը . Ահա մի բանաստեղծական խորհուրդ՝ որ միայն ձեր միտքը կարէր յշանալ . Հասարակ բարերարները կ'ուզէին հիւրանոց հիմնել ծերոց և հիւանդաց համար , իսկ դուք մտածում էք սիրոյ եւ փոքրիկ երեխերքի վերայ :

Մագթաղինէի սիրտը սառեցաւ , մտածելով , թէ այդ նուիրական վայրկենին անդամնա ծաղրում էր .

“ Այսուհետեւ , կրկնեց Բարոնը զուարձութեամբ , գէրշի մէջ աւելի բաղձանք կը յայտնուի ծնանելու :

Այս անդամ Մագթաղինէն , ուժգին շարժումն գործելով , դուրս ելաւ հովանոցից .

“ Ի՞նչ գործեցիք , աղաղակեց ծիւլիէթը . Ո՛չ , ձեզ ուղղելու հնար չը մնաց . Չ'Էք հասկանում որ՝ դուք և ձեր ժպիտը փախուցիք նորան :

Ծիւլիէթը գնաց Մագթաղինէի հետքից և մտաւ նորա սենեակը .

“ Իսկ արդ՝ ասաց նա , այդքան փորձերը՝ որ դու արիր , միթէ բաւական չ'են քեզ . Միթէ այլ եւս երկրայելու ես , թէ աղնուականի սիրտը այն անշահասէր սիրտը չ'է . որ դու բոլոր կենացդ մէջ ճգնութեամբ որոնում էիր .

— Այն , պատասխանեց օրիորդ Մարսելէթը . ես լաւ տեսնում եմ որ՝ նա այնքան օտար է շահասիրութենէ . մինչ զի արհամարհում է արծաթը :

— Նմանապէս և առատաձեռնութիւնը այնքան բնական է նորան , որքան շունչը — կեն-


դանութեան , ասաց Ժիւլիէթը եռանդադին .
Ո՞րպիսի զարմանք պատճառեցիր նորան , մինչ
հարստութենէ քեզ աղատելու հաւանութիւնը
նրանից խնդրեցիր . Ի՞նչ կարեւորութիւն են
ունեցել նորա համար այդպիսի բաները և ոչ
ապաքէն այսուհետեւ ոլէտք է ներողամիտ լի-
նես , Եթէ փոքր ինչ ծաղրականութեամբ ան-
դամ խօսած լինէր քեզ հետ . Մտածէ միայն ,
թէ մի միլիոննը նա կորուսանումէ ծիծաղելով :

— Այս , հառաջանօք ասաց Մագթաղինէն ,
այս , բայց նա հարիւր հաղար փրանք եկամուտ
ունի :

— Ի՞նչ ես խօսում , աղաղակեց Ժիւլիէթը .
իսկ Եթէ չ'ունենա՞ր : ԱՇ , Մագթաղինէն , քո
ապերախտութիւնը զիս զայրացնումէ և ես
ահա ցանկութեամբ բորբոքուած եմ գնալ
հարցնել ազնուակնին , թէ ինչպէս կը վա-
րուէր նա , Եթէ լինէր չքաւոր . Նա ինձ ան-
կեղծ պատասխան կուտայ , ըստ որում նորա
սիրտը և միտքը ստել չը կարեն ո .

Մագթաղինէն պատուհանին մօտեցած՝ նա-
յումէր բարոնին՝ որ օրիսրդներից յետոյ հո-
վանոցից դուրս ելնելով , անհանդիստ և զղա-
ցած , գալիս էր իւր վերջին յանցանաց ներու-
մը խնդրելու :

« Զ'է , չ'է , զդուշացիր այդպիսի յիմարու-
թիւն գործելուց , ասաց Մագթաղինէն փոքրիկ
քրոջը , թող ինձ իմ ցնորքը ո .



[15.000]

A

"
105775